ՊՈՂՈՍՆ ՈՒ ՃԻԿՈԼԸ

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



DARAK
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 821.19-31 Միքայելյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Մ 780

Խմբագիր՝ Վարդան Օնանյան

Միքայելյան Աբել
Մ 780 Պողոսն ու Ճիկոլը/ Ա. Միքայելյան.-Եր.: Դարակ, 2023.-284 էջ:

Աբել Միքայելյանի «Փոփոխության քամին» վեպի իրադարձությունները տեղի են ունենում 2018 թվականին: Արտասովոր սյուժեով այս վեպում, որի գործողությունները սրընթաց զարգացում ունեն ու մինչև վերջ լարվածության մեջ են պահում ընթերցողին, ուղեկցվում են Հայաստանում քաղաքական իրադարձությունների համայնապատկերի ներկայացմամբ: Վեպն ունի վառ արտահայտված հերոսներ, որոնք տիպական, ընդհանրական բնույթ ունեն, և նրանց նկատմամբ վերաբերմունքով ի ցույց են դրվում հեղինակի քաղաքացիական ազնիվ մոտեցումները: Վեպը կառուցված է արկածային վեպին հատուկ տարրերով, ունի հումորի անսպառ չափաբաժին, միանգամից կլանում է ընթերցողին՝ թողնելով մեծ տպավորություններ:

ՀՏԴ 821.19-31 Միքայելյան
ԳՄԴ 84(5Հ)-44

© «Դարակ» հրատարակչություն, 2023
© Միքայելյան Աբել, 2023
© Գրիգորյան Արիկ, նկարիչ, 2023

ISBN 978-9939-885-25-4

ՊՈՂՈՍՆ ՈՒ ՃԻԿՈԼԸ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.

2018 - 2020

1

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՃԻԿՈԼԻՆ

Երկու հազար տասնութ թվականի հունիսի տասնմեկին՝ ճիշտ կեսօրին, Պողոսն իր «Նիվայով» իջնում էր Քոչար փողոցով՝ ձախ ձեռքով բռնած մեքենայի ղեկը, աջով՝ մի փքաբլիթ, որ գնել էր դեռ առավոտյան, բայց չէր հասցրել ուտել: Այն, որ կեսօր է, նա իմացավ ռադիոյից, որն անսպասելի ընդմիջելով երաժշտությունը՝ ազդարարեց. «Երևանում ժամը տասներկուսն է: Եթերում լուրերի հերթական թողարկումն է»:

Պողոսը բավականաչափ զայրացած էր: Այստեղ նա հայտնվել էր պատահաբար. համաձայն նախօրեին կազմած ժամանակացույցի՝ ժամը տասներկուսին պիտի լիներ Քոչար փողոցում և պետք է ասել, որ նա բոլորովին չէր խախտել այդ ժամանակացույցը, անգամ յոթ րոպե շուտ էր եկել, բայց պարզվել էր, որ հասցեն, որ գրել էր նոթատետրում այստեղ պարզապես գոյություն չուներ: Եվ չէր էլ կարող գոյություն ունենալ, որովհետև նա Երվանդ Քոչար փողոցի փոխարեն եկել էր Հրաչյա Քոչար փողոց:

Եվ ահա, բավականաչափ զայրացած Պողոսը, մինչ շրջվելն ու ճիշտ հասցեն գնալը զանգահարեց Աչոնին և սկսեց նախատել նրան.

- Ինչո՞ւ չասացիր, որ ես պիտի գնամ ոչ թե Երվանդ, այլ Հրաչյա Քոչար փողոց:

Աչոնը, որ այդ պահին կարդում էր Ուրուգվայի նախկին նախագահ Խոսե Մուխիկայի մասին մի գիրք, որն ի դեպ խորհուրդ էր տվել կարդալ հենց ինքը Պողոսը, դժկամությամբ կտրվեց ընթերցանությունից և ասաց.

- Որքա՜ն լավ մարդ է եղել ծերուկը:

- Ի՞նչ ծերուկ,- չհասկացավ Պողոսը:

- Ուրուգվայի նախագահը՝ Խոսե Ալբերտո Մուխիկա Կորդանոն, նույն ինքը՝ Էլ Պեպեն,- պարզաբանեց Աչոնը, ապա շարունակեց,- դու գիտեի՞ր, թե ինչ դիվանագիտական սկանդալի մեջ է հայտնվել նա, երբ մամուլի ասուլիսի ժամանակ, չիմանալով, որ բարձրախոսներն արդեն միացրած են, ասել է իր օգնականին՝ «Այս պառավը ավելի վատն է, քան այն շեղաչքը»՝ նկատի ունենալով Արգենտինայի նախագահ Քրիստինա Ֆերնանդես դե Կիրչներին և նրա հանգուցյալ ամուսնուն:

- Իհարկե գիտեի, չէ՞ որ ես եմ քեզ խորհուրդ տվել կարդալ այդ գիրքը:

Ընթերցողին կարող է թվալ, թե Աչոնը Պողոսի քարտուղարուհին էր, բայց դա այդպես չէր: Նրանք պարզապես հարևաններ էին, գուցե մի քիչ ավելին, քան հարևաններ: Եվ ընդհանրապես, Պողոսը չէր էլ կարող քարտուղարուհի ունենալ, որովհետև աշխատանքը, որով նա զբաղվում էր, նման ճոխություն չէր ենթադրում: Բանն այն է, որ մեր հերոսը սառնարաններ էր վերանորոգում: Ավելի ճիշտ՝ ոչ միայն սառնարաններ, այլ ընդհանրապես՝ կենցաղային տեխնիկա: Առհասարակ նա կարող էր վերանորոգել ամեն ինչ, անգամ՝ հրթիռ, բայց նրան հիմնականում դիմում էին նրանք, որոնց սառնարանն էր շարքից դուրս եկել կամ, ասենք՝ լվացքի մեքենան, երբեմն նաև՝ արդուկը:

Եվ ահա Պողոսը Աչոնի հետ խոսելուց և զայրույթը փոքր-ինչ պարպելուց հետո հասել էր արդեն Բաղրամյան պողոտա և սկսել էր բավականին մեծ ախորժակով ուտել իր փքաբլիթը, որ գնել էր դեռ առավոտյան՝ իր շենքի տակի խանութից, երբ ռադիոընդունիչը, երևանյան ժամանակն

ազդարարելուց հետո, շարունակեց. «Այսօր վարչապետ Նիկոլ Փաշինյանը ուղիղ եթերում պատասխանելու է քաղաքացիների հարցերին: Նա Ֆեյսբուքի իր էջում գրել է…»

«Ճիկրլ…», բացականչեց Պողոսը, հետո կուլ տվեց փքաբլիթից մի մեծ կտոր և ավելացրեց. «հեղափոխություն…»:

Նոր վարչապետին նա չէր ընդունում: Ինչ որ հարյուրերորդ զգայարանով զգում էր, որ մի բան այն չէ: Պողոսն ընդհանրապես մարդկանց զգում էր: Գործի բնույթն այնպիսին էր, որ շփվում էր շատերի հետ ու կարողանում էր տարբերել լավին վատից, սուտը՝ ճշտից, կեղծն՝ անկեղծից ու նման բաներ: Համենայնդեպս, ինքը համոզված էր, որ այդպես է: Լավ մարդկանց նա սիրում էր, վատ մարդկանց՝ ականջները քաշում, բայց և այնպես մտածում էր, որ միևնույնն է՝ մեկն առանց մյուսի չի լինում, բնություն է:

«Այսօրվանից Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին սպասարկող ավտոմեքենաների համար տրամադրվող բենզինի քանակը երկու անգամ կկրճատվի: Այդպիսով կտնտեսվի տարեկան առնվազն հիսունվեց միլիոն դրամ»,- ազդարարեց ռադիոն:

- Ճիկրլ…- կրկին բացականչեց Պողոսը, ապա արգելակեց կարմիր լույսի տակ և անջատեց ռադիոընդունիչը:

Դրանից մեկ ամիս կամ քիչ ավել առաջ, երբ երկրում մոլեգնում էր հեղափոխությունը, Պողոսը զբաղված էր իր գյուտով: Թե ինչ գյուտ էր դա, դեռ առիթ կունենանք խոսելու, առայժմ անդրադառնանք նրան, թե ինչու մեր հերոսը խանդավառված չէր շուրջը ծավալվող իրադարձություններով՝ ինչպես իր հարևանները, բարեկամներն ու ծանոթները՝ գրեթե ամբողջությամբ, բացի Աչոնից, իհարկե: Բանն այն է, որ Պողոսը ծայրահեղ խելացի մարդ էր, չնայած նույն այդ

հարևանները, բարեկամներն ու ծանոթները՝ գրեթե ամբողջությամբ, համոզված էին, որ ցնդած է: Համոզվածը՝ համոզված էին, բայց այդ մասին խոսել չէին համարձակվում անգամ իրար մեջ: Պողոսից բոլորը վախենում էին, և չի կարելի ասել, որ սխալ էին անում: Թե ինչու էին վախենում՝ դրան նույնպես կանդրադառնանք ավելի ուշ, իսկ հեղափոխությամբ Պողոսը ոգևորված չէր, որովհետև զգում էր, որ սուտն ու կեղծիքն այստեղ շատ ավելի շատ են, քան՝ ճշմարտությունը:

Բաղրամյան -Մոսկովյան խաչմերուկի լուսացույցը համառորեն չէր կանաչում: Պողոսը կանգնած էր մեջտեղի շարքում: Ձախակողմյան հայելու մեջ հանկարծ նա տեսավ կարմիր ու կապույտ թարթող լույսերով սև մեքենաների մի շարասյուն, որ արագ իջնում էր երրորդ շարքով: Մի քանի մեքենա անցան նրա կողքով ու արգելակեցին քիչ առջևում, հաջորդը՝ S դասի մի Մերսեդես կանգնեց անմիջապես իր Նիվայի ձախ կողմում:

Փաստորեն լուրը, որ քիչ առաջ լսեց ռադիոյով առանձնապես չէր համապատասխանում իրականությանը՝ մտածեց Պողոսը: Կառավարությունը ոչ էլ կրճատել է ծառայողական մեքենաների թիվը: Իսկ գուցե սրանք կառավարական մեքենաներ չեն, այլ ինչ որ օլիգարխի՞՝ շարունակեց մտածել նա, ու հենց այդ պահին բացվեց «Մերսեդեսի» հետևի պատուհանը, և տեսավ՝ ի՞նչ եք կարծում ում…

Նրան, ով նստած էր կողքի մեքենայի մեջ, Պողոսն ասում էր Ճիկոլ: Այդպես էր ստացվել, այդպես էր պատկերացնում Պողոսն այդ կերպարին ու, ինչպես պատկերացնում էր, այդպես էլ անվանում էր:

Եվ ահա, Բաղրամյան-Մոսկովյան խաչմերուկին, կարմիր լույսի տակ կանգնած՝ Ճիկոլը ժպտաց Պողոսին: Ու չնա-

յած ինքը ոչինչ չասաց, բայց ժպիտն ասում էր՝ «տեսնում ես, ես՝ պետության ղեկավարս, կանգնել եմ կարմիր լույսի տակ»:

Պողոսն, ի տարբերություն պետության ղեկավարի, չժպտաց: Ավելին այնպիսի հայացք ընդունեց, որ վարչապետի դեմքին սառեց ժպիտը, և նա ստիպված էր բարձրացնել ապակին: Ու Պողոսը չհասցրեց ասել այն, ինչ որ ուզում էր ասել: Ձեզ գուցե թվա, որ նա պիտի կոպտեր կամ անգամ հայհոյեր, բայց ոչ, Պողոսն ընդամենը ուզում էր ասել՝ «կխոսենք երկու տարի հետո»:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՈՎ ԷՐ ԶԲԱՂՎԱԾ ՊՈՂՈՍԸ ՎԵՐՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՒ ԴՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Մինչև այս պատմության հիմնական մասին անցնելը հավանաբար ճիշտ կլինի գոնե մի քիչ ճանաչել ու հասկանալ Պողոսին, որովհետև խորապես նրան հասկանալն այնքան էլ հեշտ բան չէ:

Դեռ երկու հազար տասնվեց թվականի ապրիլյան պատերազմից հետո Պողոսը, ռազմաճակատից վերադառնալով, սկսեց մտածել մի բանի մասին, որը, եթե իրականություն դառնար՝ իր հայրենիքում և աշխարհում կփրկվեին բազմաթիվ կյանքեր:

Մասնագիտությամբ նա ինժեներ էր, հազար ինը հարյուր ութսունութին ավարտել էր Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, երկու տարի իր մասնագիտությամբ աշխատել գործարանում, այնուհետև մեկնել էր պատերազմ և

չորս տարի կռվել մինչև վիրավորվելը: Վիրավորվել էր արկի պայթյունից՝ զինադադարից ճիշտ մեկ օր առաջ, և երբ հաղթական մարտից հետո ընկերները բեռնատարով հասցրել էին դաշտային հոսպիտալ, բժիշկներն ասել էին, որ վերքերը չափազանց շատ են ու չափազանց լուրջ՝ հատկապես գլխի վերքը. մի խոսքով՝ հազիվ թե ապրի: Բայց Պողոսն ապրել էր ու հերիք չի ապրել էր, դեռ պիտի մասնակցեր հաջորդ երկու պատերազմներին: Միայն կար մեկ խնդիր. հայտնի չէ, արկի պայթյունի հետևանքով ստացած կոնտուզիայից, գլխի բեկորային վիրավորումից, մոտ մեկ տարի կոմայում մնալուց, սթրեսներից, թե ինչ-որ ուրիշ պատճառով՝ Պողոսը լրիվ փոխվել էր: Շուտ բռնկվում էր, հաճախ անհասկանալի մտքեր էր արտահայտում, կարող էր ժամերով կանգնել ու նայել երկնքին, բայց, որ ամենակարևորն է, սկսել էր ռոք լսել, ընդ որում՝ ծանր ռոք, այնպիսի խմբերի ինչպիսիք են AC/DC-ն, Guns N Roses-ը, “Aerosmith-ը և այլն: Իր Նիվայի բեռնախցում հավաքել էր հզոր ձայնային համակարգ ու սիրում էր ազատ ժամանակ գնալ քաղաքից դուրս ինչ-որ տեղ՝ անտառ կամ սար ու ձոր, հնարավորինս բարձր միացնել երաժշտությունը, մտորել, իսկ գիշերները նայել երկնքին իր իսկ հավաքած աստղադիտակով: Երբեմն հետը տանում էր նաև Աչոնին:

Իսկ Պողոսի ոչ ազատ ժամանակը բաղկացած էր երկու մասից. դրանցից առաջինը աշխատանքն էր, որով հոգում էր իր կեցության ծախսերը. ինչպես արդեն ասվեց վերևում, նա զբաղվում էր կենցաղային տեխնիկայի վերանորոգմամբ: Երկրորդը՝ գյուտն էր, որի վրա, աշխատում էր երկու հազար տասնվեց թվականից:

Մինչև գյուտին անդրադառնալը սակայն, ինչը խոստացել էինք այս պատմության սկզբում, կատարենք մեկ այլ

խոստում և պատմենք այն մասին, թե ինչու էին մարդիկ Պողոսից վախենում: Նախ, մեր հերոսի կերպարը ներկայացնելու համար, դիմենք Երևանի Կենտրոն վարչական շրջանի ոստիկանության բաժանմունքի արխիվում պահպանված տուժող ոմն Լեոնիդ Բախտիկյանի նկարագրությանը՝ տրված հազար ինը հարյուր իննսունվեց թվականի դեկտեմբերի հինգին, որի հիման վրա կազմվել էր կասկածյալ Պողոս Պողոսյանի՝ նույն մեր Պողոսի, բանավոր դիմանկարը: «Քսանհինգ-երեսուն տարեկան, շագանակագույն մազերով, շագանակագույն մորուքով, շագանակագույն, խոշոր աչքերով, քիթը մի փոքր սրածայր, հասակը՝ հարյուր ութսուն-հարյուր ութսունհինգ սանտիմետր, հաղթանդամ, ձախ այտին՝ փոքր խալ, աջ այտին՝ թեք, երկար սպի»:

Լեոնիդ Բախտիկյանի տված նկարագրությունից իհարկե անցել էր ավելի քան քսան տարի և մեր հերոսի արտաքինը որոշակիորեն փոխվել էր, սակայն ընթերցողին վստահաբար ավելի շատ կհետաքրքրի, թե ինչ սխրագործություն էր արել նա հազար ինը հարյուր իննսունվեց թվականին, որ ոստիկանները ստիպված էին փնտրել նրան: Կրկին դիմենք ոստիկանության Երևանի Կենտրոն վարչական շրջանի բաժանմունքի արխիվում պահպանված նյութերին, համաձայն որոնց՝ Պողոս Պողոսյանի դեմ քրեական գործ էր հարուցվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հարյուր տասնինը հոդվածով, այն է՝ անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը: Հետո արդեն դատարանը մեր հերոսին մեղսունակ էր ճանաչել և դատապարտել վերոնշյալ հոդվածով սահմանված առավելագույն պատժաչափին՝ երեք տարվա ազատազրկման: Դատարանն իհարկե ապօրինություն էր արել՝ Պողոս Պողոսյանին մեղսունակ ճանաչելով, բայց այլ կերպ լինել չէր կարող. բանն այն է, որ

անձը, այսինքն, նույն ինքը՝ Լեոնիդ Բախտիկյանը, որին դիտավորությամբ ուժեղ ֆիզիկական ցավ էր պատճառել մեր հերոսը, նույնպես դատավոր էր… Իսկ ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներում էր դատավոր Բախտիկյանին պատճառվել այդ ցավը. ըստ քրեական գործի նյութերի՝ Պողոսը հարվածել և կոտրել էր տուժողի քիթը ինչպես նաև քաշել էր ականջը: Թե ի՞նչ հերթականությամբ էր դա արել, այսինքն՝ նախ կոտրել էր քիթը, հետո քաշել ականջը, թե՝ հակառակը, ինչպես նաև քաշելուց հետո ինչ ճակատագրի էր արժանացել տուժողի ականջը, քրեական գործում չէր նշվում: Ինչ վերաբերում է հանգամանքներին, ապա դրանց մասին տեղեկատվությունը ևս չափազանց սուղ էր՝ ասվում էր միայն, որ դեպքը տեղի է ունեցել Պուշկին փողոցում՝ կեսգիշերին:

Այս դեպքի մասին Պողոսը չէր սիրում հիշել: Չէր սիրում հիշել նաև այն մեկուկես տարիների մասին, որ անցկացրել էր գաղութում՝ մինչ համաներմամբ ազատվելը: Հավասարապես չէր սիրում հիշել երկու այլ դեպքերի մասին, որոնցից մեկի ժամանակ շանսատակ էր արել մեծահարուստ մի գործարարի՝ իր երկու թիկնապահների հետ միասին, ինչից հետո ստիպել էր ուտել հարյուր հազար դրամ՝ տասը հազարանոց թղթադրամներով, մյուսի ժամանակ ստիպել էր մի բարձրաստիճան ոստիկանի մերկանալ, դրել էր վերջինիս իր իսկ մեքենան ու տարել իջեցրել Ներքին գործերի նախարարության ծառայողական մուտքի առջև ճիշտ այն պահին, երբ աշխատանքի էր գալիս նախարարը: Առաջին դեպքում գործարարը, ավելի ճիշտ նրա աշխատողները իր կատարած գործի համար խոստացված երկու հարյուր հազար դրամի փոխարեն Պողոսին տվել էին հարյուր հազար դրամ, երկրորդ դեպքում բարձրաստիճան ոստիկանը Պողոսի աչքի առաջ վիրավորել ու քաշքշել էր մի կնոջ, ինչի ընթացքում

պատռվել էր վերջինիս զգեստը՝ կրծքերի հատվածում:

Երկու դեպքում էլ դատարանը Պողոսին ճանաչել էր անմեղսունակ և քրեական պատասխանատվության չէր ենթարկել: Նրա նկատմամբ կիրառվել էին բժշկական բնույթի հարկադիր միջոցներ, բայց մեր հերոսը մնացել էր ազատության մեջ: Դեպքերը տեղի էին ունեցել համապատասխանաբար երկու հազար մեկ և երկու հազար հինգ թվականներին: Դրանից առաջ, այդ ընթացքում և դրանից հետո Պողոսն իհարկե բազմաթիվ անգամներ էր քաշել բազմաթիվ մարդկանց ականջները, կոտրել մի քանիսի քթերը, սակայն այդ մասին ոչ իրավապահ մարմինները, ոչ էլ հանրության լայն շրջանակները չէին տեղեկացվել:

Միայն թե մի շտապեք մեր հերոսին համարել վայրենի ինչ-որ մեկը: Հավատացած եղեք, Պողոսը չափազանց բարի մարդ էր, պարզապես հեշտ էր հունից դուրս գալիս: Բայց և այնպես, նա քաշում էր այն մարդկանց ականջները ու կոտրում էր այն մարդկանց քթերը, որոնք արժանի էին, որ իրենց ականջները քաշվեն և քթերը կոտրվեն:

Ինչևէ, անցնենք նրան, թե ինչպես էր վաստակում Պողոսն իր հանապազօրյա հացը և վերջապես անդրադառնանք նրա գյուտին:

Պողոսը մի հայտարարություն էր տեղադրել list.am կայքում, որտեղ գրված էր. «Կենցաղային տեխնիկայի վերանորոգում. հիմար բաների համար չզանգահարել»: Ավելի ճիշտ հայտարարությունը տեղադրել էր ոչ թե Պողոսը, այլ Աչոնը, որովհետև մեր հերոսը համացանցից գլուխ չէր հանում և տեղադրել էր բոլորովին վերջերս, երկու հազար տասնյոթին: Դրանից առաջ շուրջ տասը տարի Պողոսն արել էր նույն գործը՝ փակցնելով նույն հայտարարությունը կանգառներում ու շենքերի մուտքերին: Իսկ դրանից էլ առաջ՝ մի քա-

նի տարի աշխատել էր կոնդիցիոներներ և գազատաքացուցիչներ վաճառող մի քանի ընկերություններում, բայց ոչ մի տեղ ղեկավարության հետ յոլա չէր գնացել և, դիմանալով առավելագույնը մի քանի ամիս, հեռացվել էր աշխատանքից՝ կոտրելով մեկ քիթ և քաշելով հինգ ականջ: Բայց և այնպես փողից երբեք Պողոսը չէր խեղճացել: Միշտ էլ վաստակել էր այնքան, որ բավականացրել էր նորմալ ապրելուն, իսկ նորմալ ապրելու համար մեր հերոսին շատ բան պետք չէր:

Եվ ահա երկու հազար տասնյոթին Աչոնը՝ հարևանուհին, այն բանից հետո, երբ Պողոսը վերանորոգել էր նրա արդուկը, որը բոլոր կանոններով վերանորոգման ենթակա չէր, տեղադրել էր վերոհիշյալ հայտարարությունը համացանցում և Պողոսի եկամուտները կտրուկ ավելացել էին: Հիմա նա վաստակում էր օրական միջինը երեսուն հազար դրամ: Բացի դրանից, ամեն ամիս գումար էր ստանում Ամերիկայում ապրող քրոջից ու չնայած խնդրում էր նրան չուղարկել, բայց հոգատար քույրը չէր լսում: Ավելին նա անընդհատ համոզում էր եղբորը տեղափոխվել Ամերիկա, բայց այստեղ էլ չէր լսում Պողոսը: Ապրում էր Պուշկինի փողոցի իր բնակարանում, ապրում էր մենակ, ցերեկները զբաղվում էր իր գործով, երեկոները գնում էր դասական երաժշտության համերգների, օպերաների, բալետների կամ գարեջուր խմելու՝ նայած տրամադրության, հանգստյան օրերին նստում էր իր խակի գույնի Նիվան ու քշում քաղաքից դուրս մի տեղ՝ անտառ կամ սար ու ձոր, երբեմն հետը տանելով Աչոնին և այս ամենին զուգահեռ զբաղվում էր իր գյուտով:

Փաստորեն գյուտին նորից չանդրադարձանք, բայց դեռ դրա համար ժամանակ կլինի: Իսկ հիմա գանք երկու հազար քսան թվականի հունիս՝ մի ժամանակաշրջան, երբ աշխարհում ու Հայաստանում բոլորը դիմակ էին կրում՝ ան-

գամ այգում զբոսնելիս, բոլորը՝ բացի շատ քչերից, որոնց թվում էր նաև մեր Պողոսը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՔԱՇԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱԿԱՆՋԸ

Չի կարելի ասել, թե համավարակը չազդեց Պողոսի գործի վրա: Բնականաբար ազդեց՝ կանչերը պակասեցին երեք, գուցե չորս կամ նույնիսկ հինգ անգամ: Բայց այնուամենայնիվ՝ զանգողներ կային: Ամռան շոգին առանց կոնդիցիոների ապրել դեռ մի կերպ կարելի է, բայց, երբ փչանում է սառնարանը, դա արդեն լուրջ խնդիր է: Եվ օրվա մեջ երկու, երեք երբեմն նույնիսկ չորս անգամ Պողոսին զանգահարում էին փչացած սառնարանների տերերը և խնդրում փրկել իրենց մթերքը: Եվ Պողոսը սիրով օգնում էր մարդկանց:

Սակայն այստեղ հարկ է հիշատակել, որ այն բանից հետո, երբ մի քանի անգամ Պողոսն հայտնվել էր անախորժ վիճակում, այսինքն կանչի էր գնացել առանց դիմակի և նրան ներս չէին թողել, նա ստիպված էր եղել մի փոքր խմբագրել list.am-ում տեղադրված իր հայտարարությունը: Ավելի ճիշտ խմբագրել էր Աչոնը, որովհետև Պողոսը համացանցից գլուխ չէր հանում: Հիմա հայտարարության մեջ ավելացել էր հետևյալ տողը՝ «ո՛չ դիմակներին»:

Եվ ահա, երկու հազար քսան թվականի հունիսի տասնմեկին, Պողոսը մեկը մյուսի հետևից երկու զանգ ստացավ, երկու դեպքում էլ նրան կանչում էին սառնարան վերանորո-

գելու: Առաջին զանգը դարձյալ Քոչար փողոցից էր, ինչպես երկու տարի առաջ, մյուսը Երրորդ մասից, ու, ինչպես երկու տարի առաջ, հիմա էլ Պողոսը առաջնահերթությունը տվեց առաջինին՝ իհարկե նախապես ճշտելով, թե ո՞ր Քոչար փողոցից է կանչը:

Երեկոյան ժամը յոթն էր, երբ Պողոսը սեղմեց բարձրա-

հարկ մի շենքի հինգերորդ հարկում գտնվող բնակարանի դռան զանգի կոճակը՝ ձախ ձեռքին գործիքների պայուսակը, աջ ձեռքին՝ մի թութակ, որին բռնել էր վերելակի մեջ: Թռչունն անակնկալ վերելակ էր մտել, երբ այն կանգնել էր հինգերորդ հարկում և դռները բացվել էին: Պողոսը նախ քաղաքավարի հարցրել էր, թե ո՞ր հարկ է գնում, բայց, քանի որ թութակի պատասխանից ոչինչ չէր հասկացել, զգուշորեն բռնել էր նրան ու դուրս բերել վերելակից, մտածելով, որ հարկի բնակիչներից մեկինը կլինի:

Թութակը սպիտակ փետուրներով էր, դեղին քյանքյուլով ու չափազանց ինքնավստահ հայացքով:

- Ո՞վ է,- հարցրեցին հինգերորդ հարկում գտնվող բնակարանի դռան հակառակ կողմից՝ բավականաչափ ուշացումով:

- Պողոսը,- պատասխանեց Պողոսը:

- Ո՞վ,- կրկնեցին ներսից:

-Սառնարան սարքողը,- հստակեցրեց Պողոսը:

Դուռը բացեց մի երիտասարդ, որն ակնհայտորեն նոր էր արթնացել քնից: Ժամանակից շուտ ճաղատացած, ձվաձև գլխով ու խոշոր դուրս ընկած աչքերով նա նման էր գորտի: Համենայնդեպս Պողոսին այդպես թվաց:

Երիտասարդի հագին կանաչ, ճմրթած շապիկ էր ու լայն, անճոռնի շորտեր, որոնց տակից շարունակվում էին ծուռ ոտքերը: Լրիվ գորտ է՝ մտածեց Պողոսը ու հարցրեց.

- Ո՞ւմն է այս թութակը:

Երիտասարդը նախ աչքերին դրեց ակնոցը, ապա նախասրահի պահարանից վերցրեց դիմակը, հագավ, ու նոր միայն զարմացած ասաց.

- Ես ի՞նչ իմանամ ումն է: Ինչո՞ւ Դուք դիմակով չեք:

Հիմա Պողոսի զարմանալու հերթն էր: Նա մի անգամ էլ

չափեց գորտին ոտքից գլուխ ու հարցրեց:

- Ես Ձեզ հետ եմ խոսել հեռախոսով:

- Այո,- պատասխանեց նա ու դիմեց բնակարանում ինչ-որ մեկին,- իջեցրեք այդ հեռուստացույցի ձայնը:

Հեռուստացույցի ձայնը իսկապես բարձր էր, եթերում, ըստ ամենայնի, հայկական ինչ-որ սերիալ էր և ինչ-որ մեկը ինչ-որ մեկին ժարգոնով ինչ որ բան էր բացատրում: «Արա, այ տղա, դու ոնց որ տեղը չես բերում»՝ մոտավորապես այս ոճով:

Իսկ թութակն անհանգիստ շարժումներ էր անում ու փորձում էր ազատվել: Պողոսն ավելի ամուր բռնեց նրան, սպասեց, մինչ կցածրացնեն հեռուստացույցի ձայնը ու հարցրեց.

- Դուք կարդացել եք իմ հայտարարությունը:

- Ինչ հայտարարություն,- չհասկանալու տվեց գորտը ,- հենց հիմա դիմակ հագեք:

- Բայց իմ հայտարարության մեջ գրված է, որ...- Պողոսն ուզում էր բացատրել, որ ինքը զգուշացրել է դիմակ չկրելու մասին, սակայն չհասցրեց, որովհետև այդ պահին թութակն ազատվեց նրա ձեռքից ու տանտիրոջ ճաղատի վրայով թռավ-մտավ բնակարան:

- Դու այս ինչ ես անում,- բացականչեց տանտերը,- ես հիմա ոստիկանություն կկանչեմ:

Պողոսը ճիշտն ասած չհասկացավ, թե ո՞ւմ է նա դիմում, իրե՞ն, թե՞ թութակին և դա էր միակ պատճառը, որ չքաշեց տանտիրոջ ականջից: Բանն այն է, որ նա չէր սիրում, երբ անծանոթ մարդիկ իր հետ «դու»-ով են խոսում, բացի այդ, չէր սիրում ոստիկաններին և անգամ այդ բառը լսելիս կատաղում էր: Մի խոսքով, հապաղեց մի պահ, բայց այդ մի պահն էլ բավական էր, որ տանտերը վազեր թութակի հետ-

ևից: Սակայն թռչունին բռնելն, ըստ երևույթին, այդքան էլ հեշտ չէր: Նախ լսվեցին թրխկոցներ, հետո՝ շրխկոցներ, հետո թութակը վերադարձավ ու փափուկ վայրէջք կատարեց Պողոսի ուսին: Հայտնվեց նաև գորտը, շնչակտուր կանգնեց ու հևալով ասաց.

- Նա կոտրեց չինական վազը: Դուք պատասխան կտաք:

Այստեղ Պողոսն հասկացավ, որ փաստորեն նախորդ անգամ տանտերը «դու»-ով դիմել էր ոչ թե իրեն, այլ թութակին:

- Չինացիները շուտով կտիրեն աշխարհը,- անտարբեր նետեց նա, կարծես ոչինչ տեղի չէր ունեցել,- քսանմեկերորդ դարի երկրորդ կեսը չինացիներին է լինելու:

- Ինչ,- չհասկացավ գորտը:

- Ես ասում եմ՝ Ձեր սառնարանը պետք է վերանորոգել, թե՞ ոչ, որովհետև ես ուրիշ պատվեր էլ ունեմ՝ Երրորդ մասում:

Գորտի աչքերը զարմանքից ավելի խոշորացան:

- Դուք ինձ ձեռ եք առնում: Դուք գիտեք թե ով եմ ես:

- Ոչ,- հանգիստ պատասխանեց Պողոսը,- բայց ենթադրում եմ, որ մարդ եք, չնայած շատ եք նման գորտի:

- Ինչ,- բացականչեց գորտը,- Ես Ազգային ժողովի պատգամավոր եմ: Դու պատասխան կտաս: Ես հենց հիմա ոստիկանություն եմ կանչում:

Այստեղ արդեն Պողոսը չդիմացավ, ձեռքից ցած դրեց գործիքներով պայուսակը և պատրաստվում էր բռնել պատգամավորի ականջը, բայց այդ պահին ինչ-որ կանացի ձայն ներսից կանչեց.

- Լռեք, վարչապետն է խոսում:

Գորտը կտրուկ շրջվեց, վազեց հյուրասենյակ, բարձ-

ռացրեց հեռուստացույցի ձայնը ու զգաստ կանգնեց: Պողոսը նույնպես քայլեց դեպի հյուրասենյակ՝ չնայած նրան ոչ ոք ներս չէր հրավիրել:

Սակայն պարզվեց, խոսում էր ոչ թե վարչապետը, այլ լուրերի հաղորդավարը. «Վարչապետ Նիկոլ Փաշինյանը առաջարկում է բջջային հավելվածով նկարված ճանապարհային իրավախախտումների թվում, որոնց հիման վրա կհարուցվի վարչական վարույթ, ավելացնել նաև ավտոմեքենայում դիմակ չկրելու խախտումը»:

- Տեսա՞ք,- ասաց գորտը՝ դիմելով Պողոսին:

Բայց վերջինս չհասցրեց պատասխանել, որովհետև այդ պահին կադրում հայտնվեց և սկսեց խոսել ինքը՝ վարչապետը. «Այդտեղ ի՞նչ խնդիր կա. մարդը տեսավ, նկարեց, արձանագրեց, որ մեքենայում առանց դիմակի անձ կա, համարը գրվեց, վարորդին տուգանում են դրա համար: Մենք հիմա այն վիճակում ենք, որ դա պետք է ավելացնել այդ ցանկում: Մենք մեր քաղաքացիներին ասում ենք, որ հա-

կահամաճարակային շարժում ենք սկսում, բայց նրանք չեն ուզում համապատասխան գործիք տալ: Որտեղ է խնդիրը»:

- Ճիկի՛լ,- բացականչեց Պողոսը:

Եվ այստեղ ասես հրաշք տեղի ունեցավ. թութակը, որ ամբողջ այդ ընթացքում շարունակում էր նստած մնալ Պողոսի ուսին և որի մասին բոլորովին մոռացել էին, սկսեց խոսել.

- Ճիկոլ, ճիկոլ, ճիկոլ,- կրկնեց նա…

Տանտերը, նույն ինքը՝ պատգամավորը, նույն ինքը՝ գորտը վերցրեց հեռախոսը և զանգահարեց.

- Ալո, ոստիկանությո՞ւն… Վիրավորանք վարչապետի հասցեին, հարձակում պատգամավորի վրա՝ առանց դիմակի, թութակը կոտրեց չինական վազը, աամ՛խ…

Վերջին բացականչությունը նա արեց, որովհետև այդ պահին Պողոսը քաշեց նրա ականջը: Հեռախոսն ընկավ պատգամավորի ձեռքից, ըստ ամենայնի արժանացավ չինական վազի ճակատագրին, ինքը՝ պատգամավորը մի քիչ էլ գոռաց, հետո, երբ սենյակ մտավ նրա կինը ու Պողոսը թողեց նրա ականջը, վախից քարացավ ու սսկվեց:

Իսկ մեր հերոսը, առանց որևէ բան ասելու շրջվեց ու դուրս եկավ, կարծես թե՝ որոշակիորեն բավարարված:

Միայն դռան մոտ մի պահ կանգնեց հետ նայեց ու ասաց.

- Ճիկի՛լ:

- Ճիկոլ, ճիկոլ, ճիկոլ,- արձագանքեց թութակը, որ ամբողջ այդ ընթացքում նրա ուսին էր, և որին ակնհայտորեն դուր էր եկել այն ամենը, ինչ տեսավ:

ԱՆԵՐԵՍ ԹՈՒԹԱԿԸ

Պատգամավոր գորտի ականջը քաշելուց և նրա բնակարանից դուրս գալուց հետո Պողոսին պետք էր հասկանալ, թե ինչպես վարվել թութակի հետ, որ շարունակում էր նստած մնալ նրա ուսին: Թռչունին նա հավանել էր, և ուրախ կլիներ տանել իր հետ ու պահել իր տանը, սակայն, եթե թութակը շենքի բնակիչներից մեկինն էր, իսկ ամենայն հավանականությամբ այդպես էլ կար, ապա մարդկային չէր լինի նրան տիրոջից կամ տիրոջը նրանից զրկելը: Եվ Պողոսը որոշեց բաց թողնել նրան:

- Դու իհարկե հետաքրքիր թռչուն ես, խելացի և, որ կարևորն է՝ քաղաքականապես գրագետ,- դիմեց նա թութակին, ուսի վրայից իջեցնելով նրան,- բայց ես չեմ կարող քեզ տանել ինձ հետ:

Հետո շոյեց կտուցը և բաց թողեց: Կես հարկ իջավ սանդուղքով, մտավ վերելակ և դեռ չէր հասցրել սեղմել առաջին հարկի կոճակը, երբ թութակը թռավ ներս ու նորից նստեց նրա ուսին: Լավ, մտածեց Պողոսը, երևի ուզում է դուրս գալ շենքից, կիջեցնեմ հետս ու բաց կթողնեմ: Այդպես էլ վարվեց, շենքի մուտքից դուրս գալով՝ օդ նետեց թութակին և մինչ բակում կայանած մեքենան նստելն ու հեռանալը, որոշեց մտնել կողքի խանութն ու սիգարետ առնել:

«Հաճախորդների մուտքը միայն դիմակներով»՝ գրված էր խանութի դռանը: Սակայն Պողոսն ուշադրություն չդարձրեց, մտավ ներս ու մոտեցավ վաճառասեղանին, որի հետևում կանգնած էր փարթամ կրծքերով մի կին՝ նույնպես առանց դիմակի:

- Տվեք ինձ մի տուփ…

- Առանց դիմակի չենք սպասարկում,- ընդհատեց նրան վաճառողուհին:

- Բայց…- Պողոսն ուզում էր ասել, որ նա էլ դիմակով չէ, բայց վաճառողուհին նորից ընդհատեց:

- Դռան վրա գրված է՝ «հաճախորդների մուտքը միայն դիմակներով», կարդալ չգիտե՞ք, ինչ է: Ուզում եք, որ ինձ տուգանե՞ն:

- Բայց չէ՞ որ Դուք նույնպես դիմակով չեք,- այս անգամ Պողոսին հաջողվեց արտահայտել իր միտքը:

- Այո, բայց ես հաճախորդ չեմ,- չափազանց վստահ արձագանքեց վաճառողուհին,- անմիջապես դիմակ հագեք, թե չէ ինձ կտուգանեն:

Պողոսը մի քիչ մտածեց ու ասաց:

- Եթե մեղմ արտահայտվեմ, իսկ ես կփորձեմ հնարավորինս մեղմ արտահայտվել, պիտի ասեմ, որ Դուք առանձնապես չեք փայլում Ձեր մտավոր ունակություններով, տիկին: Սակայն դա չէ կարևորը, կարևորն այն է, որ ըստ Ձեր մոտեցման՝ հաճախորդները պետք է դիմակ կրեն՝ ոչ թե, որ չվարակեն կամ չվարակվեն, այլ՝ որ Ձեզ չտուգանեն:

Այստեղ վաճառողուհին, որն ըստ ամենայնի չէր հասկացել Պողոսի ասածի առաջին մասը, իսկ երկրորդ մասը հասկացել էր կիսատ, այսպես արձագանքեց.

- Որ տուգանեցին՝ դո՞ւ ես փողը տալու: Տեղից էլ առևտուր չկա:

Այսօր արդեն երկրորդ անգամ էին անծանոթ մարդիկ Պողոսին դիմում «դու»-ով: Նա իհարկե չէր կարող իրեն թույլ տալ կանանց հետ վարվել այնպես, ինչպես վարվում էր տղամարդկանց հետ, այդ իսկ պատճառով վարվեց հետևյալ կերպ. իր ողջ երկար մարմնով ծգվեց վաճառասեղանի

վրայով, հասավ պատի դարակներին, այնտեղից վերցրեց մի տուփ ծխախոտ, ապա, վաճառողուհու ապշած հայացքի ներքո գրպանից հանեց մի հազարանոց, մեկնեց նրան և ասաց.

- Մանրը պահեք Ձեզ:

Ու դուրս եկավ խանութից: Բայց չէր հասցրել մոտենալ մեքենային ու բացել դուռը, երբ չգիտես որտեղից հայտնվեց թութակը և նորից նստեց նրա ուսին:

- Աներես թռչուն ես դու,- զայրացավ Պողոսը,- հիմա ես ինչ անեմ:

- Ինճանե, ինճանե, ինճանե...- կրկնեց թութակը:

Ու մինչ Պողոսը մտածում էր, թե ինչ անել, նրան մոտեցավ հեծանիվով մի մանչուկ, կտրուկ արգելակեց, իջավ հեծանվից, ուշադիր զննեց Պողոսին, ապա հարցրեց.

- Դուք նրան չեք նեղացնի, չէ՞:

- Ես ընդհանրապես կենդանիներին չեմ նեղացնում,- պատասխանեց Պողոսը,- եթե չհաշվենք մարդկանց, որովհետև նրանք ևս դասվում են կենդանիների շարքին:

- Իսկապե՞ս,- ուրախացավ մանչուկը,- գիտե՞ք ինչ խելացի թութակ է սա, ես ուզում էի նրան տուն տանել ու պահել, սակայն մայրիկս չթողեց:

- Այո, նա խելացի է,- համաձայնեց Պողոսը,- ու բավականին աներես: Ի դեպ, դու տեղյա՞մկ ես, թե ումն է:

- Այո, Մուկուչինը:

- Մուկրուճ, մուկուճ, մուկուճ,- կրկնեց թութակը:

- Ո՞վ է Մուկուչը,- հետաքրքրվեց Պողոսը՝ դիմելով հավասարապես և մանչուկին, և թութակին:

Պատասխանեց մանչուկը: Պարզվեց, որ Մուկուչը վեցերորդ հարկում ապրող մի հարբեցող է, ում ոչ ոք չի սիրում: Չի սիրում նաև թութակը, և հենց դա է պատճառը, որ փախել

է նրանից:

- Դե ինչ արած,- հոգոցով ասաց Պողոսը՝ թռչունի ծագումնաբանությանը մասնակիորեն ծանոթանալուց հետո,- կտանեմ ինձ հետ, Աչոնը երևի կիմանա, թե ինչպես սրան պահել ու կերակրել:

- Աճոնը, աճոնը, աճոնը,- ձայնեց թութակը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԻՆ ՏԱՐԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը՝ երկու հազար քսան թվականի հունիսի տասնմեկին Պողոսին տարան Երևան քաղաքի կենտրոնի ոստիկանության բաժին: Պարզվեց, որ այն իր նախկին տեղից տեղափոխվել է նորակառույց ու բավականին ներկայանալի մի շենք՝ Հանրապետական մարզադաշտի հարևանությամբ: Նախկին բաժնում Պողոսը մի քանի անգամ եղել էր, առաջին անգամ նրան այնտեղից հանել էին ձեռնաշղթաներով ու տարել նախնական կալանքի վայր, մյուս անգամները, առանց ձեռնաշղթաների՝ ուղիղ հոգեբուժարան: Առաջին անգամվա հետևանքը եղել էր մեկ ու կես տարվա ազատազրկումը, մյուս երկու անգամներինը մեկական ամսվա հարկադիր բուժումը: Հետո Պողոսին մշտական հաշվառման էին առել հոգեբուժարանում, իսկ ավելի ուշ նրան «գժի թուղթ» էին տվել: Դրան նպաստել էր Պողոսի մանկության ընկերը, որը մի շատ բարձր պաշտոնի էր հասել կառավարական համակարգում, բայց մնացել էր պարկեշտ

և ազնիվ մարդ: Մի անգամ, Պողոսի հերթական սխրագործությունից հետո, նա ասել էր ընկերոջը՝ դու միևնույն է անուղղելի ես, բայց ես գիտեմ, որ դու արդար մարդ ես և պատժում ես նրանց, ովքեր դրան արժանի են: Այնպես որ ես քեզ «գժի թուղթ» կդասավորեմ, որ ամեն մի քիթ կոտրելուց հետո չհայտնվես բանտում: Բայց դա իհարկե չի նշանակում, որ դու պետք է նույն ինտենսիվությամբ շարունակես քթեր կոտրել: Խորհուրդ կտամ դա անել գոնե տարին մեկ:

Պողոսն համաձայնել էր և պետք է ասել, որ պահել էր խոստումը: Սակայն ականջ քաշելու մասով, քանի որ ոչ մի խոստում չէր տվել, այստեղ իրեն կաշկանդված չէր զգում:

Բայց վերադառնանք նրան, թե ինչպես և ինչու մեր հերոսին տարան կենտրոնի ոստիկանության բաժին:

Երրորդ մասի գործն ավարտելուց հետո Պողոսը որոշել էր զբաղվել թութակով: Նախ պետք էր կեր առնել նրա համար, հետո հոգալ կեցության հարցը: Արժեր նաև անուն մտածել, քանի որ մոռացել էր ճշտել մանչուկից, թե ինչպես են մեծարում թռչունին: Սակայն պարզվեց երեք հարցերն էլ հեշտ չէր լուծելը: Կորոնավիրուսի հետ կապված՝ փակ էին բոլոր կենդանաբանական խանութները: Խեղճ կենդանիներն ու թռչունները փաստորեն այստեղ էլ էին տուժել մարդկանց պատճառով: Իսկ հարմար անուն գտնելու համար նախ պետք էր տեղը տեղին ճանաչել թութակին: Համենայնդեպս Պողոսն այդպես էր կարծում:

Մի խոսքով, Պողոսը՝ մտազբաղ ու մտահոգ, վերադառնում էր տուն, երբ զանգեց նրա հեռախոսը: Ինչ որ մեկը ներկայացավ որպես քրեական հետախուզության աշխատակից և տեղեկացրեց Պողոսին, որ նա պետք է ներկայանա ոստիկանության կենտրոնական բաժին:

- Ինչի համար,- հարցրեց Պողոսը, ում մտքից բոլորո-

վին թռել էր կեսօրվա միջադեպը:

Սակայն քրեական հետախուզության աշխատակիցը չպարզաբանեց, թե ինչի համար:

- Տեղում կիմանաք,- ասաց նա:

- Ոչինչ չի ստացվի,- առարկեց Պողոսը,- ես պիտի կեր ճարեմ թութակի համար: Ի դեպ, Դուք չգիտեք, թե ինչ են ուտում թութակները:

Սակայն այս հարցին ևս ոստիկանը հակված չէր պատասխանելու: Փոխարենը նա ասաց.

- Եթե չգաք, բերման կենթարկենք:

- Ուզում եք բերման ենթարկեք, ուզում եք դատեք, ուզում եք կախեք, միևնույն է, ես տուգանքը չեմ վճարելու ու դիմակ էլ չեմ կրելու,- զայրացավ Պողոսն ու անջատեց հեռախոսը:

Բանն այն է, որ նրան թվում էր թե իրեն ոստիկանություն են կանչում այն բանի համար, քանի որ մի քանի անգամ բռնել էին առանց դիմակի, տուգանել, բայց նա այդպես էլ չէր մուծել տուգանքը: Ու այդպես էլ չհիշեց պատգամավորին ու կեսօրվա միջադեպը: Պողոսի համար, փաստորեն, ականջ քաշելն ավելի սովորական բան էր, քան դիմակ չկրելը:

Ոստիկանն իհարկե մի քանի անգամ էլ զանգեց, բայց Պողոսը չպատասխանեց զանգերին: Հասավ տուն, թութակին ծանոթացրեց իր նոր բնակարանի հետ և խորհուրդ տվեց ժամանակավորապես տեղակայվել հյուրասենյակում՝ ջահի վրա, մինչև կհոգա նրա բնի հարցերը: Թութակին գաղափարը դուր եկավ՝ նա մի քանի պտույտ տվեց սենյակում ու վայրէջք կատարեց ջահին: Հետո Պողոսը դուրս եկավ, թակեց հարևանուհու դուռը, բայց նրան տանը չգտնելով՝ իջավ բակ և մտավ խանութ: Գնեց հարյուր գրամ բրինձ, հարյուր գրամ ձավար, նույնքան ինդկաձավար ու ոսպ և վերադարձավ տուն՝ մտածելով, որ այս լայն տեսականու մեջ

թռչունը վստահաբար իր ճաշակով մի բան կգտնի: Միայն թե այդպես էլ չիմացավ, թե իր գնածներից որն էր թութակի ճաշակով, որովհետև բնակարանի դռան մոտ հանդիպեց ոստիկաններին:

Վերջիններից որոշակի ջանքեր էին պահանջվել մեր հերոսին գտնելու համար: Այն բանից հետո, երբ նրանք ահազանգով եկել էին պատգամավորի բնակարան և տեղեկացել դեպքի մանրամասներին, խնդրել էին նրան իր հեռախոսով կատարած զանգերի ցուցակում գտնել սառնարան վերանորոգողի համարը: Բայց ինչպես հիշում եք՝ գորտի հեռախոսը ընկել էր ու արժանացել չինական վազի ճակատագրին և ոստիկաններից որոշակի ժամանակ էր պահանջվել Պողոսի համարը բջջային օպերատորի միջոցով ճշտելու համար: Այնուհետև երբ նրանք վերջապես զանգահարել էին Պողոսին և վերջինս չէր ենթարկվել ոստիկանություն ներկայանալու նրանց, պետք է ասել՝ ոչ առանձնապես օրինական պահանջին, ոստիկանները վերծանել էին նրա հասցեն և ահա եկել էին Պուշկին փողոցում գտնվող Պողոսի բնակարան, ուր մեր հերոսը պատրաստվում էր մտնել՝ ձեռքին մի քանի տոպրակ, որոնցից մեկի մեջ հարյուր գրամ բրինձ էր, մյուսների մեջ նույնքան ձավար, հնդկաձավար և ոսպ:

Ոստիկանները երեքն էին, հար և նման մեկը մյուսին՝ ոչինչ չարտահայտող բութ հայացքներով, կյանքից ու իրենք իրենցից զզված, ճմռթված վերնաշապիկներով ու քրտնահոտով: Նրանցից մեկը, որն ըստ ամենայնի կոչումով ամենաբարձրն էր և որի անշնորհք ածիլված դնչին մնացել էր քիչ առաջ կերած խաչապուրու փշրանքը, դիմեց Պողոսին.

- Ինչո՞ւ չեք ենթարկվում ոստիկանների պահանջին:

- Որտե՞ղ է իմ բանալին,- հարցրեց Պողոսը՝ քրքրելով գրպանները:

- Ինչ բանալի,- չհասկացավ ոստիկանը,- ես հարցնում եմ, ինչո՞ւ չեք գալիս բաժին, երբ կանչում են:

- Սա բռնեք, ես հիմա,- ասաց Պողոսը՝ կրկին շրջանցելով ոստիկանի հարցը և նրան մեկնելով բակլազգիներով տոպրակները,- երևի թողեցի խանութում:

Ոստիկանը մեքենաբար վերցրեց տոպրակները, բայց անմիջապես էլ ուշքի եկավ և բացականչեց արդեն հեռացող Պողոսի հետևից.

- Այդ ո՞ւր, բռնե՛ք դրան:

Մյուս երկու ոստիկանները շտապեցին կատարել շեֆի հրամանը և հասնելով Պողոսի հետևից փորձեցին բռնել նրա թևերը: Միայն թե պարզվեց դա այնքան էլ հեշտ չէր: Պողոսը ոչ միայն թույլ չտվեց, որ բռնեն իր թևերը, այլև ինքը բռնեց ոստիկանների օձիքներից, առանց որևէ ջանք գործադրելու օդ բարձրացրեց նրանց ու հենց այդպես՝ օդի մեջ պահած դիմեց շեֆին.

- Ինձ մի զայրացրեք: Ասում են, երբ ես զայրանում եմ, դառնում եմ անվերահսկելի:

Հետո արդեն, ոստիկանական բաժանմունքում, ուր Պողոսը համաձայնեց գնալ միայն այն բանից հետո, երբ ցած դրեց զույգ ոստիկանին, կերակրեց թութակին (բակլազգիների լայն տեսականուց թռչունը նախընտրեց ձավարը) և զուգարան մտավ, նա ասաց քննիչին.

- Ձեր ոստիկանների վրայից քրտինքի հոտ է գալիս, բացատրեք նրանց, որ երբեմն կարելի է լողանալ: Ես, օրինակ, շոգ եղանակին լողանում եմ օրը երեք անգամ, ցուրտ եղանակին՝ երկու: Ու բնականաբար ամեն անգամ փոխում եմ վերնաշապիկս: Ի դեպ, ինչո՞ւ եմ ես այստեղ:

Պարզվեց, որ նա մեղադրվում է երեք տեսակի արարք կատարելու համար: Առաջինը՝ ֆիզիկական ուժեղ ցավ

պատճառելը, ինչպես արդեն առիթ ունեցել ենք ասելու՝ նախատեսում էր մինչև երեք տարվա ազատազրկում, երկրորդը՝ ոստիկանի հանդեպ բռնություն կիրառելը՝ հինգ տարվա ազատազրկում, երրորդը՝ դիմակ չկրելը՝ տուգանք տասը հազար դրամի չափով:

Միայն թե շատ չմանրամասնելով ասենք, որ այս պատիժներից և ոչ մեկը մեր հերոսի նկատմամբ չկիրառվեց: Նրան ընդամենը ոստիկանությունից տեղափոխեցին հոգեբուժարան:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ՝ ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆԻՑ

Չնայած այստեղ Պողոսը հաշվառման էր կանգնած, վերջին մի քանի տարիներին ոչ մի անգամ չէր եկել: Ու հիմա զարմանքով հայտնաբերեց, որ հոգեբուժարանում որոշ բաներ փոխվել են: Շենքը վերանորոգվել էր, ընդունարանը՝ ընդարձակվել, իսկ որ ամենատպավորիչն էր՝ բարեկարգվել էին բակը և այգին:

Ամառային զով երեկո էր, և հիվանդները դուրս էին եկել մաքուր օդ շնչելու. ոմանք զբոսնում էին, ոմանք տեղավորվել էին այգու տաղավարներում ու զրուցում էին: Նրանք բոլորը դիմակներով էին: Պողոսը նույնպես դրսում էր, բնականաբար՝ առանց դիմակի: Նրան ասել էին, որ սպասի՝ մինչ կանեն ձևակերպումները, ինչից հետո նրան կընդունի բժիշկը և պարզ կդառնա, թե ինչ է լինելու այդուհետ: Եվ ահա, Պողոսը սպասում էր:

Նա մի քիչ նստել էր ընդունարանում, ապա դուրս եկել շենքից և սկսել շրջել նախ բակում, ապա այգում: Բայց մինչ այդ զանգահարել էր Աչոնը և նրանց միջև տեղի էր ունեցել հետևյալ խոսակցությունը:

- Որտե՞ղ ես,- հարցրել էր Աչոնը:

- Հոգեբուժարանում,- պատասխանել էր Պողոսը:

- Որտե՞ղ,- չէր հասկացել Աչոնը:

- Գժանոցում,- ավելի պարզ էր արտահայտվել Պողոսը:

- Գժանոցի սառնարա՞ննն է փչացել,- զարմացել էր Աչոնը:

- Ոչ,- ասել էր Պողոսը,- կարծես ե՛ս եմ նորից փչացել:

Հետո հակիրճ պատմել էր այդ օրվա պատմությունը:

Ու հիմա հոգեբուժարանի այգում զբոսնելիս մտածում էր Աչոնի ու մի քիչ էլ թութակի մասին, երբ հանկարծ լսեց չափազանց ծանոթ իմ ձայն. ավելի ճիշտ՝ ճվճվոց, չափազանց ծանոթ մի ճվճվոց, որը գալիս էր բալենու տակ տեղադրված մի տաղավարից: Այստեղ հավաքվել էր չորս հիվանդ, և ուշադիր նայում էին տաղավարի սեղանին ինչ-որ մեկի լայնեզր գլխարկին հենած հեռախոսին, որտեղից էլ գալիս էր ճվճվոցը.

«Իմ կոնկրետ դիրքորոշումը սա է՝ ոստիկանությունը պետք է լինի ուժեղ, դուխով, օրինապաշտ ու պետք է լինի կոշտ: Ի՞նչ է նշանակում՝ ոստիկանը մոտենա, ասի՝ դիմակ պետք է կրել, սկսեն հետը լեզվակռիվ տալ, հոխորտալ: Այո, պիտի բերման ենթարկվեն, որտեղ պետք է, պիտի ուժ կիրառվի: Ես կարծում եմ՝ վերջին երկու տարիների ընթացքում ՀՀ ոստիկանությունը, ԱԱԾ-ն շատ քիչ են ուժ կիրառել ոմանց նկատմամբ: Հեսա շատ շուտով պետք է ոմանց նկատմամբ այնքան ուժ կիրառեն, որ ծպտունները դուրս չգա ընդհանրապես»:

Առաջին ցանկությունը, որ առաջացավ Պողոսի մոտ՝

մոտենալն էր ու հեռախոսը ջարդուփշուր անելը: Բայց նա զսպեց իրեն և սկսեց հետևել, թե ինչպես են հիվանդները քննարկում քիչ առաջ լսած ձայնագրությունը:

- Հասկացա՞ք,- իրենից չափազանց գոհ՝ ասաց առաջին հիվանդը, որը, ըստ ամենայնի, միացրել էր ձայնագրությունը և որին պատկանում էր հեռախոսը: Նա այնպես էր հագել դիմակը, որ այն համարյա փակում էր նրա աչքերը:

- Այո,- ասաց երկրորդ հիվանդը, որին, ըստ ամենայնի պատկանում էր լայնեզր գլխարկը, որին հենել էին հեռախոսը,– մեր վարչապետը ճիշտ է ասում: Թալանեցին ու կերան ամբողջ երկիրը:

- Ես նույնպես համաձայն եմ,- ասաց երրորդ հիվանդը,- բոլոր նախկիններին պետք է պատժել:

Այստեղ ոտքի կանգնեց չորրորդ հիվանդը ու, չգիտես ինչու, զգաստ դիրք ընդունեց, ասես պատրաստվում էր ճառ կարդալ, մի քանի անգամ հազաց, ուղղեց դիմակն ու ասաց.

- Իսկ հիմա լսեք ինձ: Իմ կոնկրետ դիրքորոշումը սա է՝ մենք մեր կողմից պետք է քայլեր ձեռնարկենք՝ օգնելու

մեր վարչապետին: Ես առաջարկում եմ հետևյալը. առաջին՝ պետք է ստեղծել աշխատանքային խումբ և վերահսկել ամբողջ տարածքը: Հենց տեսնենք առանց դիմակի մարդու, անմիջապես ահազանգենք ոստիկանություն:

Դատելով մյուս երեքի կեցվածքից, առաջարկն ընդունվեց միաձայն:

- Երկրորդ,- ոգևորված շարունակեց բանախոսը,- պետք է ցուցակագրել այստեղ բուժվող բոլոր այն հիվանդներին, որոնք կապ ունեն նախկինների հետ և ցուցակն ուղարկել Ազգային անվտանգության ծառայություն:

Այս առաջարկը ևս ընդունվեց միաձայն և բանախոսն ասաց.

- Բայց նախ պետք է առաջարկությունների այս փաթեթեն ուղարկել վարչապետին:

Սակայն, թե ինչպես էր նա պատրաստվում դա անել, մնաց անհայտ, որովհետև այդ պահին նրանց մոտեցավ մեկ ուրիշ հիվանդ՝ ձեռքին տետրից պոկված մի թուղթ, որի վրա ինչ-որ բաներ էին խզբզված.

- Կարո՞ղ է դուք պատահաբար ծրար ունենաք,- դիմեց նա կոլեգաներին:

- Ինչի՞դ է պետք ծրարը,- հարցերց չորրորդ հիվանդը՝ զայրացած, որ իրեն ընդհատել են:

- Նամակ պիտի ուղարկեմ,- բացատրեց նոր եկածը՝ ցույց տալով ձեռքի խզբզած թուղթը:

- Ի՞նչ նամակ,- հարցրեց երրորդ հիվանդը:

- Սովորական նամակ՝ ծրարով:

- Ո՞ւմ,- հետաքրքրվեց երկրորդ հիվանդը:

- Վարչապետին:

- Ո՞ւմ,- զարմացավ առաջին հիվանդը

- Վարչապետին,- կրկնեց նոր եկածը:

Այստեղ տաղավարում հավաքված բոլոր չորս հիվանդներն իրար նայեցին: Ակնհայտ էր, որ նրանց դուր չէր եկել, որ իրենցից զատ՝ ինչ-որ մեկն ուզում է նամակ ուղարկել իրենց վարչապետին:

- Չի ստացվի,- ասաց առաջինը:

- Լավ գաղափար չէ,- ասաց երկրորդը:

- Ու հետո էլ մենք ծրար չունենք,- ասաց երրորդը:

- Բացի այդ, վարչապետն հիմա զբաղված է,- ասաց չորրորդը:

- Ինչո՞վ է զբաղված,- հարցրեց նոր եկածը:

- Մենք նրան առաջարկությունների փաթեթ ենք ուղարկել,- բացատրեց չորրորդը,- իսկ կարե՞լի է իմանալ, թե Դուք ինչ եք գրել վարչապետին:

- Գրել եմ, որ երկու տարի առաջ, ես Քյավառում ճանապարհ եմ փակել: Դեռ Կամազն էլ բարձրացավ ոտքիս: Նա պարտավոր է ինձ հիշել:

- Իսկ նա այնտե՞ղ էր:

- Ո՞վ:

- Վարչապետը:

- Ոչ:

- Ուրեմն որտեղի՞ց հիշի, եթե այնտեղ չէր:

- Նա բոլորին էլ հիշում է:

Տաղավարում հավաքվածները դարձյալ նայեցին իրար, սակայն այս անգամ արդեն հանգիստ, նույնիսկ քմծիծաղով, կարծես ուզում էին ասել՝ ո՞վ է այս գիժը:

Բոլորի անունից կրկին արտահայտվեց չորրորդը:

- Լավ, կարող եք ուղարկել Ձեր նամակը:

- Բայց ես ծրար չունեմ:

- Այդ հարցով դիմեք ուրիշին: Կարող եք դիմել…- չորրորդ հիվանդը նայեց շուրջը և նկատեց Պողոսին,- կարող

եք դիմել ահա այն մարդուն:

Եվ հենց այստեղ բոլորն անդրադարձան, որ մինչ այդ չէին նկատել Պողոսին, որը կանգնած էր քիչ այն կողմ և փաստորեն ուշադիր լսում էր իրենց ողջ խոսակցությունը: Նրանք նախ վախվորած նայեցին իրար՝ փորձելով հասկանալ, թե արդյո՞ք սխալ բաներ չեն խոսել, հետո՝ Պողոսին՝ հասկանալու համար, թե ով է այս մարդը և որտեղից հայտնվեց:

Այս ամենը տևեց բավականին երկար, ինչից հետո արտահայտվեց առաջին հիվանդը՝ դիմելով Պողոսին.

- Դուք նո՞ր եք:

- Ոչ, ես հին եմ,- ժպտաց Պողոսը՝ քիչ առաջ գալով,- այնքան հին, որ դուք չեք էլ կարող պատկերացնել: Բայց Դուք ինչ-որ բան էիք քննարկում, խնդրում եմ շարունակեք:

- Այսինքն Դուք վաղո՞ւց եք այստեղ,- հետաքրքրվեց երկրորդը,- ուրեմն ինչո՞ւ մենք մինչև հիմա Ձեզ չենք տեսել:

- Ոչ ես նոր եմ եկել,- բացատրեց Պողոսը շարունակելով ժպտալ,- բայց միևնույն է՝ ես հին եմ:

- Իսկ ինչո՞ւ են Ձեզ բերել այստեղ,- հարցրեց երրորդը:

- Դիմակ չկրելու պատճառով:

- Այս մարդը դիմակ չունի,- ասաց չորրորդը,- պետք է զանգել ոստիկանություն:

- Անիմաստ է,- հանգիստ ասաց Պողոսը,- այդպես կստացվի փակ շրջան, որովհետև, եթե զանգեք ոստիկանություն, նրանք վերջում ինձ բերելու են էլի այստեղ: Բայց դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ լսելով ձեզ ես հասկացա, թե որքան լուրջ հենարան ունի վարչապետը և, որ ավելի կարևոր է՝ ինձ մոտ ցանկություն չառաջացավ ձեր ականջները քաշելու:

Պողոսն էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց չհասցրեց,

որովհետև մոտեցավ բուժքույրը և ասաց, որ նրան սպասում են տնօրենի աշխատասենյակում:

Տնօրենի աշխատասենյակում ոտքը ոտքին գցած, նստած էր Աչոնը:

- Գնանք տուն,- ասաց նա Պողոսին,- ես այսօր սուշի եմ պատվիրել:

ՄԻ ՔԻՉ ԱՉՈՆԻ ՄԱՍԻՆ

Եթե երիտասարդ տարիներին մեկն ասեր Աչոնին, որ ինքը երբևէ կդառնա քառասուն տարեկան ու դեռ մի բան էլ ավելի, հաստատ կզղջար դրա համար: Իսկ հիմա, երբ Աչոնն արդեն քառասուն էր ու մի բան էլ ավելի, եթե մեկը նրան հիշեցներ կամ ակնարկեր այդ մասին... Ոչ, Աչոնն իհարկե Պողոսի նման քիթ կոտրելու սովորություն չուներ, բայց նա կարող էր վարվել այլ կերպ՝ պարզապես զրկել մարդկանց իր ընկերակցությունից: Հավատացեք, դա շատ ավելի դաժան պատիժ էր, որովհետև շատերը պատրաստ էին արժանանալ Աչոնի ընկերակցությանը՝ անգամ կոտրված քթով: Սակայն հարկ է նշել, որ մեր հերոսուհին վրդովվելու իրավունք ուներ: Նա այնպես էր հետևում իրեն, որ շատ երիտասարդ աղջիկներ կերազեին իր պես կազմվածք և արտաքին ունենալ:

4Աչոնն ունեցել էր չորս ամուսին, կարելի է ասել՝ հինգ, եթե հաշվենք նաև վերջինին, որը որոշել էր ամուսնության առաջարկ անել Աչոնին նրա ծննդյան օրը: Առաջարկն արել

էր ինչպես հարկն է՝ ծնկաչոք ու ձեռքին ադամանդե մի մատանի, և Աչոնը համաձայնել էր: Միայն թե նրանց ամուսնական կյանքը ավարտվել էր հաջորդ իսկ րոպեին, երբ փեսացուն հարսանացուին էր նվիրել վերջինիս ծննդյան կապակցությամբ նախապես պատրաստած խորհրդանշական քառասունմեկ հատ վարդը: Աչոնը նրան պարզապես վռնդել էր ռեստորանից, ուր տեղի էր ունեցել սույն տեսարանը: Հետո չկայացած ամուսինը տասնյակ փորձեր էր արել՝ արժա-

նանալու Աչոնի ներողամտությանը: Թակել էր նրա տան դուռը՝ ձեռքին նախ քսանինը, ապա քսանյոթ, քսանհինգ հատ վարդ և այդպես շարունակ, բայց ապարդյուն: Վերջին անգամ՝ այս պատմությունից մեկ տարի առաջ, երբ նա հայտնվել էր՝ ձեռքին արդեն քսանմեկ հատ վարդ և երբ հերթական անգամ Աչոնը նրան վռնդել էր, նա իրեն մի փոքր ոչ կոռեկտ էր պահել՝ անվանելով չկայացած հարսնացուին վհուկ և դա արել էր այն պահին, երբ վերելակից դուրս էր գալիս Պողոսը: Թերևս ավելորդ է ներկայացնել, թե ինչ ճակատագրի էր արժանացել նրա ականջը, բայց կարևոր է ասել, որ հենց այստեղից էր սկսվել Աչոնի և Պողոսի հարևանությունը:

Բայց այդ մասին դեռ առիթ կլինի խոսելու, իսկ մինչ այդ, թերևս ընթերցողին կհետաքրքրեն Աչոնի կյանքի մասին այլ մանրամասներ:

Իր կյանքի տարբեր ժամանակահատվածներում, բացի չորս, կարելի է ասել՝ հինգ ամուսին ունենալուց, Աչոնն ունեցել էր և ուներ բազմաթիվ ընկերուհիներ, որոնց հետ անցկացնում էր իր օրվա զգալի ժամանակը՝ վերջինների տանը, զանազան սրճարաններում, ռեստորաններում, ֆիթնես ակումբներում ու տարատեսակ միջոցառումների վայրերում: Բոլոր այդ ընկերուհիները՝ առանց բացառության, երևանյան այսպես ասած «բոմոնդի» ներկայացուցիչներ էին և բաժանվում էին երկու խմբի: Առաջին խմբում բիզնես տիկնայք էին, որոնք ինքնուրույն էին վաստակում իրենց գլամուրային հաճույքների համար, երկրորդ խմբում կանայք էին, որոնց գլամուրային հաճույքների համար վաստակում էին նրանց ամուսինները: Պետք է ասել, որ այդ երկու խմբերը միմյանց հանդեպ, մեղմ ասած, առանձնապես բարեկամաբար չէին տրամադրված, բայց մեր Աչոնը ներգրավված էր երկու խմբում էլ և նրանց հետ առանձին-առանձին մասնակցում էր

բոլոր միջոցառումներին, չնայած ինքը ոչ բիզնես ուներ, ոչ էլ ամուսին: Բայց ուներ այդ ամուսիններից պոկած մի քանի բնակարան և առանձնատուն, որոնց վարձակալությունից ստացված գումարը լիուլի բավականացնում էր իր գլամուրային կյանքին:

Իր բոլոր ամուսինների հետ Աչոնը ապրել էր չափազանց կարճ, իհարկե ոչ այնքան կարճ, որքան՝ վերջինի, հինգերորդի, բայց, համենայնդեպս ոչ ավել, քան մեկ տարի: Բոլոր այդ ամուսիններն էլ եղել էին լուրջ մարդիկ, լուրջ միջոցների տեր, բայց հանուն արդարության պետք է ասել, որ նրանց հետ Աչոնն ամուսնացել էր գրեթե անշահախնդրորեն, կամ մասամբ շահախնդրորեն, որովհետև բոլորին էլ այս կամ այն չափով սիրել էր: Միայն թե կար մի խնդիր՝ Աչոնը շուտ ձանձրանալու բնավորություն ուներ: Շուտ ձանձրանում էր մուշտակից և փոխում այն, շուտ ձանձրանում էր մեքենայից և գնում նորը, շուտ ձանձրանում էր բնակարանից ու տեղափոխվում ուրիշը, շուտ ձանձրանում էր ամուսնուց ու… Մի խոսքով, հասկանալի է:

Բայց ընթերցողին հավանաբար կհետաքրքրի, թե ինչու ենք այսքան մանրամասն անդրադառնում Աչոնի կերպարին: Դա ունի երկու հիմնական պատճառ. առաջինը՝ մեր Աչոնը կապվել էր Պողոսի հետ և այդ կապը չափազանց յուրօրինակ կապ էր:

Վերջին՝ Պուշկինի փողոցի բնակարան Աչոնը տեղափոխվել էր չորրորդ ամուսնուց բաժանվելուց հետո՝ երկու հազար տասնութին: Հարևանին՝ Պողոսին նա վաղուց էր նկատել, չգիտես ինչու հետաքրքրվել էր նրանով, փորձել էր մի քանի անգամ զրույցի բռնվել, բայց հարևանը չափազանց անտարբեր էր գտնվել և դա է՛լ ավելի էր գրգռել Աչոնին: Բանն այն է, որ մեր հերոսուհին սիրում էր իսկական

տղամարդկանց և տանել չէր կարողանում, ինչպես ինքն էր ասում՝ «ղզիկներին»: Որքան էլ որ զարմանալի է, Պողոսի հանդեպ հետաքրքրությունը չէր մարել անգամ այն ժամանակ, երբ պարզվել էր որ նա ընդամենը սառնարան վերանորոգող է: Ինչ-որ խորը, առեղծվածային բան կար առնական այդ տղամարդու մեջ:

Եվ ահա, այն դեպքից հետո, երբ Պողոսը ականջից բռնած վերելակ նստեցրեց Աչոնի վերջին՝ չկայացած ամուսնուն, հարևանները վերջապես ծանոթացան: Ոչ միայն ծանոթացան, այլ սկսեցին ինտենսիվորեն շփվել: Աչոնի շնորհիվ Պողոսն առաջին անգամ իմացավ որոշ բաների մասին. օրինակ՝ թե ինչ է սուշին և որքան համեղ բան է փաստորեն, ինչ է իսկական սեքսը և որքան հետաքրքիր բան է փաստորեն, ինչ է համացանցը և որքան օգտակար բան է փաստորեն ու էլի նման բաներ: Իսկ Աչոնը պարզապես իրեն լավ էր զգում և չափազանց գոհ էր իր կյանքում տեղի ունեցած այս նոր փոփոխությունից: Պողոսին, իհարկե, նա խուսափում էր ներկայացնել իր գլամուրային ընկերուհիներին և ընդհանրապես միասին երևալ հանրային վայրերում, չնայած մի քանի անգամ համաձայնել էր նրա հետ գնալ մշակութային միջոցառումների: Եվ ընդհանրապես՝ ընդհանուր թեմաներ, որոնց մասին կարելի էր խոսել, նրանք գրեթե չունեին, չնայած Պողոսն՝ ինքը հատկապես խոսող էլ չէր: Բայց, այնուամենայնիվ, կար մի թեմա, որի մասին նրանք կարող էին խոսել երկար, բովանդակալից և բավականաչափ ագրեսիվ: Եվ այդ թեման կոչվում էր «հեղափոխություն»:

Երկրորդ պատճառը, թե ինչու ենք մենք այսքան մանրամասն անդրադառնում Աչոնին, այն է, որ առանց նրա այս պատմությունը հազիվ թե տեղի ունենար իսկ, եթե անգամ

տեղի ունենար հազիվ թե հետաքրքիր լիներ:

Իսկ ամեն ինչ սկսվեց այն ժամանակ, երբ երկու հազար քսան թվականի հունիսի տասնմեկին Պողոսին Աչոնի միջամտությամբ բաց թողեցին հոգեբուժարանից, և տուն վերադառնալու ճանապարհին Պողոսը պատմեց օրվա արկածները:

- Եվ դու իսկապես քաշեցիր պատգամավո՛րի ակա՞նջը,- ծիծաղեց Աչոնը:

- Այո,- հաստատեց Պողոսը,- բայց շատ կարճ, որովհետև հայտնվեց նրա կինը:

- Նա սիրո՞ւն էր,- հարցրեց Աչոնը:

- Ո՞վ,- չհասկացավ Պողոսը:

- Կինը,- պարզաբանեց Աչոնը:

-Ես ուշադրություն չդարձրի,- անկեղծորեն պատասխանեց Պողոսը,- բայց պատգամավորն ինքը նման էր գորտի:

- Զզվում եմ գորտերից,- դեմքը ծամածռեց Աչոնը,- չնայած թևիկները համեղ են, եթե իհարկե պատրաստվում են լավ ռեստորանում, լավ խոհարարի կողմից: Ի դեպ, ես գիտեմ մի այդպիսի ռեստորան, գնանք գորտի թևիկներ ուտելու:

- Բայց դու ասացիր, որ ուրիշ բան ես պատվիրել:

- Այո, սուշի, բայց ոչինչ, այն կսպասի:

- Բայց ռեստորանները փակ են, չէ՞ որ հիմա լոքդաուն է,- համառեց Պողոսը:

- Լոքդաունը վաղուց ավարտվել է, բայց գուցե ամեն դեպքում ճիշտը տուն գնալն է: Որոշված է՝ կպատվիրենք գորտի թևիկներ և կուտենք տանը:

Եվ քանի որ ամբողջ օրվա քաշքշուքների ու արկածների ժամանակ Պողոսը ոչինչ չէր կերել ու սարսափելի քաղցած էր, նա չառարկեց: Գնացին Աչոնի տուն և հենց այստեղ էլ սաղմնավորվեց այն գաղափարը, որն ավելի ուշ պի-

տի դառնար ծրագիր, որը Պողոսն ու Աչոնը պիտի կյանքի կոչեին առաջիկայում և որի մասին էլ հիմնականում պիտի պատմվի այս գրքում:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՉՈՆՆ ՈՒ ՊՈՂՈՍԸ ՈՐՈՇԵՑԻՆ ՎԱՐՎԵԼ «ՂՋԻԿՆԵՐԻ» ՀԵՏ

Եթե երբևէ որևէ մեկն ասեր Աչոնին, որ գալու է մի օր, երբ նա սկսելու է հետաքրքրվել քաղաքականությամբ Աչոնն իհարկե գրողի ծոցը կուղարկեր նրան: Կամ ավելի անհետաքրքիր մի տեղ:

Աչոնը համոզված էր, որ Հայաստանում ու Հայաստանի նման պետություններում քաղաքականությունն ընդամենը միջոց է փող աշխատելու համար, և քանի որ փող աշխատելու մասին ինքը երբեք էլ առանձնապես չէր մտածել, այսինքն՝ փող աշխատելու համար ուներ իր միջոցները, քաղաքականությունը նրան բացարձակապես չէր հետաքրքրում, իսկ քաղաքական գործիչներին նա վերաբերում էր այնպես, ինչպես զբոսանքի դուրս եկած գեղեցկուհի պուդելը փողոցային շներին. նրանք միևնույն է՝ կան, բայց իրեն պետք չեն և որքան իրենից հեռու, այնքան՝ լավ:

Իրեն շրջապատող հասարակության արատները, իր շուրջն առկա բացասական երևույթները Աչոնն անշուշտ նկատում էր, բայց և անտարբեր էր դրանց նկատմամբ, քանի դեռ բանը չէր հասնում անձամբ իրեն: Սակայն անտարբեր էր ոչ թե նրա համար, որ չէր ուզում օգնել մարդկանց և

նույն այդ հասարակությանն՝ ընդհանրապես, այլ որովհետև տեսնում էր, որ հասարակությունն ինքն է անտարբեր: Եվ ոչ միայն անտարբեր. Աչոնն համոզված էր, որ հասարակությանն ինքն է միակ մեղավորը սեփական արատների և իրեն շրջապատող բացասական երևույթների: Եթե մեկը կաշառք է վերցնում կամ տալիս, եթե անտարբեր նայում է, թե ինչպես են կտրում իր բակի ծառը, եթե փողով ընտրության է գնում, հետո այդ ամենից հետո ասում է՝ երկիրը երկիր չէ, ապա հերն էլ անիծած, թող ապրեն ինչպես ապրում են: Ահա, թե ինչպես էր մտածում Աչոնը:

Սակայն մեր հերոսուհու մոտեցումներում որոշ բաներ փոխվեցին, երբ Հայաստանում փոխվեցին իշխանությունները:

Նախորդ իշխանությունների հանդեպ նա իհարկե երբեք էլ մեծ սեր չէր տածել ու շատ լավ հասկանում էր, որ նրանք երբեք էլ առանձնապես հոգ չէին տարել ժողովրդի մասին՝ տասնապատիկ ավելի վերցրել էին ժողովրդից, քան՝ տվել և, իհարկե, խաբել էին ժողովրդին: Միայն թե խաբել էին նրանց, ովքեր ուզում էին խաբվել: Եվ երբեք չէին փորձել խաբել նրանց, ում խաբել հնարավոր չէր: Այսինքն գիտակից մարդկանց:

Օրինակ, երբ ընտրությունների նախօրեին իշխանության մարդիկ դռնեդուռ ընկած փող էին բաժանում, նրանք շատ լավ գիտեին՝ ում դուռը կարելի է թակել և ում դուռը՝ ոչ: Որովհետև գիտեին, որ գիտակից մարդուն խաբել չի ստացվի:

Եվ քանի որ Աչոնն իրեն գիտակից մարդ էր համարում, նա չէր սիրում և չէր հանդուրժում, երբ իրեն փորձում էին խաբել: Այսինքն՝ երբ իր դուռը թակում էին:

Եվ քանի որ նոր իշխանությունները դա անում էին, Աչոնը ստիպված սկսել էր հետաքրքրվել քաղաքականությամբ:

Եվ ինչ եզրակացության էր եկել. եկել էր այն եզրակացության, որ նոր իշխանությունները ոչ թե խաբում են ժողովրդին, այլ ծաղրում են, էշի տեղ են դնում, ընդ որում նրանց համար կարևոր չէ՝ գործ ունեն ամբոխի հետ, թե՝ գիտակից մարդկանց:

Սա արդեն չափից դուրս էր: Որովհետև մի բան է խաբելը, բոլորովին այլ բան՝ ծաղրելն ու էշի տեղ դնելը:

Եվ, քանի որ դեռ չէր ծնվել աշխարհում մեկը, որը կարող էր ծաղրել Աչոնին, մեր հերոսուհին որոշել էր քայլեր ձեռնարկել:

«Ղզիկներ»՝ այսպես էր նա սկսել կոչել նոր իշխանավորներին: Գրեթե բոլորին, գրեթե առանց բացառության: Ընդ որում, կարևոր չէ՝ տղամարդ, թե կին, որովհետև, ըստ Աչոնի, «ղզիկը» սեռ չի ճանաչում, և այս կատեգորիայի կանայք նույնքան զազրելի են, որքան՝ տղամարդիկ: Մի անգամ մեր հերոսուհուն հարցրել էին, թե ինչ է նա հասկանում այդ բառի տակ, և Աչոնը տվել էր սահմանումը. «ղզիկներն» այն մարդիկ են, որոնց ձվերի փոխարեն հավկիթներ են և նրանք շատ գոհ են սույն հանգամանքից: Հոգ չէ, թող ապրեն իրենց համար, գոհ ու երջանիկ լինեն, բայց երբ նման մարդիկ հնարավորություն են ստանում տնօրինելու ուրիշների ճակատագրերը, սա արդեն այլ բան է: Իսկ հիմա, արի ու տես, նրանց ձեռքում է հայտնվել մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ պետության ճակատագիրը:

Եվ Աչոնն հասկանում էր, որ պետք է մի բան անել: Բայց հասկանում էր նաև, որ իշխանություն ունեցող «ղզիկի» դեմ պայքարելն այնքան էլ հեշտ բան չէ, անգամ ավելի դժվար է, քան ամենաուժեղ և համարձակ սրիկայի:

Եվ ահա, երկու հազար քսան թվականի հունիսի տասնմեկին Աչոնի տանը գորտի թևիկներ ճաշակելիս Պողոսը

հարցրեց հարևանուհուն.

- Ուրեմն ի՞նչ կարելի է անել:

- Պետք է նրանց սեփական ձվերից, ավելի ճիշտ՝ հավկիթներից, ձվածեղ սարքել ու հրամցնել հենց իրենց,- առանց երկար մտածելու՝ պատասխանեց Աչոնը:

- Դա ես չեմ կարող անել,- անկեղծորեն ասաց Պողոսը,- առավելագույնը, որ կարող եմ անել՝ նրանց ականջները քաշելն է:

- Դա նույն բանն է,- ամենայն լրջությամբ ասաց Աչոնը,- կանգ առնենք այդ տարբերակի վրա:

- Բայց ո՞րն է իմաստը. այսօր ես քաշեցի մի պատգամավորի ականջ, և ի՞նչ փոխվեց դրանից: Ինձ նախ տարան ոստիկանություն, հետո՝ գժանոց, իսկ պատգամավորը մնաց իր տանը, և վաղը կգնա իր աշխատանքին: Ու դա ընդամենը մեկն է, քանի՞ այդպիսի գորտեր կան: Ես հո չեմ կարող իմ բան ու գործը թողնել ու ընկնել նրանց հետևից:

- Եթե մենք իմաստ դնենք մեր գործողությունների մեջ, և անենք այնպես, որ...

Բայց Պողոսը կարծես չէր լսում Աչոնին.

- Եվ, այդ ամենից բացի, հայտնվեց թութակը, ու ես հիմա ստիպված պիտի խնամեմ նրան: Ես նույնիսկ չգիտեմ, թե նա ինչ է ուտում: Ու չգիտեմ նաև՝ պե՞տք է արդյոք նրա համար վանդակ սարքել, թե թող այդպես, ազատ ապրի իր համար: Ու վերջապես պետք է նրան անուն դնել:

- Թութակը կսպասի, իսկ հիմա պետք է մտածել լուրջ բաների մասին,- Աչոնը փորձեց որսալ Պողոսի ցրված հայացքը,- դու հասկանո՞ւմ ես, այդ «ղզիկները» ծաղրում են ժողովրդին, մեզ՝ բոլորիս ու անում են այն, ինչ ուզում են ու չկա մեկը, որ նրանց պատժի:

- Դու ուզում ես, որ ես նրանց պատժե՞մ, ինչպե՞ս կարող

եմ ես նրանց պատժել: Ես հիմա զբաղված եմ մի շատ կարևոր գործով: Չէ՞ որ քեզ պատմել եմ իմ գյուտի մասին: Պետք է ամբողջական տեսքի բերել այն, իսկ ես չեմ կարողանում կենտրոնանալ:

- Դու անպայման պետք է կենտրոնանաս, բայց ոչ գյուտի վրա: Գյուտով կզբաղվենք հետո, ես խոստանում եմ,- համառեց Աչոնը, որն իսկապես մի քանի անգամ Պողոսից լսել էր նրա գյուտի մասին, բայց այդպես էլ ոչինչ չէր հասկացել:

- Ամեն մարդ պիտի զբաղվի իր գործով,- համառեց Պողոսը,- ես ընդամենը կենցաղային տեխնիկա վերանորոգող եմ, եթե մի կողմ թողնենք իմ գյուտը, ու հետո էլ ինչպե՞ս ես կարող եմ պատժել Ճիկոլին:

- Կարո՛ղ ես,- Աչոնը բռունցքով թեթևակի խփեց սեղանին,- ավելի ճիշտ կարող ենք: Բավական է պատժել քո ասած Ճիկոլի «ղզիկներին», և այդպիսով մենք կպատժենք հենց իրեն:

- Մե՞նք,- զարմացավ Պողոսը,- այսինքն՝ ես ու դո՞ւ: Բայց ինչպե՞ս:

- Ես կասեմ, թե ինչպես: Ես մի գաղափար ունեմ: Միայն թե դու համաձայնես:

- Ես համաձայն եմ քաշել բոլոր այն «ղզիկների» ականջները, որոնք կհայտնվեն իմ տեսադաշտում և իհարկե դա կանեմ հաճույքով, կարող եմ նաև մի քանի քիթ կոտրել, որովհետև կան այնպիսիք, որոնք շատ են բարձրացրել իրենց քթերը, միայն թե դու ինձ հետ գործ չունես:

- Դու վերջապես կլսե՞ս իմ գաղափարը:

- Ես արդեն հասկացա այն: Դա իսկապես շատ լավ գաղափար է: Ես իհարկե շնորհակալ եմ, որ դու հրավիրեցիր ինձ քո տուն ու հյուրասիրեցիր գորտի թևիկներով, բայց պետք է ասեմ, որ դրանք մի բան չեն. համն ինձ հիշեցնում

է հավի մսի համը, իսկ ես հավ չեմ սիրում: Իսկ հիմա ես պետք է գնամ տուն ու զբաղվեմ թութակով: Տեսնես նա ռոք սիրո՞ւմ է:

- Ուրեմն դու համաձա՞յն ես,- ուրախացավ Աչոնը:

Բայց Պողոսը ոչինչ չպատասխանեց, մի ումպով դատարկեց գարեջրի բաժակը, վեր կացավ, դուրս եկավ Աչոնի բնակարանից և մտավ սեփական բնակարան, որը տեղը տեղին ապականել էր թութակը, որին դեռ անուն չէին դրել:

ՊՈՂՈՍԸ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑ Է ԴԻՏՈՒՄ

Աչոնի ու Պողոսի այս խոսակցությունից, որը տեղի ունեցավ Աչոնի տանը՝ պատգամավոր գորտի ականջները քաշելու և գորտի թևիկներ ուտելու օրը, այսինքն՝ երկու հազար քսան թվականի հունիսի տասնմեկին, անցել էր մեկ շաբաթ, երբ Պողոսը կեսգիշերից հետո, իր գյուտի վրա աշխատելուց հոգնած, սառնարանից մի շիշ գարեջուր հանեց, հարմար տեղավորվեց հյուրասենյակի բազկաթոռին ու միացրեց հեռուստացույցը: Ալիքներից մեկով լուրերի թողարկում եր, և Պողոսը որոշեց լսել, թե ինչ է տեղի ունենում երկրում ու ընդհանրապես՝ աշխարհում: Սակայն վերջինը չհասցրեց, որովհետև առաջին իսկ ռեպորտաժը, ավելի ճիշտ ռեպորտաժի հերոսին տեսնելով ու որոշ ժամանակ լսելով՝ զայրացավ և փոխեց ալիքը: Ռեպորտաժը Ազգային ժողովից էր, ռեպորտաժի հերոսը՝ իշխող ուժի բարձրաստիճան մի ներկայացուցիչ, վազում էր Ազգային ժողովի միջանցքով, լրագրողները

վազում էին նրա հետևից, մերթընդմերթ հասնում՝ հարցեր տալիս ու այդ վազքի մեջ էլ ստանում կամ չէին ստանում իրենց հարցերի պատասխանները: Տեսարանն ընդհանուր առմամբ կարող էր զվարճալի թվալ, եթե հեռուստացույցի ձայնը անջատված լիներ, և լսելի չլինեին պատգամավորի ցինիկ և մեծամիտ խոսքերը:

Պաշտոնյային տրվող հիմնական հարցերը վերաբերում էին նրա իսկ կողմից հեղինակած մի օրենքի նախագծի, ըստ որի առաջարկվում էր սոցիալական ցանցերում և լրատվամիջոցներում հրապարակված վիրավորանքի և զրպարտության համար փոխհատուցման չափը վիրավորանքի դեպքում մեկ միլիոն դրամից դարձնել հինգ միլիոն դրամ, զրպարտության դեպքում՝ երկու միլիոնից՝ տասը միլիոն դրամ:

«Ես կարծում եմ, որ խստացնելով արդեն իսկ գոյություն ունեցող հոդվածը, մենք կկարողանանք ինչ-որ չափով կանխել տեղեկատվական այն իրավիճակը, որն այսօր կա: Մարդիկ նույնպես զայրանում են, մարդկանց մոլորության մեջ են գցում»:

Եվ մինչ Պողոսը փորձում էր հասկանալ, թե ինչպես կարելի է «կանխել մի իրավիճակ, որն արդեն կա» և ինչո՞ւ են «մարդիկ զայրանում և մոլորության մեջ ընկնում», հետևեց լրագրողի մեկ այլ հարց՝ ինչու եք Դուք շրջում ոստիկանների ուղեկցությամբ, որին պաշտոնյան պատասխանեց այսպես. «անվտանգության նկատառումներից ելնելով՝ իմ հասցեին ինչել են հաշվեհարդարի սպառնալիքներ»:

Հենց այստեղ էլ Պողոսը փոխեց ալիքը և սովորականի պես զայրացած բացականչեց.

- Ճիկո՛ղ…

- Ճիկո՛ղ, ճիկոլ, ճիկոլ- արձագանքեց թութակը, որը թա-

ռած էր ջահին, և պարզվում է նույպես դիտել էր ռեպորտաժը:

- Դու այստե՞ղ ես,- շրջվեց ու վեր նայեց Պողոսը,- լսեցի՞ր:

Թութակը ոչինչ չպատասխանեց, սակայն թռավ ջահից, մի մեծ պտույտ արեց սենյակում և վայրէջք կատարեց հեռուստացույցին:

- Լսեցի՛ր այդ ուղտին,- կրկնեց Պողոսը,- նա մտածում է իր անվտանգության մասին: Նա չի ուզում, որ իրեն վիրավորեն և վախենում է, որ իր հետ հաշվեհարդար կտեսնեն: Ո՞վ՝ ժողովո՞ւրդը: Իսկ ինչո՞ւ պետք է ժողովուրդը նրան վիրավորի և նրա հետ հաշվեհարդար տեսնի:

Թութակը, չնայած ոչինչ չպատասխանեց, բայց նրա ուշադիր հայացքից հասկանալի էր, որ թեմայի հանդեպ անտարբեր չէ:

- Գիտե՞ս ովքեր են վախենում ժողովրդից. նրանք, ովքեր վախենալու բան ունեն: Իսկ ո՞վքեր ունեն վախենալու բան. նրանք, ովքեր խաբել են ժողովրդին: Իսկ ինչպե՞ս կարող են խաբել ժողովրդին այն մարդիկ, ովքեր, ինչպես իրենք են պնդում՝ սիրում են այդ ժողովրդին և ժողովուրդն էլ իրենց է սիրում: Ուրեմն այստեղ ամեն ինչ սուտ է, և սա ծաղր է ժողովրդի հանդեպ, հասկանո՞ւմ ես:

Թութակը մի երկար ծլվլոց արձակեց, որից կարելի էր ենթադրել, որ նա ոչ միայն հասկանում է, այլ մի բան էլ ավելի:

- Իսկ հիմա՝ ամենակարևորը,- շարունակեց Պողոսը,- այս ուղտն ուզում է, որ իրեն վիրավորողները պատժվեն և, որպեսզի չպատժվի ի՛նքը՝ շրջում է ոստիկանների ուղեկցությամբ: Ուրեմն ի՞նչ է պետք անել:

- Ինճեպե՛ճ, ինճեպե՛ճ,- արձագանքեց թութակը:

- Մեզ այստեղ կօգնի Աչոնը:

- Աճոնը՛, աճոնը՛,- կրկնեց թռչունը:

- Այո Աչոնը, նա կարծես ինչ-որ ծրագիր ուներ:

Աչոնը, սակայն դուռը չէր բացում: Պողոսը մոռացել էր, որ վաղուց արդեն կեսգիշերն անցել է և համառորեն սեղմում էր հարևանուհու զանգի կոճակը: Թութակը որոշել էր միանալ նրան և թառել էր ուսին: Մեծ է հավանականությունը, որ նրան հետաքրքրել էր, թե այդ ի՞նչ ծրագիր ունի Աչոնը:

Սակայն Աչոնը դուռը չէր բացում, և չէր էլ կարող բացել՝ այն պարզ պատճառով, որ տանը չէր:

ԱՉՈՆԻ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՕՐԸ ԿԱՄ ՈՒՂՏԻ ՊԱՐԸ ԿԱՄՐՋԻՆ

Նա այդ օրը հետաքրքիր ժամանակ էր անցկացրել: Կարելի է ասել՝ չափազանց քաղաքական, ավելի ճիշտ՝ հակահեղափոխական օր էր ունեցել: Նախ կեսօրին իմացել էր, որ իր նախկին ամուսիններից մեկը՝ թվով չորրորդը, վարակվել է Քովիդով, մեկ ժամ հետո իմացել էր, որ նրան տարել են հիվանդանոց, իսկ ևս մեկ ժամ հետո, որ նա պառկած է վերակենդանացման բաժանմունքում: Եվ Աչոնը շտապել էր գնալ նրան այցելության: Բայց պետք չէ մտածել, որ նա դա արել էր հոգատարությունից կամ նախկին ամուսնու հանդեպ ժամանակին տածած մեծ սիրուց դրդված: Ամենևին, պարզապես մեքենան, որը հիմա վարում էր՝ շքեղ, բալի գույնի Լեքսուսը, երկու տարի առաջ նրան նվիրել էր հենց Սերյոգան՝ նախկին, թվով չորրորդ ամուսինը: Կար նաև փոքրիկ մի բնակարան կենտրոնի էլիտար շենքերից մեկում, որը նույնպես բաժանվելուց Սերյոգան թողել էր նրան: Եվ, քանի որ

թե՛ բնակարանը, թե՛ մեքենան մնացել էին վերջինիս անունով, այսինքն՝ անվանափոխություն չէր արվել ու Սերյոգայի հետ նրանք պաշտոնապես ամուսնացած չէին եղել, Աչոնն ընդամենը վախենում էր, որ եթե նախկին ամուսինը մահանա, ինչի հավանականությունն, ըստ բժիշկների մեծ էր, ինքը կզրկվի անշարժ և շարժական այդ բավականաչափ թանկարժեք գույքից:

Նույն այդ բժիշկները, սակայն, համառորեն չէին թողնում մտնել հիվանդի մոտ: Իսկ դրանից էլ առաջ Աչոնին չէին թողնում մտնել հիվանդանոց: Հատկապես ակտիվ էր «պերեդաչի» տեղափոխող սանիտարը:

- Բացառվում է,- ասում էր նա չափից ավելի ինքնավստահ,- եթե նույնիսկ հիվանդանոցի ղեկավարությունն ասի:

Այնուամենայնիվ՝ առաջին արգելքը Աչոնը հաղթահարեց հեշտությամբ՝ նա ինչ-որ բան շշնջաց մուտքի մոտ հերթապահող ոստիկանի ականջին և նա խելոք բացեց դուռը, հետո իր հերթին ինչ-որ բան շշնջաց սանիտարի ականջին և վերջինիս ու մուտքի մոտ հավաքված այլ հիվանդատերերի զայրացած հայացքների ներքո Աչոնը մտավ հիվանդանոց:

Հիվանդանոցի ղեկավարության միջամտության կարիքը եղավ հետո: Իհարկե դրա համար Աչոնը ստիպված էր զանգահարել «բոմոնդի» ներկայացուցիչներից մեկին՝ ընկերուհուն, որի ամուսինը բժշկական ոլորտի հեղինակություններից էր: Զանգից հինգ րոպե անց նրան նախկին ամուսնու մոտ՝ վերակենդանացման բաժանմունք, ուղեկցեց անձամբ գլխավոր բժիշկը:

Հիվանդին արհեստական շնչառության սարք էին միացրել, և նա պառկած էր գրեթե անգիտակից վիճակում: Գլխավոր բժիշկը տխուր կանգնեց նրա գլխավերևում, հավանաբար մտածելով, որ տիկինն հիմա կփարվի նրան ու

կսկսի հեկեկալ: Սակայն հուզական տեսարաններ չեղան, և տիկինն ընդամենը ասաց.

- Հանեք այս խողովակները, ես պետք է խոսեմ նրա հետ:

- Բայց Դուք տեսնում եք, որ նա չի կարող խոսել,- կմկմաց գլխավոր բժիշկը,- ես հասկանում եմ, որ Դուք...

Սակայն Աչոնն ընդհատեց նրան և անհասկանալի մնաց, թե ինչ էր հասկանում գլխավոր բժիշկը:

- Իսկ ստորագրել կարո՞ղ է:

Եվս կես ժամից, այն բանից հետո, երբ Աչոնը զանգահարեց «բոմոնդի» մեկ այլ ներկայացուցիչ ընկերուհու, որի ամուսինը մեծ հեղինակություն էր արդարադատության համակարգում, վերակենդանացման բաժանմունք մտավ նոտարը: Նա այնքան վախեցած էր, որ դիմակի փոխարեն հագել էր մի բան, որ շատ նման էր տիեզերագնացների սաղավարտի, բայց այնուամենայնիվ պատվով կատարեց իր գործը և Հայաստանի Հանրապետության պատմության մեջ թերևս առաջին անգամ գրանցվեց գույքի անվանափոխման հետ կապված նոտարական գործարք՝ վերակենդանացման բաժանմունքում:

Ու երբ նախկին ամուսնուն հրաժեշտ տալիս Աչոնը օդային մի համբույր ուղարկեց նրան, դեռ չգիտեր, որ ողջ այս քաշքշուքն անտեղի էր, որովհետև Սերյոգան ամենևին էլ չէր պատրաստվում մահանալ:

Հիվանդանոցից դուրս գալու ճանապարհին, վերելակի մեջ նա հանդիպեց սանիտարին, ինքնավստահ այն տիկնոջը, որը քիչ առաջ բացառում էր, որ որևէ մեկը կարող է մտնել հիվանդանոց, եթե անգամ ասեն ղեկավարությունից: Նա խեթ նայեց Աչոնին և ասաց.

- Որ այդպես է, ինչո՞ւ են մեզ փողից զրկել:

- Ինչ փողից, ո՞վ է զրկել,- չհասկացավ Աչոնը:

Պարզվեց, որ տիկինը նախկինում՝ մինչև հեղափոխությունը աշխատել է որպես վերելակավար ու դժգոհ չի եղել իր գործից:

- Երկու հարյուր դրամ էին դնում խալաթիս գրպանը, դրանից էլ կտրեցին:

- Ես ինչ մեղք ունեմ,- հետաքրքրվեց Աչոնը:

- Ասում են ոչ ոքի ներս չթողնեք, բայց Ձեզ ներս են թողնում, մինիստրությունից զանգում են՝ ներս են թողնում, քավորը զանգում է՝ ներս են թողնում,- զայրացած ասաց նախկին վերելակավարը,- սա՞ է նոր Հայաստանը, էլ ինչի՞ էինք հեղափոխություն անում:

- Ով անում էր, թող նա էլ մտածի,- չոր նետեց Աչոնը ու դուրս եկավ վերելակից:

Այսքանով սակայն մեր հերոսուհու քաղաքական, ավելի ճիշտ՝ հակահեղափոխական օրը չավարտվեց: Հիվանդանոցից դուրս գալով՝ նա զանգահարեց իր երկու ընկերուհիներին, որոնք քիչ առաջ օգնել էին լուծել իր խնդիրը և հրավիրեց լանչի՝ Սարյանի վրա գտնվող նորաբաց մի ռեստորանում:

Տեղավորվեցին ամենահարմար սեղանի մոտ և պատվիրեցին ծովամթերք: Հարևան սեղանի մոտ նստած էին փողկապով երկու տղամարդ և ակտիվորեն ինչ-որ բան էին քննարկում: Նրանցից մեկի պրոֆիլը, որը չափազանց նման էր ուղտի պրոֆիլի, Աչոնին չափազանց ծանոթ թվաց, բայց երկար ժամանակ չէր կարողանում մտաբերել, թե որտեղի՞ց է ծանոթ:

- Մենք չպիտի մեր բանուգործը թողնենք ու ընկնենք դրանց հետևից, կա ոստիկանություն, թող ոստիկանությունն էլ զբաղվի:

Խոսողը ուղտն էր, որն արմունկներով հենվել էր սեղանին և դանդաղ ինչ-որ բան էր ծամում, ավելի ճիշտ որոճում՝ ինչպես որոճում է ուղտը:

- Շատ ճիշտ ես ասում,- համաձայնեց նրա սեղանակիցը, որի հայացքը գամված էր Աչոնենց սեղանին,- թող բռնեն ու դատեն:

- Որքա՞ն կարելի է,- հավելեց ուղտը,- զզվել ենք արդեն:

- Այո, այո, զզվել ենք,- կրկնեց սեղանակիցը՝ հիացած հայացքն Աչոնից չհեռացնելով:

- Այդ ո՞ւր ես նայում,- հարցրեց ուղտն ու ինքն էլ շրջվեց:

Եվ հենց այստեղ էլ Աչոնը ճանաչեց նրան:

Առաջին բանը, որ անցավ մեր հերոսուհու մտքով՝ ծովամթերքով ափսեն ուղտի գլխին շրջելն էր: Նա նույնիսկ պատկերացրեց, թե ինչպես են ծովախեցգետինների պոչերը կախվում Ազգային ժողովի պատգամավորի ականջներից և ինչպես է ծովաբողկով կծու սոուսը ծորում նրա ուղտի մռութի վրայով: Մեծ էր գայթակղությունը նաև մի երկու խոսք ասել նրան: Բայց Աչոնն իրեն տիրապետեց: Ընկերուհիները, ինչպես նաև ռեստորանի բազմաթիվ հաճախորդները կարող էին ճիշտ չհասկանալ: Եվ նա ընդամենը կանչեց մատուցողին և խնդրեց տեղափոխել իրենց ուրիշ սեղանի մոտ:

- Ինչո՞ւ,- զարմացան ընկերուհիները:

- Որոճացող ուղտեր կան շրջակայքում,- բացատրեց Աչոնն այնպես, որ իրեն լսեն կողքի սեղանի շուրջ,- նրանք կարող են անգամ թքել, դա նրանց մոտ ցեղական է:

Պետք է ասել, որ Աչոնը հույս ուներ, որ իրեն կպատասխանեն կողքի սեղանի մոտից և այդ դեպքում նա բոլոր հիմքերը կունենա ծովամթերքով ափսեի հետ կապված իր ծրագիրը կյանքի կոչելու: Բայց ուղտը ոչինչ չասաց, վախվորած շրջվեց ու շարունակեց որոճալ, չնայած շատ լավ հաս-

կացավ, որ ակնարկն ուղղված է իրեն:

Սարյան փողոցի ռեստորանում լանչն ավարտելուց հետո Աչոնը գնաց մեկ այլ ընկերուհու հետ սուրճ խմելու, ապա՝ մարզասրահ, ապա՝ գեղեցկության սրահ, հետո էլի ուրիշ սրահներ, երեկոյան եկավ տուն, փոխեց հագուստը, գնաց ընթրելու այլ ընկերուհիների հետ, դարձյալ վերադարձավ տուն, դարձյալ փոխեց շորերը ու գնաց ակումբ՝ զվարճանալու:

Ակումբը վերջերս էր բացվել և մեկն էր երևանյան այն հազվադեպ զվարճանքի վայրերից, ուր ամեն մարդու չէին թողնում: Աչոնն ու քոմփնին առաջին անգամն էին այստեղ, նրանց հրավիրել էր անձամբ ակումբի տերը և ակնկալում էր, որ թանկագին հյուրերը հնարավորինս լավ տպավորություն կստանան և կերաշխավորեն այս վայրը իրենց լայն շրջապատին և ամեն ինչ գուցե հենց այդպես էլ լիներ, եթե…

Աչոնը հիշում էր հին հայկական ասացվածքը՝ ուղտի պարը կամրջին է բռնում: Ամեն ինչ ճիշտ էր, ասացվածք-

ները դատարկ տեղը չեն լինում: Ընդ որում, թե՝ բուն, թե՝ խորհրդանշական առումով: Նախ՝ ակումբում իսկապես կային կամրջակներ, որոնք բաժանում էին սեղաններն իրարից և հենց այդ կամրջակներից մեկի վրա էլ պարում էր պատգամավոր ուղտը՝ փողկապը կիսաարձակած, վերնաշապիկը շալվարի տակից դուրս եկած և, ըստ ամենայնի, ալկոհոլից ավելի ազդեցիկ հաճույքի տրված: Խորհրդանշական առումով՝ պատգամավորի արարքը նույնպես համընկնում էր «ուղտի պարը կամրջին է բռնում» հին ու հայտնի ասացվածքի նշանակությանը. նա վտանգավոր բան էր անում: Միայն թե ինքը դեռ չգիտեր այդ մասին:

5Չնայած Աչոնենց սեղանի մոտ չափազանց զվարթ մթնոլորտ էր, այդ երեկո ընկերուհիները որոշել էին խմել Աբսենթ, Աչոնն՝ ինքը, մտազբաղ էր: Նախ նրան ի սկզբանե դուր չէր եկել ակումբը: Ո՛չ երաժշտությունը, ո՛չ ինտերյերը, ո՛չ լուսավորությունը նրա սրտով չէին: Բայց դրա հետ դեռ կարելի էր մի կերպ համակերպվել: Այլ հարց էր մարդկային կոնտինգենտը: Դրա հետ համակերպվել դժվար էր: Չէր օգնում նույնիսկ աբսենթը: Այսքան «ղզիկ» իրար գլխի որտեղի՞ց է հավաքվել՝ մտածում էր Աչոնը: Կարծես ինչ-որ ինկուբատորից հավաքվել-եկել էին այստեղ: Ու միայն երբ տեսավ պատգամավոր ուղտին՝ հասկացավ, թե այդ ինկուբատորը որն է:

- Ճանաչեցի՞ր դրան,- աղմուկի միջից լսվեց ընկերուհու ձայնը:

- Ուղտն է,- ձայնեց ի պատասխան Աչոնը:

- Ո՞վ,- չհասկացավ ընկերուհին:

- Մի՞թե նման չէ ուղտի,- ասաց Աչոնը,- ուղտի, որի պարը բռնել է կամրջին:

Ընկերուհուն դուր եկավ համեմատությունը, նա մի լավ

քրքջաց, ապա պայուսակից հանեց հեռախոսն ու սկսեց նկարել:

- Ինչ ես անում,- հարցրեց Աչոնը:

- Նկարեմ, տեղադրեմ Ֆեյսբուքում,- պատասխանեց ընկերուհին:

- Պետք չէ,- ասաց Աչոնը:

- Ինչո՞ւ պետք չէ,- զարմացավ ընկերուհին:

- Դա իրենց ոճն է, մենք հո ղզիկ չե՞նք:

Բայց հետո մի պահ մտածեց, ապա հանեց իր հեռախոսն ու սկսեց ինքը նկարել:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ՈՒ ԱՉՈՆԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ ՄՇԱԿԵՑԻՆ

Երբ Աչոնը դուրս եկավ վերելակից ու տեսավ Պողոսին՝ թութակն ուսին իր դռան առջև կանգնած, բոլորովին չզարմացավ: Կարծես հենց այդպես էլ պայմանավորվել էին, որ գիշերվա ժամը մեկին երեքով պետք է հանդիպեին հենց այդտեղ:

- Աճո՛ն, աճո՛ն,- ձայնեց թութակը:

- Տարօրինակ է,- ծիծաղեց Աչոնը՝ պայուսակում բանալին փնտրելով:

- Ինչն է տարօրինակ,- հարցրեց Պողոսը,- նա խելացի թութակ է, և մենք քեզ էինք սպասում:

- Այո, նա խելացի թութակ է,- համաձայնեց Աչոնը,- իսկ տարօրինակն այն է, որ ես ինքս էի ուզում քեզ հետ խոսել,

բայց մտածում էի քնած կլինես:

Հետո արդեն, տանը նա ցույց տվեց քիչ առաջ ակումբում նկարած վիդեոն:

- Սա հո ուղտն է,- բացականչեց Պողոսը:

- Դու նրան ճանաչո՞ւմ ես,- զարմացավ Աչոնը,- նկատի ունեմ՝ որտեղի՞ց գիտես, որ նա ուղտ է, այսինքն…

- Ես նրան չեմ ճանաչում,- ընդհատեց Պողոսը,- բայց նրան քիչ առաջ ցույց էին տալիս հեռուստացույցով և նա ահավոր նման է ուղտի:

- Այո,- համաձայնեց Աչոնը,- ուղտի, որի պարը բռնում է կամրջին:

- Կամջի՜, կամջի՜,- վանկարկեց թութակը:

-Իսկ դու որտե՞ղ ես նկարել այդ վիդեոն,- հարցրեց Պողոսը:

- Մի ակումբում:

- Նրա հետ ոստիկաններ կայի՞ն:

- Ո՞ւմ:

- Ուղտի:

- Դրսում հավաքված էին բազմաթիվ ոստիկաններ:

- Նա քիչ առաջ հեռուստացույցով ասում էր, որ ոստիկաններն իրեն ուղեկցում են անվտանգության նկատառումներից ելնելով, որովհետև իր հասցեին հնչել են սպառնալիքներ: Պարզվում է, որ ոստիկանները նրան ուղեկցում են, որ նա զվարճանա:

- Զվաճանա՛, զվաճանա՛,- արձագանքեց թութակը:

- Զվարճանալու մեջ ոչ մի վատ բան չկա,- ասաց Աչոնը՝ իբրև հաստատում պահարանից մի կիսալիքը շիշ աբսենթ հանելով,- ես ինքս սիրում եմ զվարճանալ և առանց զվարճանքի չեմ պատկերացնում իմ կյանքը: Եվ իհարկե հասկանում եմ, որ յուրաքանչյուր մարդ ունի զվարճանալու իրավունք: Ավելին՝ մարդը պետք է իր կյանքի մի զգալի

մասը հատկացնի զվարճանալուն: Այլապես ինչի՞ է ապրում: Բայց կա մի կարևոր հանգամանք. մարդը պետք է վաստակի զվարճանալու իրավունքը: Օրինակ՝ ո՞րն է հասարակ բեռնակրի, կամ ասենք՝ զոդողի զվարճանքը մի երկրում, ուր նա իր կատարած աշխատանքի դիմաց ստանում է գրոշներ, այսինքն՝ մեր երկրում. նա երեկոյան գալիս է տուն և գարեջուր խմում՝ ապխտած ձկով: Կամ ո՞րն է սովորական ինժեների կամ ուսուցչի զվարճանքը. նրանք կարող են ամիսը մեկ իրենց թույլ տալ մի էժան ռեստորանում հավաքվել ու ասենք՝ խաշ ուտել: Բայց այդ մարդիկ մինչև իրենց փոքրիկ զվարճանքին տրվելը աշխատում են՝ գործ են անում: Պաշտոնյաներն, ինչ խոսք, նույնպես ունեն զվարճանալու իրավունք: Նախկին պատգամավորներն ու պաշտոնյաները իհարկե նույնպես զվարճանում էին: Այդ զվարճանքը, որ տեղի էր ունենում խորոված-քյաբաբի միջավայրում, գուցե պակաս զզվելի չէր, նախկիններին կերպարները՝ ցմփոր, հաստագլուխ, գուցե պակաս տհաճ չէին, նախկինների տրնգին՝ զուռնա-դհոլի տակ, գուցե պակաս գռեհիկ չէր, բայց գոնե կար մի բան, որ տարբեր էր. նրանք մինչև զվարճանալը, այսինքն մինչև իրենց ահռելի փորերը քյաբաբով լցնելն ու տրնգի տալը, գոնե ինչ-որ բան անում էին: Ինչ էին արե՞լ: Նրանք առնվազն պետություն էին կայացրել՝ իր բոլոր ինստիտուտներով, սահմանադրություն և օրենքներ ընդունել: Այդ պետությունն իհարկե ժողովրդի երազած պետությունը չէր, ինստիտուտներն այնպես չէին աշխատում, ինչպես պիտի աշխատեին, օրենքները, անգամ սահմանադրությունը հաճախ խախտվում էին, բայց և այնպես դրանք կային: Մինչդեռ սրանք…

- Ի՞նչ անենք,- Աչոնին ընդհատեց Պողոսը:

-Իճանե, իճանե, իճանե,- արձագանքեց թութակը, որը

բավականին երկար լուռ էր և ուշադիր լսում էր:

- Ինչ պիտի անենք, սատկացնել է պետք դրանց,- հանգիստ ասաց Աչոնը՝ փոքրիկ բաժակների մեջ լցնելով Աբսենթը: Սակայն նրա պատասխանից պարզ չդարձավ՝ դիմում էր Պողոսին, թե՞՝ թութակին:

Արձագանքեց Պողոսը.

- Ես դեմ եմ մարդասպանությանը. չի կարելի մարդուն զրկել կյանքից:

Աչոնը աբսենթով բաժակի վրա թեյի գդալ դրեց ու Պողոսի զարմացած հայացքի տակ գդալի մեջ չգիտես ինչու լցրեց մի քիչ շաքարավազ:

- Իհարկե չի կարելի. բայց միթե ես սպանության անուն տվեցի:

- Դու ասացիր՝ սատկացնել:

- Այո, բայց դրանք տարբեր բաներ են. կարելի է սատկացնել՝ առանց սպանելու:

Աչոնը շարունակում էր իր անհասկանալի գործողությունները աբսենթի հետ. հիմա էլ նա սառցարանից ջուր բերեց ու լցրեց բաժակի մեջ՝ այնպես, որ ջուրը նախ ծորա շաքարավազով լիքը գդալի վրայով:

- Այդ ինչ ես անում,- չդիմացավ Պողոսը:

- Մինչև գործողությունների պլան մշակելը՝ ուզում եմ քեզ ծանոթացնել կանաչ ջրահարսի հետ:

- Ո՞ւմ,- զարմացավ Պողոսը:

- Կանաչ ջրահարսի,- կրկնեց Աչոնը,- նույն իր՝ աբսենթի, որը տասնիններորդ դարի Ֆրանսիայում համարվում էր հավասարապես թե՛ պրոլետարիատի, թե՛ բոմոնդի սիրելի խմիչքը:

- Իսկ…

Պողոսն ուզում էր ինչ-որ բան հարցնել, սակայն Աչոնն ընդհատեց նրան ու շարունակեց.

- Եվ քանի որ դու ներկայացնում ես քսանմեկերորդ դարի հայկական պրոլետարիատը, իսկ ես՝ բոմոնդը, կարելի է այնպես անել, որ պատմությունը կրկնվի: Մանավանդ, որ մենք յուրօրինակ հեղափոխություն ենք պատրաստվում անել:

Աչոնը կանաչ հեղուկով լցված բաժակը մեկնեց Պողոսին և ասաց առարկություն չհանդուրժող տոնով.

- Սա պետք է խմել մեկ ումպով:

Եվ ինքը խմեց, մինչդեռ Պողոսն հապաղում էր:

- Դե՛, ի՞նչ ես մտածում:

- Մտածում եմ, թե ինչու եմ ես պրոլետարիատ:

- Եթե դա քեզ կմխիթարի կամ ավելի ճիշտ կգայթակղի, ասեմ, որ Աբսենթը նաև ֆրանսիացի նկարիչների ու պոետների ամենասիրելի խմիչքն էր. օրինակ՝ Դեգայի, Թուլուզ-Լոտրեկի և Վան Գոգի, Բոդլերի և Արթյուր Ռեմբոյի…

- Թուլուզ-Լոտրեկին ես սիրում եմ,- Պողոսը դատարկեց բաժակը:

Բայց պարզվեց, որ ֆրանսիական բոմոնդի ու պրոլետարիատի սիրելի խմիչքը ոչինչ չարժե, եթե այն ընդունվում է քիչ քանակությամբ: Համենայնդեպս՝ ըստ Աչոնի տեսության: Հետևաբար՝ գործողությունների պլանը կազմվեց միայն չորրորդ թե հինգերորդ բաժակից հետո:

Նախ պետք էր կազմել ցուցակ: Բոլոր այն սրիկաները, ղզիկներն ու ստախոսները, որոնք հայտնվել էին պետության կառավարման համակարգում պիտի ընդգրկվեին ցուցակում և հերթով պատժվեին: Պետք էր մանրակրկիտ և հետևողականորեն ուսումնասիրել բոլորի սովորություններն ու հակումները, ապա տեղաշարժը և հետո միայն որոշել հերթականությունը:

Ու քանի որ ուղտի հակումների ու տեղաշարժի մասին արդեն բավարար տեղեկություններ կային, հենց նա էլ ցու-

ցակում պիտի լիներ առաջինը:

Սույն կենդանին, ըստ ամենայնի, հաճախ էր լինում այն ակումբում, ուր նրան տեսել էր Աչոնն այդ օրը: Եվ հենց այդ-տեղ էլ պետք էր սատկացնել նրան: Ավելի կոնկրետ՝ ակում-բի արտաքնոցում: Ինչպե՞ս՝ շատ պարզ: Պողոսը պետք է սպասեր մինչև նա որոշակի քանակությամբ ալկոհոլ կամ մեկ այլ բան օգտագործեր, ապա հետևեր նրան մինչև զու-գարան և այստեղ նախ կոտրեր նրա քիթը, ապա քաշեր ականջներն այնքան ժամանակ, մինչև ուղտն սկսեր ներո-ղություն խնդրել և պաշտոնապես հայտարարեր, որ ինքը սրիկա է, ղզիկ, ստախոս, հավասարապես, ինչպես սրիկա են, ղզիկ և ստախոս իր թիմակիցների մեծամասնությունը և հատկապես՝ իրենց առաջնորդը: Այս ամենը պիտի տեսագր-վեր և ձայնագրվեր, որից հետո ուղտը մի վերջին քոթակ պի-տի ստանար ու գնար շարունակելու իր պարը կամրջին կամ ուր ուզում էր: Հետո արդեն՝ ըստ ցուցակի:

Ահա համառոտ գործողությունների այն պլանը, որ կազ-մեցին Աչոնն ու Պողոսը Աբսենթի չորրորդ թե հինգերորդ բաժակից հետո: Միակ բանը, որի շուրջ համաձայնության չէին գալիս հարևանները կամ, ավելի ճիշտ՝ արդեն գործըն-կերները, կապված էր մի նուրբ հարցի հետ: Աչոնը պնդում էր, որ գործողությունները պետք է անել դիմակավորված, մինչդեռ Պողոսը համաձայն չէր, առնվազն՝ իր մասով:

- Ես գժի թուղթ ունեմ, ինձ միևնույն է չեն կարող դա-տել, հասկանո՞ւմ ես, իսկ ինչ վերաբերում է քեզ, ես այնպես կանեմ, որ դու չերևաս:

Սակայն Աչոնը համաձայն չէր:

- Խնդիրը դատվելը չէ: Կարող ես և չդատվել, սակայն եթե քեզ մեկ անգամ տեսնեն, երկրորդ անգամ չես կարող նույնը անել:

- Բայց ես չեմ ուզում թաքնվել դիմակի հետևում, համառում էր Պողոսը,- այդպես անկեղծ և, որ գլխավորն է՝ արդար չի լինի:

- Եթե պայքարիդ վերջնական նպատակը արդարությունն է, կարելի աչք փակել ընթացիկ մանր անարդարությունների վրա:

Մի խոսքով՝ Աչոնին հաջողվեց համոզել Պողոսին:

- Իսկ Ճիկոլը,- հարցրեց Պողոսը:

- Ճիկոլը, ճիկոլը, ճիկոլը,- կրկնեց թութակը, որը գործողությունների պլանի մասին չնայած կարծիք չէր հայտնել, բայց համենայնդեպս դեմ էլ չէր արտահայտվել:

- Ինչ՝ Ճիկոլը,- զարմացավ Աչոնը:

- Ինչպե՞ս ենք պատժելու Ճիկոլին: Չէ՞ որ նրան անհնար է հասնելը:

- Կպատժենք այն ժամանակ, երբ որ հնարավոր կլինի հասնելը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ԱՌՆՉՎԵՑ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻՆ

Երբ Հայաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, կային շատ ազնիվ և պարկեշտ մարդիկ, որոնք անկեղծորեն հավատում էին, որ երկրից այլևս իսպառ կամ գոնե մեծամասամբ կվերանան այն բացասական երևույթները, որոնք վերջին տասնամյակներին խորը արմատներ էին գցել այստեղ: Այդ բացասական երևույթները շատ էին, իսկապես շատ,

այնքան շատ, որ դրանք օգտագործելով հնարավորություն եղավ իրականացնել հեղափոխություն:

Բոլոր բացասական երևույթների հետևում կանգնած են մարդիկ, որոնք ամեն ինչ անում են, որ դրանք չվերանան, այն պարզ պատճառով, որ այդ բացասական երևույթները նպաստում են իրենց հարստանալուն: Այդպես է եղել միշտ ամբողջ աշխարհում, այդպես է եղել Հայաստանում: Եվ այն պետություններում, ուր բացասական երևույթները հասել են նվազագույնի, նշանակում է, որ նվազագույնի են հասել դրանց հետևում կանգնած մարդիկ կամ նրանց հնարավորությունները: Դա իհարկե եղել է աստիճանաբար, որովհետև հնարավոր չէ թրի մեկ հարվածով կտրել կաշառակերության, հովանավորչության, կամայականությունների թելը: Բացառությամբ մի դեպքի՝ երբ երկրում տեղի է ունենում հեղափոխություն: Երբ երկրում տեղի է ունենում հեղափոխություն, ժողովուրդն իրավունք ունի ակնկալել կտրուկ փոփոխություններ կամ առնվազն ակնկալել, որ հստակ կտեսնի դրանց ընթացքը: Եվ իհարկե իրավունք ունի ակնկալել, որ մարդիկ, որոնք կանգնած են բացասական երևույթների հետևում անմիջապես կզրկվեն իրենց ունեցած հնարավորություններից:

Իսկ ովքե՞ր են այդ մարդիկ, որոնք կանգնած են բացասական երևույթների հետևում, որոնք հարստանում են պետության ու հասարակ ժողովրդի հաշվին:

Այդ մարդիկ բաժանվում են երկու մասի՝ նրանց, որոնց ժողովուրդը տեսնում է և նրանց, որոնց ժողովուրդը չի տեսնում: Երկրորդ մասում պետական ամենաբարձրաստիճան պաշտոնյաներն են, որոնք հնարավորություն են ստեղծում առաջին մասում գտնվողների՝ այսպես կոչված օլիգարխների համար տասնյակ, երբեմն հարյուրավոր միլիոններ աշխատելու և իհարկե իրենց էլ այդ միլիոններից բաժին հա-

նելու: Օլիգարխները ստանում են իրենց տարատեսակ բիզնեսները վարելու համար տարատեսակ արտոնություններ և, որ գլխավորն է՝ մենաշնորհներ: Մարդկանց այս երկու մասերի մեջ կա մի կարևոր տարբերություն, սակայն: Պետական բարձրաստիճան պաշտոնյաների միլիոնները, չնչին բացառություններով, ժողովուրդը չի տեսնում, մինչդեռ օլիգարխների շքեղ կյանքը նրա աչքի առջև է: Սրա պատճառը ևս հասկանալի է. պետական բարձրաստիճան պաշտոնյան չի կարող բացատրել, թե որտեղից իրեն այն միլիոնները, որով նա շքեղ կյանք է վարում, մինչդեռ օլիգարխը կարող է վերագրել իր բիզնեսնորին և հոգ չէ, որ այդ բիզնեսների համար պարարտ հող է պատրաստել հենց նրանց տանիք հանդիսացող պետական պաշտոնյան:

Եվ ահա, ինչպես ասվեց վերևում, հեղափոխությունից հետո հեղափոխությանը մասնակցած մարդկանց մի շատ մեծ զանգված սպասում էր, որ օր առաջ կտեսնի թե ինչպես է վերականգնվում արդարությունը:

Այսպես էր մտածում Պողոսը, որը, անտարակույս, այդ զանգվածի մեջ չէր մտնում: Նա ոչ մասնակցել էր հեղափոխությանը, ոչ հավատացել դրան, ոչ էլ սպասում էր որևէ բանի: Ավելի ճիշտ սպասում էր. սպասում էր, որ վաղ թե ուշ հեղափոխության առաջնորդի դիմակը կպատռվի և ժողովուրդը կհիասթափվի: Նա իհարկե չէր ուզում, որ այդպես լինի, ամեն ինչ կտար, որ այդպես չլիներ, բայց իր զգացողություններում նա երբեք չէր սխալվում:

Եվ հուլիսյան մի շոգ օր նա վերջնականապես համոզվեց, որ ամեն ինչ հենց այդպես էլ կա:

Ահա թե ինչպես դա եղավ:

Օրը շաբաթ էր և Պողոսը որոշել էր մինչև Աչոնի հետ ծրագրած գործողությունները սկսելը մի վերջին անգամ

գնալ քաղաքից դուրս, բարձրանալ սար, բարձր երաժշտություն միացնել ու նայել երկնքին: Ինչ իմանաս հետո ինչ կլիներ: Աչոնին էլ էր հրավիրել, բայց վերջինս հրաժարվել էր՝ ասելով, որ պիտի գնա մի միջոցառման:

Երկար մտածելուց հետո Պողոսը որոշել էր գնալ հնարավորիս հեռու, ընտրել էր Արմաղան լեռը՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների սահմանագլխին: Այդ լեռան գագաթից, որը գտնվում է ծովի մակերևույթից մոտ երեք հազար մետր բարձրության վրա, ցերեկները բացվում էր հրաշալի տեսարան դեպի Սևանա լիճը, իսկ մութն ընկնելուց հետո կարելի էր տեսնել բոլոր երեք հազար աստղերը, որոնք հնարավոր է միաժամանակ տեսնել Երկիր մոլորակից:

Մեր հերոսը արդեն տեղադրել էր իր հավաքած աստղադիտակը Նիվայի բեռնախցում, ինչպես նաև բուտերբրոդներ, խաշած եգիպտացորեն ու մի քանի շիշ գարեջուր և պատրաստվում էր շարժվել, երբ զանգեց հեռախոսը: Զանգահարողը իր մշտական հաճախորդներից մեկն էր, որն ապրում էր Նար-Դոս փողոցում: Նրա անունն էր Գեղեցիկ:

- Փրկիր ինձ, Պողոս,- ասաց Գեղեցիկը՝ չափազանց հուզված ձայնով,- տունս ջուր է լցվում:

- Ինչ,- չհասկացավ Պողոսը:

- Տունս ջուր է լցվում,- կրկնեց Գեղեցիկը,- խողովակ է պայթել:

- Լավ, բայց ես ի՞նչ կարող եմ անել,- զարմացավ Պողոսը,- ես հո սանտեխնիկ չե՞մ:

- Դու ամեն ինչ կարող ես անել,- աղերսեց Գեղեցիկը,- ես տանը մենակ եմ՝ փոքր թոռանս հետ և ուրիշ ոչ մեկի չեմ կարողանում գտնել:

- Լավ,- համաձայնեց Պողոսը՝ երեխայի անունը լսելով,- կգամ:

- Միայն թե շուտ, այստեղ իսկական ջրհեղեղ է:

Սակայն շուտ գնալ չհաջողվեց: Պողոսը Սայաթ-Նովա պողոտայով գնաց դեպի Չարենց փողոց, այստեղից թեքվեց աջ, իջավ գրեթե մինչև վերջ՝ անցնելով Հանրապետական մարզադաշտը, բայց Նար-Դոս փողոց հասնել նրան չհաջողվեց: Այստեղ այնպիսի խցանում էր, որ մեքենաները ոչ թե դանդաղ էին շարժվում, այլ գրեթե կանգնած էին: Պողոսը սպասեց հինգ րոպե, տասը, տասնհինգ ու քանի որ րոպեն մեկ զանգում էր Գեղեցիկը և փողոցում էլ որևէ շարժ չկար, որոշեց թողնել մեքենան մայթեզրին ու գնալ ոտքով:

Քիչ անց պարզվեց, որ խցանման պատճառը հարսանեկան մի շարասյուն է, որը զբաղեցրել էր ամբողջ փողոցը՝ հանդիպակաց գիծը ներառյալ: Բայց դա սովորական հարսանեկան շարասյուն չէր: Ամենահասարակ մեքենան այստեղ բոլորովին նոր S դասի Մերսեդեսն էր: Իսկ հիմնական մեքենաները՝ Ռոլս Ռոյսեր ու Բենթլիներ էին: Ընդ որում՝ բոլոր մեքենաները նույն պետհամարանիշերով էին: Եվ բոլորը սպասարկում էին մեկ մարդու ու նրա մերձավորներին:

Այդ մարդուն Պողոսը տարիներ, կարելի է ասել՝ դեռ տասնամյակներ առաջ անվանել էր Վարազ: Այդ ժամանակ՝ իննսունականների սկզբին, երբ Հայաստանի և Արցախի ողջ հասարակ ժողովուրդը լուծում էր իր գոյատևման խնդիրը, Վարազը Երևանում ծաղկեցնում էր չարչիությունը և խաղամոլությունը: Հիմա նա հայտնի օլիգարխ էր, քաղաքական գործիչ:

Եվ ինչպես իննսունականներին, այնպես էլ հիմա, նա կարող էր ոտքի տակ տալ ժողովրդին իր թիկնապահներով և ավտոշարասյունով:

Պողոսն իհարկե ուզում էր մի երկու բառ ասել և իհարկե ասեց, բայց ավելին անելու հարմար պահ չէր: Նախ՝ հար-

սանիք էր, և հետո՝ նա շտապում էր Գեղեցիկի տուն, ուր ջրհեղեղ էր:

Գեղեցիկի տանը պայթած խողովակի վերանորոգումը երկար չտևեց: Պողոսն իհարկե հաջողությամբ գլուխ բերեց գործը, բայց ոտքից գլուխ թրջվեց և ստիպված էր մինչ ճանապարհ ընկնելը գնալ տուն՝ փոխվելու: Բայց այստեղ ևս նրան դժվարություններ էին սպասվում: Պուշկինի փողոցը, ուր գտնվում էր նրա բնակարանը փակ էր՝ սկսած Կողբացու խաչմերուկից: Ընդ որում փակել էին ոստիկանները:

- Այս ինչ հաշիվ է,- հետաքրքրվեց Պողոսը՝ իջեցնելով մեքենայի ապակին:

Բայց պատասխանի չարժանացավ, ոստիկանները զբաղված էին:

- Թողեք անցնեմ,- առայժմ հանգիստ տոնով,- շարունակեց Պողոսը:

- Փողոցը փակ է,- արձագանքեց ոստիկաններից մեկը:

- Ոչ թե փակ է, այլ դուք եք փակել:

- Եթե փակել ենք՝ նշանակում է փակ է:

- Իսկ կարո՞ղ եք մի պահ բացել ու նշանակի, որ բաց է,- համառեց Պողոսը,- բանն այն է, որ ես այս փողոցում եմ ապրում:

- Թողեք մեքենան մի տեղ ու գնացեք ոտքով:

- Հրաշալի գաղափար է, ո՞ւմ մտքով կանցներ,- հեգնեց Պողոսը

Բայց ոստիկանը չհասկացավ հեգնաքը և չոր նետեց:

- Հանեք մեքենան այստեղից, դուք խանգարում եք երթևեկությանը:

- Ինչպե՞ս կարող եմ խանգարել երթևեկությանը, եթե փողոցը փակ է:

Բայց ոստիկանը այլևս չխոսեց:

Պողոսը փակեց մեքենայի դռները, թողեց այն հենց այնտեղ, ուր կանգնած էր, այսինքն փողոցի մեջտեղում և քայլեց դեպի իր տուն: Երբ հասավ շենքին, քիչ այն կողմ՝ Հյուսիսային պողոտայից դհոլ-զուռնայի ձայներ լսեց: Բայց ուշադրություն չդարձրեց, մտավ շենք, նստեց վերելակ ու բարձրացավ տուն: Այստեղ նույնպես պատուհաններից, որ նայում էին Հյուսիսային պողոտայի կողմը, լսվում էր նույն երաժշտության ձայնը: Պողոսը նախ փոխեց հագուստը, ապա դուրս եկավ պատշգամբ:

Հյուսիսային պողոտայի նորակառույցներից մեկի տակ մեծ քանակությամբ մարդիկ էին հավաքված. նրանց մի մասը պարում էր, մի մասը ծափ տալիս, մի մասը՝ սուլում:

- Այս ինչ հաշիվ է,- հարցրեց Պողոսը կողքի պատշգամբում կանգնած հարևանին:

- Եկել են քավորին տանեն,- պատասխանեց հարևանը:

- Ո՞ւմ քավորին,- չհասկացավ Պողոսը,- ո՞ւր տանեն:

- Այսօր հարսանիք է, չգիտե՞ս,- ոգևորված բացատրեց հարևանը,- դարի հարսանիքը:

Փաստորեն դա նույն հարսանիքն էր, որին հանդիպել էր Պողոսը նույն օրը, Երևանի մեկ այլ հատվածում: Ահա, ներքևում հավաքված էին Վարազի մի քանի տասնյակ թանկարժեք մեքենաները և հենց դրանք էի պատճառը, որ մերձակայքում պարալիզացվել էր երթևեկը:

- Իսկ ինչո՞ւ է դարի հարսանիք,- հետաքրքրվեց Պողոսը:

Բայց չհասցրեց լսել հարևանի պատասխանը, որովհետև նկատեց թե ինչպես է թութակը փորձում խցկվել պատշգամբի դռան փոքր արանքից, որը թողել էր անզգուշորեն:

Մի կերպ ներս հրեց թութակին, փակեց դուռն ու դուրս եկավ տանից, այդպես էլ չիմանալով, թե ինչու է հարսանիքը դարինը:

Երբ հասավ մեքենայի մոտ, տեսավ, որ ոստիկանները փորձում են բացել դուռը: Նիվան փակել էր նրանց ճանապարհը: Ամենայն հավանականությամբ ոստիկանները կտուգանեին Պողոսին, եթե այդ պահին զուռնա-դհոլի ձայնը չդադարեր և հարսանքավորները չշարժվեին:

- Թող դրան,- ասաց ոստիկաններից մեկը,- գնացինք:

- Դրանը դու ես,- գոռաց Պողոսը ոստիկանների հետևից ու նստեց իր մեքենան:

Բայց այսքանով Պողոսի այդ օրվա անախորժությունները չավարտվեցին:

Երբ հասել էր Աճառյան փողոցի վերջին՝ այնտեղ, ուր ավարտվում է Երևանը, տեսավ, որ երթևեկությունը նորից կանգնած է: Վթար է, երևի՝ մտածեց: Բայց պատճառը վթարը չէր: Պատճառը դարձյալ հարսնաքավորների ավտոշարասյունն էր, որ զբաղեցրել էր փողոցը գրեթե ողջ լայնությամբ: Հարյուր, գուցե ավելի մեքենաներ պարզապես կանգնած էին ու չգիտես ինչի էին սպասում:

Իսկ թե ինչի էին սպասում՝ Պողոսը իմացավ քիչ հետո, երբ զայրացած բարձրացավ մայրուղին կիսող խոտածածկի վրա, որպեսզի շրջանցի կանգնած ավտոշարասյունը:

Սպասում էին մեկ այլ ավտոշարասյան, որը պիտի միանար աջից: Մեկ այլ ավտոշարասյան, որը պատկանում էր մեկ այլ օլիգարխի: Սա Պողոսը հասկացավ, երբ տեսավ երկրորդ շարասյան մեքենաների պետհամարանիշերը:

Եվ հանկարծ Պողոսը հիշեց հարևանի այն խոսքը, որ սա դարի հարսանիքն է: Հիշեց նաև, որ մի տեղ կարդացել է, որ այս երկու օլիգարխներից մեկի որդին ամուսնանում է մյուսի դստեր հետ կամ՝ հակառակը:

Երկու ավտոշարասյունները միացան իրար ինչպես իրար են միանում երկու խոշոր գետերը ծովը թափվելուց առաջ:

Պողոսը գազոնի վրայով արդեն շրջանցել էր նրանց և կարող էր հանգիստ շարունակել իր ճանապարհը, երբ նրա մտքով մի բան անցավ: Դանդաղեցրեց իր մեքենայի ընթացքը և սպասեց, մինչ երկու շարասյունները կհավասարվեն իրեն:

Նախ հասան մի քանի ոստիկանական մեքենաներ՝ լուսային ազդանշանները միացրած, որոնցից մեկը ամենայն հավանականությամբ նույն այն մեքենան էր, որը փակել էր Պուշկին փողոցը: Ոստիկաններին, սակայն, ոչ մի կերպ չհաջողվեց Պողոսին, ավելի ճիշտ նրա մեքենան դուրս հանել փողոցից: Պողոսը փակել էր պատուհանները և առանց կողքերը նայելու հանգիստ ընթացքով առաջ էր գնում: Այնուհետև նրան հասան երկու մեքենաներ, որոնց միջից նկարահանում էին հարսանիքը: Պողոսն էլ ավելի դանդաղեցրեց ընթացքը և այս մեքենաները ևս ստիպված էին անցնել նրան: Հերթն հասավ հարս ու փեսայի մեքենային, որին ևս Պողոսը քաղաքավարի առաջ թողեց: Բայց ահա մյուս մեքենաներին չզիջեց և շարունակեց իր ընթացքը նրանց առջևով:

Օրեր անց, երբ համացանցում հայտնվեցին կադրեր դարի այդ հարսանիքից, հնչեցին տարբեր վարկածներ, թե ինչ գործ ուներ հազար ինը հարյուր ութսունութ թվականի արտադրության խակի գույնի Նիվան բազմաթիվ նոր Ռոլս Ռոյսերի, Բենթլիների ու Մայբահների միջև:

Բայց Պողոսը գոհ էր իրենից: Գոհ էր, որ փչացրել էր դարի հարսանիքի դարի այդ կադրը, որովհետև մտածում էր, որ տարատեսակ վարազներն ու խոզերը չեն կարող փչացնել իր օրը: Եվ առհասարակ՝ հասարակ ժողովրդի կյանքը:

Իսկ ավելի ուշ իմացավ, որ դարի այդ հարսանիքին ներկա էր գտնվել նաև Ճիկոլը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ԱՌՆՉՎԵՑ «ՆԱԽԿԻՆՆԵՐԻՆ»

Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում այս պատմությունը, Հայաստանում ապրող մարդկանց մեջ կար մի ահռելի զանգված, որն ատելությամբ էր լցված նախկին իշխանությունների և նրանց հետ առնչվող ամեն ինչի հետ և կար մի փոքր զանգված, որն ատելությամբ էր լցված օրվա իշխանությունների և նրանց հետ առնչվող ամեն ինչի հետ: Եվ պետք է ասել, որ երկու զանգվածն էլ իրենց այդ ատելության համար բավարար հիմքեր ունեին: Հիմքերին գումարվում էին նաև որոշակի նպաստող հանգամանքներ: Գործող իշխանություններն իրենց համակարգված պրոպոգանդայով ավելի էին սրում մեծ զանգվածի մոտ առկա ատելությունն հանդեպ նախկինները և իրենց չհամակարգված գործունեությամբ՝ փոքր զանգվածի մոտ ավելի էին սրում ատելությունն հանդեպ իրենց: Բայց ամենասարսափելին այն էր, որ նախկինների ու ներկաների հանդեպ այս երկու զանգվածի ատելությունն աստիճանաբար վերածվում էր ատելության միմյանց հանդեպ:

Երբ հեղափոխությունից ոչ շատ ժամանակ անց մայրաքաղաքային ընտրությունների ժամանակ ոմն «Շեկ կապուցին» հասարակությանը բաժանեց սևերի և սպիտակների, իսկ նրա քաղաքական կնքահայրը քթի տակ քմծիծաղ տվեց՝ այդպիսով տալով իր համաձայնությունը, փոխադարձ ատելության դեմն առնել այլևս անհնար էր:

Ի դեպ վերոնշյալ քաղաքակն գործչին «Շեկ կապուցին» անունը տվել էր Պողոսը: Ավելի ուշ նա բացատրել էր Աչոնին,

որ շիկաճերմակ գլխով այս կապիկները, որ հիմնականում ապրում են Էկվադորի ջունգլիներում, առանձնահատուկ են նրանով, որ չափազանց ուշ են մեծանում, ոչ թե ֆիզիկապես, այլ մտավոր, բայց չնայած դրան՝ արու կապուցիները իրենց կապիկություններով կարողանում են գրավել բազմաթիվ էգերի:

Պողոսն առհասարակ սիրում էր մարդկանց, հատկապես՝ քաղաքական մարդկանց, ասոցացնել տարատեսակ կենդանիների հետ: Դրանում դեռ առիթ կլինի համոզվելու, իսկ հիմա ժամանակն է անդրադառնալ նրան, թե ինչպես մեր հերոսը առնչվեց «նախկինների» հետ:

Եվ այսպես, նույն երկու հազար թվականի նույն հուլիս ամսի մեկ այլ շոգ օր Պողոսը՝ գլխին՝ ճերմակ լայնեզր գլխարկ, աչքերին՝ սև ակնոցներ, քիթուբերանին՝ երկնագույն բժշկական դիմակ, մտավ Երևանի Ազնավուրի հրապարակում գտնվող սրճարաններից մեկը:

Այսպիսի կերպարանք ընդունել Պողոսին համոզել էր, ավելի ճիշտ, ստիպել էր Աչոնը: Լայնեզր գլխարկն ու ակնոցը, որ գնվել էին մի բրենդային խանութից, Պողոսը մի կերպ համաձայնել էր կրել, բայց ահա դիմակին, նա համառորեն ընդդիմանում էր:

- Այնտեղ ամենուրեք տեսախցիկներ են, հասկանո՞ւմ ես,- բացատրել էր Աչոնը,- իսկ դու պետք է բացարձակ անճանաչելի լինես:

- Գլխարկն ու ակնոցները մի՞թե բավական չեն,- հարցրել էր Պողոսը:

- Բոլորովին,- պատասխանել էր Աչոնը,- որովհետև քո այտի վրա կա մի սպի, որը կարող է քեզ մատնել. ի դեպ, որտեղի՞ց այդ սպին:

- Չեմ հիշում,- կարճ էր կապել Պողոսը, որովհետև բո-

լոր այն հարցերին, որոնք վերաբերում էին իր մարտական ուղուն նա պատասխանում էր, որ չի հիշում:

Ինչևէ, վերջիվերջո նա ստիպված էր եղել համաձայնել լայնեզր գլխարկի և ակնոցի հետ նաև դիմակ կրել ու հիմա լայնեզր գլխարկով, ակնոցով ու դիմակով մտավ Ազնավուրի հրապարակում գտնվող սրճարանը ու տեղ զբաղեցրեց հեռու անկյունում:

Բայց ընթերցողին հավանաբար նախ կհետաքրքրի, թե ինչո՞ւ էր Պողոսը եկել հենց այս սրճարան:

Բանն այն է, որ նախօրեին գործընկերները մի փոքր խմբագրել էին գործողությունների պլանը: Այդ պլանը կազմելուց, այսինքն՝ այն օրվանից, երբ Աչոնը նորաբաց ակումբում հանդիպել էր ուղտին, անցել էր չորս շաբաթ: Ավելի ճիշտ՝ չորս ուրբաթ: Աչոնը հավաստի աղբյուրներից տեղեկացել էր, որ հենց ուրբաթ օրերն է ուղտը գալիս այդ ակումբ՝ զվարճանալու: Բայց ստացվել էր այնպես, որ սապատավոր սույն կենդանին նախ երկու անգամ մեկնել էր հարկատուների հաշվին իրականացվող ու նույն հարկատուներին ոչինչ չտվող գործուղումների Արևմտյան Եվրոպայի երկրներ, ապա մեկնել էր հանգստի Հարավային Եվրոպայի մի երկիր՝ ըստ չար լեզուների՝ դարձյալ հարկատուների հաշվին: Հենց այստեղ էլ հավանաբար վարակվել էր Քովիդով և հիմա գտնվում էր մեկուսացման մեջ: Մի խոսքով ակուբում նա չէր հայտնվել և առաջիկա երկու ուրբաթը հազիվ թե հայտնվեր:

Փոխարենը Աչոնին հաջողվել էր պարզել մեկ այլ բան՝ կապված Ազգային ժողովի մեկ այլ պատգամավորի, իշխող թիմի մեկ այլ կարկառուն ներկայացուցչի վերաբերյալ:

- Ո՞ւմ մասին է խոսքը, հարցրել էր Պողոսը:

Երբ Աչոնը տվել էր պատգամավորի անունը, Պողոսն անմիջապես տեղն էր բերել նրան և ասել.

- Ա՛ա, այն Աֆֆենպինչերը:

- Ինչ է Աֆֆենպինչերը,- զարմացել էր Աչոնը:

- Գրպանի շուն,- բացատրել էր Պողոսը, ապա ավելի մանրամասնել,- այդ պատգամավորը նման է Աֆֆենպինչերի ոչ միայն տեսքով, այլև տեսակով: Այդ ցեղատեսակի շները հայտնի են նրանով, որ տիրոջն հաճոյանալու համար պատրաստ են ամեն ինչի:

Աչոնը մի լավ ծիծաղել էր, իսկ Պողոսը շարունակել էր.

- Քո ասած պատգամավորին ես մի քանի անգամ տեսել եմ ելույթ ունենալիս և այդ ելույթները ոչնչի մասին են՝ պարզ դեմագոգություն և դրանց միակ նպատակը տիրոջը հաճոյանալն է, իսկ հեղափոխության ժամանակ նա բռնում էր նույն այդ տիրոջ իրերը:

- Ուրեմն չարժե՞ նրան պատժել:

- Իհարկե արժե:

Եվ Աչոնը պատմել էր, թե ինչ է նա պարզել:

Աֆֆենպինչերը սովորություն ուներ իր լանչն ամեն օր



կամ գրեթե ամեն օր անցկացնել միևնույն վայրում՝ Ազնավուրի հրապարակում գտնվող սրճարաններից մեկում: Սրճարանն այդ էժաններից չէր: Այստեղ քիչ թե շատ նորմալ լանչի համար մեկ անձը կվճարեր տասից տասնհինգ հազար դրամ: Այսինքն՝ Հայաստանի նվազագույն աշխատավարձի մոտ քսան տոկոսը: Փաստորեն՝ ամեն օր կամ գրեթե ամեն օր այստեղ սնվելու համար անձը կծախսեր ամսեկան երեք հարյուրից երեք հարյուր հիսուն հազար դրամ: Այսինքն՝ Հայաստանի նվազագույն աշխատավարձի մոտ հինգ հարյուր տոկոսը: Իսկ, եթե նկատի առնենք, որ անձն այդ սովորություն ուներ ոչ միայն լանչը, այլ նաև ընթրիքը անցկացնել բարձրակարգ ռեստորանում, ապա նա ամսեկան կծախսեր նշված թվի կրկնակին կամ գուցե եռակին: Այսինքն՝ երկրում նվազագույն աշխատավարձի հազարից հազար հինգ հարյուր տոկոսը:

Անշուշտ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սնվել այնտեղ, որտեղ ուզում է, ծախսել այնքան, որքան ուզում է: Այլ հարց է, թե ինչպես է նա վաստակել այդ իրավունքը: Աֆֆենպինչերն, օրինակ, այդ իրավունքը վաստակել էր հեղափոխության օրերին, երթերի ու անհնազանդության տարբեր ակցիաների ընթացքում հեղափոխության առաջնորդի տարատեսակ իրերը բռնելով: Այն երթերի ու անհնազանդության ակցիաների, որոնց ժամանակ նույն այդ առաջնորդը գոռում էր, որ պետական պաշտոնյաները իրենց կենցաղով չպիտի տարբերվեն հասարակ ժողովրդից, այն հեղափոխության, որի նպատակն, իբր, երկրում արդարություն հաստատելն էր:

Ինչևէ, ինչպես արդեն նշվեց վերևում, Աֆֆենպինչերը ամեն օր կամ գրեթե ամեն օր, կեսօրից ուղիղ մեկ ժամ անց, մեկ կամ մի քանի մարդկանց ընկերակցությամբ գալիս էր Ազնավուրի հրապարակում գտնվող այս սրճարանը և այս-

տեղ անցկացնում առնվազն մեկ ժամ: Այդ մեկ ժամվա ընթացքում, ըստ Աչոնի, նա պետք է որ առնվազն մեկ անգամ գնար զուգարան: Այս մասին որևէ հստակ տեղեկություն չկար, բայց կարելի էր վստահ լինել, որ եթե անգամ գրպանի շունը ցանկություն չունենար զուգարան գնալ մեկ օր, երկու օր, հինգ օր, կլիներ անպայման մի օր, որ նա այդ ցանկությունը կունենար: Հետևաբար Պողոսը պետք է ամեն օր գնար սրճարան, նստեր մի անկյունում, ինչ-որ բան պատվիրեր, զինվեր համբերությամբ ու սպասեր:

Եվ ահա, Պողոսը նստած էր սրճարանի մի անկյունում, սուրճ էր պատվիրել, իրեն ստիպել էր զինվել համբերությամբ և սպասում էր Աֆֆենպինչերի հայտնվելուն:

Բայց փոխարենը հայտնվեց սև անգղը:

Սույն լեշակեր թռչունը իր անունը ստացել էր վաղուց այս պատմությունից դեռ տասնհինգ-քսան տարի առաջ, երբ քրեական աշխարհից տեղափոխվել էր քաղաքականություն, ապա պետական ապարատ, սկսել զբաղեցնել մեկը մյուսից բարձր պաշտոններ: Մի անգամ Պողոսը ականատես էր եղել, թե ինչպես է նա հրճվանքով նայում իր իսկ թիկնապահների կողմից իրականացվող մի ծեծի, իսկ երբ ծեծվողը գրեթե անկենդան ընկնում է գետնին, լեշակեր անգղի նման ինքն է հարձակվում վրան: Դեպքը տեղի էր ունեցել այն գործարանում, ուր այդ ժամանակ աշխատում էր Պողոսը: Ծեծը նա տեսել էր հինգերորդ հարկի իր աշխատասենյակի պատուհանից և մինչ կհասցներ ցած վազել ու միջամտել՝ սև անգղն յուր թիկնապահներով հեռացել էր: Պողոսը մի կերպ ուշքի էր բերել ծեծվածին, ապա մտել տնօրենի աշխատասենյակ և պարզաբանում պահանջել: Բայց քանի որ նրան պարզաբանում չէին տվել ու քանի որ նա հնարավորություն չէր ունեցել քաշել անգղի փետուրները, ստիպված քաշել էր

տնօրենի ականջը և հաջորդ իսկ օրը հեռացվել աշխատանքից: Դրանից հետո նա սև անգղին այլևս չէր տեսել:

Հիմա, երբ տեսավ նրան սրճարանում, մի պահ չհավատաց աչքերին: Բանն այն է, որ դրանից որոշ ժամանակ առաջ լրատվամիջոցներում հանդիպել էր մի լուրի, համաձայն որի սև անգղը գտնվում էր հետախուզման մեջ: Նրա հանդեպ հարուցված էր քրեական գործ և նա մեղադրվում էր բավականին ծանր հանցագործություն կատարելու մեջ:

Սև անգղը մենակ չէր: Նրա հետ էին ևս երեք հոգի, որոնցից երկուսը հավանաբար թիկնապահներն էին: Վերջինները տեղավորվեցին մուտքի մոտի մի սեղանի շուրջ, իսկ երրորդը ընկերակցեց անգղին: Պետք է ասել, որ նրանք բավականաչափ զվարթ տեսք ունեին: Հատկապես անգղը: Նա կատակներ էր անում, քրքջում իր իսկ կատակների վրա, հաճոյախոսում մատուցողուհուն, մի խոսքով՝ բոլորովին նման չէր մարդու, որի հանդեպ հետախուզում էր հայտարարված: Նրանք նախ ինչ-որ ուտեստներ պատվիրեցին, սկսեցին ախորժակով ուտել, ինչից հետո պատվիրեցին կոնյակ, և սև անգղը ձայնեց թիկնապահներից մեկին, որ մեքենայից սիգար բերի: Այս ամենը տևեց մոտավորապես կես ժամ, գուցե՝ ավելի:

Մինչդեռ գրպանի շունը՝ Աֆֆենպինչերը չկար ու չկար:

Ժամը երկուսին Պողոսն ուզեց հաշիվը, վճարեց և պատրաստվում էր դուրս գալ, բայց այդ պահին նկատեց, որ տեղից վեր կացավ նաև անգղը և քայլեց դեպի սրճարանի այն հատվածը, ուր զուգարաններն էին: Թիկնապահներից մեկը հետևեց նրան:

Պողոսը գնաց նրանց հետևից բացարձակապես բնազդաբար: Ողջ այդ ընթացքում նրա աչքի առջև տարիներ առաջվա այն տեսարանն էր, երբ սև անգղը հոշոտում էր գետնին ընկած մարդուն:

Թիկնապահը արագ քայլերով, գրեթե վազելով հասավ շեֆին, ուղեկցեց նրան մինչև զուգարանի դուռը, բացեց այն, ներս թողեց շեֆին ու ինքը կանգնեց մուտքի մոտ՝ ձեռքերը կրծքին խաչած: Նա բավականին պինդ տղամարդ էր և մեկ հարվածից գետնին չընկավ: Երբ Պողոսը գլխով հարվածեց նրա քթին, թիկնապահն ընդամենը կռացավ, և միայն երկրորդ՝ ծնկով հարվածը նրան գետնին տապալեց: Սև անգղը նույնքան պինդ չէր. Պողոսը նախ կոտրեց նրա քիթը, բայց չթողեց, որ ընկնի գետնին, բռնեց ականջից և գլուխը մտցրեց զուգարանակոնքը: Ապա առանց շտապելու լվացվեց, կարծես զուգարան էր մտել այն նպատակով, ինչ նպատակով սովորաբար մտնում են, դուրս եկավ, անցավ գետնին փռված թիկնապահի վրայով և հեռացավ:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ԱՌՆՉՎԵՑ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Բնապահպանական խնդիրներին Պողոսը երբեք էլ աչքի տակով չէր նայել: Քանի որ հաճախ էր առնչվում բնության հետ առնչվում էր նաև բնապահպանական խնդիրների հետ: Հասարակ բան է՝ մտածում էր միշտ, երբ ինչ-որ տեղ՝ անտառում կամ սարի լանջին մի աղբյուրի մոտ տեսնում էր, թե ինչպես են մարդիկ կերուխումից հետո թողել իրենց աղբն ու գնացել, հասարակ բան է, եթե մի մարդու թողած աղբն է ապականում սարը կամ անտառը, ապա ի՞նչ կլինի, եթե պետությունը աղտոտի բնությունը: Որովհետև, ի վերջո, նույն

բանն է՝ ինչ որ մեկը թքած ունի, թե ինչ կլինի իրենից հետո մի մարգագետնի հետ, թե կառավարությունը թքած ունի, թե ինչ կլինի իրենից հետո երկրի բոլոր մարգագետինների, անտառների, գետերի ու լճերի հետ:

Կառավարությունը պատրաստվում էր թույլտվություն տալ, որ Հայաստանի առողջարանային ու զբոսաշրջային կենտրոններից մեկում շահագործվեն հանքեր: Ընդ որում՝ այն կառավարությունը, որի անդամները և ղեկավարը ընդդիմություն եղած ժամանակ պայքարում էին նույն այդ հանքերի շահագործման դեմ:

Նրանց մի փաստարկն այն էր, որ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները խախտել չեն կարող, երկրորդ փաստարկն այն էր, որ հանքի շահագործումը տասնապատիկ ավել օգուտ կտա երկրի տնտեսությանը, քան՝ վնաս բնությանը:

Պողոսը վստահ էր, որ առաջին փաստարկը մեծամասամբ սուտ է, այսինքն՝ գուցե եղել է պայմանավորվածություն կամ անգամ պայմանագիր, բայց գրագետ մոտեցման դեպքում կարելի է դրանք շրջանցել նվազագույն վնասների գնով: Ինչ վերաբերում է երկրորդ փաստարկին, ապա, եթե նույնիսկ հանքի շահագործման արդյունքում երկրի տնտեսություն ներարկվեն տասնյակ, անգամ հարյուր միլիոնավոր դոլարներ, դա համատեղելի չէր կարող լինել այն վնասների հետ, որը կկրեր բնությունը, այսինքն՝ նաև այդ բնության մեջ ապրող մարդիկ և հատկապես՝ նրանց ապագա սերունդները: Բացի դրանից՝ տնտեսության մի ճյուղից սպասվող օգուտը պիտի լիներ մեկ այլ ճյուղի արդեն իսկ բերվող օգուտի հաշվին, որովհետև, ինչպես ասվեց, այն վայրը, ուր պիտի շահագործվեին հանքերը, գտնվում էր առողջարանային և զբոսաշրջային ակտիվ գոտում:

Հենց այդ վայր էր ուղևորվում Պողոսը օգոստոսյան մի շաբաթ օր և համարյա արդեն հասել էր, երբ տեսավ, որ ճանապարհը փակ է:



Մի խումբ ցուցարարներ, երևի մի քանի տասնյակ մարդ, գունավոր պաստառներով կանգնած էին ճանապարհի ողջ լայնքով: Ցուցարարներից քիչ այս կողմ հավաքված էին ոստիկանները, և այս երկու խմբերի միջև գոյացել էր մի դատարկ տարածություն՝ նման այն տարածությանը, որ լինում է թրերով ու նիզակներով ճակատամարտի սպասող միջնադարյան զորքերի միջև:

Հենց այդ տարածություն էլ թափանցեց Պողոսը, նախ կարդաց պաստառների բովանդակությունը, ուսումնասիրեց ցուցարարների դեմքերը, ապա շրջվեց դեպի ոստիկանները և ասաց.

- Ինչո՞ւ եք փակել ճանապարհը:

Ոստիկանները զարմացած իրար նայեցին և քանի որ

Պողոսին պատասխանի չարժանացրին՝ նա ստիպված էր կրկնել.

- Ես հարցնում եմ՝ ինչո՞ւ եք փակել ճանապարհը, ես ցանկանում եմ անցնել:

Առաջ եկավ կերած-խմած մի մայոր, արևից կարմրած ճաղատին դրեց ոստիկանական գլխարկը և դիմեց Պողոսին.

- Մե՞նք ենք փակել ճանապարհը:

- Իհարկե դուք,- հանգիստ պատասխանեց Պողոսը:

- Այդ ինչպե՞ս:

- Հենց այդպես: Անմիջապես բացե՛ք ճանապարհը, ես պետք է անցնեմ:

Մայորը ոտքից գլուխ չափեց Պողոսին, հավանաբար փորձելով հասկանալ, թե ում հետ գործ ունի, հավանաբար չհասկացավ ու կմկմալով ասաց.

- Չենք կարող. հրահանգ չունենք. հրահանգի ենք սպասում:

- Ո՞ւմ հրահանգին: Ես Ձեզ ասում եմ բացե՛ք ճանապարհը:

Այստեղ մայորը չդիմացավ և մի քիչ վախվորած հարցրեց.

- Ներողություն, Դուք ո՞վ եք:

- Պողոսը,- պատասխանեց Պողոսը:

- Դուք մարզպետարանի՞ց եք:

- Ո՛չ:

- Կառավարությունի՞ց:

- Ո՛չ:

- Ուրեմն որտեղի՞ց եք,- զայրացավ մայորը, հետո կարծես գլխի ընկավ և ինքն էլ պատասխանեց իր հարցին,- լավ հասկացա. Դուք հանքը շահագործող ընկերությունից եք:

Մենք Ձեր կողմից ենք, մի անհանգստացեք:

- Ո՞ւմ կողմից եք,- զարմացավ Պողոսը:

- Կառավարության,- ոգևորվեց ոստիկանը, ավելի ճիշտ մարզպետարանի, այսինքն՝ հանքը շահագործող ընկերության:

Պողոսն ինչ որ բան էր ուզում ասել, բայց այդ պահին նրա փոշտալը եկավ, ու նա սկսեց փոշտալ:

- Վայ,- անակնկալի եկավ մայորը:

- Ի՞նչ վայ:

- Ես ուզում էի ասել՝ առողջություն:

- Շնորհակալություն,- Պողոսը գրպանից հանեց թաշկինակը և աղմուկով մաքրեց քիթը,- բայց միևնույն է՝ այդպես չի լինի: Կողմնորոշվեք, թե ում կողմից եք:

Մինչ մայորը կկողմնորոշվեր, նրան մոտեցավ մեկ այլ ոստիկան և ինչ-որ բան շշնջաց ականջին:

- Այն Նիվան ձե՞ն է,- Պողոսին դիմեց ոստիկանը:

- Իմն է,- հաստատեց Պողոսը:

- Դուք հանքը շահագործող ընկերությունից եք ու այս հին Նիվայո՞վ եք ման գալիս,- չգիտես ինչու ուրախացավ ոստիկանը,- հենց հիմա գնացեք, թե չէ…

Բայց նա չհասցրեց ասել, թե ինչ կլինի, եթե Պողոսը չհեռանա, որովհետև այստեղ միջամտեց նեյտրալ տարածության հակառակ կողմում հավաքված ցուցարարներից մեկը՝ մանկական արտաքինով փոքր-մոքր մի աղջիկ, վարդագույն կեդերով և վարդագույն կեպիով, որի տակից թափվում էին սև խոպոպները.

- Եթե մարդը հին Նիվա է վարում, ուրեմն պետք է կոպտե՞ք նրան:

- Ես Ձեզ հե՞տ եմ խոսում,- գոռաց ոստիկանը,- լռեք, թե չէ…

- Թե չէ՝ ինչ:

- Ափսոս հրահանգ չունեմ:

- Ունենաք թե չունենաք,- ավելի ըմբոստացավ աղջիկը,- մենք ճանապարհը չենք բացելու:

- Մի րոպե,- Պողոսն արդեն դիմեց աղջկան,- ինչպե՞ս թե չեք բացելու:

- Իսկ ինչո՞ւ պիտի բացենք, նրանք ուզում են... Սպասեք, իսկ դուք ո՞ւմ կողմից եք:

Այստեղ Պողոսն ուզում էր ասել, որ ինքը ոչ մեկի կողմից էլ չէ, պարզապես ուզում է անցնել, բայց այդ պահին նորից սկսեց անսպասելի փոշտալ:

Համեմատության մեջ՝ նա իհարկե ցուցարարների կողմից էր: Ինչպե՞ս կարող էր ոստիկանների կողմից լինել: Պարզապես չէր սիրում, երբ իր ճանապարհը փակում են: Ու քանի որ հիմա նրա ճանապարհը փակել էին թե՛ ոստիկանները, թե՛ ցուցարարները՝ նրա համար կարևոր չէր, թե ում նպատակն էր ավելի արդար:

Մեծ հաշվով նա ոչ մեկին էլ չէր հավատում: Հեղափոխության ժամանակ, օրինակ, ցուցարարները փողոցներ փակեցին, հասան իրենց նպատակին ու ինչ եղավ: Այն ժամանակ նախորդ իշխանությունների ոստիկանները նրանց չէին խանգարում: Ցուցարարները փողոցներ փակեցին, եկան իշխանության ու հիմա իրենց ոստիկանները խանգարում են ցուցարարներին: Մի՞թե այդպիսի հեղափոխություն է լինում: Չէ՞ որ հեղափոխությունը նաև նրա համար էր, որ ոստիկանությունը ծառայի ոչ թե օրվա իշխանություններին, այլ ժողովրդին: Իսկ հիմա այս ոստիկանները հրահանգի են սպասում. ումի՞ց են սպասում. իրենց անմիջական ղեկավարներից: Իսկ ումի՞ց են հրահանգ սպասում այդ անմիջական ղեկավարները. մարզպետարանի՞ց, կառավարութ-

յունից, գուցե անձամբ կառավարության ղեկավարից: Մի մարդուց, որը ժամանակին ինքն էր փողոցներ փակում ու այդպես եկավ իշխանության:

- Ճանապարհ փակելով դուք ոչնչի չեք հասնի,- հայտարարեց Պողոսը, երբ դադարեց փռշտալ և մաքրեց քիթը,- ես ձեզ դեռ այն ժամանակ էի ասում, իսկ դուք չէիք լսում:

- Ո՞ւմ էիք ասում,- զարմացավ աղջիկը:

- Ձեզ, մյուսներին... Կարևոր չէ:

- Ի՞նչ էիք ասում:

- Ասում էի, որ ճանապարհ կարելի է փակել մեկ այլ, շատ ավելի մեծ ճանապարհ բացելու համար: Փոփոխությունների ճանապարհը: Իրական փոփոխությունների: Բայց դուք այդ փոփոխություններին պատրաստ չէիք: Ու քանի որ պատրաստ չէիք՝ ճանապարհ փակելով բացեցիք մեկ այլ ճանապարհ՝ ստի ու կեղծիքի ճանապարհը:

- Ոչինչ չեմ հասկանում,- աղջիկը շրջվեց դեպի մյուս ցուցարարները,- դուք որևէ բան հասկանո՞ւմ եք:

Բայց նրան չպատասխանեցին: Բոլորը ապշած նայում էին Պողոսին, որը նորից սկսել էր փռշտալ: Ու հանկարծ առաջ եկավ մի երիտասարդ ու բացականչեց:

- Ժողովուրդ, այս մարդը հիվանդ է Քովիդով: Նրան ուղարկել են, որ մեզ վարակի:

Երիտասարդը երկար, լավ խնամված մորուք ուներ ու չափազանց ինքնավստահ տեսք: Իր հայտարարությունն էլ ավելի արժանահավատ դարձնելու համար նա գրպանից հանեց բժշկական դիմակը և քաշեց դեմքին: Պետք է ասել, որ դա աշխատեց: Միաժամանակ դիմակներ սկսեցին հագնել ոչ միայն ցուցարարները, այլև ոստիկանները:

Իսկ Պողոսի գլխում հընթացս մի միտք ծագեց: Երբ նա ավարտեց փռշտալը և մաքրեց քիթը, ընդհուպ մոտեցավ

ցուցարարներին և հայտարարեց:

- Լավ, համոզեցիք, ես միանում եմ ձեզ:

Բայց ցուցարարներին կարծես թե դուր չեկավ Պողոսի այս նախաձեռնությունը: Նրանք սկսեցին նախ անվստահ մի կողմ քաշվել, ապա, երբ Պողոսը խցկվեց խմբի մեջ, իրար հրելով քաշվեցին ճամփեզր, ոմանք անգամ ցատկեցին փոքրիկ ձորակը:

Այստեղ մեր հերոսն արեց երկրորդ անսպասելի քայլը. նա կտրուկ շրջվեց և քայլեց դեպի ոստիկանները: Սրանք նույնպես գլխապատառ այս ու այն կողմ ցրվեցին, ինչպես ոչխարները, որոնց հոտի մեջ գայլ է հայտնվել: Այդպիսով ճանապարհին մի պատկառելի միջանցք բացվեց, և Պողոսն իր մեքենայով հանգիստ անցավ այդ միջանցքով՝ վերջում հրաժեշտի մի ազդանշան տալով:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ԱՌՆՉՎԵՑ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի վերջին Աչոնը հավաստի աղբյուրներից տեղեկություն ստացավ, որ ուղտը վերադարձել է արձակուրդից և արդեն մի քանի օր Հայաստանում է: Նա այդ մասին անմիջապես տեղեկացրեց Պողոսին և հավելեց.

- Այսօր նա անպայման կգնա ակումբ:

- Ինչո՞ւ անպայման,- հետաքրքրվեց Պողոսը:

- Որովհետև այսօր ուրբաթ է,- բացատրեց Աչոնը:

Վերջին մեկ ամսվա ընթացքում Պողոսը երկու անգամ

եղել էր ակումբում՝ հետախուզական նպատակներով: Քանի որ միայնակ և հատկապես անծանոթ տղամարդկանց ներս չէին թողնում, առաջին անգամը մեր հերոսը գնացել էր իրենց բակի խանութի տիրոջ, ավելի ճիշտ՝ տիրուհու և միաժամանակ վաճառողուհու՝ տիկին Հայկանուշի հետ:

Հայկանուշի համար երեկոյան միասին ընթրելու Պողոսի առաջարկը անշուշտ մեծ անակնկալ էր եղել: Բայց և այնպես նա առանց մտածելու համաձայնել էր, սովորականից, այսինքն՝ կեսգիշերից վեց ժամ շուտ փակել էր խանութը, մտել կողքի վարսավիրանոց, ներկել մազերը, մոդայիկ սանրվածք արել, ապա այցելել մատնահարդարի ու ոտնահարդարի, որից հետո նոր բարձրացել էր տուն և զգեստապահարանի հայելու առջև կանգնած՝ հիասթափությամբ բացահայտել, որ թանկարժեք ներքնազգեստները, որոնք վերջին հինգ տարիներին, ինչ Սիրիայից տեղափոխվել էր Հայաստան և ոչ մի անգամ չէր հագել, հագով չեն լինում: Այո, տիկին Հայկանուշը որոշակիորեն գիրացել էր: Հագով չէին եղել նաև մի քանի երեկոյան զգեստները, որոնք նույնպես վաղուց չէր հագել: Ինչ արած՝ խանութն անձնական կյանքի համար ժամանակ չէր թողնում: Այնուամենայնիվ տեղը տեղին պճնվել էր, մի կերպ մտել էր երեկոյան վարդագույն զգեստի մեջ, գլխին դրել վարդագույն փետրավոր, լայնեզր գլխարկ ու շտապել ակումբի մոտ, ուր նրան էր սպասում Պողոսը: Վերջինը, չգիտես ինչու, նույնպես լայնեզր գլխարկով էր և մուգ արևային ակնոցներով: Ինչպիսի ռոմանտիկա՝ մտածել էր Հայկանուշը: Սակայն ժամանակը, որ անցկացրել էին ակումբում ոչ մի կերպ չէր կարելի ռոմանտիկ համարել:

Նստել էին մութ մի անկյունում, գարեջուր խմել, ու Պողոսն ամեն տասը րոպեն մեկ գնացել էր զուգարան: Ակումբում անցկացրել էին մեկ ժամից էլ պակաս, իսկ հետո Պո-

ղոսը տուն էր ճանապարհել Հայկանուշին, և երբ վերջինս հրավիրել էր նրան սուրճ խմելու, ասել էր, որ կարևոր գործ ունի ու պիտի գնա: Եվ Հայկանուշը որոշել էր այսուհետ շուտ փակել խանութը և ամեն օր գնալ ֆիթնեսի:

Երկրորդ անգամ Պողոսն ակումբ էր գնացել մենակ: Նրան ճանաչել էին և ներս թողել: Քանի որ այս այցը ևս հետախուզական էր, մեր հերոսը դարձյալ տեղավորվել էր հեռու անկյունում, գարեջուր խմել և հետևել անցուդարձին: Այս անգամ ևս նա մի քանի անգամ կրկնել էր սրահ-արտաքնոց և հակառակ երթուղին:

Եվ ահա եկել էր հիմնական այցի, այսինքն՝ գործողության օրը: Ինչպես արդեն ասվեց, Աչոնը հավաստի աղբյուրներից տեղեկություն ուներ, որ Ուղտը Երևանում է, և քանի որ օրն ուրբաթ էր, պիտի որ գար ակումբ՝ զվարճանալու:

Պողոսը կանգնեցրեց իր Նիվան ակումբից ոչ շատ հեռու, շենքերի բակում՝ նախապես ճշտելով, որ տարածքում տեսախցիկներ չկան, հագավ լայնեզր գլխարկը և բեռնախցիկից հանեց մեծ սև անձրևանոցը: Բանն այն է, որ օգոս-

տոսի այդ վերջին ուրբաթ օրն անսպասելի սկսել էր անձրև տեղալ:

Մինչև ակումբ մոտ երկու հարյուր մետր քայլելու ճանապարհ էր՝ կեսը բակերով, կեսը՝ փողոցով: Պողոսը քայլում էր դանդաղ, առանց շտապելու՝ մտքում ծանրութեթև անելով Աչոնի հետ նախապես մշակած գործողությունների պլանը: Պլանն այդ ոչ շատ բարդ էր, ոչ էլ շատ հեշտ: Նախ պետք է գար ուղտը. սա, իհարկե, ամենակարևորն էր: Եթե չգար, ստիպված պիտի լինեին սպասել մինչև հաջորդ ուրբաթ, գուցե ավելի երկար: Իսկ եթե գար, այդքան երկար սպասելու կարիք չէր լինի: Առավելագույնը երկու-երեք ժամ, մինչև պարոն պատգամավորը կօգտագործեր որոշակի քանակությամբ ալկոհոլ և սրտի ուզածի չափ կպարեր ու կզվարճանար: Եվ այս ամենից հետո, երբ նա գնար զուգարան, Պողոսը պետք է գնար նրա հետևից, նախ կոտրեր քիթը, ապա քաշեր ականջներն այնքան, մինչև Ուղտը պաշտոնապես կհայտարարեր, որ ինքը սրիկա է, իսկ իր առաջնորդը՝ հոգեկան հիվանդ: Այս ամենը պիտի տեսագրեր Աչոնը, որն ակումբ պիտի գար Պողոսից առանձին, ընկերուհիների հետ և համբերատար սպասեր, մինչ Ուղտը, այնուհետև՝ Պողոսը կգնան սանհանգույց:

Եվ ահա, երբ Պողոսն անձրևի տակ, առանց շտապելու քայլում էր դեպի ակումբ, Աչոնն արդեն այնտեղ էր և Մարգարիտա էր խմում ընկերուհիների հետ: Երեկոյան ժամը տասն էր: Ակումբում աստիճանաբար թեժանում էր մթնոլորտը և գինովցած հյուրերը տեղափոխվում էին պարահարթակ: Աչոնն՝ ինքն էլ պարեց մի քանի անգամ, բայց ավելի շատ նրա համար, որ տեսնի սրահի այն հատվածները, որոնք չէին երևում իր նստած տեղից: Բանն այն է, որ այդ օրը սովորականից շատ մարդ կար ակումբում: Դա մի քիչ

անհանգստացրեց Աչոնին, որովհետև շատ մարդ ակումբում նշանակում էր շատ մարդ սանհանգույցում: Բայց դրանից շատ Աչոնին անհանգստացոնում էր այն, որ չկար Պողոսը: Ավելին՝ նրա հեռախոսն անջատված էր:

Երբ հերթկան անգամ Աչոնը վեր կացավ պարելու և մուտքի դռների մեջ տեսավ Ուղտին, ժամը տասն անց կես էր: Ուղտի հետ կային ևս երկու հոգի: Մատուցողուհին նրանց ուղեկցեց հատուկ իրենց համար պահված սեղանի մոտ և հարկ է նշել, որ այդ ճանապարհը պատգամավորն անցավ պարելով՝ հընթացս արձակելով փողկապը: Ակնհայտ էր, որ նա ակումբ է եկել արդեն խմած:

Որտեղ է Պողոսը՝ Աչոնն արդեն զայրանում էր: Ինչո՞ւ է նա անջատել հեռախոսը, ինչո՞ւ չի գալիս:

Իսկ Պողոսը չէր էլ կարող գալ, որովհետև այդ պահին նա ոստիկանության բաժանմունքում էր:

Երբ նա բակերից դուրս եկավ փողոցի մայթ, որտեղ ակումբն էր, առջևում տեսավ երկու աղջիկների, որոնք քայլում էին անձրևի տակ առանց անձրևանոցի: Ակնհայտ էր, որ նրանք փորձում էին արագ քայլել, որպեսզի չթջվեն, սակայն ակնհայտ էր նաև, որ արագ քայլել նրանց մոտ չէր ստացվում, որովհետև բարձրակրունկ կոշիկներով էին: Պողոսը քաղաքավարի մարդ էր և որոշեց, որ պետք է նրանց օգնել: Արագացրեց քայլերը հասավ աղջիկներին, առանց որևէ բան ասելու խցկվեց նրանց արանքը և վեր պարզեց անձրևանոցը:

- Դո՞ւ ով ես,- ասաց աղջիկներից մեկը:

Նրա ձայնը Պողոսին մի քիչ տարօրինակ թվաց՝ անհասկանալիորեն արական: Տարօրինակ թվաց նաև արտաքինը, չափից ավելի շպարված՝ որքան որ հնարավոր էր տեսնել փողոցային լապտերի լույսի տակ: Բայց Պողոսը

չհասցրեց ոչ մտածել այդ մասին, ոչ էլ պատասխանել իրեն տրված հարցին, որովհետև այդ պահին մի մեքենա մոտեցավ մայթին, դանդաղեցրեց ընթացքը, և մի տղա գլուխը հանեց պատուհանից:

- Կանգնի՛, արա,- գոռաց նա:

Քանի որ լեզվի և տրամաբանության բոլոր կանոններով սույն կոչը պիտի ուղղված լիներ իրեն, Պողոսը կանգ առավ և պատասխանեց.

- Դուք ամենայն հավանականությամբ սխալվել եք, բայց բոլոր դեպքերում՝ խորհուրդ չէի տա ինձ նման կերպ դիմել:

Մեքենան՝ չափազանց կեղտոտ հին մի Օփել, կանգ առավ: Պողոսը նույնպես կանգնեց, մինչդեռ աղջիկները էլ ավելի արագացրին քայլերը: Օփելից իջան երկու լղար ու փրչոտ երիտասարդ, բայց ոչ թե մոտեցան Պողոսին, այլ վազեցին աղջիկների հետևից:

Պողոսը մտածեց, որ տղաները հավանաբար աղջիկների ընկերներն են և պատրաստվում էր մի կողմ քաշվել, բայց այդ պահին տեսավ, թե ինչպես տղաները սկսեցին քաշել աղջիկներին դեպի մեքենան: Միայն թե պարզվեց՝ դա այդքան էլ հեշտ չէր: Աղջիկները դիմադրում էին, և մի ակնթարթում սկսվեց իսկական ծեծկռտուք՝ համեմված ամենավերջին հայհոյանքներով: Ընդ որում հայհոյանքները, որ հնչում էին աղջիկների կողմից, շատ ավելի ճոխ էին: Կար մեկ այլ հանգամանք ևս. աղջիկների ձայնը այնքան էլ աղջիկների ձայն չէր՝ մի տեսակ խռպոտ ու կոշտ:

Պողոսը վերջնականապես շփոթվեց: Նա ոչ մի կերպ չէր հասկանում, թե ինչ է կատարվում: Այնուամենայնիվ, պետք էր միջամտել: Մոտեցավ կռվողներին, գետնին դրեց անձրևանոցը, մի ձեռքով բռնեց լղար ու փռչոտ երիտասարդներից մեկի օձիքը, մյուսով՝ մյուսի և քարշ տվեց դե-

պի իրենց մեքենան: Բայց չկարողացավ տեղ հասցնել, որովհետև աղջիկները վրա հասան և սկսեցին հարվածներ հասցնել տղաներին: Նրանցից մեկը վերցրել էր Պողոսի անձրևանոցը, փակել և խփում էր դրանով: Մյուսը հանել էր կոշիկը և երկար ու սուր կրունկով տուր թե կտաս տղաների գլխին: Ավելորդ է ասել, որ այս ամենը ուղեկցվում էր փառահեղ հայհոյանքներով:

Մայթին խմբվել էին անցորդներ, իսկ փողոցում՝ կանգնել էին մի քանի մեքենաներ: Ոչ ոք, սակայն, չէր միջամտում: Տեսարանն իսկապես տարօրինակ էր, և հայտնի չէ, թե ինչ շարունակություն կլիներ, եթե չհայտնվեին ոստիկանները:

Հետո արդեն, կենտրոնի ոստիկանական բաժանմունքում, Պողոսը պիտի հասկանար, որ աղջիկները, որոնց նա փորձում էր պաշտպանել, իրականում ամենևին էլ աղջիկներ չէին:

- Դուք հասկանու՞մ եք, որ Ձեր դեմ ցուցմունքներ կան,- հարցրեց նրան մայորը՝ ինչ-որ թղթեր նայելով:

- Տարօրինակ է,- անկեղծորեն զարմացավ Պողոսը,- այս անգամ ես կարծես թե ոչ մեկի քիթը չեմ ջարդել:

- Ի՞նչ է նշանակում՝ այս անգամ,- ոստիկանը հայացքը կտրեց թղթերից, որոնց վրա, ըստ ամենայնի, Պողոսի դեմ ցուցմունքներն էին:

- Եթե Դուք Ձեզ մի քիչ նեղություն տաք ու ծանոթանաք իմ կենսագրությանը, ապա ձեզ համար կբացահայտեք շատ հետաքրքիր բաներ,- հանգիստ բացատրեց Պողոսը,- ինչպես նաև կհասկանաք, որ իզուր եք ինձ այստեղ պահում:

- Իզո՞ւր՝ ասում եք,- ոստիկանը քթի տակ ծիծաղեց և թղթերը մեկնեց Պողոսին,- ահա նայեք:

Պողոսը կարդաց նախ մի թուղթը, ապա մյուսը, սակայն այն, ինչ գրված էր այդ թղթերի վրա՝ միանգամից չհասկացավ: Ստիպված էր կարդալ երկրորդ անգամ: Հատկապես

անհասկանալի էր հետևյալ նախադասությունը, որը կրկնվում էր երկու ցուցմունքներում էլ՝ «նա մոտեցավ հետևից, բռնեց մեզ և սկսեց ծեծել՝ այդ ընթացքում տալով սեռական բնույթի հայհոյանքներ»: Ցուցմունքների տակ ստորագրել էին երկու տղամարդիկ, որոնցից մեկի անունը Վախթանգ էր, մյուսինը՝ Գերասիմ:

- Այն, ինչ այստեղ գրված է, չի համապատասխանում իրականությանը,- հայտարարեց Պողոսը՝ թուղթը վերադարձնելով քննիչին,- ես այդ տղաներին չեմ ծեծել, գուցե քաշելով տարել եմ դեպի իրենց մեքենան, բայց չեմ ծեծել:

- Ո՞ր տղաներին,- հարցրեց քննիչը:

- Այնտեղ կային երկու տղա և երկու աղջիկ:

- Երկու աղջիկ՝ ասում եք,- նորից քմծիծաղ տվեց քննիչը՝ նոր թղթեր մեկնելով Պողոսին,- Այդ դեպքում ծանոթացեք այս ցուցմունքներին:

«Նա մոտեցավ հետևից, բռնեց մեզ և սկսեց քարշ տալ դեպի մեքենան՝ այդ ընթացքում տալով սեռական բնույթի հայհոյանքներ»՝ կարդաց Պողոսը:

Ցուցմունքների տակ ստորագրել էին ոմն Սամվել և Մանվել:

Պողոսին այդ երեկո, ավելի ճիշտ՝ գիշեր, իհարկե բաց թողեցին ոստիկանական բաժանմունքից: Բաց թողեցին նաև Վախթանգին ու Գերասիմին՝ տրանսգենդերներին, որոնք, փաստորեն, ոչ առանց Պողոսի օգնության, ծեծել էին Սամվելին ու Մամվելին: Վերջիններս մնացին ոստիկանությունում, քանի որ՝ «նրանց դեմ ցուցմունք կար տրված»:

Շենքից դուրս գալիս Պողոսն ականատես եղավ մի տեսարանի. առաջին հարկում՝ հենց մուտքի, մոտ հավաքվել էին հինգ կամ վեց արարածներ (Պողոսն այդպես էլ չհասկացավ՝ նրանց ինչպես է պետք կոչել, որովհետև տրանս-

գենդեր բառի բացատրությունը չգիտեր), որոնք պարզվեց՝ եկել էին Վախթանգին ու Գերասիմին աջակցելու: Վերջին երկուսը ևս այդտեղ էին: Ու, չնայած նրանց վաղուց բաց էին թողել, չէին պատրաստվում հեռանալ:

Նրանք պահանջում էին ներողություն խնդրել, որ իրենց բերել են այստեղ: Պահանջում էին նաև իրենց թողնել այն տղաների մոտ, որոնք իրենց նեղացրել էին:

- Գլուխները պետք է ջարդենք,- գոռում էին տրանսգենդերները:

Հերթապահ ոստիկանները, ճիշտ է նրանց ներս չէին թողնում, բայց ընդամենը այդքանը:

Եվ հանկարծ նրանք նկատեցին Պողոսին:

- Սա էր,- բացականչեց Գերասիմը կամ Վախթանգը՝ Պողոսը չգիտեր նրանցից որը որն է:

- Բռնե՛ք դրան,- ձայնեց երկրորդը:

- Ջարդեք գլուխը,- գոռաց մեկ ուրիշը:

Պողոսի գլուխը ջարդել, հասկանալիորեն, ոչ մեկին չհաջողվեց: Երբ տրանսգենդերները հարձակվեցին մեր հերոսի վրա, նա աղոտ հույսեր ուներ, որ ոստիկանները կմիջամտեն: Բայց չմիջամտեցին: Միջամտեցին միայն այն ժամանակ, երբ Պողոսը սկսեց հերթով ջարդել իր առջև հայտնված քթերը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ԿԱՆԽԱՏԵՍԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

- Դուք չեք հասկանում, թե որքան խրոխտ է մեր վարչապետը. նա կարող է արհամարհել անգամ Ռուսաստանի նախագահին և չդիմավորել նրան օդանավակայանում:

Այս մտքի հեղինակը երիտասարդ մի երաժիշտ էր, որի երգերը Պողոսը չափազանց հավանում էր: Եվ, քանի որ հավանում էր, դուրս չշպրտեց նրան իր մեքենայից, այլ փորձեց բացատրել, որ նա չարաչար սխալվում է: Բայց, մինչ ներկայացնենք, թե ինչ բացատրեց Պողոսը երիտասարդ երաժշտին, տեսնենք, թե ինչպես էր վերջինս հայտնվել Պողոսի մեքենայում:

Երկու հազար քսան թվականի սեպտեմբերի քսանհինգն էր, օրն՝ ուրբաթ: Պողոսն ամբողջ օրն անցկացրել էր Դիլիջանում, ուր եկել էր սակայն ոչ թե հանգստանալու, այլ՝ աշխատելու: Առավոտյան զանգահարել էր մի ծանոթ սրճարանատեր, որի հաստատությունում Պողոսը մի քանի անգամ գործ էր արել և ողբաձայն խնդրել, որ Պողոսն իրեն փրկի:

- Ինչ է պատահել,- հետաքրքրվել էր Պողոսը:

- Երեկոյան նոր սրճարանիս բացումն է, իսկ օդափոխության համակարգը չեն կարողանում գործարկել:

- Ո՞վ չի կարողանում:

- Վարպետները:

- Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ ես կարող եմ:

- Որովհետև դու ամեն ինչ կարող ես:

- Իսկ առանց օդափոխության համակարգի չի՞ լինի:

- Ոչ, բացմանը ներկա է լինելու ԱՄՆ-ի դեսպանը:

- Լավ,- համաձայնել էր Պողոսը,- հանուն ԱՄՆ-ի դեսպանի կզոհաբերեմ ուրբաթ օրս: Որտեղ է նոր սրճարանդ:

- Դիլիջանում:

Եվ ահա Պողոսը եկել էր Դիլիջան, ամբողջ օրն աշխատել ու ծայրը ծայրին հասցրել էր ավարտել գործը: Սրճարանատերը շնորհակալություն էր հայտնել ու առաջարկել մնալ բացման արարողությանը:

- Սիրով,- համաձայնել էր Պողոսը,- երբեք կենդանի դեսպան չեմ տեսել: Այն էլ՝ Ամերիկայի:

Միայն թե Պողոսին, առավել ևս՝ սրճարանատիրոջը հիասթափություն էր սպասում: Դեսպանը այդպես էլ չէր եկել: Ճիշտ է, նա այնքան քաղաքավարի էր գտնվել, որ զգուշացրել էր այդ մասին և ներողություն էր խնդրել, սակայն դա արել էր բավականաչափ ուշ:

Այնուամենայնիվ Պողոսը մնացել էր մինչև ուշ երեկո, լսել էր ռոք խմբի համերգը և ահա այդ խմբի երաժիշտներից մեկի հետ վերադառնում էր Երևան, երբ վերջինս սկսեց արտահայտել իր հիացմունքը երկրի ղեկավարի խրոխտության հանդեպ և, ինչպես ասվեց վերևում, Պողոսը որոշեց դուրս չշպրտել նրան մեքենայից, այլ բացատրել որոշ բաներ:

- Ես իսկապես ցավում եմ, որ քո նման լուսավոր երիտասարդներն այդպես են մտածում: Նախ ուզում եմ քեզ հետ անկեղծ լինել և ասել, որ ես ինքս էլ չեմ երկրպագում ռուսաց ցարին:

- Ո՞ւմ,- չհասկացավ երաժիշտը:

- Ռուսաց ցարին,- կրկնեց Պողոսը,- նրան, որին չի դիմավորել օդանավակայանում Ճիկոլը:

- Ո՞վ,- դարձյալ չհասկացավ երաժիշտը:

- Ճիկոլը,- կրկնեց Պողոսը,- նա, ով այդչափ ոգևորել է քեզ:

- Իսկ ինչո՞ւ Ճիկոլ, ինչո՞ւ՝ ռուսաց ցար,- երաժիշտը զար-

մացած նայում էր Պողոսին:

- Որովհետև իրենց անուններով է պետք կոչել ոչ միայն իրերը, այլև մարդկանց:

Երաժիշտն արդեն ոչ թե զարմանքով, այլ տարակուսանքով էր նայում Պողոսին և աստիճանաբար սկսում էր զղջալ, որ խնդրել էր նրան իրեն Երևան տանել:

- Այո, ես չեմ երկրպագում ռուսաց ցարին,- անվրդով շարունակեց Պողոսը,- ավելին՝ չեմ ուզում, որ նրան երկրպագեն իմ հայրենակիցները: Իհարկե, առավել ևս չեմ ուզում, որ վախենան: Բայց ես հաճախ եմ լինում բնության մեջ, երբեմն հանդիպում եմ օձերի և շատ լավ գիտեմ մի բան. օձից պետք չէ վախենալ, բայց պետք է զգույշ լինել:

Այդ պահին զանգեց Պողոսի հեռախոսը: Աչոնն էր: Պողոսը դանդաղեցրեց մեքենայի առանց այդ էլ դանդաղ ընթացքը և առանց ընդհատելու զրուցակցին սկսեց լսել նրան: Դա բավականաչափ երկար տևեց, հետո Պողոսն ասաց.

- Տարօրինակ է, ես հենց նոր ասում էի մի երիտասարդ երաժշտի, որ ռուսաց ցարից պետք է զգուշանալ: Եվ՝ որ «խրոխտ» Ճիկոլը օձի հետ է խաղում:

- Ինչ է պատահել,- անհանգստացած հարցրեց երաժիշտը, երբ Պողոսն անջատեց հեռախոսը:

- Ուղիղ հաշվով պատահել է այն, որ պատերազմ է լինելու:

- Պատերազմ,- երաժիշտը կարծես վախեցավ,- դա քեզ ասացի՞ն, թե՝ դու ենթադրում ես:

- Ենթադրում եմ:

- Իսկ ինչո՞ւ ես ենթադրում,- մի քիչ հանգստացավ երաժիշտը:

- Դրա համար կա երեք պատճառ: Ես մի անգամ ասացի Աչոնին, որ երբ չեն լինում բանակցություններ՝ լինում է

պատերազմ, իսկ բանակցություններ վաղուց չկան:

- Ո՞վ է Աչոնը,- չհասկացավ երաժիշտը:

Բայց Պողոսը նրան չեր լսում:

- Հետո ես իմացա, որ Սիրիայից Ադրբեջան են եկել մի քանի հազար վարձկաններ և այդ մասին էլ ասացի Աչոնին:

- Չգիտեմ, թե ինչ մտացածին պատճառների մասին ես դու խոսում, չգիտեմ, թե ով է Աչոնը,- երաժիշտը չգիտես ինչու սկսեց ծիծաղել,- բայց ես մի բան կասեմ. ինչպե՞ս կարող է պատերազմ լինել: Ամերիկան երբեք չի թողնի, որ պատերազմ լինի:

- Կարծո՞ւմ ես. ուզո՞ւմ ես իմանալ, թե ինչու ԱՄՆ-ի դեսպանը չեկավ ձեր համերգին:

- Դա ինչ կապ ունի,- շարունակեց ծիծաղել երաժիշտը:

- Որովհետև հենց դա էլ երրորդ պատճառն է: Ես համացանցից գլուխ չեմ հանում, բայց եթե դու հանում ես, կարող ես մտնել ԱՄՆ-ի դեսպանատան կայք և կարդալ թե ինչ է գրված այնտեղ:

Իսկ ԱՄՆ-ի դեսպանատան կայքում տեղադրված էր հետևյալ հաղորդագրությունը.

«ԱՄՆ-ի քաղաքացիներին հորդորում ենք խուսափել հայ-ադրբեջանական սահմանի մոտակայքում ճամփորդությունից՝ ներառյալ Դիլիջան ազգային պարկից հյուսիս գտնվող M4 և M16 մայրուղիներից Արևելք ընկած տարածքից մինչև Տավուշի մարզի Վրաստանի հետ սահմանը: Նաև կոչ ենք անում չճամփորդել Լեռնային Ղարաբաղի տարածաշրջան: Դեսպանատունը կշարունակի մշտադիտարկել անվտանգային իրավիճակը և անհրաժեշտության դեպքում կտրամադրի հավելյալ տեղեկատվություն»:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՓՈՐՁԵՑ ՁԻՆՎՈՐԱԳՐՎԵԼ

Երկու հազար քսան թվականի սեպտեմբերի 27-ն էր՝ օրը կիրակի: Պողոսը նախորդ գրեթե ողջ օրն ու գիշերը զբաղվել էր իր գյուտով և քնել էր լուսադեմին: Գործից նրան չէին կարողացել կտրել ո՛չ հաճախորդները, ո՛չ էլ անգամ Աչոնը:

- Լավ, վերջապես կասե՞ս թե ինչով ես դու զբաղված,- հարցրել էր Աչոնը չորրորդ անգամ Պողոսին իր տուն հրավիրելով և մերժում ստանալով:

- Կասեմ, երբ ավարտեմ,- պատասխանել էր Պողոսը:

Բայց ավարտել չէր հասցրել, որովհետև սկսվել էր պատերազմը:

Պողոսը սկզբում մտածեց, որ սա թշնամու հերթական սադրանքն է, բայց լուրերի թողարկման ժամանակ տեսնելով Արցախի նախագահի այլայլված դեմքը՝ հասկացավ որ դա այդպես չէ:

Առաջին գործով նա սեղմեց Աչոնի տան դռան զանգը՝ ձեռքին թութակով վանդակը:

- Սա եթե մենակ մնա՝ կսատկի,- ասաց հապճեպ,- հայտնի չէ, թե այս ամենը որքան կտևի:

Աչոնը նոր էր քնից զարթնել:

- Ի՞նչը որքան կտևի,- հարցրեց նա,- քեզ նորից բռնե՞լ են:

- Ո՛չ, պատերազմ է սկսվել:

Հետո նա նստեց իր Նիվան և գնաց քրոջ ավտոտնակ, ուր պահում էր առաջին պատերազմից մնացած իր զենքերը: Ավելի ճիշտ դրանք զենքեր չէին, այլ մի ամբողջ զինանոց: Այստեղ կար մեկ Մակարով տեսակի ատրճանակ, մեկ

ԱԿՄ տեսակի ինքնաձիգ, մեկ ՊԿ տեսակի գնադցիր և մեկ ՌՊԳ տեսակի նռնականետ: Բացի այդ՝ կային երկու ցինկե արկղեր՝ յուրաքանչյուրի մեջ հազարական լուսարձակող 7.62 տրամաչափի փամփուշտներով, վեց 105 տրամաչափի նռնականետի նռնակ, տասներկու Ֆ1 տիպի ձեռքի նռնակ և ուրիշ մանր-մունր բաներ:

Պողոսը տեղավորեց այս ամենը Նիվայի բեռնախցում՝ նախապես այնտեղից ապամոնտաժելով իր հավաքած ձայնային համակարգը՝ հսկա ձայնարկիչներով: Ապա մոտակա սուպերմարկետից գնեց բավարար քանակությամբ սննդամթերք ու այլ պարագաներ, դեղատնից՝ դեղորայք, լիցքավորեց մեքենայի բաքը և, երբ պատրաստվում էր ճամփա ընկել ռազմաճակատ, ռադիոընդունիչով լսեց, որ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվում է ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք, ինչպես նաև զորքերին կցագրված անձնակազմներին կոչ է արվում ներկայանալ իրենց տարածքային զինկոմիսարիատներ:

Պողոսը պատասխանատու մարդ էր և ամեն ինչում սիրում էր կազմակերպվածություն: Նա իհարկե կարող էր ինքնուրույն մեկնել ճակատ և ամենաբարդ հատվածում միանալ զորքին, քանի որ հինգ մատի պես գիտեր տեղանքը, բայց որոշեց դրսևորել քաղաքացիական գիտակցություն և հետևել կանոններին:

Զինկոմիսարիատում, ավելի ճիշտ՝ զինկոմիսարիատի առջև իսկական խառնաշփոթ էր: Տարբեր տարիքի տասնյակ տղամարդիկ՝ աղմկելով ու իրար հերթ չտալով, փորձում էին հասկանալ, թե ինչ է պետք անել՝ ցուցակագրվելու և ռազմաճակատ մեկնելու համար: Ավագ լեյտենանտի ուսադիրներով մի նիհարակազմ երիտասարդ ապարդյուն փորձում էր ինչ-որ բան բացատրել հավաքվածներին, բայց նրան չէին լսում:

Պողոսը մի պահ կանգնեց, գնահատեց իրավիճակը, ապա շրջանցելով ամբոխը մոտեցավ զինկոմիսարիատի մուտքին, որը սակայն պարզվեց փակ է: Նա մի քանի անգամ քաշեց բռնակից, սակայն դուռը տեղի չտվեց: Կողքի պատուհանի մոտ կանգնած ծխում էր մի զինվորական:

Պողոսը մի քիչ հետ քաշվեց ու նայելով նրան ձայնեց.

- Դու ապո՞ւշ ես:

Աղմուկի մեջ, սակայն, զինվորականը չլսեց նրան:

Պողոսը շրջվեց դեպի ամբոխն ու գոռաց.

- Մի րոպե լռությո՛ւն:

Հավաքվածները մեկ մարդու պես ենթարկվեցին: Հետո Պողոսը կրկին դիմեց պատուհանի մոտ կանգնած զինվորականին՝ կրկնելով իր հարցը:

Զինվորականը՝ ակնհայտորեն վախեցած, բացեց պատուհանը:

- Դուք ո՞վ եք,- հարցրեց նա Պողոսին:

- Գեներալ դը Գոլը,- ասաց Պողոսը, ապա ավելացրեց,- անմիջապես բաց դուռը:

Զինվորականը կտրուկ փակեց պատուհանը, ըստ ամենայնի վազելով մոտեցավ մուտքին և բացեց դուռը:

- Ներեցեք պարոն գեներալ,- ասաց նա՝ պատիվ տալով,- չեք պատկերացնի, թե այստեղ ինչ է կատարվում:

- Ես շատ լավ տեսնում եմ, թե ինչ է այստեղ կատարվում: Այս մարդիկ ուզում են գնալ ճակատ, իսկ դու պատուհանի մոտ կանգնած ծխում ես:

- Ինձ ասել են թող սպասեն:

- Ո՞վ է ասել:

- Զինկոմը:

- Ո՞ւր է զինկոմը:

- Գնացել է նախարարություն: Բայց այստեղ է նրա տե-

ղակալը:

Երբ Պողոսը մտավ զինկոմի տեղակալի աշխատասենյա,կ տեսավ մի բեղավոր փոխգնդապետի, որը նստած էր համակարգչի առջև և, արևածաղիկ չրթելով, կլանված նայում էր էկրանին:

- Ինչո՞ւ եք այդ մարդկանց սպասեցնում, նրանք պետք է ժամ առաջ ճակատ հասնեն:

Փոխգնդապետը շրջվեց դեպի Պողոսը, նախ ուշադիր զննեց նրան, հավանաբար փորձելով հասկանալ, թե ով է նա և արժե արդյո՞ք տեղից վեր կենալ, հետո նկատեց նրա թիկունքում կանգնած մայորին, որն ապարդյուն փորձում էր ներս խցկվել:

- Ի՞նչ է պատահել, մայո՛ր,- զայրացած նետեց նա,- ո՞վ է այս մարդը:

- Նա գեներալ…- կմկմաց մայորը՝ չհիշելով գեներալի ազգանունը,- գեներալ…

Փոխգնդապետը վեր թռավ տեղից, զգաստ դիրքով կանգնեց և պատրաստվում էր զեկուցել, բայց չհասցրեց:

- Ես գեներալ չեմ,- կանխեց նրան Պողոսը:

- Ինչպե՞ս թե գեներալ չեք,- թիկունքից բացականչեց մայորը,- Դուք ասացիք որ…

- Մի րոպե,- ընդհատեց նրան փոխգնդապետը, որն անհայտորեն չէր հասկանում, թե ինչ է կատարվում,- կասե՞ք Դուք ով եք:

- Այդ հարցին դժվար է հստակ պատասխանելը,- Պողոսն այնուամենայինիվ մի կողմ քաշվեց և թույլ տվեց, որ մայորը մտնի սենյակ,- ես հիմնականում էլեկտրական սարքավորումներ եմ վերանորոգում, բայց նաև գիտությամբ եմ զբաղվում…

- Դուրս եկեք սենյակից,- բացականչեց փոխգնդապետը:

- ...այս պահին աշխատում եմ մի գյուտի վրա,- անվրդով շարունակեց Պողոսը,- բայց դա կարևոր չէ, կարևորն այն է...

- Ես Ձեզ ասում եմ դուրս եկեք,- ավելի բարկացավ փոխգնդապետը:

Բայց Պողոսը նրան չէր լսում.

- Կարևորն այն է, որ ես նաև գնդացրորդ եմ, մասնակցել եմ նախորդ պատերազմներին, կատարելապես տիրապետում եմ նաև նռնականետի ու ականանետի, ի դեպ...

- Դուք երևի լավ չեք հասկանում...- փոխգնդապետն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Պողոսը դարձյալ չթողեց:

- ... ի դեպ, իմ բոլոր զենքերը, այդ թվում՝ նռնականետը հիմա իմ մեքենայում են: Ես ուզում էի ինքնուրույն մեկնել ճակատ, բայց լսելով ընդհանուր մոբիլիզացիայի մասին՝ եկա այստեղ:

- Ձեր մեքենայում հիմա նռնականետ կա,- զարմացավ փոխգնդապետը:

- Ոչ միայն: Այնտեղ կա նաև մեկ Մակարով տեսակի ատրճանակ, մեկ ԱԿՄ տեսակի ինքնաձիգ, մեկ ՊԿ տեսակի գնադցիր և մեկ ՌՊԳ տեսակի նռնականետ: Բացի այդ՝ կան երկու ցինկե արկղեր՝ յուրաքանչյուրի մեջ հազարական լուսարձակող 7.62 տրամաչափի փամփուշտներով, վեց 105 տրամաչափի նռնականետի նռնակ, տասներկու Ֆ1 տիպի ձեռքի նռնակ և ուրիշ մանր-մունր բաներ:

- Լավ, ես հասկացա, կարո՞ղ եք մի քիչ սպասել,- փոխգնդապետը սկսեց ինտենսիվորեն քորել բեղերը, ապա դիմեց մայորին,- մայոր, գնացեք միասին Ձեր սենյակ, մինչ ես ամեն ինչ կկարգավորեմ:

Այստեղ նա նաև աչքով տվեց մայորին, բայց Պողոսը դա չնկատեց: Եթե նկատեր՝ առնվազն կճշտեր որոշ բաներ:

Փոխարենը անխոս հետևեց մայորին, մտավ նրա աշխատասենյակ և մոտ տասնհինգ րոպե սպասեց այնտեղ: Տասնհինգ րոպեից աշխատասենյակ մտան քաղաքացիական համազգեստով երեք տղամարդիկ, որոնցից մեկի դեմքը ծանոթ թվաց Պողոսին: Նա փորձեց մտաբերել նրան, բայց այդպես էլ չմտաբերեց: Ինչևէ, հենց այդ մեկը, որի դեմքը ծանոթ թվաց Պողոսին շատ քաղաքավարի խնդրեց նրան ցույց տալ իր զենքերը:

- Դրանք մեքենայի մեջ են:

- Հասկանալի է. իսկ որտեղ է մեքենան:

- Փողոցում:

- Գնանք մեքենայի մոտ:

Եվ Պողոսը, առանց որևէ բան կասկածելու, այդ երեք տղամարդկանց ուղեկցությամբ, որոնցից մեկի դեմքը շարունակում էր փորձել մտաբերել, գնաց դեպի փողոցի եզրին կայանած իր Նիվան: Մտաբերեց այն ժամանակ, երբ արդեն բացել էր բեռնախցիկը: Ծանոթ դեմքին զարմանքից փայլեցին աչքերը, հետո նա գրպանից հանեց վկայականը, ներկայացավ որպես քրեական հետախուզության աշխատակից և իրենից գոհ ասաց.

- Դուք պետք է մեզ հետ գաք ոստիկանության կենտրոնի բաժին. Ձեր մեքենան կվարի մեր աշխատակիցը:

Դե իհարկե, մտածեց Պողոսը, այս կենդանուն ես տեսել եմ հենց ոստիկանության կենտրոնի բաժնում:

- Ոչխար,- ասաց նա,- դու տեղյա՞կ ես, որ պատերազմ է սկսվել:

Ոչխարը գլխով նշան արեց մյուսներին և կտրուկ բռնեց Պողոսի ձեռքը՝ փորձելով ոլորել այն:

Միայն թե, ինչպես արդեն գիտենք, դա այդքան էլ հեշտ բան չէր: Պողոսը հեշտությամբ ազատեց ձեռքը, նույն այդ

ձեռքով բռնեց ոչխարի ականջը և ինչ որ անհավանական շարժմամբ գետնին տապալեց նրան: Նույն կերպ նա վարվեց մյուս երկուսի հետ, ապա հանգիստ նստեց մեքենան և հեռացավ:

Մեծ էր իհարկե ցանկությունը վերադառնալ զինկոմիսարիատ և քաշել մայորի և փոխգնդապետի ականջները, բայց Պողոսը մտածեց, որ դա կանի պատերազմից հետո:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՃԱՄՓԱ ԸՆԿԱՎ ԴԵՊԻ ՃԱԿԱՏ

Երբ Պողոսը դուրս եկավ Երևանից, ժամը երեքն էր: Միացրեց ռադիոընդունիչը և մինչև վերջ սեղմեց մեքենայի արագության ոտնակը:

«Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարությունը կոչ է արել անհապաղ դադարեցնել կրակը և բանակցություններ սկսել՝ իրավիճակի կայունացման համար»՝ հաղորդում էր ռադիոկայաններից մեկը՝ հղում անելով ռուսական ՌԻԱ Նովոստի գործակալությանը:

Իսկ ինչո՞ւ թույլ տվեցիք, որ սկսվի կրակը, որ հիմա էլ կոչ անեք դադարեցնել այն՝ մտածեց Պողոսը: Չէ՞ որ առանց ձեր համաձայնության կամ գուցե նաև հորդորի չէր կարող պատերազմ սկսվել: Պողոսը հիշեց երաժիշտ երիտասարդին, որը փառաբանում էր Ճիկոլին նրա համար, որ վերջինս այնքան խրոխտ գտնվեց, որ չդիմավորեց ռուսաց ցարին օդանավակայանում: Մի՞թե սա դրա ուղիղ հետևանքը չէ:

Այդ ե՞րբ են ռուսաց ցարերը թույլ տվել, որ մեր ժողովուրդը այլ կողմնորոշում ունենա, քան՝ Ռուսաստանը, հայացքն այլ տեղ ուղղի, քան դեպի Հյուսիս կամ առնվազն փորձի ինքնուրույն լինել: Եվ ի՞նչ է, պիտի ի հայտ գար մի Ճիկոլ, և որոշեր որ ինքը կարող է փոխել պատմության այս անտանելի ընթացքը: Իսկ գո՞ւցե նա ոչ թե ի հայտ էր եկել, այլ նրան ի հայտ էին բերել: Բայց ոչ թե պատմության ընթացքը հոգուտ հայ ժողովրդի փոխելու, այլ պարզապես ռուսաց ցարին զայրացնելու և նրա համար հավելյալ խնդիր ստեղծելու համար…

«Մեծ Բրիտանիայի Եվրոպական հարևանության և Ամերիկայի հարցերով նախարարը հայտնել է, որ իր պետությունը խորապես մտահոգված է Հայաստանի և Ադրբեջանի միջև բախումների մասին այսօրվա լուրերով: Երկու կողմերին կոչ է արվում զսպվածություն ցուցաբերել և դադարեցնել կրակը»,- ազդարարեց ռադիոն:

Անգլիա, դարձյալ Անգլիա, միշտ Անգլիա՝ մտածեց Պողոսը: Ոչ մի ուրիշ պետություն չի կարող այնպես խառնել աշխարհը, ինչպես դա անում է Անգլիան: Եվ անում է դարերով: Բոլոր աշխարհաքաղաքական երկրաշարժերի էպիկենտրոնում Անգլիան է: Բայց, ա՛յ քեզ պարադոքս՝ էպիկենտրոնը երբեք չի քանդվում, իսկ աշխարհում անընդհատ ավերածություններ են…

«Ֆրանսիայի Եվրոպայի և արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել Արցախի ուղղությամբ Ադրբեջանի կողմից սկսված մարտական գործողությունների վերաբերյալ, որում ասվում է, որ Ֆրանսիան խորապես մտահոգված է Լեռնային Ղարաբաղում շարունակվող լայնամասշտաբ բախումներով և խաղաղ բնակչության շրջանում զոհերի մասին հաղորդագրություններով և կոչ

է անում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և վերսկսել երկխոսությունը»,- շարունակեց ռադիոն:

Մտահոգված է, կոչ է անում, ինչ ծանրակշիռ բառեր են՝ մտածեց Պողոսը: Ի տարբերություն շատ այլ պետությունների, Ֆրանսիան գուցե իսկապես անկեղծ է իր մտահոգություններում ու կոչերում, բայց դրանից ինչ է փոխվում: Ինչ կփոխվի եթե անգամ անկեղծ լինեն Ամերիկան, նույնիսկ՝ Անգլիան: Ինչ կարող են նրանք մեզ տալ: Քանի դեռ մեր գոյապահպանական խնդիրը լուծելու համար մենք ստիպված ենք ընտրություն անել քաղաքակիրթ Արևմուտքի և բռնատիրական Ռուսատանի միջև, ավա՜ղ, մենք երբեք չենք կարող ընտրել Արևմուտքը, որովհետև նրանք միշտ էլ սահմանափակվելու են մտահոգություններով ու կոչերով: Կարող է անշուշտ պատմության ինչ-որ ժամանակահատվածում ի հայտ գալ կամ ի հայտ բերվել մի Ճիկոլ, որը կընտրի Արևմուտքը: Կընտրի Արևմուտքը առանց հաշվի առնելու, որ նույն այդ Արևմուտքի ճամբարում կա մի պետություն, որի հետ էլ հենց կապված են մեր գոյապահպանական խնդիրները: Այդ պետությունը Թուրքիան է, առանց որի հիմնավոր օժանդակության Ադրբեջանը երբեք չէր համարձակվի նախաձեռնել այս պատերազմը…

Պողոսը զգաց, որ զայրանում է և պատրաստվում էր անջատել ռադիոընդունիչը, բայց այդ պահին լսեց մի հաղորդագրություն, որը կարևոր ազդեցություն պիտի ունենար նրա հետագա ընթացքի վրա.

«ՀՅԴ կամավորականները Արցախ կմեկնեն ՀՅԴ Արամ Մանուկյան երիտասարդական կենտրոնից: Այս պահին ընթանում են նախապատրաստական աշխատանքներ»:

Հարյուրերեսունամյա կուսակցության հետ Պողոսը ոչ մի քաղաքական առնչություն չուներ, ինչպես չուներ և երբ-

ևէ չէր ունեցել նման առնչություն որևէ այլ կուսակցության հետ: Բայց ի տարբերություն այլ կուսակցությունների, այս մեկի հետ Պողոսն ուներ գաղափարական ընդհանրություն: Եվ ուներ ընկերներ այս կուսակցության թե շարքերում, թե ղեկավարության մեջ, որոնց հետ մարտական ուղի էր անցել: Հենց այդ ընկերներից մեկին էլ զանգահարեց՝ լսելով լուրը:

Պարզվեց, որ կամավորականների առաջին վաշտը ճակատ կմեկնի հանդերձանք և զենք ստանալուց անմիջապես հետո և դա ամենայն հավանականությամբ կլինի երեկոյան:

- Իսկ հայտնի՞ է, թե որտեղ եք տեղակայվելու,- հարցրեց Պողոսը:

- Նույն այն տեղում, ուր չորս տարի առաջ էինք,- պատասխանեց զրուցակիցը:

- Լավ,- ուրախացավ Պողոսը, այնտեղ էլ կմիանամ ձեզ, ավելի ճիշտ դուք ինձ կմիանաք:

Չորս տարի առաջ գումարտակը պահում էր Թալիշի դիրքերը՝ Արցախի հյուսիսում՝ Մատաղիսից վերև:

Պողոսը շատ լավ գիտեր այդ տեղանքը, միայն թե չգիտեր, որ Թալիշն արդեն գրավել էր թշնամին...

Ժամը չորսն էր: Երասխ հասնելով՝ Պողոսը մտածեց, որ ավելի ճիշտ կլիներ գնալ Քարվաճառով, քան Բերձորով, բայց արդեն ուշ էր: Ոչինչ՝ որոշեց, կհասնեմ Ստեփանակերտ, կհասկանամ, թե ինչ է տեղի ունենում ու կուղևորվեմ դեպի Հյուսիս: Բանն այն է, որ այստեղ այլևս չէր բռնում ռադիոն, իսկ համացանցից, ինչպես հայտնի է, նա գլուխ չէր հանում: Պողոսի համար տեղեկատվության միակ աղբյուրը մնացել էր Աչոնը, որը զանգում էր ամեն տասը րոպեն մեկ: Ըստ Աչոնի ամեն ինչ լավ էր, բոլոր ուղղություններով մեր բանակը ճնշում էր թշնամուն և փաստորեն ամեն տասը րոպեն մեկ մենք զգետնում էինք թշնամու մի քանի միավոր

ուղղաթիռ, ինքնաթիռ, անօդաչու թռչող սարք ու էլի չգիտես ինչ:

- Որտեղից այդ բառը՝ «զգետնել»,- հարցրեց Պողոսը:

- Պաշտոնական լրահոսից,- պատասխանեց Աչոնը:

Շինծու բառ է՝ չգիտես ինչու մտածեց Պողոսը...

Բերձորի միջանցք հասնելով Պողոսն անմիջապես զգաց պատերազմի շունչը: Չկար ո՛չ հրետակոծություն, ո՛չ գնդակոծություն, ո՛չ անգամ օդային տագնապ, բայց Պողոսը միևնույն է զգաց պատերազմի շունչը:

Այստեղ նա մի հին ընկեր ուներ՝ մարտական ընկեր, որի հետ անցել էր արցախյան առաջին պատերազմի մի հատված: Տոլիկ էր անունը: Բաքվի ջարդերից մազապուրծ նա եկել էր Հայաստան ու անմիջապես մեկնել ճակատ: Մասնակցել էր Բերձորի ազատագրմանը ու պատերազմից հետո մնացել այստեղ: Ամուսնացել էր, տուն էր կառուցել, փոքրիկ մի հացի փուռ դրել ու մինչև հիմա էլ ապրում էր այստեղ: Համեստ, գլուխկախ, աշխատող մարդ էր Տոլիկը, վերջին անգամ հանդիպել էին Երևանում՝ տարիներ առաջ:

Պողոսը որոշեց տեսնել նրան, մի քիչ զրուցել հետը, նոր շարունակել ճանապարհը: Գնաց հացի փուռը, բայց այն փակ էր: Տան տեղը լավ չէր հիշում, հարցուփորձ անելով գտավ ու ցանկապատի հետևում տեսավ վազվզող փոքրիկների: Երեք տղաներ էին՝ խաղալիք հրացաններով իրար էին կրակում: Պողոսը հենվեց ցանկապատին ու հետևեց նրանց խաղին, մինչև տանից մի կին դուրս եկավ:

- Տոլիկը տա՞նն է,- հարցրեց Պողոսը:

- Ոչ,- ասաց կինը ու տարակուսանքով նայեց անծանոթ հյուրին:

- Ես նրա ընկերն եմ,- ժպտաց Պողոսը,- որտե՞ղ է նա:

- Գնաց դիրքեր: Վերցրեց զենքերն ու գնաց դիրքեր:

Պողոսը մի պահ լռեց, հետո նայելով խաղացող փոքիրկներին՝ հարցրեց.

- Ձեր երեխանե՞րն են:

- Ոչ, թոռները,- ասաց կինը, հետո չկարողանալով թաքցնել հուզմունքը ավելացրեց,- նրանց հայրն էլ գնաց՝ փեսաս:

Պողոսը չգիտեր ինչ ասել: Ուզում էր շրջվել ու հեռանալ, բայց կինը կանգնեցրեց նրան.

- Եկեք Ձեզ հաց տամ:

- Չէ, ավելի լավ է գնամ:

Պողոսը բացեց մեքենայի դուռը, որ նստի, բայց կինը կրկին կանգնեցրեց նրան, մոտեցավ ցանկապատին ու հարցրեց.

- Ի՞նչ է լինելու:

Նրա աչքերին հազիվ նշմարվող արցունքներ էին:

- Չգիտեմ,- տխուր ասաց Պողոսը,- բայց դուք բացեք ձեր փուռը և հաց թխեք: Ձինվորներին հաց պետք կգա:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՆՕԴԱՉՈՒՆ ԸՆԿԱՎ ՊՈՂՈՍԻ ՀԵՏԵՎԻՑ

Բերձորից մինչև Ստեփանակերտ մեկ ժամվա ընթացքում Աչոնը զանգեց ուղիղ տասներկու անգամ: Այսինքն՝ նա արդեն զանգում էր ոչ թե տասը, այլ՝ հինգ րոպեն մեկ: Ըստ Աչոնի՝ մեր բանակը շարունակում էր ջարդուփշուր անել, ոչնչացնել ու զգետնել…

Վերջին զանգը Պողոսը ստացավ Շուշիի մատույցներում: Երեկոյան ժամը ինն էր: Բայց զանգողը ոչ թե Աչոնն էր, այլ կամավորական գումարտակի իր ընկերը: Ասաց, որ դեռ չեն շարժվել, ըստ ամենայնի կշարժվեն գիշերը և Ստեփանակերտում կլինեն առավոտյան: Առաջարկեց Պողոսին այդտեղ էլ սպասել իրենց, որ միասին գնան ճակատ: Պողոսը առանց երկար մտածելու համաձայնեց: Հոգնած էր ու քաղցած: Հավանաբար ծերանում էր: Նույնիսկ Ստեփանակերտ չիջավ, թեքվեց, մտավ Շուշի, առաջին պատահած ճաշարանում սնվեց, առաջին պատահած հյուրանոցում սենյակ վերցրեց ու միացրեց հեռուստացույցը: Բոլոր ալիքներով նույն պատկերն էր. մեր բանակը ջարդուփշուր էր անում, ոչնչացնում, զգետնում… Չհասկացավ, թե ինչպես քնեց և արթնացավ միայն առավոտյան՝ հեռախոսի զանգից: Երբ էկրանի վրա տեսավ գումարտակի ընկերոջ անունը, մտածեց, որ նրանք տեղ են հասել և ինքը ուշացել է: Բայց դա այդպես չէր:

- Մենք նոր-նոր շարժվում ենք,- ասաց ընկերը,- ամբողջ գիշեր զենք էինք ստանում:

Հետո ասաց, որ Պողոսի համար հանձնարարություն կա: Նա պետք է մեկնի Հյուսիս և Մաղավուզի կողմերում մի տեղ հարյուրհոգանոց վաշտի համար հնարավորինս հարմար ու ապահով կացարան գտնի:

- Զանգահարիր այս համարով և Ստեփանակերտում քեզ մի ընկեր կմիանա: Կգնաք երկու մեքենայով: Քո Նիվան մեզ պետք կգա: Զգույշ եղեք անօդաչուներից:

Անօդաչու թռչող սարք Պողոսը կյանքում առաջին անգամ տեսել էր քառօրյա պատերազմի ժամանակ:

Թալիշի դիրքերում էր: Մելո անունով իր հրամանատարը՝ նույն այն ընկերը, որի հետ խոսեց քիչ առաջ, անօդաչու սարքերին ասում էր անսարք օդաչուներ: Հումոր չէր անում,

պարզապես նրա մոտ այդպես էր տպավորվել: Հաճախ նույնիսկ «անսարք» բառն էլ էր մոռանում և օդում անօդաչու թռչող սարքը նկատելով՝ բացականչում.

-Տղերք, էն «խարաբ անտերն» էլի եկավ:

Ու տղերքը սկսում էին կրակել օդ՝ անիմաստ, որովհետև մի քանի հազար մետր բարձրության վրա թռչող «խարաբ անտերին» ինքնաձիգի գնդակները ոչ մի կերպ հասնել չէին կարող:

Դե, ինչ արած՝ հին մարդիկ էին տղերքը: Առաջին պատերազմի ժամանակ ով էր տեսել այսպիսի բան: Նրանք հաճախ կատակում էին՝ առաջ նայում էինք դիմացներս, հիմա ստիպված ենք նայել վերև:

Բայց և այնպես, փաստը մնում էր փաստ, որ անօդաչու թռչող սարքերը լրջագույն դերակատարություն էին ձեռք բերել նոր պատերազմներում:

Երբեմն, դիրքապահության երկարուձիգ ժամերին Պողոսը մտածում էր նորօրյա պատերազմների ու նորօրյա սպառազինությունների մասին: Եվ հենց այդտեղ էլ նրա մոտ հասունացել էր այն գյուտը, որի վրա պիտի աշխատեր Երևան վերադառնալով:

Բայց դա չորս տարի առաջ էր:

Հիմա պետք էր արագ հավաքվել ու կատարել նախկին հրամանատարից ստացած հանձնարարությունը:

Մելոյի ասած ընկերը, որն իրեն պիտի միանար Ստեփանակերտում, պարզվեց արդեն մեկնել է:

- Արի դեպի հյուսիս, կհանդիպենք Մարտակերտում,- ասաց նա:

Մեքենայի մեջ Պողոսը միացրեց ռադիոընդունիչը և գտավ այն հաճախականությունը, որով հեռարձակվում էր Արցախի հանրային ռադիոն:

«Գիշերը մարտական գործողությունները շարունակվել են, և մեր զինված ուժերը ունեն նշանակալի հաջողություններ: Մեր զորքերի կորուստների մասին ադրբեջանական կողմի հայտնած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Պաշտպանության բանակի ձեռնարկած հակագրոհի արդյունքում հակառակորդին պատճառվել է կենդանի ուժի և զինտեխնիկայի մեծաքանակ կորուստներ, իսկ պաշտպանության բանակը վերականգնել է նախկինում կորցրած մի շարք դիրքեր»,- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցչի խոսքերն էր մեջբերում Արցախի հանրային ռադիոն:

Լավ է, որ ամեն ինչ լավ է՝ մտածեց Պողոսը՝ Շուշիի ոլորաններում կանգնած հայտնի տանկ-հուշարձանի կողքով անցնելով:

Քսանութ տարի առաջ, երբ Շուշիի ազատագրման ժամանակ խփվել էր թշնամու այդ տանկը, ինքն այդտեղ չէր եղել, այլ Հյուսիսում, ուր և ուղևորվում էր հիմա: Հիշում էր, թե այնտեղ, իրենց ճակատում ինչպես էին ոգևորվել Շուշիի ազատագրման լուրն առնելով: Մի՞թե հիմա էլ, թշնամու կողմից սանձազերծված այս պատերազմը առիթ կլինի, որ ազատագրենք մեր մյուս տարածքները, դիցուք՝ Շահումյանը: Դատելով պաշտոնական լրահոսից՝ ամեն ինչ դրան էր տանում:

Քառորդ դար առաջ, երբ իրենք կռվում էին այստեղից մի քանի տասնյակ կիլոմետր այն կողմ, գիտեին՝ ինչի համար են կռվում: Ընկերներն, որոնք ընկան այդ կռիվներում գիտեին ինչի համար են զոհվում: Մի՞թե հիմա նույնը չէ:

Հիմա քառորդ դար առաջվա պատերազմին մասնակից ընկերներից շատերը կրկին գալիս են կռվելու: Գալիս են

նաև տղաներ, որոնք այդ ժամանակ նոր էին ծնվել կամ դեռ ծնված չէին: Մի մասը գալիս է բնազդաբար, մի մասը՝ ոգու կանչով, ոմանք՝ մտածված:

Բնազդաբար կարելի է ընդամենը պաշտպանվել, երբեմն՝ հաջող, երբեմն՝ անհաջող, ոգու կանչով կարելի է տանել ժամանակավոր հաղթանակներ փոքր ու մեծ, բայց միայն մտածված կռվի գնալով կարելի է հասնել արդարության:

Հիմա, երբ քսանամյա պատանին ու յոթանասունամյա ծերունին ուս ուսի տված դիրք են պահում, անշուշտ նրանց նպատակը մեկն է՝ պաշտպանել հայրենիքը: Բայց մի՞թե մինչ այս պատերազմը մենք նույն բանով չէինք զբաղված՝ հայրենիքը պաշտպանելով: Քանի՞ զոհ ենք տվել թվացյալ խաղաղության պայմաններում: Խաղաղությո՞ւն, թե՞ քողարկված պատերազմ: Եվ ուրեմն, եթե միևնույն է պատերազմ է, պատերազմը չի ավարտվել, հակառակորդի կրակոցներից շարունակում են զինվորներ զոհվել, զոհվում են, որովհետև ունեցած հաղթանակը այս քառորդ դարվա ընթացքում չամրագրվեց, և մանավանդ, որ նախահարձակը հակառակորդն է, որ զինադադարը խախտողը հակառակորդն է և, և եթե հիմա մեր վիճակը իսկապես շահեկան է, եթե մենք իսկապես կարողանում ենք հետ շպրտել նենգաբար նախահարձակ եղած հակառակորդին, կարողանում ենք չեզոքացնել նրա հեռուն գնացող ծրագրերը, ուրեմն արդյո՞ք ճիշտ ժամանակը չէ առնվազն հյուսիսային ճակատով առաջ գնալ՝ ազատագրել Շահումյանը, Դաշտային Արցախը, հասնել մինչև Գանձակ, հնարավորինս չեզոքացնել հակառակորդի ռազմական ներուժը՝ նրան պարտադրելով մի այնպիսի խաղաղություն, որն այլևս վերջնական կլինի:

Դատելով պաշտոնական լրահոսից՝ դա միանգամայն հնարավոր էր:

Միայն թե Պողոսի մոտ ինչ-որ թերահավատություն կար: Ինչ-որ անբացատրելի թերահավատություն, որ տակնուվրա էր անում նրան:

Մարտակերտ տանող ճանապարհը գրեթե դատարկ էր: Միայն երբեմն հակառակ կողմից գալիս էին բեռնված մեքենաներ: Մի մեքենայի տանիքին ինչ-որ մեկը տեղավորել էր իր տան կահ-կարասին և իր ընտանիքին հեռացնում էր ավելի ապահով վայր: Մեկ այլ մեքենա մեղվի փեթակներ էր տեղափոխում, մեկ ուրիշը նոր հասած նռների ծանրության տակ ճկված հազիվ շարժվում էր: Մարդիկ հեռանում էին ճակատամերձ գյուղերից՝ իրենց հետ վերցնելով հավանաբար այն ամենը ինչ կարող էին վերցնել:

Այդպես չի կարելի՝ մտածում էր Պողոսը: Այդպես ճիշտ չէ: Կարելի է հեռացնել միայն կանանց ու երեխաներին, բայց գյուղերը չպետք է դատարկվեն: Դատարկ գյուղի համար զինվորը այնպես չի կռվի, ինչպես կկռվեր ապրող գյուղի համար:

Մինչդեռ ճակատի ուղղությամբ շարժ չկար: Միայն երկու թե երեք անգամ Պողոսի Նիվան վազանցեց զինվորական բեռնատարների փոքիրկ շարասյուների:

Շատ հեռվից լսելի էին պայթյունի ձայներ:

Մարտակերտ հասնելով Պողոսը փորձեց զանգահարել այն մարդուն, որին պիտի միանար, բայց կապը լավը չէր և ազդանշանը անընդհատ կորում էր: Որոշեց սպասել: Կայանեց մեքենան կենտրոնական փողոցում ու սկսեց քայլել քաղաքում:

Մարտակերտն ամայի էր: Պողոսը շեղվեց կենտրոնական փողոցից, շրջեց խուլ թաղերով ու բակերով, տեսավ բազմաթիվ քանդված տանիքներ ու պատեր, մայթերին այսուայնտեղ թափված կոտրված պատուհաններ: Բայց մարդիկ չկային: Հավանաբար քաղաքը պարբերաբար ռմբակոծվում

էր, և բնակիչները կամ հեռացել էին, կամ հիմա ապաստարաններում էին: Բայց ոչ, ահա մեկը, որ մայթեզիրն, առվի մոտ ինչ որ գործ էր անում:

Պողոսը մոտեցավ: Փոքրամարմին մի ծերունի էր՝ անոթոք կնճիռներով ու դեղնաճերմակ մազմորուքով:

- Ի՞նչ ես անում, հայրիկ,- հարցրեց Պողոսը:

Ծերունին ձեռքից վայր դրեց բահը, ուղղվեց ու հևալով պատասխանեց.

- Գործ եմ անում:

Պողոսն հասկացավ, թե ինչ գործ է նա անում: Ռումբն ընկել էր կողքի ցանկապատի վրա և փլուզել այն: Քարի կտորները թափվել էին առվի մեջ, փակել այն, և ջուրն հիմա հոսում էր ուղիղ փողոց:

- Մի կողմ քաշվիր,- ասաց Պողոսը:

Մի քանի րոպեում մաքրեց առուն քարերից, վերականգնեց ջրի ընթացքը, լվաց ցեխոտված ձեռքերը, հետո կարծես նոր անդրադառնալով այդ հարցին՝ դիմեց ծերունուն.

- Ինչի՞դ է պետք ջուրը:

Ծերունին զարմացած նայեց նրան.

- Ինչպե՞ս թե ինչիդ է պետք: Այգիս ինչպե՞ս ջրեմ առանց ջուր:

- Պատերազմ է, հայրիկ:

- Միշտ էլ պատերազմ է: Այդ ե՞րբ պատերազմ չէ: Ինչ հիշում եմ՝ պատերազմ է: Բայց հողը միայն զենքով չեն պահում: Հողը նաև բահով են պահում:

Պողոսը մի քիչ էլ շրջեց քաղաքում ու վերադարձավ մեքենայի մոտ:

Կապը համառորեն չէր վերականգնվում: Պետք էր կողմնորոշվել՝ մնալ այստեղ ու սպասել, թե ինքնուրույն մեկնել դեպի Մաղավուզ: Հավանաբար ճիշտը գնալն էր, ինչ

իմանաս, երբ կապ կլիներ:

Մարտակերտից դուրս գալիս, խաչմերուկի մոտ կանգնած՝ տեսավ զինվորներ տեղափոխող մի Ուրալ բեռնատար: Զինվորները իջել էին թափքից ու խռնվել մեքենայի շուրջը: Ըստ ամենայնի աշխարհազորայիներ էին:

Պողոսը մտածեց, որ բեռնատաը փչացել է, արգելակեց և դիմեց զինվորներին:

- Ի՞նչ է պատահել:

- Ոչ մի բան,- պատասխանեցին,- սպասում ենք:

- Սպասո՞ւմ եք,- զարմացավ Պողոսը,- այստե՞ղ: Ո՞ւր է ձեր հրամանատարը:

- Հրամանատար չունենք,- ասաց զինվորներից մեկը:

Պողոսն իջավ մեքենայից ու մոտեցավ բեռնատարի խցիկին: Վարորդը գլուխը ղեկին դրած՝ քնած էր: Թափով հրեց նրան ու գոռաց.

- Դու հիմա՞ր ես:

Վարորդը վեր թռավ տեղից:

- Դու հիմա՞ր ես,- կրկնեց Պողոսը,- ո՞վ է այստեղ կանգնեցնում զինվորներով Ուրալը:

- Կապ չկա,- արդարացավ վարորդը,- չգիտենք ինչ անել:

- Ո՞ւր են ձեզ ուղարկել:

- Տոնաշեն, բայց ասացին Մարտակերտից դուրս չեկած՝ խաչմերուկին սպասեք,- վարորդը նայեց ժամացույցին,- կես ժամ է սպասում ենք:

- Նա, ով քեզ նման բան է ասել, ավելի հիմար է, քան դու,- Պողոսը զայրացած էր,- անմիջապես տեղափոխիր մեքենան ծառերի կամ ինչ-որ ծածկի տակ, այնպես, որ վերևից չերևա:

- Անօդաչուների պահո՞վ եք ասում,- կմկմաց վարորդը:

- Ոչ, տիեզերանավերի:

- Ի՞նչ տիեզերանավ,- զարմացավ վարորդը:

- Արագացրո՛ւ,- գոռաց Պողոսը, ապա դիմեց զինվորներին,- առանձնացեք ու կանգնեք իրարից հնարավորինս հեռու, ավելի լավ է՝ ծառերի տակ:

Պողոսը սպասեց մինչ իր կարգադրությունը կկատարվի, ապա նստեց մեքենան ու հեռացավ:

Ինչպե՞ս կարելի է թույլ տալ այսպիսի անկազմակերպվածություն: Պողոսը երբեք նման բան չէր տեսել բանակում, անգամ առաջին պատերազմի ժամանակ, երբ դեռ բանակ էլ չկար որպես այդպիսին: Ինչպե՞ս կարելի է զինվորներին ճակատ ուղարկել առանց հրամանատարի: Ինչպե՞ս կարելի է ասել՝ գնացեք խաչմերուկին սպասեք, երբ գիտես, որ օդում թափառում են թշնամու անօդաչուները:

Ճանապարհը լրիվ դատարկ էր: Պայթյունի ձայները

արդեն լսվում էին շատ ավելի հաճախ ու շատ ավելի մոտիկից:

Տասը-տասներկու կիլոմետր այն կողմ, մեկ այլ խաչմերուկի մոտ ճամփեզրին կանգնած էին երկու զինվորականներ: Նիվան տեսնելով՝ նրանք առաջ եկան և կանգնեցրին այն:

- Ո՞վ եք,- հարցրեց Պողոսը,- և ո՞ւր եք գնում:

- Գնում ենք Տոնաշեն, բայց ճանապարհը չգիտենք,- պատասխանեց զինվորներից մեկը:

Պողոսը տեսավ, որ նրանք անզեն են:

- Ոտքով, առանց զենք գնում եք Տոնաշե՞ն:

- Ոտքով չենք, ոչ էլ անզեն,- զինվորը մատնացույց արեց աջի վրայի անտառոտ բլրակը,- մեքենաներն այնտեղ են՝ զենքով բեռնված:

Իսկապես, ծառերի տակ հազիվ նշմարվում էին երկու մեծ բեռնատարներ: Սրանք գոնե կռահել էին մեքենաներ թաքցնելը:

- Լավ,- ասաց Պողոսը մի քիչ մտածելուց հետո,- եկեք իմ հետևից, բայց տարածություն պահեք, առնվազն հիսուն մետր:

Սպասեց մինչ բեռնատարները՝ երկու զինվորական Կամազներ, իջան բլրակից ու շարժվեց:

Ու հանկարծ, անսպասելի զանգեց հեռախոսը.

- Որտե՞ղ ես,- լսվեց գծի հակառակ կողմից,- քեզ հետ անհանար է կապվել:

- Այո, այստեղ կապը վատն է,- բացատրեց Պողոսը,- Մաղավուզի մոտակայքում եմ, բայց բարձրանում եմ Տոնաշեն:

- Այնտեղ մարտեր են…

Կապը դարձյալ ընդհատվեց, և Պողոսը մնաց շվարած:

Մի քանի անգամ փորձեց հետ զանգել, բայց՝ ապարդյուն:

Ու այդ պահին էլ հնչեց պայթյունի ձայնը: Շատ մոտ ու շատ բարձր: Պողոսը նայեց հայելու մեջ և տեսավ, որ կամազներից մեկը շեղվեց ճանապարհից ու բարձրացավ բլուրի վրա: Երկրորդը շարունակեց ընթացքը:

Ռումբը, բարեբախտաբար, չէր կպել թիրախին, հավանաբար ընկել էր մի քանի մետր շեղությամբ: Կանգնել չէր կարելի. եթե իրենց հարվածողը անօդաչու էր, ապա այն անպայման նորից կհարվածեր և կանգնած թիրախին ավելի հեշտ կդիպչեր: Առաջին Կամազի վարորդը ճիշտ էր վարվել՝ բարձրանալով բլրակը, ուր կարելի էր թաքնվել ծառերի տակ, մինչդեռ երկրորդ վարորդը՝ շարունակելով ընթանալ ճանապարհով լրջորեն վտանգի էր ենթարկում իրեն:

Այդպես էլ կար, շատ չանցած թնդաց երկրորդ պայթյունը, այս անգամ շատ ավելի մոտ, այնպես որ Նիվան ցնցվեց, և Պողոսը մի կերպ պահեց մեքենայի կառավարումը: Ինչ է, այդ անիծյալ անօդաչուն իրե՞ն է խփում, զարմացավ Պողոսը: Բայց հազիվ թե: Անհնար էր, որ անօդաչուն կառավարողը թանկարժեք հրթիռները վատներ ինչ-որ Նիվա ոչնչացնելու համար: Այնուամենայնիվ, Պողոսը սկսեց մեքենան վարել զիգզագներով: Դարձյալ նայեց հայելու մեջ, ու տեսավ, որ երկրորդ Կամազը չկա: Կամ մնացել էր ոլորանի հետևում, կամ ինքն էլ էր շեղվել ճանապարհից: Խփված չէր կարող լինել, որովհետև ռումբը պայթեց Նիվայի մոտ, իսկ ինքը շատ հետ էր:

Աջ՝ դեպի բլուր տանող ճանապարհ չկար, և Պողոսը ստիպված էր առաջ գնալ բուն ճանապարհով: Նիվայի բաց պատուհանից լսվում էր սուլոցի պես մի ձայն: Եթե դա իսկապես այդպես էր, այլ ոչ թե թվում էր Պողոսին, ուրեմն անօդաչուն վերևում էր: Ինչևէ, կանգնել չէր կարելի: Որոշ

ճանապարհի զիգզագաձև անցնելուց հետո, աջի վրա Պողոսը նկատեց հարմար մի թեքություն, որը տանում էր անտառ և որի վրա Նիվան կարող էր բարձրանալ: Առանց երկմտելու թեքվեց և մեքենան սկզբում արագ, ապա՝ դանդաղ, հետո՝ մի կերպ սկսեց հաղթահարել բարձրունքը: Շատ քիչ էր մնում, անտառն արդեն շատ մոտ էր: Բայց Նիվան այլևս ուժասպառ էր: Եվս մի քիչ, ևս մի քանի մետր... Ստացվեց, մեքենան մտավ անտառ: Պողոսը մի քիչ էլ առաջ գնաց և որոշեց մի պահ միայն կանգնել, որպեսզի միացնի մեքենան լիաքարշակ դարձնող փոխանցումը: Հասցրեց և Նիվան, նոր շունչ առած, թափով պոկվեց տեղից: Բայց միայն այդքանը: Հետևում որոտաց պայթյունը, և Պողոսը միայն զգաց, թե ինչպես է դեպի առաջ՝ քթի վրա շուռ գալիս իր Նիվան:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՎԻՐԱՎՈՐՎԵՑ

Առաջին բանը, որ մտածեց Պողոսը ուշքի գալուց հետո այն էր, որ իրեն հետապնդողը փաստորեն իսկապես անօդաչու էր և փաստորեն իսկապես թիրախավորել էր իրեն: Հետո զգաց, որ գլխիվայր է, որ ուսն ահավոր ցավում է, բայց միևնույն է չէր հասկանում, թե ինչու էր անօդաչուն հարվածում իր խեղճուկրակ՝ խակի գույնի Նիվային:

Մի կերպ բացեց դուռը, դուրս եկավ մեքենայից, ամեն դեպքում մի կողմ վազեց ու ծառերի փարթամ ճյուղերի միջից նայեց երկինք: Ոչ մի անօդաչու էլ չկար: Սուլոցն էլ չկար: Միայն հեռվում շարունակում էին թնդալ պայթյունները:

Վերադարձավ մեքենայի մոտ և փորձեց բացել բեռնախցիկը, որտեղ զենքերն էին: Հասկացավ, որ իր բախտը աներևակայելիորեն բերել է: Հրթիռի բեկորները, ճիշտ է հասել էին մեքենային, բայց միայն կոտրել էին հետևի ապակին, վնասել բեռնախցիկի դուռը և հետևի զույգ անիվները: Եթե մի քիչ ավելի մոտ լիներ պայթյունը, կարող էին պայթել նաև բեռնախցիկում գտնվող նռնակները: Իսկ մեքենան, ըստ ամենայնի, շրջվել էր հարվածային ալիքի ուժից:

Մի խոսքով Պողոսի բախտը բերել էր: Միայն թե ի՞նչ անել հիմա: Սեփական ուժերով մեքենան ուղղել չէր կարող: Կարելի էր իջնել ճանապարհ, և անցնող մեքենաներից օգնություն խնդրել: Մի քանի հոգով մեքենան ուղղել կարելի էր: Բայց ի՞նչ անել պայթած անիվների հետ: Բացի այդ, հնարավոր էր, որ վնասված լինեին տարբեր ընթացամասեր: Մի խոսքով Նիվան պետք էր մոռանալ:

Մնում էր երկու տարբերակ. առաջինը՝ դուրս գալ ճանապարհ և սպասել մինչ մեքենա կանցնի, երկրորդը՝ ոտքով հասնել Մաղավուզ: Եվ այստեղ Պողոսի գլխում մի միտք ծագեց: Իսկ ինչո՞ւ Մաղավուզ: Իրեն ասացին, որ Տոնաշենում մարտեր են ընթանում: Այստեղից Տոնաշեն պիտի որ յոթուութ կիլոմետր լիներ, անտառներով՝ ավելի քիչ: Ուրեմն ինչո՞ւ չբարձրանալ ուղիղ այնտեղ՝ իր հետ վերցնելով այնքան զենք ու զինամթերք, որքան հնարավոր է:

Պողոսն հիշեց իր պարտիզանական անցյալը: Չէ՞ որ առաջին պատերազմի գերակշիռ մասն իրենք անցկացրել էին իբրև պարտիզան: Առհասարակ պարտիզանական կռիվն ամենաարդյունավետն է, երբ հակառակորդը մի քանի անգամ գերակշռում է թե քանակով, թե զենքով: Հատկապես անտառային տեղանքում:

Մի խոսքով Պողոսը երկար չմտածեց՝ հագավ զինվո-

ական համազգեստը, որ մնացել էր ապրիլյան պատերազմից, մի ուսին գցեց ինքնաձիգը, մյուսին գնդացիրը, զրահաբաճկոնի գրպաններում տեղավորեց մի քանի ինքնաձիգի փամփշտատուփ և ձեռքի նռնակներ, գոտուն ամրացրեց գնդացրի փամփուշտների երկու ժապավեն, ուսապարկի մեջ լցրեց դեղորայք ու սնունդ և ճամփա ընկավ: Մեծ ափսոսանքով թողեց նռնականետը. միևնույն է՝ առանց օգնականի այն տեղափոխել ու օգտագործել չափազանց դժվար կլիներ:

Պողոսը, զենքերի ծանրության տակ կքած՝ քայլեց մոտ մեկ ժամ: Գնում էր դեպի այն կողմ, որտեղից գալիս էին պայթյունի ձայները: Չէր հասկանում՝ հրետանի՞ է, ռումբե՞ր են, հրթիռնե՞ր, թե՞՝ բոլորը միասին: Հավանաբար բոլորը միասին: Հավանաբար թշնամին օգտագործում էր բոլոր զինատեսակները: Իսկ մերո՞նք: Արդյոք պաշտպանվո՞ւմ էին մերոնք, թե՝ հարձակվում: Պողոսը ոչ մի տեղեկություն չուներ:

Առաջին պատերազմի ժամանակ, երբ կռվում էր այս կողմերում՝ գուցե քսան-երեսուն կիլոմետր այն կողմ, հրթիռ ու անօդաչու չկար, կռվում էին թշնամուն դեմ դիմաց, հաճախ մի քանի մետրի վրա: Հազար ինը հարյուր իննսունեռեքի սկզբին ազատագրեցին Չլդրանը, Սրխավենդը, Դրմբոնը, հետո՝ արդեն ամռանը, Մարտակերտը:

Ինքը գնդացրորդ էր: Նույն այս գնդացիրն էր, որը հիմա կախված էր ուսից: Երբ հազար ինը հարյուր իննսունչորսին՝ զինադադարից ճիշտ մեկ օր առաջ, վիրավորվել էր արկի պայթյունից ու տեղափոխվել հիվանդանոց, տղերքը վերցրել էին գնդացիրը, պահել ու հետո վերադարձրել իրեն, ինչպես և մյուս զենքերը…

Մի անգամ մի տեղ կարդացել էր, որ գնդացրորդներն ամենադաժան մարդիկ են, որովհետև ամենաշատը նրանք են սպանում: Գուցե դա այդպես էր, միայն թե կար մի հան-

գամանք, որի մասին Պողոսը երբեք ոչ մեկի չէր ասել: Անգամ Աչոնին: Բանն այն է, երբ նա դիրքավորվում էր մարտերի ժամանակ ու սկսում կրակել թշնամու մարդուժի ուղղությամբ, փորձում էր կրակել ցածրից՝ այնպես, որ դիպչի զինվորների ոտքերին, վիրավորի նրանց, բայց չսպանի: Աբսուրդ էր գուցե, բայց դա այդպես էր, և դրա համար կար երկու պատճառ: Նախ, որքան էլ թշնամի, զինվորը զինվոր է, կռվում է իր հայրենիքի համար կամ, առնվազն՝ հրաման է կատարում, հաճախ առանց գիտակցելու ճիշտն ու սխալը, արդարն ու անարդարը: Պողոսն իհարկե շատ լավ գիտեր, որ «մի՛ սպանիր» պատվիրանը, խախտում է նվաճողական նպատակով պատերազմող երկիրը, և պաշտպանվող երկրի համար պատերազմի դաշտում սպանելը չի դիտվում որպես մարդասպանություն: Բայց և այնպես՝ Պողոսը Պողոսն էր: Իսկ երկրորդ պատճառն այն էր, որ հակառակորդին ոտքից վիրավորելը, Պողոսի համոզմամբ, ավելի արդյունավետ էր, քան սպանելը: Վիրավոր զինվորը մյուս զինվորների մոտ խնդիրներ է առաջացնում և ուշադրություն է շեղում:

Մի եղնիկ դուրս թռավ թփերի միջից: Կանգնեց մի պահ, նայեց ուղիղ Պողոսի աչքերին, կարծես ուզում էր հարցնել, թե այս ի՞նչ է կատարվում, ինչո՞ւ են խաթարում իր խաղաղ կյանքը, բայց փոշմանեց ու փախավ մի կողմ:

Պայթյունների ձայները ավելի ու ավելի մոտիկից էին գալիս, իսկ շուտով սկսեցին լսվել նաև կրակոցների ձայներ: Ուրեմն մոտակայքում մի տեղ մարտ էր ընթանում:

Անմիջապես էլ վերևում լսվեց մի հուժկու շառաչյուն, ու անտառի սաղարթի արանքից երևաց մի ինքնաթիռ: Այն շատ ցածր էր թռչում՝ կարծես դիպչելով ծառերի կատարներին: Տեսնես մե՞րն է, թե թշնամունը՝ մտածեց Պողոսը: Թշնամունն էր, և դա պիտի պարզվեր քիչ հետո:

Անտառն հանկարծակի ընդհատվեց և դիմացը բացվեց մի մարգագետին, ուր տեղ-տեղ փայլում էին հովտաշուշանների ճերմակ գլխիկները: Պողոսը սարսափելի հոգնել էր և որոշեց նստել մի քանի րոպե, հետո նոր հասկանալ, թե որ ուղղությամբ գնա: Բայց չհասցրեց ոչ նստել, ոչ էլ հասկանալ: Օդում կրկին հայտնվեց ինքնաթիռը: Առանց մի վայրկյան հապաղելու՝ Պողոսն ուսից իջեցրեց գնդացիրը և սկսեց կրակել: Ինքնաթիռն անցավ Պողոսի գլխավերևով և, վայրկյաններ անց լսվեց մի ուժեղ պայթյուն: Պողոսը նույնիսկ հասցրեց տեսնել ինքնաթիռից արձակված հրթիռը: Վազեց պայթյունի ուղղությամբ և զառիվերից ներքև տեսավ երեք Ուրալներ՝ մեկն ամբողջովին կրակի ճիրաններում:

Զինվորների մեծ մասը չէին կռահել կամ չէին հասցրել դուրս թռչել խփված բեռնատարի թափքից: Նրանք, որոնք հասցրել էին, հիմա ընկած էին զառիվերին՝ բեռնատարի չորսբոլորը:

Մյուս երկու ուրալները չէին վնասվել, բայց վարորդնե-

որը, փոխարենը քշեին դրանք ծառերի տակ, թողել էին այդ-պես, իջել էին խցիկից ու փախչում էին: Փախչում էին նաև զինվորները: Սարսափելի խառնաշփոթ էր:

Պողոսը վազեց դեպի գետնին ընկած զինվորները և սկսեց հերթով ստուգվել, թե ովքեր են կենդանի՝ հընթացս ձայնելով փախնողներին, որ վերադառնան ու օգնեն իրեն տեղափոխել վիրավորներին: Սակայն այստեղ էլ ոչինչ չհասցրեց անել. հնչեց մի շառաչյուն և Պողոսը տեսավ, թե ինչպես պայթեց քիչ այն կողմ կանգնած մյուս Ուրալը: Ուրիշ ոչինչ չտեսավ, սուր ցավ զգաց գլխին, բայց մինչ ուշագնաց լինելը հասցրեց հասկանալ երկու բան. նախ, որ դա հենց այն Ուրալն է, որին ինքը հանդիպել էր ժամեր առաջ՝ Մարտակերտում և որը չուներ հրամանատար և երկրորդը, որ հարվածողը ինքնաթիռը չէր, որովհետև վերևում ինքնաթիռ չերևաց: Հավանաբար անօդաչուն էր, այն նույն անօդաչուն, որն ընկել էր իր հետևից ժամեր առաջ:

Հետո ցավն անտանելի դարձավ և ուշագնաց ընկավ գետնին՝ ճերմակ հովտաշուշանների վրա:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ԱՉՈՆՆ ԱՆՀԱՆԳՍՏԱՆՈՒՄ

Արդեն վեց ժամ Աչոնը ոչ մի լուր չուներ Պողոսից: Վերջին անգամ նրա հետ խոսել էր առավոտյան և իրեն դուր չէր եկել Պողոսի տրամադրությունը:

- Հետևո՞ւմ ես լուրերին,- հարցրել էր Աչոնը,- կարծես

ամեն ինչ լավ է:

- Ինձ դուր չի գալիս այս ամենը,- արձագանքել էր Պողոսը:

- Բայց չէ՞ որ մենք հաղթում ենք,- զարմացել էր Աչոնը:

- Ուրախանում են և աղմկում են հաղթանակից հետո,- ասել էր Պողոսը,- մինչև հաղթանակը պետք է լուռ սպասել:

Հետո Պողոսի հեռախոսը դարձել էր անհասանելի: Սկզբում Աչոնն անհանգստացել էր, բայց հետո լրատվական կայքերից մեկում կարդացել էր հայկական երեք բջջային օպերատորների հաղորդագրությունը, որում ասվում էր. «Հայաստանյան օպերատորների և Արցախի օպերատորի հնարավորություններն ու բաժանորդների քանակն անհամատեղելի են: Ղարաբաղ Տելեկոմի կողմից զանգերի սպասարկումը դժվարացել է նաև այն պատճառով, որ նշանառության տակ են առնվել Արցախի միակ օպերատորի ցանցային ենթակառուցվածքները և մեր տվյալներով կրել այնպիսի վնաս, որի վերականգնումը պահանջում է ժամանակ, ինչպես նաև մարդկային և ֆինանսական լուրջ ռեսուրսներ»: Աչոնը որոշ ժամանակ հանգստացել էր, բայց մի քանի ժամից պարզվել էր, որ, որքան էլ անկանոն է կապը, միևնույն է զանգել հնարավոր է:

Ամենավատն այն էր, որ հստակ չգիտեր, թե որտեղ է Պողոսը: Ու ոչ մի միջոց չուներ ճշտելու: Բանն այն է, որ Պողոսի հետ իր երկամյա ծանոթության ընթացքում այդպես էլ չէր ճանաչել նրա և ոչ մի բարեկամի կամ ընկերոջ: Հետևաբար չկար մեկը, որից Աչոնը կարող էր ինչ-որ բան իմանալ: Այստեղ, ցավոք, չէին կարող օգնել նաև իր համաշխարհային կապերը, սա այդ դեպքը չէր: Եվ Աչոնին մնում էր միայն ուշադրությամբ հետևել լուրերին՝ հընթացս պարբերաբար զանգահարելով:

Ժամը երեքի կողմերը Պողոսի հեռախոսը միայն մի

պահ դարձավ հասանելի. զանգերը գնում էին, բայց Պողոսը չէր պատասխանում: Հետո դարձյալ կապը կորավ: Սա ավելի անհանգստացրեց Աչոնին:

Աչոնը երբեք չէր եղել Արցախում: Միշտ ուզեցել էր գնալ ու միշտ չէր ստացվել: Պատկերացում անգամ չուներ Արցախի տեղի ու տեսքի մասին: Ու երբ բացեց քարտեզը հասկացավ, որ Արցախն իր համար նույնքան անծանոթ է, որքան, ասենք՝ աֆրիկյան մի պետություն: Ու Աչոնն իրեն մեղավոր զգաց: Բայց դա հետո՝ մտածեց: Հիմա իրեն միայն Պողոսն էր հետաքրքրում: Ու այստեղ նորից իրեն մեղավոր զգաց: Որքա՜ն էգոիստ է ինքը. իսկ մնացածնե՞րը: Մնացած հազարավոր զինվորները, որոնք հիմա կռվի դաշտում են, հազարավոր խաղաղ բնակիչները, որոնք հիմա հրետակոծության տակ են: Մինչդեռ ինքը մտածում է միայն այն մեկի մասին, ով պարզվում է այդքան թանկ է իր համար:

Համակարգչի վրա բացած քարտեզից Աչոնն առանձնապես գլուխ չհանեց: Պաշտոնական լրահոսում հիմնականում հիշատակվում էին ռազմաճակատի հարավային և հարավարևելյան ուղղությունները: Այդտեղ թեժ մարտեր էին ընթանում և դարձյալ, ըստ պաշտոնական լրատվության՝ «ՊԲ ստորաբաժանումները առանձին հատվածներում հաջողությամբ իրականացնում են պատժիչ գործողություններ»:

Հավանաբար Պողոսն հենց այդտեղ է՝ մտածում էր Աչոնը, և մասնակցում է «պատժիչ գործողություններին»: Չէ որ պատժելը նրա մոտ լավ է ստացվում: Ուրեմն պետք չէ անհանգստանալ, մարտը բարով կավարտվի և Պողոսը կապի դուրս կգա:

Աչոնը հիշեց, որ իր ընկերուհիներից մեկի ամուսինը նախկին բարձրաստիճան զինվորական է: Որոշեց այնուամենայնիվ ճշտել նրանից, թե ճակատում ինչ վիճակ է:

Զանգահարեց ընկերուհուն, բայց նա ասաց, որ ամուսինը մեկնել է Արցախ:

- Իսկ ճիշտ է, որ մենք հաղթում ենք,- ակամայից հարցրեց Աչոնը:

- Ավելի լավ է՝ արի մեր տուն, կխոսենք,- ասաց ընկերուհին:

Աչոնն այդպես էլ արեց: Գնաց ընկերուհու տուն և գիշերը մնաց այնտեղ:

Մինչ այդ ամբողջ երեկոյի ընթացքում, մինչև ուշ գիշեր զանգում էր Պողոսին: Կապը վեականգնվել էր, զանգերը գնում էին, բայց Պողոսը չէր պատասխանում: Իսկ առավոտյան Աչոնի հեռախոսազանգին պատասխանեցին: Բայց պատասխանողը Պողոսը չէր.

- Դուք նրա ինչն եք,- հարցրեց տղամարդու մի խռպոտ ձայն:

- Ինչ է պատահել Պողոսին,- բացականչեց Աչոնը,- նա կենդանի՞ է:

- Վիրավոր է,- ասաց տղամարդը, ապա կրկնեց իր հարցը,- Դուք նրա ինչ եք:

- Կինը,- պատասխանեց Աչոնը՝ առանց մտածելու,- ինչ վիրավոր:

- Պողոսն ամուսնացել է,- զարմացավ տղամարդը,- ես չգիտեի:

- Այո, ամուսնացել է,- զայրացած նետեց Աչոնը,- նրա ինչն է վիրավոր, նա գիտակից է:

- Մի հուզվեք,- ասաց տղամարդը,- ամեն ինչ լավ կլինի:

- Նա գիտակից է,- կրկնեց Աչոնը,- դուք հիմա որտեղ եք:

- Հանգստացեք և լսեք,- ասաց տղամարդը քիչ ավելի կոպիտ,- ես նրա մարտական ընկերն եմ՝ հրամանատարը, իմ անունը Մելո է: Պողոսը բեկորային վիրավորում է ստա-

ցել՝ գլխի հատվածում: Հիմա մենք նրան տեղափոխում ենք Մարտակերտի հոսպիտալ: Ավելին ասել չեմ կարող:

Աչոնի հետ խոսող տղամարդը իսկապես Մելոն էր, այն նույն Մելոն, որի վաշտին պիտի միանար Պողոսը ճակատում և որը հրահանգել էր Պողոսին վաշտի համար կացարան գտնել Մաղավուզում:

Վաշտը Արցախ էր հասել սեպտեմբերի քսանութի երեկոյան: Գիշերն անցկացրել էր Ստեփանակերտում ու լուսաբացին մեկնել հյուսիսային ճակատ: Տոնաշեն չհասած Վարնկաթաղի մոտակայքում մարտի էր բռնվել թշնամու քառապատիկ ուժերի դեմ ու ստիպված էր եղել նահանջել: Նահանջի ճանապարհին անցնում էր անտառով, հենց այն անտառով, որտեղ պայթել էին Ուրալները և որտեղ վիրավոր ու անգիտակից ընկած էր Պողոսը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՉՈՆԸ ՍԿՍԵՑ ԱՊՐԵԼ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Փաստորեն, եթե առաջին պատերազմի ժամանակ Պողոսը վիրավորվել էր պատերազմի նախավերջին օրը, այս անգամ նա վիրավորվեց պատերազմի երկրորդ օրը: Եթե առաջին պատերազմի ժամանակ նա բեկորային վիրավորում էր ստացել գլխի աջ կիսագնդում, այս անգամ բեկորը դիպչել էր ձախ կիսագնդին: Եթե առաջին պատերազմի ժամանակ ստացած վիրավորումից նա կոմայի մեջ էր գտնվել մեկ տարի, այս անգամ դա տևեց մեկ ամիս: Եթե առաջին

պատերազմի ժամանակ ստացած վիրավորումից հետո ոչ ոք հույս չէր տալիս, որ Պողոսը կապրի, նույնն էր նաև հիմա: Բայց ինչպես առաջին պատերազմի ժամանակ, այնպես էլ հիմա, Պողոսը չմեռավ:

Մարտակերտի հոսպիտալից Պողոսին ՈՒԱԶ-ով տեղափոխեցին Ստեփանակերտ, Ստեփանակերտից՝ Շտապօգնության մեքենայով՝ Գորիս, Գորիսից՝ ուղղաթիռով Երևան:

Երբ Աչոնին վերջապես թույլ տվեցին մտնել նրա մոտ, Պողոսը կարծես հանգիստ քնած լիներ և, եթե չլիներ գլխի վիրակապը՝ Աչոնը նրա տեսքի մեջ ոչ մի փոփոխություն չէր գտնի:

Մինչ այդ Աչոնը հոգացել էր, որ Պողոսին հատկացնեն առանձին պալատ, ընդ որում՝ հիվանդանոցում լավագույնը: Ադմինիստրացիան ստիպված էր եղել այդտեղից հանել և ուրիշ պալատ տեղափոխել քիթը վիրահատած մի կնոջ, որն ասում էին ինչ-որ պաշտոնյայի սիրուհի է:

Պալատը երկսենյականոց էր՝ բաղկացած հիվանդասենյակից ու նախասրահից: Վերջինը, որ ավելի շատ հիշեցնում էր հյուրասենյակ, քան նախասրահ, տեղը տեղին կահավորված էր: Կար նաև օրինավոր լոգասենյակ և մի փոքրիկ խոռոչ պահարան, որն Աչոնը որոշեց օգտագործել իբրև զգեստապահարան: Բանն այն է, որ նա որոշել էր տեղափոխվել այստեղ ու մնալ այնքան ժամանակ, մինչ Պողոսը դուրս կգար կոմայից:

- Ե՞րբ ուշքի կգա Պողոսը,- հարցրել էր նա գլխավոր բժշկին:

- Ոչ ոք չի կարող ասել,- պատասխանել էր նա:

- Որքա՞ն է տևում կոման,- հետաքրքրվել էր Աչոնը:

- Կարող է տևել մի քանի օր, կարող է տևել մի քանի տարի,- բացատրել էր բժիշկը՝ թոթվելով ուսերը:

- Այնպես արեք, որ տևի մի քանի օր:

Հետո Աչոնը գնացել էր տուն ու սկսել էր հավաքել իրերը: Անկախ իրենից՝ երկար մտածել էր, թե ի՞նչ զգեստներ վերցնի, հետո երկար մտածել էր, թե ո՞ր ճամպրուկի մեջ դնի, հետո նոր անդրադարձել էր, որ գնում է ոչ թե կուրորտ, այլ՝ հիվանդանոց: Հետո երկար մտածել էր, թե ի՞նչ անի թութակի հետ ու որոշել էր վերցնել իր հետ:



Պողոսն այցելուներ չուներ. միայն քույրն էր գալիս օրը երկու անգամ, մի քիչ նստում եղբոր մահճակալի մոտ ու գնում: Պողոսի վիրավորվելու մասին նրան տեղեկացրել էր Աչոնը, և հաջորդ իսկ օրը քույրը եկել էր Երևան: Նա բոլորովին նման չէր Պողոսին՝ փոքրամարմին, նրբիկ կին էր՝ սիրուն ու տխուր աչքերով: Նա միշտ լուռ էր: Աչոնի բազմաթիվ փորձերը հետը զրույցի բռնվելու անհաջող էին անցնում:

Հետո սկսեցին գալ Աչոնի ընկերուհիները: Նրանցից մեկը սլավոնական արտաքինով չափազանց հրապուրիչ մի

կին առաջին անգամ ներս մտնելով պալատ՝ ասաց.

- Օ՛, սա հո հինգաստղանի հյուրանոց է:

Հետո, երբ իմացավ, որ Աչոնը պատրաստվում է երկար մնալ այստեղ, գրազ եկավ, որ նա երկու օրից ավել չի դիմանա: Գրազը պարտվելուց հետո, երրորդ օրը եկավ մրգերով ու քաղցրավենիքով լցված մի մեծ զամբյուղով: Աչոնը վերցրեց զամբյուղը, տվեց բուժքրոջը և խնդրեց պարունակությունը բաժանել վիրավոր զինվորներին: Դա էր ու դա. Աչոնի ընկերուհիները, սկզբում՝ երեք, հետո՝ հինգ, հետո՝ տասը, հետո՝ մի քանի տասնյակ հոգի, սկսեցին ամեն օր ընտիր մրգեր, հյութեր ու քաղցրավենիք բերել, և Պողոսի պալատը վերածվեց յուրօրինակ մի պահեստի, ուր Աչոնը առավոտից իրիկուն ապրանք էր ընդունում, տեսակավորում և բաժին առ բաժին հանձնում քույրերին, որ նրանք էլ իրենց հերթին փոխանցեն հիվանդանոցում բուժվող հարյուրավոր վիրավորներին:

Իսկ վիրավորներն ավելանում էին օր օրի, ավելի ստույգ՝ ժամ ժամի: Նրանց այստեղ էին բերում շտապօգնության մեքենաներով ու ուղղաթիռներով՝ հիմնականում բեկորային, տարբեր աստիճանի վիրավորումներով:

Մինչդեռ պաշտոնական լրատվությունը շարունակում էր պնդել, որ մենք հաղթում ենք:

«Հակառակորդը երկու հարյուր սպանված է տվել ու դիմել փախուստի»: «Հարավային ուղղությամբ խոցվել է թշնամու քսան միավոր տանկ և զրահամեքենա»: «Թշնամին կենդանի ուժի ու զինտեխնիկայի սարսափելի մեծ կորուստ է կրում»: «ՊԲ-ն գերազանց է կատարում իր առջև դրված առաջադրանքը»: «Մեր ռազմական ղեկավարությունը կատարելապես տիրապետում է իրավիճակին»: «Թշնամին Ջեբրայիլի մատույցներից ողջ գումարտակով դիմել է փախուստի»:

Ահա այսպիսին էին պաշտոնական լուրերի վերնագրերը:

Իսկ մեկ այլ պաշտոնական տեղեկություն ասում էր՝ «Թշնամու ռազմական օբյեկտներին հասցված հարվածներից հետո Ադրբեջանի տարբեր քաղաքներից մի քանի հարյուր հազար մարդ խուճապահար փախչում է դեպի Բաքու և թիկունքային այլ քաղաքներ»:

Բայց սա էլ դեռ ամենը չէր. պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչը իրեն թույլ էր տալիս զվարճանալ. «Տղեր՛ք, մի քիչ դանդաղ խփեք, չեմ հասցնում հաշվել թշնամու զգետնված անօդաչուները»: Կամ՝ «փախուստը ոմանց համար ազգային սպորտաձև է»:

Այսինքն մենք իսկապես հաղթում էինք: Եվ այստեղ՝ հիվանդանոցում, բոլորը՝ սանիտարից մինչև գլխավոր բժիշկ, ուզում էին հավատալ, որ դա այդպես է:

Միայն թե կար մի խանգարող հանգամանք. այլ բան էին պատմում վիրավորները…

Օրերն անցնում էին, անցնում էին նաև շաբաթները, բայց Պողոսն ուշքի չէր գալիս:

Աչոնն հաճախ էր զրուցում բժիշկների հետ: Նրան բացատրում էին, որ, չնայած նեյրովիրաբուժության և բժշկության այլ ճյուղերի ժամանակակից ձեռքբերումներին՝ գանգուղեղային վնասվածքի արդյունքում առաջացած կոման շարունակում է մնալ ոչ բավարար ուսումնասիրված և անկանխատեսելի երևույթ:

Բայց և այնպես տեղի ունեցավ հրաշքը:

Հոկտեմբերի քսանինն էր, օրը՝ հինգշաբթի: Ուղիղ մեկ ամիս Աչոնն ապրում էր այս հիվանդասենյակում, իրեն զրկել էր ամեն ինչից, չէր գնում ոչ մի միջոցառման, ընկերուհիների տեսնում էր բացառապես այստեղ, անգամ մարզասրահ չէր հաճախում: Միայն մի քանի օրը մեկ գնում էր տուն՝ անհ-

ռաժեշտ հագուստ և պարագաներ վերցնելու:

Երեկոյան եկել էր Պողոսի քույրը և հիմա նրա մոտ էր՝ սովորականի պես մահճակալի կողքը նստած: Աչոնը հեռուստացույց էր դիտում՝ ռուսական ալիքներից մեկով քննարկում էր արցախյան պատերազմի վերաբերյալ: Զուգահեռաբար ափի միջից կերակրում էր թութակին: Ու հանկարծ հիվանդասենյակից խոսակցության ձայներ լսվեցին: Աչոնը վեր թռավ բազմոցից վազեց ներս և տեսավ, որ Պողոսը բացել է աչքերը…

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԻՍԻՆ ԷՐ ԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՃԱԿԱՏՈՒՄ

- Կոմայում գտնվող պացիենտի վերականգնման հաջող ելքը կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ հարազատների ճիշտ մոտեցումից,- փորձեց բացատրել բժիշկը Աչոնին, այն բանից հետո, երբ բուժքույրերը մի կերպ հաջողացրին նրան հեռացնել Պողոսի մահճակալի մոտից:

- Բայց չէ՞ որ նա բացեց աչքերը:

- Աչքերը բացելը դեռ չի նշանակում կոմայից դուրս գալ:

- Բայց չէ՞ որ պետք է շփվել նրա հետ:

- Շփվել չի նշանակում այնպես գրկել պացիենտին, որ նա խեղդվի:

- Իսկ ե՞րբ նա կխոսի, բժիշկ, ե՞րբ վեր կկենա և առհասարակ՝ երբ կվերադառնա լիարժեք կյանք:

- Ես արդեն ասացի՝ դա կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում՝ Ձեր ճիշտ մոտեցումից:

Երբ Պողոսը խոսեց, առաջին հարցը, որ նա տվեց, սա էր.

- Որտեղ է գնդացիրս:

Դա երկու հազար քսան թվականի նոյեմբերի մեկին էր:

Ճակատում շարունակվում էին մարտերը, և պետական քարոզչամեքենան շարունակում էր հավաստիացնել, որ մենք հաղթելու ենք: Պաշտոնական լրատվության վերանգրերը մեկը մեկից հուսադրող էին. «Հարավային հատվածում որոշակի դիրքային բարելավումներ են իրականացվել»: «Թշնամին Հյուսիսում թողնելով տասնյակ դիակներ՝ հետ է շպրտվել»: «Գիշերվա ընթացքում ՊԲ ստորաբաժանումները ոչնչացրել են մեծ քանակությամբ թշնամական զինամթերք և մարդկային ուժ»: «Նոյեմբերի մեկին, թեժ մարտերի ժամանակ, որի ընթացքում հակառակորդը ջախջախվել է, վիրավորում է ստացել մեկ զինծառայող»: «Ողջ գիշերվա ընթացքում Ադրբեջանի զինված ուժերը ձեռնարկել են լայնածավալ հարձակման մի քանի փորձեր. բոլոր փորձեր ձախողվել են»…

Մի օր, երբ դեռ Պողոսը պառկած էր անգիտակից վիճակում, գեներալ ամուսնու հետ հիվանդանոց եկավ Աչոնի ընկերուհին: Գեներալը եկել էր այստեղ բուժվող իր մի վիրավոր ընկերոջը տեսակցության: Բայց Աչոնը Աչոն չէր լինի, եթե բաց թողներ նախկին բարձրաստիճան զինվորականի հետ խոսելու հնարավորությունը:

Գեներալը մտավ հիվանդասենյակ, որոշ ժամանակ կանգնեց Պողոսի մահճակալի մոտ ու ասաց.

- Ամուր տղամարդ է:

Հետո բավականին երկար զրուցեցին: Գեներալը նոր էր վերադարձել Արցախից ու չնայած ժլատ էր իր խոսքում ու փորձում էր շատ փակագծեր չբացել, այնուամենայնիվ նրա պատմածներից Աչոնը հասկացավ մի քանի բան:

Նախ, որ վարչապետը մեկուսացրել է բանակի ղեկավարումից բոլոր այն զինվորականներին, որոնք բարձր պաշտոններ են զբաղեցրել նախկին իշխանությունների օրոք ու հետո հավատարմության երդում չեն տվել իրեն կամ, այսպես ասած՝ չեն անցել իր թրի տակով: Ավելին՝ հրահանգել է շատերի հանդեպ քրեական հետապնդում իրականացնել: Իհարկե՝ ոչ մեկն էլ սուրբ չեն, մեծամասնությունն, իհարկե, իր պաշտոնավարման ընթացքում առնվազն չարաշահումներ արել է, բայց կա երկու հանգամանք. սուրբ չեն նաև նրանք, որոնք հավատարմության երդում են տվել վարչապետին ու ամենակարևորը՝ չէ՞ որ պատերազմ է:

Բայց վարչապետը ոչ միայն մանրախնդիր-քինախնդիր էր, այլ նաև պաթոլոգիկ ստախոս:

Երկրի ղեկավարը և նրա կամակատարները թաքցնում էին պատերազմի իրական պատկերը և անընդհատ խաբում էին ժողովրդին: Բայց դա անում էին ոչ թե նրա համար, որ, իբր, բարձր պահեն ժողովրդի ոգին, այլ որովհետև վախենում էին իրենց համար: Վարչապետը պատերազմի առաջին իսկ րոպեներից գիտեր, որ թուրք-ադրբեջանական տանդեմին հաղթելու հնարավորությունները չափազնց քիչ են, գիտեր, որ պետությունը չունի բավականաչափ ռեսուրս, գիտեր նաև, որ ինքն ու իր թիմակիցները ունակ չեն ղեկավարելու երկիրը և բանակը պատերազմի ժամանակ: Բայց նա, շատ լավ իմանալով այդ ամենը, ոչ միայն մի կողմ չքաշվեց, այլ իրեն հատուկ կամակորությամբ՝ մի կողմ թողեց նրանց, որոնք գոնե ունեին պատերազմ վարելու որոշակի հմտություններ: Բանակի կառավարումը մնաց դիլետանտների ձեռքում՝ գլխավոր դիլետանտի հրամանատարության ներքո: Արդյունքում էլ գոյացավ այն անկազմակերպ վիճակը, որը պատճառ դարձավ մեր անհաջողությունների և հազարավոր զոհերի:

Ահա այսպիսի բաներ իմացավ Աչոնը՝ գեներալի հետ զրույցից:

Իսկ Պողոսի գնդացիրը, ինչպես նաև մյուս զենքերը ապահով ձեռքերում էին: Դրանք մասնակցել էին մի քանի մարտերի և մի հիմնական, շատ կարևոր մարտի, որի արդյունքում արձանագրվել էր ողջ պատերազմի ընթացքում հազվադեպ հաջողություններից մեկը: Կամավորական վաշտը, որին պիտի միանար Պողոսը, ազատագրել էր մարտավարական կարևոր նշանակության մի բարձրունք: Մինչ այդ հրամանատար Մելոն հոգ էր տարել, որ Պողոսին տեղափոխեն Մարտակերտի հոսպիտալ, ինչպես նաև վերցնեն նրա զենքերը, թե նրանք, որ մոտն էին այդ պահին, թե նրանք, որ մնացել էին ռմբակոծությունից շրջված Նիվայում: Վերանորգվել էր նաև Պողոսի խակի գույնի Նիվան և ողջ պատերազմի ընթացքում ծառայել վաշտին:

Բայց այդ մասին Աչոնը չգիտեր և երբ Պողոսն ուշքի եկավ ու հարցրեց, թե որտ՞ղ է իր գնդացիրը նա չկարողացավ պատասխանել:

- Ուզո՞ւմ ես տեսնել թութակին,- ասաց փոխարենը,- նա այստեղ է:

- Որտե՞ղ՝ այստեղ,- հարցրեց Պողոսը:

- Հիվանդանոցում:

- Որտե՞ղի հիվանդանոցում:

- Երևանի:

- Պատերազմն ավարտվե՞լ է:

- Ոչ:

- Մենք հաղթո՞ւմ ենք:

- Ոչ:

Այդ պահին սենյակ թռավ թութակը և կրկնեց.

- Ոճ, ոճ, ոճ…

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՎԱՐՏՎԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ո՛չ Պողոսը, ո՛չ հիվանդանոցում բուժվող հարյուրավոր զինվորները այդպես էլ չհասկացան, թե ինչ տեղի ունեցավ այդ քառասուչորս օրերի ընթացքում: Չհասկացան նաև ճակատում մարտնչող հազարավոր զինվորները: Չհասկացան նաև թիկունքում նրանց սպասող մարդիկ՝ հայ ժողովուրդը:

Բայց հատկապես չհասկացան, թե ինչ տեղի ունեցավ պատերազմի վերջին օրը՝ նոյեմբերի իննին:

Ողջ օրվա ընթացքում պետական քարոզչամեքենան շարունակում էր իր պսևդոպաթետիկ աղաղակը. «ՊԲ-ն Բերձորի ուղղությամբ երեք թևերով անցել է գրոհի. հակառակորդն ունի զինտեխնիկայի և մարդուժի մեծ կորուստներ»:

Հետո Միասնական տեղեկատվական կենտրոնը հրապարակում էր թշնամու կորուստների մասին հերթական ամփոփագիրը՝ համաձայն որի ոչնչացվել էր երկու հարյուր վաթսունչորս ԱԹՍ, տասնվեց ուղղաթիռ, յոթ հարյուր ութսունչորս տանկ, վեց ՏՈՍ: Ըստ նույն ամփոփագրի՝ թշնամին ուներ յոթ հազար վեց հարյուր երեսուն զոհ:

Հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պաշտոնական ներկայացուցիչը իր ֆեյսբուքյան էջում գրում էր. «Գյոռբագյոռ երկու հազար քսան. չմոռանանք պատմության համար»:

Հետո դարձյալ հաղթական վերնագրեր. «Հակառակորդը փախուստի է դիմում Բերձորի լեռներից»: «Ուղղակի վստահենք բանակին. վստահենք ու սպասենք»: «Քարինտակի ուղղությամբ հայտնաբերված խմբավորումը ոչնչացվում է»:

Առանձին լրահոսով անցնում էր Շուշին: Դեռ երկու օր առաջ, մարդիկ, որոնք ահազանգում էին, թե թշնամին Շուշիի մոտակայքում է՝ պիտակավորվում էին որպես սադրիչներ: Իսկ առաջին պատերազմի մի լեգենդար հրամանատարի, որը համարձակվել էր դեռ մեկ շաբաթ առաջ ասել, որ թշնամին Շուշիից ընդամենը հինգ կիլոմետր հեռավորության վրա է՝ անարգանքի սյանը գամեցին և հոչակեցին դավաճան: Մինչդեռ հիմա պաշտոնական տեղեկատվությունն ասում էր. «Սպասենք Շուշիի ճակատամարտի ավարտին, որը վստահ ենք՝ մեր զորքը փառքով է ավարտելու»: «Շուշիի մոտակայքում հակառակորդը կորուստներ կրելով նահանջել է»: «Շուշիի մերձակայքում մարտերը շարունակվում են. ՊԲ-ը հաջողությամբ կատարում է իր առջև դրված խնդիրը»: «ՊԲ ստորաբաժանումները վճռականորեն պաշտպանում են Շուշին»:

Ու հանկարծ, իրարից հինգ րոպե տարբերությամբ՝ երեկոյան ժամը տասնինն անց տասը և տասննինն անց տասնհինգ, հրապարակվում են Արցախի և Հակաստանի ղեկավարների գրառումները:

Առաջինում ասվում էր. «Սիրելի՛ հայրենակիցներ, պատերազմական գործողությունները հանրապետության ողջ ճակատով շարունակվում են: Պաշտպանության բանակը և աշխարհազորն ամուր կանգնած են հայրենի հողի վրա, և թշնամու դեմ մեր պայքարը վարելու ենք մինչև վերջ: Մեզնից յուրաքանչյուրը պետք է ամուր կանգնի իր դիրքերում, և դրական արդյունքը երաշխավորված կլինի: Ես հավատում եմ»:

Երկրորդն ավելի լակոնիկ էր. «Շուշիի համար մարտերը շարունակվում են»:

Դրանից հինգ ժամ հետո նույն այդ երկու անձնավո-

ությունները, հակառակ հերթականությամբ, բայց նույն ինտերվալով՝ տարածեցին հետևյալ հայտարարությունները.

«Անձամբ իմ և բոլորիս համար ծանր, չափազանց ծանր որոշում եմ կայացրել: Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահների հետ ղարաբաղյան պատերազմը դադարեցնելու մասին հայտարարություն եմ ստորագրել: Հայտարարության տեքստը անասելի ցավոտ է անձամբ ինձ և մեր ժողովրդի համար: Այդ որոշումը կայացրել եմ ռազմական իրադրության խորը վերլուծության և այդ իրադրությանը ամենալավը տիրապետող մարդկանց գնահատականի արդյունքում: Նաև հիմնվելով այն համոզմունքի վրա, որ ստեղծված իրավիճակում սա հնարավոր ամենալավ հանգուցալուծումն է…»: Սա Հայաստանի վարչապետի հայտարարությունն էր:

«Այսօր ամբողջ օրը ՀՀ վարչապետի հետ քննարկել ենք պատերազմական գործողությունների դադարեցմանն ուղղված մեր անելիքները: Հաշվի առնելով ներկա ծանրագույն վիճակը և խուսափելու համար հետագա մարդկային մեծաքանակ կորուստներից և Արցախն ամբողջությամբ կորցնելուց, ես տվել եմ իմ համաձայնությունը ժամ առաջ դադարեցնելու պատերազմը»: Սա Արցախի նախագահի հայտարարությունն էր:

Պողոսը, հիվանդանոցում բուժվող հարյուրավոր վիրավորները, ճակատում դեռ մարտնչող հազարավոր զինվորները, թիկունքում նրանց սպասող ժողովուրդը ապարդյուն փորձում էին հասկանալ, թե ինչպես է լինում, որ դեռ հինգ ժամ առաջ հայկական երկու պետությունների ղեկավարները կոչ են անում ամուր կանգնել դիրքերում՝ երաշխավորելով դրական արդյունք ու հետո պարզվում է, որ ողջ օրվա ընթացքում նրանք միասին քննարկել են պատերազմական գործողությունները դադարեցնելուն ուղղված իրենց անե-

լիքները և, ծանրագույն վիճակը հաշվի առնելով, որոշել են գնալ կապիտուլյացիայի…

Ինչպե՞ս է լինում, որ ողջ պատերազմի ընթացքում իրենց վստահեցնում էին, որ մեր բանակը հաղթում է, որ մենք ոչ մի սանտիմետր չենք զիջում թշնամուն ու հանկարծ պարզվում է…

ՊՈՂՈՍՆ ՈՒ ՃԻԿՈԼԸ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ.

2021 - 2023

2

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ԷՐ ՄՏԱԾՈՒՄ ՊՈՂՈՍԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԱՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Ժողովրդի ցասումը արտահայտվեց նոյեմբերի լույս տասի ամբողջ գիշեր, հետագա օրերին, շաբաթներին, հետո աստիճանաբար մարեց, նորից բորբոքվեց, նորից մարեց ու բորբոքվեց, հետո նորից ու նորից՝ մինչև երկու հազար քսանմեկ թվականի հունիս, երբ պարզվեց, որ դա բոլորովին էլ ժողովրդի՛ ցասումը չէր:

Մինչ այդ ու դրանից հետո տեղի ունեցան նաև մի շարք հետաքրքիր դեպքեր, որոնք, սակայն, հայտնի չդարձան հասարակության ոչ լայն, ոչ էլ նեղ շրջանակներին: Այդ դեպքերի մասին մենք կպատմենք այս գրքում և ընթերցողը թող ինքը որոշի՝ հավատալ դրանց ճշմարտացիությանը, թե՝ ոչ:

Բայց նախ՝ ժողովրդի ցասման մասին:

Կապիտուլյացիային հաջորդած առաջին իրադարձութ-



յուններին Պողոսն ու Աչոնը հետևեցին հիվանդասենյակից: Նախ նրանք տեսան, թե ինչպես է մարդկային ամբոխը «գրավում» կառավարության, ապա՝ խորհրդարանի շենքերը:

Եվ ահա, թե ինչ էր մտածում Պողոսն այս մասին. եթե այդ մարդկանց մեծամասնությունը լինեին ծերունիներ, կանայք ու պատանիներ, եթե այդ մարդիկ լինեին նրանք, որոնք զավակ էին կորցրել պատերազմում կամ այն վիրավորները, որոնք հիմա այս և մյուս հիվանդանոցներում էին՝ ամեն ինչ գուցե ճիշտ լիներ և հասկանալի: Բայց այդ մարդկանց մեծամասնությունը երիտասարդ տղամարդիկ էին… Տղամարդիկ, որոնք հարձակվել էին պետական հաստատությունների վրա, որոնք դատարկ էին: Տղամարդիկ, որոնք, անշուշտ որոշակի բացառություններով, չէին պաշտպանել իրենց պետության լիությունը ու հիմա հարձակվել էին նույն այդ պետության դատարկության վրա:

Իսկ նրանք, որոնք պետք է այդ պահին լինեին այդ դատարկ շենքերում՝ հայտնի չէ, թե որտեղ էին: Պետական կառավարման ապարատը ողջ կազմով անցել էր բառի բուն իմաստով՝ ընդհատակ: Բառի բուն իմաստով ընդհատակում էր նաև պետության ղեկավարը:

Հետո եղավ պետության առաջին դեմքի խոսքն ընդհատակից:

Ավելի ճիշտ՝ դա խոսք չէր, այլ՝ վնգստոց, ոռնոց, կաղկանձ…

Մինչ այդ պետության երկրորդ դեմքին ամբոխը շանսատակ էր արել փողոցում:

Արժանի՞ էին այդ մարդիկ՝ առաջին, երկրորդ և երրորդ դասի իշխանավորները, որ իրենց շանսատակ անեին: Անշուշտ՝ արժանի էին: Սակայն ճի՞շտ էր արդյոք այս ձևը՝ շանսատակ անել՝ առանց դատ ու դատաստան:

Պողոսն, իհարկե համաձայն էր, որ երկիրն այս վիճակին հասցրած իշխանությունները պետք է պատժվեն: Սակայն շատ կարևոր էր, թե ինչպես:

Ամենաճիշտ ճանապարհը, բնականաբար, ժողովրդական պայքարով նրանց հրաժարական պարտադրելն էր, այնուհետև պատժի չափն ու տեսակը դատարանին թողնելը: Եթե դա հնարավոր չէր՝ իսկ Պողոսն համոզված էր, որ դա հնարավոր չէր, առավել ևս հնարավոր չէր քաղաքական ճանապարհով՝ այսինքն ընտրությունների միջոցով, իշխանություններին հեռացնելը, ապա մնում էր վերջին տարբերակը: Միայն թե այդ վերջին տարբերակը ոչ մի կերպ ամբոխի դատաստանը չէր:

Չափազանց կարևոր էր նաև, թե ո՞րն էր երկիրը կործանման եզրին հասցրած իշխանություններին պատժելու իմաստը: Եթե նրանց պատժելու իմաստը երկրի կործանման ընթացքը կասեցնելն էր, առավել ևս՝ ամենաճիշտը քաղաքական ճանապարհն էր: Եթե նրանց պատժում էիր պատժելու համար՝ կարելի էր դիմել ցանկացած միջոցի, բայց կրկին ոչ ամբոխի դատաստանին:

Որովհետև հավասարապես կարևոր էր, թե ով է պատժողը՝ ունե՞ր դրա բարոյական, մարդկային, բնական իրավունքը, քանի որ իրավական իրավունքը հասկանալի էր, որ չուներ:

Բայց և այնպես, գետնին ընկած մարդուն հարյուր հոգով քացով խփելը, եթե անգամ այդ մարդը դավաճան է ու վերջին սրիկան, ոչ մի կերպ արդարացված չէ, անգամ հաշվի առնելով խփողների էմոցիոնալ վիճակը:

Ահա թե ինչ էր մտածում Պողոսը:

Ինչպես արդեն ասվեց վերևում, Պողոսը նաև համոզված էր, որ ո՛չ ժողովրդական, ո՛չ, առավել ևս՝ քաղաքական

պայքարը հաջողությամբ չեն պսակվելու:

Պատերազմում պարտված իշխանությունները, առավել ևս՝ այն իշխանությունները, որոնք իրենք են բերել այդ պատերազմը, պետք է հեռանան: Պետք է հեռանան անմիջապես, որովհետև նրանց հետագա պաշտոնավարման ամեն մի օրը աշխատելու է երկրի դեմ:

Սակայն նրանք դա չէին անելու:

Չէին անելու, որովհետև իրենց հետագա պաշտոնավարման ամեն մի օրը աշխատելու էր երկրի դեմ, բայց, որքան, որ ցավալի է՝ իրենց օգտին:

Դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ այդպես էլ եղավ:

Սակայն այստեղ հարկ է անդրադառնալ նրան, թե ինչու էր Պողոսը համոզված, որ ո՛չ ժողովրդական, ո՝չ էլ քաղաքական պայքարը հաջողությամբ չեն պսակվելու:

Դարձյալ խնդիրն ամբոխն էր. ամբոխային մտածողությունը, ամբոխային մոտեցումը: Ընդ որում այդ մտածողությամբ ու մոտեցմամբ էին առաջնորդվում թե՛ ինքը՝ ամբոխը, թե՛ այն քաղաքական ուժերը, որոնք ունեին որոշակի ազդեցություն օրվա իրականության մեջ:

Եվ կար վերջին, ըստ Պողոսի՝ ամենակարևոր գործոնը. ամեն ինչ, ավա՜ղ կարգավորում էր բոլորովին ուրիշ տեղերից՝ Երևանից և ճակատից երկու հազար կիլոմետր դեպի Հյուսիս: Ամեն ինչ՝ թե իշխանությունների, թե ամբոխին առաջնորդողների գործողությունները: Եվ կարգավորվում էր այնպես, որ առաջինները մնան կամակատարներ, իսկ երկրորդները ոչ մի կերպ չկարողանան հասնել նրան, որ ամբոխը վերածվի ժողովրդական հոծ զանգվածների:

Եվ, անշուշտ, դրա հետևանք պիտի լինեին թե՛ «ժողովրդի փրկության շարժման», թե՛ դրան հաջորդած բոլոր մյուս

շարժումների, թե՛ արտահերթ խորհրդարանական ընտրություններում ձախողման պատճառները:

Սակայն, մենք կարծես շատ առաջ ընկանք, որովհետև մինչ այդ, ինչպես արդեն ասացինք, տեղի ունեցան մի շարք դեպքեր. մասնավորապես կոտրվեցին մի շարք քթեր, որոնք բոլորը պատկանում էին այն մարդկանց, կամ ավելի ճիշտ է ասել՝ կենդանիներին, որոնք իրենց գործողություններով կամ կեցվածքով նպաստեցին այն ամենին, ինչ տեղի ունեցավ հայ ժողովրդի հետ երկու հազար տասնութ թվականի հեղափոխությունից հետո:

Բայց, ամեն ինչի մասին՝ հերթով:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ, ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ԿՈՏՐՎԵՑ ԱՖՖԵՆՊԻՆՉԵՐԻ ՔԻԹԸ

Եթե հիշում եք՝ դեռ պատերազմից առաջ, ամռանը Պողոսն ու Աչոնը ծրագրել էին մի գործողություն, որի ընթացքում պիտի պատժվեր ոմն Աֆֆենպինչեր, բայց փոխարենը պատժվեց ոմն սև անգղ:

Այնուամենայնիվ՝ հիշեցնենք: Խոսքն այն պատգամավորի մասին է, որը հեղափոխության օրերին սովորություն ուներ բռնել հեղափոխության առաջնորդի տարբեր պարագաները: Պողոսը նրան նմանեցնում էր գրպանի շան՝ Աֆֆենպինչերի: Սույն կենդանին պիտի պատժվեր Երևանի Ազնավուրի հրապարակի մի սրճարանում: Բայց նրա փոխարեն պատժվեց նախկին իշխանությունների մի ներկայա-

ցուցիչ, որին Պողոսը նմանեցնում էր լեշակերի՝ սև անգղի: Սույն թռչունը չափազանց անժամանակ հայտնվել էր նույն այդ սրճարանում, որի արտաքնոցում էլ Պողոսը ջարդեց նրա կտուցը:

Հավանաբար հիշում եք նաև, որ վիրավորվելուց և Երևան տեղափոխվելուց հետո Պողոսի համար Աչոնը հոգացել էր հիվանդանոցի այսպես ասած՝ լյուքս պալատը, ինչի արդյունքում այստեղից ուրիշ պալատ էր տեղափոխվել քիթը վիրահատած ոմն գեղեցկուհի, որը, ըստ չար լեզուների, ինչ-որ հայտնի պաշտոնյայի սիրուհին էր:

Ինչ կապ ունի մեկը մյուսի հետ՝ կհետաքրքրվի ընթերցողը: Ամենաուղղակի: Պարզվեց, որ այդ պաշտոնյան Աֆֆենպինչերն էր:

Միայն թե Պողոսն անմիջապես չճանաչեց նրան: Երբ հիվանդանոցից դուրս գրվելուց մտավ գլխավոր բժշկի սենյակ, որ շնորհակալություն հայտնի իր կյանքը փրկելու համար, այնտեղ տեսավ կեպիով ու շագանակագույն ակնոցներով մի տղամարդու՝ բժշկական դիմակը դեմքին: Ոզում էր ներողություն խնդրել, դուրս գալ ու դրսում սպասել, մինչ գլխավոր բժիշկը կազատվի, բայց վերջինս չթողեց.

- Ահա և մեր հերոսը,- ասաց նա՝ ոտքի կանգնելով,- համեցեք, համեցեք:

Բայց Պողոսն առաջ չգնաց.

- Սխալ է ինձ հերոս ասել. ես կսպասեմ դրսում:

- Մի րոպե,- կանգնեցրեց նրան գլխավոր բժիշկը,- իհարկե Դուք հերոս եք, համեստություն մի արեք: Դուք վիրավորվել եք մարտի դաշտում…

Նա ուզում էր շարունակել, բայց Պողոսը չթողեց.

- Դա այնքան էլ այդպես չէ: Ես կսպասեմ ընդունարանում:

- Բայց ես ուզում էի Ձեզ ծանոթացնել մեր հարգարժան…

Սակայն Պողոսն արդեն փակել էր դուռը:

Նա տեղավորվեց կաշվե բազմոցին, ու սկսեց թերթել բժշկական մի ամսագիր: Ընդունարանում մարդ չկար: Քիչ անց ներս մտավ քարտուղարուհին՝ ձեռքին պլաստմասե մի մեծ ցնցուղ ու, առանց Պողոսի վրա ուշադրություն դարձնելու, սկսեց ջրել պատուհանագոգին շարված բույսերը: Հետո մտավ շեֆի աշխատասենյակ, ուր հավանաբար նույնպես ծաղկամաններ կային:

Ինչպես արդեն բազմիցս ասվել է այս գրքում՝ Պողոսը չափազանց քաղաքավարի մարդ էր: Նա երբեք իրեն թույլ չէր տա ականջ դնել ուրիշների խոսակցությանը: Սակայն, բանն այն է, որ շեֆի աշխատասենյակ մտնելով, քարտուղարուհին մի փոքր բաց էր թողել դուռը և պարզ լսվում էր, թե ինչ են խոսում գլխավոր բժիշկն ու նրա հյուրը:

- Նա չտեսնված աղջիկ է, հասկանո՞ւմ եք. գիտե՞ք ինչպես է պարում:

- Պատկերացնում եմ, բայց…

- Ու հետո էլ՝ նախորդ անգամվանից ձեր հիվանդանոցը ինձ պարտք է մնացել. իմ մյուս ընկերուհուն դուք հանեցիք լյուքս պալատից:

- Ես Ձեզ արդեն բացատրել եմ, որ…

- Մի խոսքով՝ մի բան արեք:

- Հայաստանում կա պլաստիկ վիրաբուժության մասնագիտացված հիվանդանոց: Գլխավոր բժիշկն իմ ընկերն է: Ես կարող եմ…

- Ես արդեն ասացի, որ նա այստեղ է ուզում վիրահատվել: Դուք երևի լավ չեք հասկանում:

- Հասկանում եմ, բայց Դուք էլ հասկացեք, հիմա հի-

վանդանոցում կա մոտ հինգ հարյուր վիրավոր, նրանք…

- Պատերազմը վերջացել է: Պետք է ապրել հետագա կյանքով: Ու հետո էլ այդ վիրավորները…

Սակայն վերջին նախադասությունը կիսատ մնաց, որովհետև այդ պահին աշխատասենյակից դուրս եկավ քարտուղարուհին և փակեց դուռը:

- Ո՞վ է այդ մարդը,- հարցրեց Պողոսը քարտուղարուհուն:

- Ինչպե՞ս թե՝ ով է,- այնպես զարմացավ քարտուղարուհին, կարծես թե շեֆի սենյակում ոչ այլ ոք էր, քան Հռոմի Պապը,- Դուք նրան չե՞ք ճանաչում:

- Ոչ:

- Նա վարչապետի ամենամոտ մարդկանցից է, Ազգային ժողովի պատգամավոր, ճիշտն ասած…- այստեղ քարտուղարուհին կմկմաց,- ճիշտն ասած անունը չեմ հիշում. դե, նա, որը բռնում էր վարչապետի…

Որքան էլ, որ զարմանալի է՝ առաջին բանը, ինչի մասին մտածեց Պողոսը, երբ հասկացավ, թե ում մասին է խոսքը, այն էր, որ Աչոնի հնարավորությունները փաստորեն այնքան մեծ են, որ նա կարողացել էր իր համար ազատել լյուքս պալատն այն դեպքում, երբ այնտեղ պառկած էր այս կենդանու սիրուհին: Իսկ կենդանին, այդ, ինչպես արդեն հասկացաք, Աֆֆենպինչերն էր:

- Նրա անունը Աֆֆենպինչեր է, ասաց Պողոսը քարտուղարուհուն:

- Ի՞նչ,- զարմացավ քարտուղարուհին:

- Աֆֆենպինչեր,- կրկնեց Պողոսը:

- Դե ոչ,- քարտուղարուհին փորձեց հիշել,- ինչ-որ ուրիշ անուն էր՝ հայկական:

- Ձեզ մոտ դիմակ կա՞,- անսպասելի հարցրեց Պողոսը:

Բանն այն է, որ նա արդեն որոշել էր, թե ինչ է անելու,

չնայած չէր որոշել, թե՝ որտեղ: Միայն ոչ գլխավոր բժշկի աշխատասենյակում:

Ըստ իրավիճակի՝ մտածեց Պողոսը, վերցրեց քարտուղարուհու մեկնած դիմակը և դուրս եկավ միջանցք:

Քիչ անց դուրս եկավ նաև Աֆֆենպինչերը: Նա խոսում էր հեռախոսով՝ ռուսերենով դիմելով ինչ-որ մեկին, հավանաբար նրան ում վիրահատության համար քիչ առաջ միջնորդում էր գլխավոր բժշկին:

Պողոսը քայլեց նրա հետևից: Անցան երկար միջանցքով և հասան սպասասրահ, որտեղ վերելակներն էին: Այստեղ մի փոքր հերթ էր. վերելակին էին սպասում մի քանի կանայք և մի վիրավոր զինվոր՝ անվասայլակի վրա նստած: Աֆֆենպինչերը դեռ խոսում էր հեռախոսով՝ երջանիկ ժպիտը դեմքին: Երբ վերելակի դռները բացվեցին՝ նա իրեն առաջ նետեց՝ չզիջելով ոչ կանանց, ոչ անվասայլակով վիրավորին:

Ներսում տեղը նեղ էր, և Պողոսը հասկացավ, որ բռուցքով կարգին հարվածել չի ստացվի: Բայց հոգ չէր, կար այլ տարբերակ:

Ինչպես արդեն առիթ ունեցել էնք հիշատակել այս գրքում՝ Պողոսը ոչ միայն քաղաքավարի մարդ էր այլ նաև՝ չափազանց պատասխանատու: Նա հիշում էր, որ համաձայն Աչոնի հետ կազմած գործողությունների պլանի, սրիկաների քթերը կոտրելուց և ականջները քաշելուց զատ, նրանց պետք էր ստիպել արտաբերել որոշակի բառեր և այդ ամենը նկարահանել հեռախոսով: Սակայն կար երկու խնդիր. Պողոսը նկարել չգիտեր և ժամանակը խիստ սուղ էր, վերելակը շուտով կհասներ զրո հարկ: Բայց մեր հերոսը շատ արագ կողմնորոշվեց:

Նախ նա սեղմեց վերելակի «կանգ առ» կոճակը, ապա

գրպանից հանեց հեռախոսը և մեկնեց կանանցից համեմատաբար երիտասարդին.

- Խնդրում եմ նկարեք,- ասաց:

- Ի՞նչը նկարեմ,- վախեցած հարցրեց կինը:

- Հիմա կտեսնեք:

Պողոսը գլխով հարվածեց պատգամավորի ուղիղ քթին՝ տապալելով նրան գետնին: Հետո բռնեց ձախ ականջից, վեր հանեց ու ասաց.

- Քեզ չե՞ն սովորեցրել, որ կանանց պետք է զիջել:

Աֆֆենպինչերն ինչ-որ մխգստոցներ էր արձակում: Պողոսն ավելի ուժեղ քաշեց նրա ականջն ու կարգադրեց.

- Իսկ հիմա կրկնիր հետևյալը. «Ես՝ Ազգային ժողովի պատգամավոր այսինչ այսինչյանս հայտարարում եմ, որ անդաստիարակ, վախկոտ սրիկա եմ, իսկ իմ առաջնորդը վախկոտ ստախոս է ու հոգեկան հիվանդ»:

Աֆֆենպինչերն արդեն ոռնում էր ցավից: Պողոսը, շա-

ռունակելով բռնած պահել նրա ականջը, մի անգամ էլ հարվածեց քթին այս անգամ բռունցքով ու գոռաց.

- Կրկնիր:

Աֆֆենպինչերը կրկնեց:

Հետո Պողոսն ուզում էր ներողություն խնդրել ներկաներից, բայց պարզվեց, որ դրա անհրաժեշտությունը չկա: Բոլորը ոգևորված ծափ էին տալիս:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՊՈՂՈՍԸ «ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿՈՒԹՅԱՆԸ»

Հիվանդանոցից դուրս գրվելուց հետո Պողոսն ուղիղ մեկ ամիս անցկացրեց տանը: Բժիշկների ցուցմամբ նա պետք է անցներ ինտենսիվ ռեաբիլիտացման փուլ, որը ոչ մի կերպ չէր ենթադրում որևէ ակտիվություն: Բժիշկներն՝ իհարկե, չգիտեին որ հիվանդանոցից դուրս գրվելու օրը Պողոսն այնպիսի ակտիվություն է ցուցաբերել, որ արդյունքում կոտրվել է Ազգային ժողովի մի պատգամավորի քիթը:

- Այս անգամ վախենամ քեզ չօգնեն ոչ «գժի թուղթը», ոչ էլ իմ կապերը,- ասաց Աչոնը, երբ մեքենայով հիվանդանոցից տուն էր տանում Պողոսին,- այդ գրպանի շունը անպայման տեղյակ կպահի իր տիրոջը:

- Ոչ,- հանգիստ պատասխանեց Պողոսը,- տեղյակ չի պահի:

Եվ Աչոնին մեկնեց հեռախոսը:

- Դու նկարե՞լ ես,- ուրախացավ Աչոնը:

- Ինչպես կարող էի նկարել, երբ մի ձեռքով բռնել էի նրա ականջը, մյուսով ջարդում էի քիթը:

- Այդ դեպքում...

- Ես չեմ նկարել, բայց խնդրել եմ նկարել վերելակով մեզ հետ իջնող մի կնոջ:



- Իսկ նա տեսա՞վ, որ իրեն նկարում են:

- Իհարկե տեսավ: Ավելին՝ ես ստիպեցի, որ նա արտահայտվի իր տիրոջ հասցեին՝ տեսախցիկին նայելով:

Հետո արդեն տանը Աչոնը երկար քրքրեց Պողոսի հեռախոսը, բայց այդպես էլ այնտեղ ոչ մի վիդեո չգտավ: Այն կինը, փաստորեն, կամ չէր ուզեցել, կամ չէր կարողացել նկարել: Բայց դա կարևոր չէր: Կարևորն այն էր, որ այդ մասին տեղյակ չէր Աֆֆենպինչերը, հետևաբար ոչ մի դեպքում չէր դիմի ոստիկանություն՝ վախենալով, որ ի հայտ կգա այն վիդեոն, որի մեջ ինքը վերջին բառերն է ասում իր տիրոջ հասցեին: Իհարկե, վիդեոն կարող էր առանց դրա էլ ի հայտ գալ, բայց միևնույն է, պատգամավորն ինքը հազիվ թե դրա համար լրացուցիչ առիթ տար:

- Քանի որ այս գործողությունը հանպատրաստից էր, կարելի է շատ չտխրել, որ այն չնկարահանվեց,- ասաց Պողոսը,- կարևորը, որ պատժվեց ևս մի սրիկա: Բայց մյուս գործողություններն անպայման պետք է անել ըստ մեր ծրագրածի:

- Ինչ նոր գործողություն,- զարմացավ Աչոնը,- բժիշկներն ասել են, որ դու պետք է առնվազն մեկ ամիս վերականգնվես և որևէ տեսակի ակտիվություն չցուցաբերես:

- Ուրեմն, կսպասենք մեկ ամիս:

Եվ ահա, ուղիղ մեկ ամիս Պողոսը տանն էր:

Եվ գուցե լավ էր, որ տանն էր: Որովհետև դրսում մոլեգնում էր «Հայրենիքի փրկությոն շարժումը»: Իսկ Պողոսն այլ կերպ էր պատկերացնում Հայրենիքի փրկությունը: Ու, ավա՜ղ, չէր հավատում «Հայրենիքի փրկության շարժմանը»:

Նա համոզված էր, որ այս շարժման նպատակն ընդամենը հայրենիքը Ճիկոլից փրկելն է: Ինչ խոսք, դա էլ մեծ բան էր, բայց ի՞նչ էր լինելու հետո: Կա՞մ արդյոք ծրագիր: Կա՞մ արդյոք առաջնորդ:

Վերջինը, պարզվեց, որ կար: Տասնյոթ կուսակցությունների ֆորմատը հայտարարել էր վարչապետի պաշտոնի համար իր միասնական թեկնածուի անունը: Նա այն կոմպրոմիսային թեկնածուն էր, որի ժամանակավոր վարչապետ նշանակվելուն համաձայնել էին «Հայրենիքի փրկության շարժման» մասնակից քաղաքական ուժերը:

Այդ մարդու հանդեպ Պողոսի վերաբերկունքը բավականաչափ դրական էր: Պողոսը գիտեր, որ նա պարկեշտ մարդ է ու քաղաքականապես հասուն: Չնայած Ճիկոլի համեմատ, ով էլ լիներ շարժման առաջնորդը՝ նրան կարելի կլիներ համարել պարկեշտ և քաղաքականապես հասուն:

Շարժման առաջնորդի առաքելությունը պետք է լիներ արտահերթ ընտրությունների կազմակերպումը մեկ տարի անց՝ պայմանով, որ ինքը կամ իր ղեկավարած քաղաքական ուժը չի առաջադրվելու այդ ընտրություններում:

Եթե իսկապես ստացվեր, ընդդիմությունը հաջողեր իշխանափոխությունը և միասնական թեկնածուն հնարավորություն ստանար ղեկավարել երկիրը թեկուզ և մեկ տարով, դա կլիներ արդարության յուրօրինակ վերականգնում: Չէ՞ որ հեռավոր հազար ինը հարյուր իննսունվեց թվականին, երբ անկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կեղծվեցին նախագահական ընտրությունները, նա գործող նախագահի հիմնական մրցակիցն էր: Սակայն, ընտրությունները կեղծվեցին, Հայաստանի առաջին նախագահը չօգտագործեց իրեն ընձեռնված բացառիկ հնարավորությունը՝ իսկապես ազատ, արդար և դեմոկրատական պետություն կառուցելու, հետո իրար հետևից ասպարեզ բերեց Հայաստանի Հանրապետության հաջորդ երեք ղեկավարներին, որոնք, ամեն մեկն իր չափով պիտի խոչընդոտեին ազատ և արդար պետության կայացմանը: Նրանցից վերջինի չափա-

բաժինն, իհարկե, այստեղ անհամեմատելի էր:

Բայց և այնպես, Պողոսը համոզված էր, որ ոչինչ չի ստացվելու, որ Ճիկոլը շարունակելու է պաշտոնավարել: Առնվազն այնքան ժամանակ, մինչև կյանքի կկոչի այն ամենը, ինչի շուրջ պայմանավորվել է դաշնակից Ռուսաստանի և թշնամի Ադրբեջանի նախագահների հետ: Թե ինչ էր պայմանավորվել Ճիկոլը նրանց հետ հոգեխանգարման հերթական նոպայի պահին, Պողոսը չգիտեր, բայց համոզված էր, որ այս երկուսի համար ավելի կառավարելի, հետևաբար՝ հարմար, Հայաստանի ղեկավար, քան պարտված ու ստորացված Ճիկոլը, այդ պահին պարզապես չէր կարող լինել:

Իսկ ամենավատն այն էր, որ Պողոսը համոզված էր, որ այդ մասին գիտեին նաև «Հայրենիքի փրկության շարժման» ստվերային, բայց՝ իրական առաջնորդները: Այդ մարդիկ, Հայաստանի երկրորդ և երրորդ նախագահները, իրենց ժամանակին ևս կառավարելի էին եղել Ռուսաստանի կողմից, բայց, ի պատիվ իրենց, պետք է ընդունել, որ երբեք ստորացված չէին եղել:

Ուրեմն ինչի՞ համար էր այս ամենը:

Այն, որ ժողովուրդը պետք է ոտքի կանգներ, պետք է ընդվզեր, պետք է պայքարեր, իհարկե՝ անվիճելի էր: Սակայն դարձյալ առկա էր ժողովրդին խաբելու, ժողովրդին օգտագործելու միտումը: Այս ամենի հիմնական շահառուներին պետք էր ոչ թե համաժողովրդական պայքար, այլ ժողովրդական պայքարի իմիտացիա: Պետք էր անընդհատ թեժ ու լարված պահել ներքաղաքական իրավիճակը՝ իշխանություններին, մասնավորապես՝ երկրի ղեկավարին էլ ավելի կառավարելի դարձնելու և անհրաժեշտ պահին նրան հեռացնելու համար:

Կրկին ու կրկին ժողովրդին օգտագործում էին, կրկին

ու կրկին ժողովրդին խաբում էին:

Մասամբ սա էր պատճառը, որ ո՛չ Պողոսը, ո՛չ էլ Աչոնը առանձնապես ոգևորված չէին «Հայրենիքի փրկության շարժմամբ», քանի որ, ինչպես գիտենք, նրանք չէին սիրում, երբ իրենց խաբում են, մասամբ էլ՝ մեկ այլ հանգամանք: Երկրորդ հանգամանքը անձերն էին, որոնք ժամանակ առ ժամանակ հայտնվում էին հանրահավաքների հարթակում կամ երթերի առջևում: Տարբեր տրամաչափի անձեր, որոնք պետության և ժողովրդի հանդեպ տարբեր տրամաչափի սրիկայություններ էին արել այն ժամանակ, երբ դրա հնարավորությունն ունեին: Եվ այդ անձերի համար այս շարժումը ոչ այլ ինչ էր, քան այդ հնարավորությունները վերականգնելու փորձ:

Հետաքրքիր է, մտածում էր Պողոսը՝ որքան տարբեր ու միևնույն ժամանակ նման են բոլոր սրիկաները: Այդ պահին նա հեռուստացույցով դիտում էր մի հարցազրույց, ի՞նչ եք կարծում՝ ո՞ւմ հետ:

Ուղտի: Այո՛, այո՛, ուղտի, ում ինքը չհասցրեց պատժել: Սույն կենդանին, որոշ ժամանակ ընդհատակում անցկացնելուց հետո, փաստորեն ոչ միայն հայտնվել էր, այլև սկսել էր խոսել:

«Կապիտուլյացիան պատրաստել են, թղթերով գրել ու ստորագրել են այն մարդիկ, ովքեր մեզ հիմա դրա մեջ մեղադրում են»՝ ասում էր նա:

Որքան տարբեր ու միևնույն ժամանակ նման են բոլոր սրիկաները: Թե՛ նախկին, թե՛ ներկա՝ մտածում էր Պողոսը:

- Այն ակումբը դեռ կա՞,- հարցրեց նա Աչոնին:

- Ի՞նչը,- չհասկացավ Աչոնը:

- Այն ակումբը, որտեղ կամուրջներ կային ու որտեղ սիրում էր պարել այս ուղտը:

- Աա՛,- հասկացավ Աչոնը,- չգիտեմ, բայց երևի փակ է: Չեմ կարծում, որ անգամ սրանք այնքան սրիկա լինեն, որ հիմա պարելու տրամադրություն ունենան:

- Իսկ ես կարծում եմ: Կարո՞ղ ես, ամեն դեպքում, ճշտել:

Պողոսը չէր սխալվում. ակումբն այդ, պարզվեց, աշխատում էր:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԻ ՆՅԱՐԴԵՐԸ ՏԵՂԻ ՏՎԵՑԻՆ

Ակումբն այդ աշխատում էր, բայց շատ յուրօրինակ ձևով: Այն, ինչ պարզել էր Աչոնը, սկզբում նրան անհավատալի էր թվացել: Անհավատալի կթվա նաև ընթերցողին, բայց դա այդպես էր:

Երբ Աչոնի ընկերուհին՝ սլավոնական արտաքինով այն գեղեցկուհին, որը երևանյան բոհեմի հին ներկայացուցիչներից էր, զանգահարել էր ակումբի տիրոջը և հետաքրքրվել, թե ինչու է ակումբը փակ, տերը նրան ասել էր.

- Ձեր համար բաց է:

- Ո՞ւմ՝ ձեր:

- Շատ քիչ մարդկանց. այսպես ասած՝ մեր պատվավոր հաճախորդների:

Հետո ակումբի տերը մանրամասնել էր: Ակումբն աշխատում էր միայն երկուշաբթի և շաբաթ օրերին՝ երեկոյան ժամը տասից հետո: Բոլոր հյուրերը նախապես գրանցվում էին և ներս էին մտնում ոչ թե հիմնական, այլ՝ ծառայողական

մուտքից, որը գտնվում էր շենքի հակառակ կողմում: Իսկ ո՞վքեր էին հյուրերը. դե իհարկե՝ նորօրյա «էլիտայի» կարկառուն ներկայացուցիչները:

- Մարդիկ լուրջ սթրեսներ են տարել և նրանց պետք է լիցքաթավել, հասկանո՞ւմ եք,- եզրափակել էր ակումբի տերը:

Երբ Աչոնը պատմեց այս ամենը Պողոսին, վերջինս բոլորովին չզարմացավ: Միակ բանը, որ նրան զարմացրեց՝ այն էր, թե ինչո՞ւ է ակումբն աշխատում նաև երկուշաբթի օրերին:

- Դա ընկերուհուս էլ էր զարմացրել,- ասաց Աչոնը,- և նա նույն հարցը տվել էր ակումբի տիրոջը:

- Եվ ի՞նչ էր պատասխանել նա:

- Պատասխանել էր այսպես. “воскресение день выходной, понедельник день блатной”:

- Ահա՛ թե ինչ,- արձագանքեց Պողոսը,- իսկ դու ուրիշ բա՞ն էիր կարծում, հայրենիքն այդ մարդկանց համար պարահարթակ է, կյանքը՝ պար:

Պողոսը դույզն-ինչ կասկած չուներ, որ ակումբի «պատվավոր» հյուրերի ցանկում է նաև Ուղտը: Մնում էր ուղիներ փնտրել, որ ինքն էլ հայտնվի այնտեղ:

Այնուամենայնիվ Աչոնը մտահոգ էր: Ոչ թե գործողության, այլ՝ Պողոսի առողջության համար: Նրա կոմայից դուրս գալուց դեռ երկու ամիս էլ չէր անցել և Պողոսը դեռ լիովին չէր վերականգնվել: Նա ոչ մի կերպ չէր համաձայնել ռեաբիլիտացիոն կուրսն անցնել հիվանդանոցում: Աչոնը մի կերպ էր համոզել, որ գոնե թույլ տա նևրոլոգին և ֆիզիոթերապևտին գալ տուն, և հիմա Պողոսն ամեն օր զբաղվում էր բուժական ֆիզկուլտուրայով ու շնչառական մարմնամարզությամբ: Բժիշկները գոհ էին արդյունքից, ասում էին, որ Պողոսը բացառիկ ամուր մարդ է, բայց և այնպես հորդորում էին դեռ որոշ ժամանակ ակտիվ գործունեությամբ չզբաղվել:

Մեր հերոսը, սակայն, համաձայն չէր:

- Չնայած, ես օրինական գիժ եմ, բայց եթե այսպես շարունակվի՝ կդառնամ իսկական գիժ,- մի անգամ ասաց նա թութակին:

Թռչունը չարձագանքեց, սակայն նրա հայացքից հասկանալի էր, որ համաձայն է Պողոսի հետ:

Ու մի օր էլ մեր հերոսի նյարդերը տեղի տվեցին:

Դեկտեմբերի քսանութն էր, օրը՝ երկուշաբթի: Եկել էր ֆիզիոթերապևտը, և Պողոսը վարժություններ էր անում՝ հետևելով նրա ցուցումներին: Հեռուստացույցով լուրերի թողարկում էր: Ոչ իշխանական մի հեռուստաալիք ցույց էր տալիս «Հայրենիքի փրկության շարժման» անհնազանդության ակցիան Ազգային ժողովի շենքի դիմաց, Բաղրամյան պողոտայում: Արտառոց ոչինչ չկար, սովորական ակցիա էր, մեկը նրանցից, որ շարունակվում էր արդեն մի քանի շաբաթ:

Բայց, հանկարծ էկրանին հայտնվեց հաղորդավարուհին և կարդաց հետևյալ լուրը. «Քիչ առաջ Ազգային ժողովի մուտքի դիմաց իրականացվող ակցիայի ժամանակ իշխող խմբակցության պատգամավորներից մեկը հայհոյել է ցուցարարներին, մյուսը՝ հարձակվել նրանց վրա»:

Պողոսը չհավատաց լսածին: Սակայն, քիչ անց հետևեց ռեպորտաժը և պարզվեց, որ ամեն ինչ ճիշտ է: Տարիքով մի պատգամավոր հայհոյում էր ցուցարարներին, իսկ մեկ ուրիշը, շատ ավելի երիտասարդ՝ հարվածում: Ցուցարարները՝ որքան էլ որ զարմանալի է, իրենց բավականաչափ զուսպ էին պահում: Ասել, որ ոչինչ չէին անում՝ ի պատասխան, ճիշտ չի լինի, բայց, համենայնդեպս, չափազանց մեղմ էին, չնայած՝ կարող էին շանսատակ անել պատգամավորներին: Վերջինները, դրանից ավելի խանդավառված՝ չտեսնված ազատություն էին տալիս լեզվին ու ձեռքերին:

Ծեր շնագայլ և երիտասարդ կոյոտ՝ այսպես իր համար անվանեց Պողոսը իշխանական պատգամավորներին: Առաջինին նա ճանաչում էր, երկրորդին՝ ոչ:

Ծեր շնագայլը երիտասարդ տարիներին՝ դեռ իննսունականների սկզբներին բարձր պաշտոններ էր զբաղեցրել ուժային կառույցներում: Հնաբնակները պատմում էին, որ նրա լկտիությունը հենց այստեղ էր ձևավորվել: Հետո, իննսունականների վերջին, պատասխանատու պաշտոն էր զբաղեցրել աղետի գոտում և այն՝ էլ ավելի աղետալի դարձրել: Կրկին, ըստ հնաբնակների՝ նա այնքան էր լկտիացել, որ շրջում էր Գյումրվա փողոցներով զինված շքախմբով: Ապա՝ շնագայլը երկար ժամանակ անցել էր ընդհատակ և նորից հայտնվել հեղափոխությունից հետո: Դարձել էր Ազգային ժողովի պատգամավոր: Այստեղ էլ որոշել էր, որ ինքն է այն մարդը, որը պետք է ուսումնասիրի ապրիլյան քառօրյա պատերազմի հանգամանքները և խոստացել էր սկանդալային բացահայտումներ անել: Սակայն, քննիչ հանձնաժողովը, որը նա ղեկավարում էր, իր կատարած աշխատանքների հաշվետվությունն այդպես էլ չէր հրապարակել…

Երիտասարդին, ինչպես արդեն ասվեց, Պողոսը չէր ճանաչում: Բայց և այնպես նա չափազանց նման էր կոյոտի:

- Այսօրվա համար բավական է,- ասաց Պողոսը ֆիզիոթերապևտին:

- Բայց, մենք նոր ենք սկսել,- առարկեց վերջինս,- չի կարելի կիսատ թողնել վարժությունները, այլապես դրանց արդյունավետությունը կկորի:

-Ես Ձեզ վստահեցնում եմ, որ քիչ հետո կանեմ այնպիսի վարժություններ, որոնց վերջնական արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի:

Եթե Պողոսի նյարդերը տեղի չտային, եթե նա փոքր-ինչ

ավելի սառը դատեր, անշուշտ նա այլ կերպ կվարվեր, կամ գոնե կսպասեր Աչոնին, կամ առնվազն տեղյակ կպահեր նրան: Բայց Պողոսի աչքի առջև այն կադրերն էին, որտեղ շնագայլը հայհոյում, իսկ կոյոտը հարվածում էր երիտասարդ ցուցարարներին, որոնց մի մասը մասնակցել էր պատերազմին և որոնք ընդամենը եկել էին Ազգային ժողովի մոտ դիմավորելու, ըստ իրենց, Հայաստանի կործանման դավադիր ծրագրին սատարող իշխանական պատգամավորներին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՑ ՇՆԱԳԱՅԼԸ

Եվ ահա թե ինչ էր որոշել մեր հերոսը. գնալ և Ազգային ժողովի ծառայողական մուտքի մոտ սպասել, մինչև այնտեղից դուրս կգա այդ օրվա միջադեպի մասնակիցներից մեկը: Այնուհետև մոտենալ նրան, ձախ ձեռքով բռնել ականջը, աջով կոտրել քիթը: Եվ առանց որևէ դիմակահանդեսի ու նկարահանման: Ահա այդչափ տեղի էին տվել մեր հերոսի նյարդերը:

Նա դուրս եկավ տանից, իջավ բակ և մոտեցավ իր Նիվային: Մեքենան մի քանի օր առաջ էին վերադարձրել իրեն, և Պողոսը դեռ չէր տեսել այն: Խակի գույնի Նիվան այնքան կեղտոտ էր, որ ոչ էլ երևում էր գույնը: Մի քանի տեղից խփված էր, թափքի աջ կողմի վրա կային բազմաթիվ փոսեր ու խորը խազեր, ըստ ամենային բեկորների հարվածներից, ճաքած էր դիմացի ապակին, իսկ հետևի ապակուն փոխարինում էր հաստ ցելոֆանը:

Ազգային ժողովի շուրջը, կուտակված էին մեծ թվով ոստիկանական ուժեր: Ցուցարարները, սակայն, ցրվել էին, շատերին, ըստ մամուլի հաղորդագրությունների, ոստիկանները բերման էին ենթարկել տարբեր բաժանմունքներ: Դեմիրճյան փողոցը, որի վրա գտնվում էր Ազգային ժողովի ծառայողական մուտքը, Բաղրամյան պողոտայի կողմից փակ էր:

Պողոսը ստիպված էր մեծ շրջան կատարել և բակերի միջով Դեմիրճյան փողոց հասնել հակառակ կողմից:

Նա կայանեց մեքենան Ազգային ժողովի ծառայողական մուտքի դիմացի մայթին՝ քիչ վերև ու քայլեց դեպի հարևանությամբ գտնվող այգին: Ընտրեց այնպիսի տեղ, որտեղից երևում էր մուտքը, կանգնեց մի ծառի տակ ու սկսեց սպասել:

Նա դեռ չգիտեր, որ ողջ այդ երեկոն և գիշերվա մեծ մասն անցկացնելու էր սպասելով: Նախ՝ մոտ երեք ժամ սպասեց հենց այդտեղ՝ Ազգային ժողովի կողքի Սիրահարների կոչվող այգում, ծառի տակ կանգնած՝ իրեն ստիպելով, որ զայրույթը չանցնի, որ ոչ մի դեպքում չսկսի սառը դատել: Հատուկ այդ նպատակով անջատեց հեռախոսը, որ հանկարծ Աչոնը չզանգի և ինքը ստիպված չլինի բացատրել, թե որտեղ է և ինչի՞ է սպասում: Աչոնն անպայման հետո կհանդիմանի իրեն, բայց դա կարևոր չէ: Լավ է, որ գոնե վերցրել էր դիմակը, սև ակնոցները և լայնեզր գլխարկը:

Ժամը իննի կողմերը որոշակի ակտիվություն նկատվեց Ազգային ժողովի ծառայողական մուտքի մոտ: Հերթով սկսեցին դուրս գալ ժողովրդի ընտրյալները՝ այնպիսի իրենցից գոհ դեմքերով, կարծես քիչ առաջ լուծել էին Հայրենիքի փրկության հարցը: Տեսնես ինչպիսի՞ն էր այդ նույն ժողովրդի ընտրյալները դեմքերի արտահայտությունը՝ դեռ մի քանի շաբաթ առաջ, երբ նրանք վախից մտել էին գետնի տակ՝ մտածեց Պողոսը:



Բայց չէ՞ որ հնարավոր չէր, որ նրանք բոլորը վախկոտ սրիկաներ լինեին: Ինչպե՞ս կարող էին նրանց մեջ նորմալ, անգամ լավ մարդիկ չլինել՝ պարկեշտ, խելացի, հայրենասեր: Վերջին, արտահերթ ընտրություններում իշխող քաղաքական ուժը հավաքել էր ընտրողների ձայների յոթանասուն տոկոսը

և ստացել խորհրդարանական ութսունութ մանդատ: Ուրեմն ինչպե՞ս կարող էին այդ ութսունութ մարդկանցից բոլորը, կամ՝ նրանց կեսը, կամ՝ անգամ մեկ քառորդը, բացասական կերպարներ լինել: Եթե մինչև պատերազմը նրանց կարելի էր համարել պարզապես խաբվածներ, ապա ի՞նչ համարել հիմա, երբ նրանք չէին ուզում կամ չէին կարողանում տեսնել ու հասկանալ այն, ինչ կատարվում էր իրենց երկրի հետ:

Շնագայլը Ազգային ժողովից դուրս եկավ ուղիղ ժամը տասին: Պողոսն արդեն այգում չէր, դուրս էր եկել փողոց և կանգնել ծառայողական մուտքի հակառակ մայթին: Շնագայլին ուղեկցում էին երկու ուրիշ տղամարդիկ, որոնց Պողոսը չէր ճանաչում: Դատելով վերարկուների տակից երևացող փողկապներից՝ պատգամավորներ էին: Այդ երեքը կանգնեցին մուտքի հենց առջև ու սկսեցին զրուցել: Ըստ ամենայնի՝ սպասում էին: Դե իհարկե՝ շնագայլը ծառայողական մեքենա ուներ: Ճիշտ ժամանակն էր մոտենալու, քանի դեռ մեքենան չէր եկել: Պողոսն, այնուամենայնիվ, դրեց սև ակնոցները, դեմքին քաշեց բժշկական դիմակը և անցավ փողոցը: Արդեն հասնում էր մուտքի մոտ կանգնածներին, երբ տեսավ, թե ինչպես բացվեց Ազգային ժողովի դարպասը ու այնտեղից դուրս եկավ մի սև Տոյոտա Քեմրի: Պողոսին մի պահ թվաց, թե հենց դա է շնագայլի ծառայողական մեքենան, բայց պարզվեց, այդպես չէր: Մեքենան սպասարկում էր… Ի՞նչ եք կարծում, ում:

Երբ բացվեց Տոյոտայի հետևի պատուհանը և երևաց Ուղտի ինքնասիրահարված մռութը՝ Պողոսը չհավատաց աչքերին: Բայց, որ ամենավատն է՝ շփոթվեց: Նա հաշված վայրկյաններ ուներ կողմնորոշվելու համար՝ ի՞նչ անել: Ավելի ճիշտ՝ ո՞ւմ քիթը ջարդել: Էլ ավելի ճիշտ՝ ո՞ւմ քիթը ջարդել առաջինը:

- Լավ օր էր, չէ՞,- ասաց Ուղտը՝ մեքենայի պատուհանից հանելով գլուխը:

- Շատ լավ օր էր,- համաձայնեց Շնագայլը,- ես կասեի՝ հիանալի օր էր:

- Ես գնում եմ նշելու:

- Այո, մենք վաստակել ենք այդ իրավունքը:

- Այն էլ ոնց ենք վաստակել: Իսկ դո՞ւ ուր ես գնում:

- Ես, ցավոք, հոգնած եմ, գնամ տուն, քնեմ:

Պողոսն այնուամենայնիվ որոշեց առաջինը ջարդել Ուղտի քիթը: Նա այնքա՜ն հարմար էր հանել գլուխը մեքենայի պատուհանից... Սակայն այդ պահին հետևից մեկը քաշեց Պողոսի թևը և ասաց.

- Ինչո՞ւ եք կանգնել այստեղ:

Ասողը ոստիկան էր: Հավանաբար մեկը նրանցից, որ պահպանում էին Ազգային ժողովի մուտքը: Կամ պահակապարեկային ծառայությունից էր: Կարևոր չէր: Կարևորն այն էր, որ մինչ Պողոսը շրջվեց, Ուղտը փակեց պատուհանը, և Տոյոտան հեռացավ:

Նա փաստորեն կորցրեց պահը: Ավելին՝ կրկնակի անգամ կորցրեց պահը, որովհետև անմիջապես էլ մոտեցավ մեկ այլ Տոյոտա, վերցրեց շնագայլին ու նույնպես հեռացավ:

Պողոսն այդպես էլ չպատասխանեց ոստիկանի տված հարցին՝ թե ինչու էր կանգնել այդտեղ: Արագ քայլեց դեպի քիչ այն կողմ կայանած Նիվան, շրջադարձ արեց ու փորձեց հասնել իրենից ճողոպրած մեքենաներին:

Ոստիկանները շարունակում էին փակ պահել Բաղրամյան -Դեմիրճյան խաչմերուկը: Բայց Ազգային ժողովի ծառայողական մեքենաների համար նրանք վայրկյանական բացեցին ճանապարհը: Տոյոտաները սահուն անցան, խցկվեց նաև Պողոսի Նիվան: Այն մեքենան, որի մեջ Ուղտն էր, Բաղ-

ռամյանով թեքվեց աջ, մյուսը, որի մեջ Շնագայլն էր թեքվեց ձախ: Հատկանշական էր, որ Ուղտի մեքենային ուղեկցում էր մի ոստիկանական մեքենա:

Դարձյալ Պողոսը հաշված վայրկյաններ ուներ կողմնորոշվելու, թե որի հետևից գնա, որովհետև, եթե մի քիչ ուշացներ, կկորցներ երկուսին էլ: Որսորդական կանոններով պիտի հետևեր առաջինին, որովհետև, ինչպես ասվում է՝ երկու նապաստակներից ընտրում են նրան, որն ավելի յուղալի է: Բայց, գուցե նրա համար, որ գործ ուներ ոչ թե նապաստակների, այլ երկու բոլորովին այլ կենդանիների հետ, ընտրեց առաջինին՝ Շնագայլին: Բայց ոչ միայն դրա համար՝ կար նաև երկրորդ պատճառը: Պողոսի մտքով ակնթարթորեն անցավ երկու բան. նախ, որ Ուղտն ասաց, որ ինքը գնում է զվարճանալու: Եվ երկրորդը, որ օրը երկուշաբթի է: Հետո նա միանգամից համադրեց այդ երկուսը և եկավ այն եզրակացության, որ Ուղտը գնալու է ոչ այլ ուր, քան այն ակումբը, որը քողարկված աշխատում էր օրվա «էլիտայի» համար և աշխատում էր հենց երկուշաբթի օրերին: Հետևաբար, այնտեղ էլ կարելի էր գտնել նրան: Եվ Պողոսը՝ իր հայտնագործությունից գոհ, թեքվեց ձախ ու գնաց Շնագայլի ծառայողական մեքենայի հետևից:

Նա հիշեց, թե ինչպես պատգամավորն ասաց, որ գնում է տուն հանգստանալու: Հետևաբար, այն ինչ պատրաստվում էր անել, պետք էր անել ճանապարհին, մինչև տուն հասնելը, որովհետև տանը գուցե երեխաներ լինեին և տեսնեին, թե ինչպես են ստորացնում իրենց պապին: Շնագայլը, գուցե դրան էլ էր արժանի, բայց Պողոսի համար, այնուամենայնիվ, կային կարմիր գծեր: Կսպասեմ՝ մինչ կանգնի կարմիր լույսի տակ, մտածեց նա:

Բայց, թարսի պես, ամբողջ ճանապարհին՝ Բաղրամյան

պողոտայից մինչև Կոմիտասի պողոտա, այնուհետև մինչև Դավիթաշեն թաղամասի կամուրջ՝ բոլոր լուսացույցների վրա վառվում էին կանաչ լույսերը: Պողոսի Նիվան մի կերպ էր հասնում շատ ավելի հզոր շարժիչով Տոյոտայի հետևից: Երբ վերջինս կամուրջն անցնելով թեքվեց աջ և սլացավ Եղվարդ տանող ճանապարհով, Պողոսը քիչ էր մնում կորցներ նրան: Բայց, բարեբախտաբար, արագաչափ տեսախցիկի տակ Տոյոտան դանդաղեցրեց ընթացքը:

Պողոսն արդեն ուզում էր հասնել նրան, կտրել դիմացը և հենց փողոցի վրա էլ աներ այն՝ ինչ պիտի աներ, երբ հանկարծ Տոյոտան միացրեց աջ թարթիչը և կանգ առավ սրբատաշ քարով մի ցանկապատի առջև, որի հետևում լույսեր էին վառվում:

Այստեղ, պարզվեց, ռեստորան էր: Շնագայլը փաստորեն ստում էր, երբ ասում էր Ուղտին, որ գնում է տուն՝ քնելու:

Այդ կենդանիներն անգամ իրար են խաբում՝ մտածեց Պողոսը:

Բայց և այնպես, դեպքերի նման զարգացումը իրեն ձեռնտու էր: Շնագայլին պատժելու համար ավելի հարմար տեղ, քան ռեստորանի արտաքնոցն էր, դժվար էր պատկերացնել:

Պողոսը գլխին դրեց լայնեզր գլխարկը, հագավ մուգ ակնոցներն ու դիմակը և մտավ ցանկապատի դռնից ներս: Տարածքն իրենից ներկայացնում էր մերկացած ծառերով մի բակ՝ մեջտեղում չաշխատող շատրվանով: Բակի աջ և ձախ կողմում առանձնասենյակներ էին, իսկ հետևի կողմում՝ մի մեծ դահլիճ, որտեղից լսվում էր կենդանի երաժշտության ձայն: «Թող կյանքը լինի լուսավոր, ապրես ուրախ ու լինես բախտավոր»՝ ոռնում էր երգիչը:

Պողոսը չտեսավ, թե ո՞ր կողմ գնաց և ո՞ւր մտավ Շնա-

գայլը ու ստիպված էր հերթով անցնել նախ դահլիճի, ապա առանձնասենյակների կողքով: Լավ էր, որ պատերն ապակուց էին և ներսն ամբողջությամբ երևում էր: Դահլիճի մոտ Պողոսը համեմատաբար երկար կանգնեց և համոզվելով, որ շնագայլն այնտեղ չէ, անցավ առաջ: Այդ պահին առանձնասենյակներից մեկից դուրս եկավ մի մատուցողուհի՝ ձեռքին դատարկ շշերով ու կեղտոտ ափսեներով մի սկուտեղ: Մոլորված Պողոսին նկատելով՝ նա հարցրեց.

- Երևի զուգարանն ե՞ք փնտրում:

- Զուգարանը մեր գործում չափազանց կարևոր է,- ասաց Պողոսը:

- Ահա այն կողմ,- գլխով ցույց տվեց մատուցողուհին և հեռացավ՝ շրխկացնելով սկուտեղի վրայի դատարկ շշերը:

Բայց Պողոսը չգնաց մատուցողուհու ցույց տված ուղղությամբ և շարունակեց հերթով անցնել առանձնասենյակների մոտով: Դրանցից մեկում, ապակու միջից, վերջապես տեսավ Շնագայլին: Նա բարձրացրել էր բաժակը և կարծես թե ինչ-որ կենաց էր ասում: Թե ինչ կենաց՝ Պողոսը չլսեց, հավանաբար խմում էր հիանալի օրվա համար: Բայց դա արդեն կարևոր չէր:

Մոտ կես ժամ պահանջվեց, որ ժողովրդի ընտրյալի մոտ զուգարան գնալու պահանջ առաջանա: Այդ կես ժամը Պողոսն անցկացրեց արծաթափայլ եղևնու տակ կանգնած:

Շնագայլը քայլեց դեպի զուգարան՝ քթի տակ, ինքն իր հետ ինչ-որ բան խոսելով: Պողոսը գնաց նրա հետևից և սպասեց դռան մոտ: Մնացածը եղավ շատ արագ, առանց որևէ բարդության:

Երբ Շնագայլը բացեց դուռը՝ քթի տակ երգելով քիչ առաջ ռեստորանի դահլիճում ինչող երգը և տեսավ դռան հետևում կանգնած Պողոսին նույնիսկ չհասցրեց զարմանալ:

Շեշտակի հարված ստացավ քթին, հետ-հետ գնաց ու փռվեց զուգարանակոնքի վրա:

Պողոսը գրպանից հանեց հեռախոսը և միացրեց վիդեոն: Համենայնդեպս նրան այդպես թվաց: Հետո նոր բռնեց Շնագայլի ականջը:

- Ի՞նչ եք անում, Դուք երևի սխալվել եք, ես Ազգային ժողովի պատգամավոր եմ,- գոռում էր Ազգային ժողովի պատգամավորը:

- Ես չեմ սխալվել. սխալվեցիր դո՛ւ՝ այն ժամանակ, երբ դարձար Ազգային ժողովի պատգամավոր, երբ հայհոյում էիր հայրենիքի համար կռված տղերքին և առհասարակ այն ժամանակ, երբ ծնվեցիր,- հանգիստ ասաց Պողոսը ու շարունակեց,- իսկ հիմա առանց շտապելու ու ոռնալու, սահուն առոգանությամբ հայտարարիր, որ…

Շնագայլն իհարկե հայտարարեց. հայտարարեց, որ ինքը սրիկա է, ինչպես նաև սրիկա են իր թիմակիցների մեծամասնությունը և իհարկե՝ իր առաջնորդը:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՊՈՂՈՍԸ ՔԱՐՈԶ ԿԱՐԴՈՒՄ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԳԼԽԻՆ

Երբ Պողոսը դուրս եկավ ռեստորանի դարպասից, նստեց իր Նիվան ու շարժվեց, հայելու մեջ տեսավ, որ հետևից գալիս է լուսային թարթիչները միացրած մի ոստիկանական մեքենա: Այսքան շուտ՝ մտածեց նա, ինչպե՞ս, որտեղի՞ց իմացան:

Քիչ անց ոստիկանական մեքենան հավասարվեց իրեն

և հրահանգեց կանգնել: Պողոսը մի պահ մտածեց չենթարկվել, ոչ թե նրա համար, որ վախենում էր ձերբակալվելուց, այլ՝ ափսոսում էր, որ չի կարողանա իրականացնել պլանավորած հաջորդ գործուղությունը՝ Ուղտի հետ կապված, բայց անմիջապես էլ փոշմանեց, որովհետև, միևնույն է, իր Նիվան չափազանց դանդաղ էր, որ կարողանար փախչել ոստիկանական մեքենայից: Եվ մեր հերոսը ենթարկվեց ոստկաննեերի հրահանգին:

Միայն թե Պողոսը սխալվում էր: Ոչ ոք ոչինչ չէր իմացել: Իրեն կանգնեցնողները սովորական ճանապարհային ոստիկաններ էին:

Կար ժամանակ, երբ օրենքի ու օրինականության սույն պաշտպաններն ամեն ինչ անում էին՝ բացի օրենքն ու օրինականությունը պաշտպանելուց: Այդ ժամանակը տևեց ուղիղ քսանութ տարի՝ մինչև Ճիկոլի իշխանության գալը: Իհարկե, այդ քսանութ տարիները հաջորդել էին խորհրդային մի քանի տասնամյակներին, երբ էլ սկիզբ էր առել, արմատավորվել ու զարգացել էր կաշառակերություն երևույթը ամենուր, իսկ ոստիկանությում ու ճանապարհային ոստիկանությունում՝ հատկապես: Այդ ժամանակ ճանապարհային ոստիկանությունը կոչվում էր ԳԱԻ, իսկ ճանապարհային ոստիկանները՝ գաիշնիկներ:

Խորհրդային Միությունը փլուզվեց, բայց այս անունները մնացին, ինչպես նաև մնացին բազմաթիվ արատներ, որոնք առկա էին պետական կառավարման համակարգում և հասարակության մեջ:

Տասնամյակների ընթացքում փոխվեցին ճանապարհային ոստիկանների համազգեստները, մեքենաները, սարքավորումները, սակայն ժողովրդի մեջ անփոփոխ մնաց նրանց անունը՝ գաիշնիկներ:

Տարիների ընթացքում փոխվում էին նաև գաիշնիկներին տրվող կաշառքի չափը և վարորդներից կաշառք վերցնելու նրանց մեթոդները: Վերջին տարիներին, օրինակ, մինչև իշխանափոխությունը, ճանապարհային ոստիկանները մշակել և կիրառում էին մի մեթոդ, որը չափազանց արդյունավետ էր գործում… իրենց ու իրենց շեֆերի գրպանների համար: Նրանք «հերթապահում էին» Երևանի այն հատվածներում, ուր ծաղկում էր ռեստորանային ինդուստրիան, օրինակ՝ Հրազդանի ձորում, Ջրվեժում ու նրան հարակից տարածքներում, ինչպես նաև Դավիթաշենի կամուրջից Եղվարդ տանող ճանապարհին, ֆիքսում էին ռեստորանների մոտ կանգնած մեքենաները և համբերատար սպասում, մինչ դրանց տերերը կուտեն, բնականաբար, նաև կխմեն ու կնստեն ղեկին: Բայց, իհարկե, ոչ նրա համար, որ խմած վարորդներին պատժեն օրենքով: Օրենքով պատժվում էին միայն նրանք, որոնք համապատասխան գումար չէին ունենում գաիշնիկներին տալու համար:

Հիմա, երբ Պողոսին կանգնեցրին ոստիկանները, նա մտածեց, թե արդյո՞ք սա էլ նույն սցենարն էր: Բայց, հազիվ թե:

Հանուն արդարության պիտի ասել, որ Հայաստանում «իրավիճակի փոփոխությունից» հետո, փոխվել էր նաև այս իրավիճակը: Եվ իսկապես փոխվել էր: Արդեն երկու տարի ճանապարհային ոստիկանները կաշառք չէին վերցնում: Զուգահեռ ստեղծվում էր պարեկային ծառայությունը, որը պիտի գար փոխարինելու իր դարն ապրած ու ժամանակին մինչև ականջները կոռումպացված ճանապարհային ոստիկանությանը՝ ԳԱԻ-ին: Պատրա՞ստ էր արդյոք պետությունը նման կտրուկ փոփոխության՝ հայտնի չէր, հետևաբար հայտնի չէր նաև, թե ի՞նչ ճակատագրի կարժանանար նոր կազմավորվող կառույցը և այնտեղ ներգրավվող մարդիկ:

- Ձեր փաստաթղթերը,- պատշաճ ներկայանալուց հետո ասաց ոստիկանը:

- Ինչո՞ւ եք ինձ կանգնեցրել,- հարցրեց Պողոսը,- դրամապանակի միջից հանելով փաստաթղթերը:

- Ձեր մեքենան կեղտոտ է:

- Օրենքով արգելվա՞ծ է կեղտոտ մեքենա վարելը:

-Այո, եթե պետհամարանիշները չեն երևում:

Այստեղ նոր Պողոսն հասկացավ, թե ինչի համար են իրեն կանգնեցրել: Ուրեմն ձերբակալությունը չեղարկվում է, կամ, առնվազն՝ հետաձգվում է:

Դեռ երբեք Պողոսն այդչափ սիրալիր չէր խոսել ոստիկանների հետ: Միայն թե՝ այն ինչ նա ասաց, չգիտես ինչու՝ դուր չեկավ ոստիկանին:

- Այո, հնարավոր է, ես ուշադրություն չէի դարձրել,- համաձայնեց նա ու շարունակեց,- իսկ ինչպե՞ս է կյանքն առանց փողի:

- Ի՞նչ փող,- զարմացավ ոստիկանը:

-Դե, նկատի ունեմ՝ կաշառքի,- հստակեցրեց Պողոսը:

- Ի՞նչ կաշառք,- ոստիկանը դադարեց զննել փաստաթղթերը և ձեռքի լապտերը պահեց Պողոսի դեմքին,- ավելորդ բաներ եք խոսում:

- Այսինքն՝ դուք շարունակու՞մ եք փող վերցնել, նկատի ունեմ՝ կաշառք:

- Իհարկե, ո՛չ,- շփոթված ասաց ոստիկանը:

- Այսինքն՝ ընդունում եք, որ ժամանակին վերցնում էիք, հիմա՝ ոչ:

Ոստիկանն ավելի շփոթվեց. ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Պողոսը չթողեց:

- Լսեք,- ասաց նա,- որքան էլ որ զարմանալի է, հիմա ես ձեր կողմից եմ:

- Այսինքն՝ ինչպես մեր կողմից եք:

- Այսինքն՝ հասկանում եմ ձեզ:

- Ինչն եք հասկանում:

- Ձեր վիճակը: Որքան աշխատավարձ եք ստանում:

Ոստիկանը պատասխանեց հավանաբար մեխանիկորեն.

- Երկու հարյուր հիսուն հազար:

- Տեսնում եք. մի՞թե հնարավոր է երկու հարյուր հիսուն հազար դրամով ապրել,- հանգիստ ասաց Պողոսը, ապա շարունակեց,- Դուք երևի ամուսնացած եք:

- Այո,- շարունակեց մեխանիկորեն պատասխանել ոստիկանը:

- Երեխաներ ունեք:

- Այո, երկու տղա:

- Ձեր կինը, բնականաբար, չի աշխատում:

- Այո, որտեղից գիտեք:

- Մի ընդհատեք: Վստահ եմ՝ վարկ էլ ունեք:

Այստեղ ոստիկանը չդիմացավ ու պոռթկաց.

- Ինչի մե՞կը: Գիտեք, քանի վարկ ունեմ: Տոկոսների տակ խեղդվում եմ: Տանն ինչ կա չկա՝ գրավ եմ դրել: Կնոջս ոսկեղենը...

- Սպասեք, մի հուզվեք: Դուք ո՞ւմ եք ընտրել:

Բայց ոստիկանն այլևս հուզված էր.

- Ում եմ ընտրել, ում եմ ընտրել... գլուխս պատին եմ տվել: Երկու տարի է խոստանում են բարձրացնել աշխատավարձը: Առաջ գոնե...

Այստեղ նա, սակայն, հասկացավ, որ չափն անցնում է ու լռեց:

Հերթը Պողոսինն էր.

- Ափսոս, ես շտապում եմ, թե չէ՝ Ձեզ մի քանի կարևոր

բաներ կբացատրեի,- ասաց նա,- մասնավորապես, որ կաշառք վերցնելն, իհարկե, շատ վատ բան է, շատ ավելի վատ բան է, երբ պետությունը խրախուսում է կաշառքը, կամ թեկուզ՝ աչք է փակում, բայց կա ավելի վատ բան: Երբ պետությունը քեզ խաբում է: Խաբում է ոստիկանին: Ու ոստիկանին խաբելով՝ խաբում է ժողովրդին:

- Խաբել ասեցիք, պրծա՞ք,- նորից պոռթկաց ոստիկանը,- չեն թողնում շնչենք: Ու հիմա էլ ինչ-որ պարեկային ծառայություն են ստեղծում:

- Պարեկային ծառայությունը լավ բան է, եթե՝ իհարկե, աշխատի: Բայց, չի կարող աշխատել, քանի որ հնարավոր չէ համակարգի մի փոքր մասը փոխելով ու մնացած մասը նույնը թողելով հասնել իրական փոփոխության:

- Ես էլ հենց դա եմ ասում:

-Ոչ, Դուք ուրիշ բան եք ասում, բայց ես իսկապես շտապում եմ ու պիտի գնամ:

Երբ ոստիկանը վերադարձրեց փաստաթղթերը, և Պողոսը շարժվեց, նա մտածեց մի տեղ կանգնել ու մաքրել համարանիշների վրայի ցեխը, որ նորից իրեն չկանգնեցնեն ու ստիպված չլինի նորից քարոզ կարդալ ոստիկանների գլխին: Բայց անմիջապես էլ փոշմանեց: Շատ ավելի լավ, որ համարանիշները կեղտոտ էին և չէին կարդացվում:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՑ ՈՒՂՏԸ ԵՎ ՄԻ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԻ, ՈՐԸ, ՍԱԿԱՅՆ, ՍԱՊԱՏ ՉՈՒՆԵՐ

Ակումբի ծառայողական մուտքը, ավելի ճիշտ՝ հետնամուտքը շենքի բակից էր, Պողոսն այն հեշտությամբ գտավ: Ներսից, սակայն, երաժշտության ձայն չէր գալիս, և ոչ մի նշան չկար, որ այնտեղ առհասարակ մարդ կա: Արդյո՞ք Աչոնի տեղեկությունները սխալ էին՝ կապված երկուշաբթի օրերի հետ:

Ինչպես էին նրան ասել՝ “понедельник день блатной”?:

Զարմանալի չէր. նորօրյա իշխանավորները, համենայնդեպս՝ նրանց մի ստվար մասը սահուն ինտեգրվում էր այսպես ասած՝ քրեական ենթամշակույթին՝ զուգահեռաբար տպավորություն ստեղծելով, թե պայքարում է դրա դեմ: Դեղին մամուլում ժամանակ առ ժամանակ տեղեկություններ էին սպրդում, որ իշխանական թիմի այս կամ այն ներկայացուցիչը հանդիպում է, շփվում է, տալիս-առնում է քրեական աշխարհի այս կամ այն ներկայացուցչի հետ:

Այն, որ քրեական համքարությունը մեր երկրում միշտ էլ հովանավորվել է իշխանությունների կողմից՝ ընտրությունների ժամանակ նրանց մատուցած և զանազան այլ ծառայությունների դիմաց՝ հայտնի բան էր: Բայց դա հասկանալի էր նախկին իշխանությունների օրոք: Նախկին իշխանություններն իրենք՝ իրենց մտածողությամբ, իրենց մոտեցումներով իրենց վարքականոններով, այդ քրեական ենթամշակույթի կրողներն էին և նրանց մեծ մասը՝ իբրև անհատ լիովին համապատասխանում էր այս տեսակին: Մինչդեռ նորօրյա աղվամազերով «ղզիկները», ինչպես կասեր Աչոնը,

չափազանց հեռու էին, որքան էլ որ բացասական, այնուամենայնիվ կուռ ու ամուր մարդկային այս տեսակից:

Ի դեպ, որտեղ էր Աչոնը: Ամբողջ օրվա ընթացքում Պողոսը նրան չէր զանգահարել, բայց, որ ավելի տարօրինակ էր՝ չէր զանգահարել նաև Աչոնը:

Սակայն ասել, որ Պողոսը դրանից դժգոհ էր՝ ճիշտ չէր լինի: Նա, իհարկե, հասկանում էր, որ խախտում է պայմանավորվածությունը՝ միայնակ իրականացնելով պատժիչ գործողությունները, բայց գուցե այդպես ավելի լավ էր: Չէ՞ որ նա ի սկզբանե էլ դեմ էր Աչոնի մասնակցությանը:

Ինչևէ, կեսգիշերի մոտ էր, և Պողոսն արդեն ուզում էր հեռանալ, երբ բարձր երաժշտության ձայներ լսեց: Երաժշտությունը, սակայն, ակումբից չէր: Արծաթագույն մի ԲՄՎ էր մտել բակ և հետ ու առաջ էր անում՝ տեղ փնտրելով կայանելու համար: Երաժշտությունն, ավելի ճիշտ՝ դմդմփոցն այնքան բարձր էր, որ թվում էր, թե շուրջն ամեն ինչ ցնցվում է:

Պողոսն արդեն ուզում էր մոտենալ, վարորդի ականջից քաշելով՝ հանել մեքենայի միջից ու ջարդել նրա քիթը, երբ մտքով մի բան անցավ: Իսկ գուցե սրանք եկել են ակու՞մբ՝ մտածեց նա:

Այդպես էլ կար: ԲՄՎ-ից իջան մի խումբ երիտասարդներ, անկասկած, հարբած կամ թմրամիջոցի ազդեցության տակ և քրքջալով, աղմուկ-աղաղակով՝ խռնվեցին բակում: Յոթ-ութ հոգի էին՝ մի մասը աղջիկներ, և Պողոսը չհասկացավ, թե ինչպես էին այդքանով տեղավորվել մեքենայում:

Վերջինը իջավ վարորդը և դիմելով աղջիկներից մեկին հարցրեց.

- Չե՞ս զանգել:

- Զանգել եմ,- ասաց աղջիկը:

- Ուրեմն, ինչո՞ւ չեն բացում:

Հենց այդ պահին էլ՝ կարծես ինչ-որ կախարդանքով, հետնամուտքի դուռը բացվեց:

Այն, ինչ արեց Պողոսը, արեց լրիվ ինքնաբերաբար, կարելի է ասել՝ առանց մտածելու: Նա խառնվեց երիտասարդների խմբին ու նրանց հետ մտավ ներս: Բարեբախտաբար, ոչ ոք նրա վրա ուշադրություն չդարձրեց: Նա, ով բացեց դուռը, հավանաբար մտածեց, որ Պողոսը երիտասարդների հետ է, իսկ երիտասարդներն՝ իրենք, հավանաբար ի վիճակի չէին ուշադրություն դարձնելու:

Հետնամուտքից բացվեց մի հարթակ, և դեպի ներքև իջնող աստիճանները տարան մի մեծ սենյակ, որը, դատելով այստեղ շարված արկղերից ու տարատեսակ պարագաներից, ծառայում էր իբրև պահեստ: Այստեղ նույնպես կար մի դուռ՝ տեղը տեղին ձայնամեկուսացված, որին հաջորդում էր երկար միջանցք՝ աջ կողմում խոհանոցը, ձախ կողմում՝ ինչ-որ աշխատասենյակներ: Միջանցքի վերջում՝ նորից մի դուռ

էր, որից հետո նոր երևաց ակումբի նախասրահը, որն արդեն ծանոթ էր Պողոսին: Այստեղ էին գտնվում հանդերձարանը և զուգարանները, որոնք հետախուզելու առիթ Պողոսն ունեցել էր և որտեղ էլ նախատեսում էր անել այն, ինչ պիտի աներ:

Բայց նախ պետք էր տեսնել՝ ակումբո՞ւմ է արդյոք Ուղտը: Պետք է որ այստեղ չլիներ, քանի որ բակում չկար ո՛չ նրան սպասարկող ծառայողական մեքենան, ո՛չ էլ նրան ուղեկցող ոստիկանական մեքենան:

Ակումբում անշլագ էր: Պարահարթակում, Պողոսի համար չափազանց անհասկանալի ինչ-որ երաժշտության տակ, պարում էին մի քանի տասնյակ մարդ, իսկ պարահարթակից կամրջակներով բաժանված սեղանների մոտ դատարկ տեղ չկար: Ո՛չ պարողների, ո՛չ նստածների դեմքերը, սակայն լավ չէին երևում՝ խանգարում էին առաստաղից կախված անընդհատ թարթող բազմագույն լույսերը:

Դե ինչ՝ մտածեց Պողոսը, եթե անգամ Ուղտն էլ այստեղ չլինի, ներկաներից յուրաքանչյուրը արժանի է, որ իր ականջները քաշվեն: Խոսքն, իհարկե, միայն արական սեռի մասին է: Կարելի էր նույնիսկ պատահական ընտրություն անել: Կարելի էր նույնիսկ սպասել՝ ով առաջինը կմտնի զուգարան՝ նրան էլ պատժել: Չէ՞ որ այստեղ նորմալ մարդ լինել չէր կարող:

Ինչպե՞ս կարող է նորմալ մարդը զվարճանալ, երբ շուրջը ողբ ու ցավ է, երբ երկիր է կորցրել, երբ հազարավոր զինվորների դիակներ դեռ չեն ճանաչվել, երբ հարյուրավոր գերիներ դեռ մղկտում են թշնամու բանտերում…

Պարահարթակի առաստաղից կախված պտտվող լուսարձակը անցավ դիջեյի սեղանի մոտով և այնտեղ նստած երիտասարդի դեմքը, չգիտես ինչու, Պողոսին չափազանց ծանոթ թվաց: Բայց նա չհասցրեց անդրադառնալ դրան,

քանի որ լույսն անմիջապես էլ ընկավ մեկի վրա, որը ձեռքերը պարզած՝ պարում էր քիչ այն կողմ:

Ուղտն էր:

Ա՛յ քեզ հաջողություն՝ ոգևորվեց Պողոսը, որովհետև արդեն հույսը կտրել էր տեսնել Ուղտին այստեղ: Բայց չհասցրեց շատ ուրախանալ, որովհետև այդ պահին ինչ-որ մեկը կողքից թփթփացրեց ուսին: Շրջվեց և տեսավ երիտասարդ մի շիկահեր աղջկա, որը փորձում էր իրեն ինչ-որ բան ասել, սակայն ձայնը կորում էր աղմուկի մեջ:

- Ես Ձեզ չեմ լսում,- գոռաց Պողոսը:

Շիկահերը բերանը մոտեցրեց նրա ականջին և նույնպես գոռաց.

- Ինչ լավն է Ձեր գլխարկը...

Պողոսը չգիտեր ինչ պատասխանել, և աղջիկը շարունակեց.

- Կտամ մի քիչ դնեմ:

Ու պատասխանի չսպասելով՝ Պողոսի գլխից հանեց լայնեզր գլխարկը:

Բայց Պողոսը Շիկահերի ժամանակը չուներ: Նա դարձյալ շրջվեց դիջեյի տաղավարի կողմը, միայն թե այնտեղ արդեն մութ էր և երևում էր կողքը պարողի միայն սիլուետը: Այն, որ դա Ուղտն էր, Պողոսը կասկած չուներ: Այդ կենդանուն անհնար էր խառնել ուրիշ որևէ այլ կենդանու հետ: Միայն թե ինչո՞ւ էր դիջեյի դեմքն այդքան ծանոթ... Ինչևէ, կարևոր չէր: Կարևորն այն էր, որ Ուղտն այստեղ էր՝ ակումբում և, դատելով նրա վիճակից, արդեն բավականաչափ խմած էր:

Ժամանակն էր հետաքրքրվել գլխարկի ճակատագրով, որովհետև քիչ առաջվա Շիկահերը չկար: Պողոսը հայացքով շրջեց պարահարթակում և անմիջապես տեսավ նրան՝ ավելի ճիշտ տեսավ իր գլխարկը, որը առաստաղից ընկնող լույսերի

տակ մերթ նարնջագույն էր, մերթ՝ կապույտ, մերթ՝ դեղին:

Մի քիչ պարելուց հետո Շիկահերը հեռացավ պարահարթակից և նստեց մի սեղանի մոտ, ուր ևս մի քանի աղջիկներ կային: Պողոսը մոտեցավ նրանց: Քանի որ ինչ-որ բան ասելը՝ մասնավորապես թույլտվություն հարցնելը անիմաստ էր, որովհետև այս աղմուկի մեջ միևնույն է ոչ ոք իրեն չէր լսի, Պողոսը պարզապես նստեց սեղանի շուրջը դրված միակ ազատ աթոռին: Այստեղից շատ լավ երևում էր դիջեյի տաղավարը, որից քիչ այն կողմ դեռ ինքնամոռաց պարում էր Ուղտի սիլուետը: Պողոսը ձեռքով արեց կողքով անցնող մատուցողուհուն: Հետո գլուխը մոտեցրեց Շիկահերի ականջին և հարցրեց:

- Ի՞նչ հյուրասիրեմ ձեզ:

- Շամպա՛յն,- գոռաց աղջիկը:

Եվ Պողոսը մատուցողին շամպայն պատվիրեց, չիմանալով, որ դրա հաշիվն այդպես էլ չի փակելու:

Եթե դեպքերն այնպես զարգանային, ինչպես Պողոսն էր հանպատրաստից պլանավորել, այսինքն՝ երբ տեսներ, որ Ուղտը գնում է զուգարանի կողմը, անպայման, մինչև նրա հետևից գնալը՝ մի խոշոր թղթադրամ կթողներ սեղանին իր պատվիրած շամպայնի համար: Սակայն, դեպքերն այլ կերպ զարգացան:

Ուղտը անակնկալ մոտեցավ դիջեյի սեղանին, նրա ականջին ինչ-որ բան ասաց ու վերցրեց միկրոֆոնը: Անմիջապես դադարեց երաժշտությունը, և Ուղտը հայտարարեց.

- Քեֆ ենք անում բոլորս,- հետո անգլերենով հավելեց,- f… the war:

- F… the war,- կրկնեց դիջեյը և հավելեց,- տժժում ենք բոլորս:

Ուղտի և դիջեյի քթերը ջարդվեցին գրեթե զուգահեռա-

բար, մեկ կամ երկու վայրկյանի տարբերությամբ: Նրանք երկուսն էլ փռվեցին երաժշտական սարքի վրա, որը հավանաբար նրանց կոտրված քթերի հպումից ականջ ծակող մի շարունակական, սոսկալի ձայն արձակեց: Հետո Պողոսը այդ երկուսի ականջներից բռնած բարձրացրեց երաժշտական սարքի վրայից և սոսկալի ձայնը կտրվեց:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԹՈՒԹԱԿԸ ՎԻՐԱՎՈՐԵՑ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ ԵՎ ԴԱ ԱՐԵՑ ՇԱՏ ԻԶՈՒՐ

Չնայած փետրվար ամսվա համար բավականին տաք երեկո էր, Աչոնն ամեն դեպքում մի ծածկոց գցեց Պողոսի ուսերին, որը նստած էր հյուրանոցի քոթեջի բակում և սուրճ էր խմում՝ զուգահեռ զրուցելով թութակի հետ, որը վանդակի մեջ էր:

- Դու անշնորհք թռչուն ես: Չէ՞ որ ես քեզ սովորեցրել եմ ամեն բան չկրկնել՝ հատկապես երբ ներկա են ուրիշները:

- Ուրիշները, ուրիշները,- կրկնեց թութակը:

- Ինչո՞ւ նեղացրիր տնօրենին:

Թութակը ծռեց վիզը ու հարցական նայեց Պողոսին, կարծես ուզում էր ասել՝ դե բան էր՝ ասեցի:

- Ես քեզ հարցնում եմ՝ ինչո՞ւ վիրավորեցիր տնօրենին, ինչո՞ւ նրան ասացիր՝ ապուշ:

- Ապուշ, ապուշ, ապուշ,- կրկնեց թութակը՝ կարծես քրքջալով:

Տնօրենը Պողոսի սենյակ էր մտել դրանից քիչ առաջ

և թութակն իսկապես անվանել էր նրան ապուշ, ու պետք է ասել, որ շատ իզուր: Սակայն, թե ինչո՞ւ իզուր՝ կանդրադառնանք քիչ հետո, որովհետև մինչ այդ, ընթերցողին հավանաբար կհետաքրքրի, թե ի՞նչ հյուրանոցում էր, Պողոսը, ինչո՞ւ էր այդտեղ հայտնվել և ի՞նչ էր անում:

Փետրվարի հինգն էր, օրն ուրբաթ: Դրանից մի քիչ ավել, քան մեկ ամիս առաջ, Շնագայլին, Ուղտին ու դիջեյին պատժելուց հետո, երբ Պողոսը վերադարձել էր տուն, ինքնազգացողությունը կտրուկ վատացել էր: Այն աստիճան, որ Աչոնը ստիպված էր եղել դիմել բժշկի: Ոչ մի սարսափելի բան չկա՝ ասել էր բժիշկը, պայմանով, եթե Պողոսն առնվազն մեկ ամիս անցկացնի կիսաանկողնային ռեժիմով:

- Ոչինչ,- հանգստացրել էր Աչոնին Պողոսը, երբ բժիշկը գնացել էր,- հոգեբուժարանում, ուզած թե չուզած, կհետևեմ այդ ռեժիմին:

- Ի՞նչ հոգեբուժարան,- զարմացել էր Աչոնը:

Եվ Պողոսը նրան պատմել էր օրվա անցքերը՝ վերջում վստահություն հայտնելով, որ ոստիկաններն անպայման իր հետևից կգան, ու եթե իր «գժի թուղթն» աշխատի ու հոգեբուժարանով պրծնի՝ դեռ լավ է:

Պարզ է, որ Պողոսը գործել էր պահի ազդեցության տակ, առանց հետևանքների մասին մտածելու: Ու չնայած, բոլոր դրվագներում նա մուգ ակնոցներով ու դիմակով էր, բայց և այնպես՝ գտնել նրան կարելի էր:

Առաջին դեպքում քիչ հավանական էր, որ Շնագայլը փորձեր ընթացք տալ, որովհետև նա տեսել էր, որ Պողոսը նկարում էր ողջ պրոցեսը և, որ կարևորն է՝ իր խոստովանությունները՝ կապված իր առաջնորդի մարդկային որակների հետ: Այլ հարց է, որ նկարահանումը այս անգամ էլ չէր ստացվել, որովհետև Պողոսը, հայտնի չէ՝ թե ինչ կոճակ էր

սեղմել: Բայց այդ մասին շնագայլը բնականաբար չգիտեր:

Քիչ ավելի բարդ էր Ուղտի ու Դիջեյի պարագան, որոնց քթերը Պողոսը ջարդել էր ակումբում, տասնյակ վկաների ներկայությամբ: Ճիշտ է, այստեղ էլ նա եղել էր դիմակով ու ակնոցներով, սակայն գլխին չէր լայնեզր գլխարկը, և սույն հանգամանքը, չգիտես ինչու, շատ էր անհանգստացնում Պողոսին:

- Ես համոզված եմ, որ ոչինչ էլ չի լինի,- ասել էր Աչոնը պատմությունը լսելուց ու Պողոսին միայնակ գործելու համար մի փոքր հանդիմանելուց հետո,- բայց կարելի է որոշ ժամանակ թաքնվել: Այդպես ավելի ապահով կլինի, ու նաև մենք կհետևենք բժշկի ցուցմանը՝ կիսաանկողնային ռեժիմի իմաստով: Բացի այդ, առջևում նոր տարի է, որը միևնույն է մենք չենք տոնելու. բայց կարող ենք գոնե միասին դիմավորել… Մի խոսքով ես մի գաղափար ունեմ:

Իսկ Աչոնի գաղափարն այսպիսին էր. Աղվերանում կար մի հրաշալի հանգստյան տուն, ուր նա խաճախ էր լինում: Հրաշալի այդ հանգստյան տանը հրաշալի պայմաններ էին, շուրջը՝ հրաշալի բնություն և, որ գլխավորն է, կար հրաշալի մի քոթեջ, բուխարիով և ջակուզիով, որն Աչոնը շատ էր սիրում:

Եվ ահա, Պողոսն ու Աչոնը արդեն երեսունինն օր այստեղ էին: Ավելի ճիշտ՝ այստեղ էր Պողոսը, որովհետև Աչոնը նրան միանում էր միայն շաբաթավերջին: Բայց պատճառը թաքնվելը չէր, դրա կարիքը՝ պարզվեց, չկար, որովհետև ոչ ոք չէր պատրաստվում Պողոսին փնտրել:

Պատճառն այլ էր, ավելի ճիշտ՝ պատճառներն այլ էին: Նախ՝ Պողոսին չափազանց դուր էր գալիս այստեղ: Ասել, որ կիսաանկողնային ռեժիմը նա պահում էր, ճիշտ չէր լինի, բայց շատ էլ ակտիվ չէր և իրեն հրաշալի էր զգում. առա-

վոտյան և երեկոյան դուրս էր գալիս զբոսանքի, ցերեկնե-րը լողում էր հյուրանոցի լողավազանում, իսկ օրվա մնացած մասն անցկացնում՝ իր գյուտի վրա աշխատելով:

Երկրորդ պատճառը նույնպես կարևոր էր. Աչոնն ասել էր, որ հյուրանոցի տերն իր հետ մտերիմ է, ինքը մի անգամ նրան մեծ լավություն է արել, և հիմա, իբրև շնորհակալութ-յուն, նա իրենից գումար չի վերցնում:

Մի խոսքով՝ Պողոսը բոլորովին անվճար վայելում էր իր պասիվ հանգիստը:

Ակտիվ չէր նաև թութակը, բայց դա իր պատճառն ու-ներ. բանն այն է, որ Պողոսը որոշել էր զրկել նրան ազա-տությունից: Իր ձեռքով մի փառահեղ վանդակ էր սարքել՝ մեկ ու կես մետր երկարությամբ, մեկ մետր լայնությամբ և մեկ մետր բարձրությամբ: Աչոնը այն կոչել էր հինգաստղանի վանդակ: Այստեղ կային ծառի ճյուղեր, տերևներ, ծաղիկներ, շքեղ նախշազարդ սպասք ու մի մեծ հայելի: Բայց թութակը՝ միևնույն է, դժգոհ էր: Դժգոհությունը նա արտահայտում էր մի բառով՝ ապուշ: Այդ բառը մի անգամ լսել էր Աչոնից, սկսել էր կրկնել ու հավանաբար դուրն եկել էր:

Եվ ահա՝ փետրվարի հինգի երեկոյան, երբ հյուրանոցի տնօրենը մտավ Պողոսի քոթեջ, թութակը վանդակի միջից խեթ նայեց նրան ու ոչ այս կողմ, ոչ այն կողմ՝ ասաց.

- Ապուշ, ապուշ, ապուշ:

Եվ ինչպես արդեն ասացինք վերևում՝ շատ իզուր: Նա, իհարկե, այդ ժամանակ դեռ չգիտեր, թե ինչո՞ւ է եկել տնօրե-նը, բայց և այնպես՝ ճիշտ չարեց:

Իսկ տնօրենը եկել էր հայտնելու, որ հաջորդ օրը լուրջ իրադարձություն է սպասվում իրենց հյուրանոցում: Ավելի ճիշտ՝ նրա գալու նպատակը ոչ թե այդ լուրը հայտնելն էր, այլ դրա հետ կապված խնդրանքը:

Իրադարձությունն իսկապես լուրջ էր: Ավելի լուրջ չէր լինում: Հաջորդ երկու օրերին հյուրանոցում պիտի կայանար իշխող կուսակցության հավաքը, որին ներկա էր լինելու անձամբ Ճիկոլը…

- Դուք այդ մասին նո՞ր իմացաք,- հարցրեց Աչոնը:

- Որքան էլ որ զարմանալի է՝ այո,- մեղավոր տոնով ասաց տնօրենը,- բանն այն է, որ նրանք էլի են արել իրենց հավաքներն այստեղ և միշտ տեղյակ են պահում վերջին պահին: Մեզ քիչ առաջ զանգահարեցին կառավարության աշխատակազմից և ամրագրեցին ամբողջ հյուրանոցը:

- Ամբողջ հյուրանո՞ցը,- բացականչեց Աչոնը:

- Այո,- նույն մեղավոր տոնով շարունակեց տնօրենը,- լավ է, որ հիմա հանգստացողներ գրեթե չկան: Զբաղված են միայն երկու սենյակ և ձեր քոթեջը…

- Եվ ի՞նչ եք առաջարկում,- հարցրեց Աչոնը:

- Դե,- կմկմաց տնօրենը,- ինքներդ եք հասկանում…

Երևում էր, որ տնօրենը, որը հաճելի արտաքինով երիտասարդ աղջիկ էր, իսկապես իրեն վատ էր զգում: Երևում էր նաև, որ նա պարկեշտ աղջիկ է և իր գործի գիտակը:

- Այսինքն, Դուք ուզում եք, որ մենք ազատենք քոթեջը, որովհետև այստեղ է գալու Ճիկո՞լը:

- Ճիկոլը, ճիկոլը, ճիկոլը,- ուրախացած կրկնեց թութակը՝ ծանոթ անուն լսելով ու իր կողմից հավելեց,- ապուշ, ապուշ, ապուշ:

Տնօրենը շփոթվեց: Նա չհասկացավ՝ Ճիկոլն ով է, և այս անգամ ում է ապուշ ասում թութակը:

- Մենք ոչ մի տեղ չենք գնա,- վստահ հայտարարեց Աչոնը:

- Բայց…

Տնօրենն ուզում էր ինչ-որ բան ասել, սակայն Աչոնը չթողեց.

- Ամսի մեկին ես վճարեցի ևս մեկ ամսվա համար ճիշտ է:

- Ճիշտ է, բայց…

Այստեղ նույնպես տնօրենը չհասցրեց արտահայտվել, որովհետև հիմա էլ նրան ընդհատեց Պողոսը, որ մինչ այդ լուռ լսում էր: Նա չէր միջամտում խոսակցությանը մի քանի պատճառով. նախ՝ որովհետև տնօրենը աղջիկ էր, երկրորդ, որ նա հաճելի աղջիկ էր և երրորդ, որովհետև կարծում էր, թե իրենք այստեղ հանգստանում են անվճար:

Սակայն, Պողոսը դիմեց ոչ թե տնօրերին, այլ Աչոնին.

- Ինչպե՞ս թե՝ դու վճարո՞ւմ ես այստեղի համար: Ճիշտն ասած, ես այդ մասին աղոտ կասկածներ ունեի: Բայց գուցե ավելի լավ է, որ այդպես է,- նա դարձավ տնօրենին,- մենք ոչ մի տեղ չենք գնա, թող իրենք ուրիշ հյուրանոց ընտրեն:

- Ովքե՞ր՝ իրենք,- զարմացավ տնօրենը:

- Ճիկոլենք,- պարզաբանեց Պողոսը:

- Ճիկոլե, ճիկոլե, ճիկոլե…- կրկնեց թութակը:

- Ի՞նչ Ճիկոլե,- տնօրենը նայեց մերթ թութակին, մերթ Պողոսին, մերթ Աչոնին,- ես չեմ հասկանում, թե ո՞ւմ մասին եք դուք խոսում:

- Հիմա կբացատրեմ,- հանգիստ ասաց Պողոսը,- նստեք, խնդրեմ, ես ուզում եմ ձեզ մի քանի հարց տալ:

Տնօրենը մեխանիկորեն ենթարկվեց, նստեց բազկաթոռին ու շարունակեց զարմացած նայել մերթ թութակին, մերթ Պողոսին, մերթ Աչոնին:

Իսկ Պողոսի, գուցե նաև Աչոնի ու թութակի գլխում մի միտք էր ծագել: Հաջողությունն իր ոտքով եկել էր նրանց մոտ՝ փաստորեն: Էլ ե՞րբ կլինի նման առիթ, որ պատժվելու ենթակա բոլոր թեկնածուները, բոլոր «ղզիկները» միաժամանակ հավաքվեն իրար գլխի և այսքան մոտ: Հետևաբար պետք էր ամեն ինչ անել այս հյուրանոցում մնալու համար:

Զրույցը բավականին երկար տևեց, և, որպեսզի ընթերցողը չծանրաբեռնվի դրա մանրամասներով, արժե առանձնացնել թերևս վերջին հատվածը՝ թռուցիկ ասելով, որ սկզբի և մեջտեղի հատվածներում Պողոսը պարզեց մի քանի կարևոր բան. նախ՝ որ հյուրանոցը պատկանում էր մի մարդու, որը սերտ կապեր ուներ իշխանության մի բարձրաստիճան ներկայացուցչի հետ, երկրորդ, որ նույն այդ մարդը սերտ կապեր էր ունեցել նաև նախկին իշխանությունների մի բարձրաստիճան ներկայացուցչի հետ և երրորդ՝ որ թե՛ նախկին, թե՛ ներկա իշխանությունների օրոք այդ մարդը, հետևաբար՝ և հյուրանոցը, պրոբլեմներ չուներ:

- Որեմն ինչ է փոխվել Ձեր կյանքում,- հարցրեց Պողոսը:

- Ոչինչ,- անկեղծորեն պատասխանեց տնօրենը:

- Իսկ ո՞ւմ եք Դուք ընտրել,- անսպասելի շարունակեց Պողոսը:

- Ինչ նկատի ունեք,- շփոթվեց տնօրենը:

- Նկատի ունեմ՝ ո՞ւմ եք Դուք ընտրել:

- Ես քաղաքականությամբ չեմ զբաղվում:

- Դուք կարծում եք, որ ընտրություններին մասնակցելը քաղաքականությամբ զբաղվե՞լ է:

Այստեղ տնօրենը վերջնականապես շփոթվեց ու դիմեց արդեն Աչոնին.

- Ինչ եք ինձանից ուզում: Այո՛, ես սրանց եմ ընտրել, բայց հիասթափվել եմ, հիմա արդեն սրանք ինձ մոտ զզվանք են առաջացնում,- նա գնալով հուզվում էր,- ձեզ թվում է, թե ես շատ եմ ուզում տեսնել սրանց փռչոտ դեմքերը, բայց ինչ կարող եմ անել: Չէ՞ որ դուք հասկանում եք, որ ես ստիպված եմ. ինձ ասացին, որ ազատենք ամբողջ հյուրանոցը, նաև ասացին, որ գալու են անվտանգության աշխատակիցներ՝ տարածքի հետ ծանոթանալու համար:

Պողոսը խնդրեց տնօրենին չհուզվել և հանգիստ բացատրեց, թե ինչ կարող է նա անել:

- Պարզապես մոռացեք մեր գոյության մասին ու զբաղվեք ձեր փոչոտ հյուրերով:

- Իսկ, եթե ինձ հարցնեն, թե ինչու չեմ ազատել ամբողջ հյուրանոցը:

- Ասեք, որ մենք հրաժարվում ենք դուրս գալ ու մնացածը թողեք մեզ:

Երբ տնօրենը գնաց, Աչոնը նրա հետևից փակեց դուռը ու ասաց Պողոսին:

- Հուսամ դու գիտես՝ թե ինչ ես անում:

Բայց Պողոսը ոչինչ էլ չգիտեր: Դեռ նոր պիտի որոշեր, թե ինչ է անելու: Դրա համար էլ չպատասխանեց Աչոնին, ու փոխարենը դիմեց թութակին.

- Դու անշնորհք թռչուն ես, չէ՞ որ ես քեզ սովորեցրել եմ ամեն բան չկրկնել՝ հատկապես երբ ներկա են ուրիշները:

- Ուրիշները, ուրիշները,- կրկնեց թութակը:

- Ինչո՞ւ նեղացրիր տնօրենին:

Թութակը ծռեց վիզը ու հարցական նայեց Պողոսին, կարծես ուզում էր ասել՝ դե բան էր ասացի:

- Ես քեզ հարցնում եմ՝ ինչո՞ւ վիրավորեցիր տնօրենին, ինչո՞ւ նրան ասացիր՝ ապուշ:

- Ապուշ, ապուշ, ապուշ,- կրկնեց թութակը՝ կարծես քրքջալով:

ԵՐԿՈՒ ՎԱԽԸ ՄԻ ՄԱՀ Է

Պողոսն իսկապես չգիտեր, թե ինչ պիտի անի: Ու շատ էլ ժամանակ չկար մտածելու:

Մի բան էր միայն հստակ. այստեղ հավաքվելու էին մարդիկ, որոնց թվում էին՝ առանց բացառության, բոլոր նրանք, որոնք ներառված էին Պողոսի և Աչոնի կազմած ցուցակում, այսինքն՝ նրանք, որոնց քթերը դատապարտված էին կոտրվելու:

Ինչո՞ւ միայն այդքանը՝ կհարցնեն ընթերցողները: Եվ նրանցից շատերն անպայման կունենան իրենց, ավելի կոշտ տարբերակները: Անգամ՝ շատ ավելի կոշտ:

Բայց, թերևս արժե նախապես ասել, որ դրանցից և ոչ մեկի հետ Պողոսը չի համաձայնելու…

Այո՛, մարդիկ, որոնք պիտի գային Աղվերանի այս հանգստյան տուն մասնակցելու կուսակցական հավաքի, համենայնդեպս՝ նրանց մեծամասնությունը, ահռելի մեղք ունեին նրանում, որ եղավ պատերազմ, որ Հայաստանն այդ պատերազմում պարտվեց և որ հայ ժողովուրդը հիմա ծնկաչոք վիճակում էր: Եթե այդ մեղքն անմիջական էլ չէր, ապա՝ բավարար էր միայն այն, որ նրանք մի մարդու կողքին էին, որի մեղքը ապացուցման կարիք չուներ: Ու ոչ միայն նրա կողքին էին, այլև ցինիկաբար կրկնում էին այն ամենը, ինչ նա ասում էր: Եվ այո՛, այդ մարդիկ «զոմբիներ» էին՝ ինչպես արդարացիորեն ասում էր Աչոնը: Իսկ «զոմբիներին» չի կարելի թույլ տալ, որ նրանք ազատ շրջեն մարդկանց մեջ, առավել ևս որոշեն, թե այդ մարդիկ ինչպես են ապրելու: Այլ խոսքով ասած՝ չի կարելի թույլ տալ, որ նրանք երկիրը վե-

ռածեն «զոմբիլենդի» (վերջին բառն, իհարկե, Աչոնինն էր): Սակայն ի՞նչ անել՝ պայթեցնել նրանց փաթեթո՞վ (այս բառը նույնպես Աչոնինն էր):

Այո, Պողոսը ռումբ պատրաստել գիտեր, դա նրա համար մեկ ժամվա գործ էր և կարող էր պատրաստել այնպիսի ռումբ, որն օդ կթռցներ ամբողջ հյուրանոցը:

Բայց, չէ՞ որ այդ մարդիկ իր հայրենակիցներն էին և՝ ի վերջո մարդ էին: Իսկ Պողոսն, ինչպես հիշում եք, դեմ էր մարդասպանությանը: Անգամ, երբ խոսքը վերաբերում էր թշնամուն: Թշնամուն, եթե հիշում եք, Պողոսը գերադասում էր անդամալույծ անել, իսկ ներքին թշնամու դեպքում բավարարվում էր քիթը ջարդելով:

Այսքանը: Եվ պետք չէ այլ տարբերակներ առաջարկել Պողոսին, նա՝ միևնույն է, չի համաձայնելու:

Մնում էր հասկանալ, թե ինչպե՞ս ջարդել այդքան քիթ միաժամանակ և միևնույն վայրում:

Ըստ տնօրենի՝ հյուրերը պիտի ժամանեին հաջորդ օրը, իսկ անվտանգության աշխատակիցները հնարավոր է գային ավելի շուտ: Գրեթե անհնար էր, որ կհաջողվեր նրանց հետ լեզու գտնել և չազատել քոթեջը: Եթե հավաքին մասնակցեին միայն «զոմբիները», դեռ հնարավոր էր, որ ուժեղացված պահպանություն չլիներ, սակայն գալու էր նաև Ճիկոլը, իսկ նա վերջին ամիսներին այնպես էր վախեցած, որ անգամ իր նստավայրից հարյուր մետր այն կողմ գտնվող կառավարության մասնաշենք գնում էր հազարավոր ոստիկանների հսկողության տակ:

Հիմա, իհարկե, մի քիչ տարբեր էր, բայց միևնույն է, եթե նրա պահպանությունն իրականացներ ոչ թե հազար, այլ՝ հարյուր մարդ, ի՞նչ կարելի էր անել:

- Ես գնում եմ զբոսնելու,- Աչոնին ասաց Պողոսը՝ հագ-

նելով վերարկուն:

- Ես կգամ քեզ հետ,- առարկություն չընդունող տոնով ասաց Աչոնը՝ նույնպես հագնելով վերարկուն:

- Ինչո՞ւ ես այդպես որոշել:

- Որովհետև դու գնում ես ոչ թե զբոսնելու, այլ՝ մտածելու, իսկ ես ուզում եմ, որ մենք մտածենք միասին:

- Լավ,- համաձայնեց Պողոսը,- կմտածենք միասին:

Այն, ինչ միասին մտածեցին Պողոսն ու Աչոնը, նրանք իսկապես մտածեցին միասին:

Միակ ցավալին այն էր, որ Պողոսը պետք է զոհաբերեր իր մեքենայի ձայնային համակարգը:

Պատերազմ մեկնելիս նա ապամոնտաժել էր այդ համակարգը, որովհետև հսկա ձայնարկիչը զբաղեցնում էր բեռնախցիկի մեծ մասը և թողել էր այն քրոջ ավտոտնակում: Պատերազմից հետո, երբ տղերքը վերադարձրել էին իր մեքենան, նա նորից տեղադրել էր ձայնարկիչը բեռնախցում: Հիմա էլի ստիպված էր ապամոնտաժել:

Այդ համակարգը նա հավաքել էր տարիների ընթացքում և քիչ գումար չէր ծախսել: Այն կազմված էր հազար ու մի դետալներից ու պարագաներից, բայց գլխավորն, իհարկե, ութ հարյուր վատտ հզորությամբ ձայնարկիչն էր և ուժեղացուցիչը, որը Պողոսը նույնպես հավաքել էր սեփական ձեռքերով:

Երբ նա գնում էր սար ու ողջ հզորությամբ միացնում համակարգը, երաժշտության ձայնը լսվում էր մեկ կիլոմետր այն կողմ, իսկ հարյուր մետր շառավղով՝ պարզապես թնդում էր: Մի անգամ ծանոթներից մեկը, որը մի քանի հեկտար խաղողի այգի ուներ Արարատյան դաշտում, խնդրել էր Պողոսին իր մեքենայով գնալ այնտեղ և ողջ հզորությամբ միացնել համակարգը: Ինչ եք կարծում՝ ինչու: Որ տարածքից փախչեն օձերը: Հետո նա խոստովանել էր, որ դրանից

հետո՝ ողջ տարվա ընթացքում, այգիներում ոչ մի օձ չէր երևացել: Փոխարենը բողոքում էին հարակից գյուղերի բնակիչները, ուր նույն այդ տարվա ընթացքում արձանագրվել էր օձերի կողմից մարդկանց խայթելու տասը դեպք՝ բարեբախտաբար առանց մահվան ելքի:

Բայց, ի՞նչ կապ ունի այս ամենը մեր պատմության հետ՝ կհետաքրքրվի ընթերցողը: Այդ հարցին պատասխանելու համար նախ ներկայացնենք երկխոսությունը, որն ունեցան Պողոսն ու Աչոնը Աղվերանի հյուրանոցի կոնֆերենս սրահում:

Այստեղի մեծ երկփեղկ դռները բաց էին և երևում էր թե ինչպես է ներսում եռում աշխատանքը. հավաքարարները մաքրում-փայլեցնում էին սրահը, բանվորներն ինչ-որ իրեր էին տեղափոխում, իսկ տնօրենը ուշադիր հետևում էր այս ամենին: Նա նկատեց դռների մեջ կանգնած Պողոսին ու Աչոնին և ձեռքով արեց նրանց:

- Ես մեծ հաճույքով կպառկեի ահա այնտեղ և կկրակեի այդ կենդանիների ոտքերին,- ասաց Պողոսը՝ ցույց տալով սրահի անկյունը,- առաջին երեք շարքերում նստածները էլ երբեք չէին կարողանա քայլել:

- Ինչո՞ւ պառկեիր,- հետաքրքրվեց Աչոնը:

- Որովհետև գնդացրից գերադասելի է կրակել պառկած վիճակում,- բացատրեց Պողոսը:

- Այդպես չի լինի,- ասաց Աչոնը:

- Իհարկե, չի լինի,- համաձայնվեց Պողոսը,- կա երկու խանգարող հանգամանք. նախ ինձ մոտ չէ գնդացիրս, բայց, որ ավելի կարևոր է, այստեղ կարող են լինել քիչ թե շատ անմեղ մարդիկ:

- Ես դա նկատի չունեի,- ասաց Աչոնը,- անմեղ մարդիկ այստեղ հազիվ թե լինեն: Պարզապես ոչ ոք քեզ չի թողնի

այդտեղ պառկել ու հետո, այդ դեպքում քեզ կբռնեն ու ոչ մի գժի թուղթ քեզ չի օգնի:

- Իսկ ինչ կարծիքի ես, եթե մի պայթյուն կազմակերպենք այստեղ,- անսպասելի ասաց Պողոսը:

- Ինչ պայթյուն:

- Փոքրիկ մի պայթյուն, որը ոչ մեկին չի վնասի, բայց կվախեցնի այնպես, որ բոլորը կթրջեն իրենց ներքնաշորերը:

- Այսինք՝ վախեցնե՞լ նրանց:

- Այո, հենց վախեցնել:

- Այդ դեպքում ես մի գաղափար ունեմ. պետք չէ ոչ մի գնդացիր և ոչ մի ռումբ, պետք չէ ո՛չ կրակել, ո՛չ պայթեցնել, կարելի է այդ ամենի իմիտացիան անել պարզապես: Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ տեղի կունենա այստեղ, եթե լսվի նախ մի պայթյունի ձայն, ապա հնչեն կրակոցների ձայներ:

- Ասում են երկու վախը մի մահ է:

- Այո, երկու վախը մի մահ է:

- Մնում է հասկանանք, թե ինչպե՞ս կարելի է դա կազմակերպել:

Աչոնը մի քիչ մտածեց ու ասաց.

- Քո մեքենայի ձայնային համակարգը:

- Ինչ կապ ունի իմ մեքենայի ձայնային համակարրգը,- չհասկացավ Պողոսը:

- Այն ահավոր բարձր է, այնպես չէ՞:

- Այո:

- Դու կարո՞ղ ես հանել ձայնարկիչը:

- Ենթադրենք:

-Այն բլյութուֆ ունի՞:

- Ինչ,- չհասկացավ Պողոսը:

- Արի գնանք մեքենայիդ մոտ:

Պողոսի ձայնարկիչը բլյութուֆ ուներ: Իսկ Աչոնի գա-

ղափարը հետևյալն էր. համացանցից հեռախոսի մեջ ներբեռնել պայթյունի և կրակոցների հնչյուններ, ձայնարկիչը նախապես թաքցնել կոնֆերենս սրահում մի տեղ, ապա հավաքի ամենաթեժ պահին բլյութուֆով միանալ դրան:

Գաղափարը, պետք է ասել, ապշեցրեց Պողոսին, այն իսկապես փայլուն էր: Մնում էր գտնել իրականացնելու ձևը:

Դա, սակայն, այնքան էլ հեշտ չէր: Ինչպե՞ս էին տեղափոխելու հսկա և ծանր ձայնարկիչը սրահ, ի՞նչ էին ասելու տնօրենին ու մյուս աշխատողներին, որտե՞ղ էին թաքցնելու: Սրանք հարցեր էին:

Երբ նորից վերադարձան կոնֆերենս սրահի մոտ, նրանց ընդառաջ եկավ տնօրենը.

- Ես էլ ձեզ էի փնտրում,- նա շատ հոգնած տեսք ուներ,- Դուք ինձ ինչ-որ բան էիք ուզում ասե՞լ:

- Այո,- առանց մտածելու պատասխանեց Պողոսը,- ե՞րբ են գալու Ձեր ասած անվտանգության աշխատակիցները:

- Վաղն առավոտյան:

- Լավ: Ասացեք նրանց, թող մեզ տեսնեն:

- Ես արդեն ասել եմ:

- Ինչպե՞ս թե արդեն ասել եք:

- Ինձ զանգահարեցին և հարցրին, թե արդյո՞ք ազատել ենք բոլոր սենյակները, և ես ստիպված էի ասել, որ դուք հրաժարվում եք դուրս գալ: Դուք կարող եք ինձ մեղադրել, բայց մինչ այդ մի բան իմացեք. ես դիմում եմ գրել և դուրս եմ գալիս աշխատանքից: Ու հենց այսօր:

Պողոսն ու Աչոնը զարմացած նայեցին իրար, այնուհետև աղջկան:

- Հենց այսո՞ր,- հարցրեց Աչոնը,- ինչո՞ւ եք այդպես որոշել:

- Այսպես չի կարելի, այսպես պրոֆեսիոնալ չէ: Եվ սա առաջին դեպքը չէ, հասկանո՞ւմ եք:

- Ի՞նչ նկատի ունեք:

- Նկատի ունեմ հենց ձեր դեպքը. չի կարելի հյուրերի հետ այդպես վարվել:

- Այսինքն Դուք աշխատանքից դուրս եք գալիս մե՞ր պատճառով:

- Անկեղծ ասած, վաղուց էր դա հասունացել. հյուրանոցի տիրոջ հետ մենք տարբեր պատկերացումներ ունենք: Բայց ինձ համար մի անհանգստացեք, ես ուրիշ աշխատանք կգտնեմ: Ի վերջո ավարտել եմ Քորնելի համալսարանը:

- Իսկ ինչո՞ւ հենց այսօր,- հարցրեց Պողոսը:

- Որովհետև չեմ ուզում տեսնել դրանց փռչոտ դեմքերը:

Երբ տնօրենը հեռացավ, Աչոնը դիմեց Պողոսին.

- Այս աղջիկը կարող է մեզ օգնել:

- Ես էլ նույն բանը մտածեցի,- ասաց Պղոսը,- միայն թե որքանո՞վ ազնիվ կլինի նրան ներգրավել մեր վտանգավոր խաղի մեջ:

- Եթե վերջնական նպատակդ ազնիվ է, կարելի է ընթացքում շատ բաների վրա աչք փակել:

- Ոչ, նա երիտասարդ աղջիկ է,- կտրուկ ասաց Պողոսը, հետո մի քիչ մտածեց ու շարունակեց,- եթե անգամ ներգրավենք, պետք է այնպես անենք, որ նա ոչ մի դեպքում չտուժի:

- Լավ, բայց նախ պետք է մտածել թե ի՞նչ ենք անելու:

Թե ի՞նչ են անելու՝ մտածեցին արդեն դրսում, հյուրանոցի բակում:

Այստեղ մեծ հրապարակ էր, որտեղից մի քանի աստիճան բարձրանում էին դեպի հյուրանոցի բուն շենքի մուտքը: Տրամաբանության և արարողակարգի բոլոր կանոններով Ճիկոլի մեքենան պետք է կանգներ հենց այդ աստիճանների մոտ և հավաքի բոլոր մասնակիցները հենց այստեղ պետք է դիմավորեին նրան:

Բակը շարունակվում էր մի մեծ այգով, որի խորքում կային բազմաթիվ մշտադալար եղևնիներ հաստ սաղարթով և ամբողջովին ձյունով ծածկված: Այստեղից մինչև հրապարակի աստիճանները կլիներ մոտ հիսուն մետր: Տրամաբանության և ֆիզիկայի բոլոր կանոններով այստեղ հնչած կեղծ պայթյունը և դրան հաջորդած կեղծ կրակոցների ձայները ողջ ուժգնությամբ պիտի լսվեին այնտեղ, ուր գլխավոր հյուրը իջնելու էր մեքենայից, այսինքն՝ հյուրանցի մուտքի աստիճանների մոտ:

Հենց այստեղի եղևնիներից մեկի տակ էլ գիշերը Պողոսն ու Աչոնը տեղադրեցին ձայնարկիչը՝ քողարկելով նույն այդ սաղարթով ու ձյունով՝ բաց թողնելով միայն այն հատվածը, որտեղից ձայնարկիչն ընդունում էր բլյութուֆի ազդանշանը:

Բանն այն է, որ Պողոսը ճշտել էր որոշ մանրամասներ մինչ այդ իր համար անհայտ այս համակարգի մասին: Ըստ այդմ՝ ուղիղ տեսանելիության պայմաններում բլյութուֆը կարող էր աշխատել մինչև հիսուն մետրի վրա: Մնում էր գտնել հիսուն մետր այն կողմ մի հարմար տեղ թաքնվելու համար և հասկանալ, թե որքան էր պետք սպասել այնտեղ և երբ էր պետք միացնել ազդանշանը:

«Մեզ նոր մանրամասներ են հայտնի դարձել իշխող խմբակցության հավաքից, որին ներկա է եղել նաև վարչապետը: Այդ հավաքը եղել է Աղվերանի հանգստյան տներից մեկում: Խմբակցության շատ անդամներ այնտեղ են եղել շաբաթ օրվանից: Վարչապետը Աղվերան է ժամանել կիրակի՝ առավոտյան տասին և մնացել մինչև երեկո: Հավաքին ներկա են եղել խմբակցության պատգամավորները և կուսակցության վարչության անդամները՝ գրեթե ողջ կազմով: Թե ինչ է քննարկվել հավաքի ժամանակ հայտնի չէ, բայց

մեր ունեցած հավաստի տեղեկություններով՝ այսօր երկրի ղեկավարը աշխատանքի է ներկայացել չափազանց վատ տրամադրությամբ»:

Այս լուրը Պողոսն ու Աչոնը կարդացին երկուշաբթի օրը՝ երկու հազար քսան մեկ թվականի փետրվարի ութին:

Պողոսը պառկած էր անկողնում՝ երեսուն ութ ու ութ աստճան ջերմությամբ՝ ըստ Ցելսիուսի: Այլ կերպ չէր էլ կարող լինել. նա տուն էր եկել նախորդ օրը՝ կիրակի, առավոտյան ժամը տասնմեկին, իսկ դրանից առաջ ուղիղ քսանութ ժամ անցկացրել էր եղևնու սաղարթների տակ՝ ձյան մեջ նստած:

Պողոսն ու Աչոնը որոշել էին չսպասել անվտանգության աշխատակիցներին, որոշել էին նաև շատ չանհանգստացնել տնօրենին: Բայց մի փոքր անհանգստացնել, այնուամենայնիվ, ստիպված էին: Ուրբաթ երեկոյան գնացել էին նրա աշխատասենյակ, նախ՝ տեղեկացրել, որ մեկնում են հաջորդ առավոտյան և ասել, որ մի խնդրանք ունեն: Իսկ խնդրանքն այսպիսին էր. պատճենել հյուրանոցի տեսախցիկների հաջորդ օրվա տեսագրությունները, պահել և հետագայում փոխանցել իրենց: Ապա հրաժեշտ էին տվել և ասել, որ հիացած են նրա պրոֆեսիոնալիզմով և ազնիվ մարդկային կեցվածքով:

Հետո Պողոսը տեղափոխել էր իր Նիվան կողքի հյուրանոցի կայանատեղի՝ նախապես բեռնախցիկից հանելով ձայնարկիչը: Իսկ գիշերը, ինչպես արդեն ասվեց վերևում, ծածուկ տարել տեղադրել էր եղևնու տակ և քողարկել այն: Առավոտյան ժամը վեցին՝ լույսը չբացված, հյուրանոցից մեկնել էին Աչոնի Լեքսուսով: Բայց ոչ շատ հեռու: Կանգնել էին մոտակայքում, Պողոսը ճակատին մի համբույր էր ստացել Աչոնից և ոտքով վերադարձել հյուրանոցի տարածք: Անցել էր ցանկապատի վրայով, մտել այգի և թաքնվել նախապես

ընտրած մի վայրում քողարկված ձայնարկիչից քառասուն մետր հեռավորությամբ՝ եղևնու սաղարթի ներքո:

Առավոտյան ուղիղ ժամը ութին մի քանի մեքենաներով եկել էին անվտանգության աշխատակիցները: Նրանց մի մասը տեղակայվել էր հյուրանոցի բակում, մյուս մասը՝ նախ մտել հյուրանոցի հիմնական մասնաշենք, մոտ երկու ժամ անցկացրել այնտեղ, ապա՝ դուրս եկել և տնօրենի ուղեկցությամբ գնացել տարածքի այն հատվածը, ուր քոթեջներն էին: Եվս մեկ ժամ այնտեղ անցկացնելով՝ վերադարձել էին ու կրկին մտել հյուրանոցի հիմնական մասաշենք:

Պողոսն անակնկալի էր եկել: Մի՞թե այսքանը՝ մտածել էր նա:

Բանն այն է, որ երբ ինքն ու Աչոնը որոշել էին նման ձևով իրականացնել գործողությունը, դրա հաջող ելքի հավանականությունը գնահատում էին հիսուն-հիսուն: Շատ լավ իմանալով, թե ինչպես է իրականացվում պետության ղեկավարի պահպանությունը՝ հատկապես վերջին շրջանում, գրեթե վստահ էին, որ այստեղ կգան բազմաթիվ անվտանգության աշխատակիցներ, կքրքրեն ողջ տարածքը և կմնան մինչև վերջ: Եվ, իհարկե, շատ հնարավոր էր, որ այգում թաքնված Պողոսին գտնեին: Թե ինչպե՞ս կարդարանար այդ դեպքում Պողոսը՝ առանձնապես բարդ չէր: Չեք թողնում մարդ հանգիստ միզի՝ կասեր նա: Ու, քանի որ, եթե անգամ նրան խուզարկեին, մոտը ոչ մի կասկածելի բան չէին գտնի՝ բացի «գժի թղթից», նրան վատագույն դեպքում կտանեին «գժանոց»: Դա սարսափելի չէր: Բայց հնարավոր էր նաև, որ Պողոսին չգտնեին: Այդ դեպքում նա կաներ այն, ինչ պիտի աներ և երբ հնչեին կեղծ պայթյունն ու կրակոցները, օգտվելով անխուսափելի խառնաշփոթից, այգու միջով հանգիստ կգնար դեպի ցանկապատ, դուրս կգար հյուրանոցի տարած-

քից, կմտներ հարևան հյուրանոցի տարածք, որտեղ և իր Նիվան էր: Իսկ եթե անգամ չհաջողվեր հեռանալը և նրան բռնեին՝ կրկին սարսափելի ոչինչ չէր լինի: Չէ՞ որ կեղծ կրակոցներից ու պայթյունից ոչ ոք չէր տուժելու:

Մի խոսքով ծրագիրն հենց այդպիսին էր, ու երբ Պողոսը տեսավ անվտանգության աշխատակիցների գործողությունները, նա իսկապես զարմացավ: Ինչպե՞ս կարող էին նրանք այդքանով սահմանափակվել: Գուցե մնացածը պիտի գային հետո՞: Գուցե հիմնական գործողությունները դեռ առջևո՞ւմ էին:

Այդ հարցերի տրամաբանական պատասխանները Պողոսը կարող էր գտնել, եթե այդ ժամանակ իմանար, որ երկրի առաջին դեմքը այդ օրը չէր գալու: Գալու էր հաջորդ օրը: Եվ իհարկե նրան այցի նախապատրաստությունը լինելու էր տասնապատիկ ավելի լուրջ: Բայց Պողոսն այդ մասին չգիտեր:

Ժամը տասներկուսի կողմերը մեկը մյուսի հետևից, սկսեցին գալ պատգամավորները՝ մի մասը ծառայողական, մի մասը սեփական մեքենաներով: Պողոսի թաքստոցից շատ էլ լավ չէին երևում դեմքերը, բայց ամեն մի նոր «կենդանու» հայտնվելիս՝ Պողոսն հազիվ էր իրեն զսպում չմիացնել «պայթյունն» ու «կրակոցները»:

Հյուրերը մտնում էին հյուրանոցի շենք, հավանաբար տեղավորվում իրենց սենյակներում ու նախապատրաստվում առաջնորդի գալուն:

Եվ ահա, ժամը երկուսից քիչ անց մեծ ակտիվություն զգացվեց հյուրանոցի մուտքի մոտ: Թե ինչ էր կատարվում՝ Պողոսը լավ չէր տեսնում, սակայն պարզ էր, որ հյուրերը հերթով դուրս էին գալիս:

Եվ նա հասկացավ, որ պահը եկել է: Իսկ, երբ քիչ անց

եղևնիների սաղարթի միջից նշմարվեցին հյուրանոցի տարածք մտնող ոստիկանական մեքենաների թարթող լույսերը, և լսվեցին հատուկ ձայնային ազդանշանները, Պողոսը բացեց հեռախոսի էկրանը և պատրաստվեց միացնել ձայնագրությունը:

Սակայն կար մի անհասկանալի հանգամանք. ոստիկանական մեքենաները ընդամենը երկուսն էին և դրանք ուղեկցում էին ընդամենը երկու սև ամենագնացի:

Գուցե Ճիկոլը որոշել է այստեղ գալ ինկոգնիտո՞՝ մտածեց Պողոսը:

Եկողը, սակայն, ինչպես արդեն հավանաբար հասկացաք, երկրի ղեկավարը չէր: Թե ո՞ր բարձրաստիճան պաշտոնյան էր՝ այդպես էլ հասկանալի չեղավ ոչ այդ պահին, ոչ էլ հետագայում, որովհետև, առաջ ընկնելով ասենք, որ հյուրանոցի տեսախցիկների տեսագրությունը այդպես էլ չստացվեց:

Բայց դա կարևոր չէր: Կարևորն այն էր, որ գործողութ-



յունը միևնույն է՝ ստացվեց: Ոչ այն ծավալով, որով նախատեսված էր, բայց, միևնույն է, ստացվեց:

Երբ հնչեց պայթյունի ձայնը՝ հյուրանոցի մուտքի մոտ հավաքվածները փռվեցին գետնին ու մի պահ տիրեց մեռյալ լռություն՝ կարծես պայթյունն իրական էր ու բոլորը տվել էին իրենց հոգիները, եթե իհարկե ունեին նման բան:

Սակայն մի քանի վայրկյան անց, երբ հաջորդեցին կեղծ կրակոցները՝ սկսվեց սարսափելի խառնաշփոթ ու բարձրացավ մի իսկական վայնասուն:

- Թուրքերն են…

- Մամա ջան…

- Մի խփեք…

- Հանձնվում ենք…

Մի մասը շարունակեց պառկած մնալ, մի մասը վեր կացավ ու փախավ հյուրանոց, մի մասն էլ սկսեց անկանոն վազել այս ու այն կողմ:

Իսկ Պողոսը հանգիստ դուրս եկավ իր թաքստոցից, առանց շտապելու գնաց դեպի ցանկապատը, անցավ փողոց, քայլեց դեպի հարևան հյուրանոց, նստեց իր Նիվան ու գնաց տուն:

Իշխող քաղաքական ուժի մեծամեծ ներկայացուցիչները, որոնց մեջ էին Ուղտը, Շնագայլը, Գորտը, Աֆֆենպինչերը, Դիջեյը, Շեկ կապուցինը, որոնց մենք արդեն անդրադարձել ենք այս գրքում և էլի ուրիշներ, որոնց դեռ պիտի անդրադառնանք, անտարակույս իրենց ողջ կյանքում կհիշեն երկու հազար քսանմեկ թվականի փետրվարի յոթի այդ վայրկյանները: Թե ճրբ ավելի շատ թրջվեցին նրանց ներքնաշորերը՝ պայթյունի պահին, թե դրան հաջորդած կրակոցների ժամանակ՝ հայտնի չէ: Բայց որ թրջվեցին՝ կասկածից վեր է:

Այստեղ են ասել՝ երկու վախը մի մահ է:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ ԷՐ ՄՏԱԾՈՒՄ ՊՈՂՈՍԸ ՈՐՈՇ ԲԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկու հազար քսանմեկ թվականի փետրվարի վերջին Հայաստանում տեղի ունեցան երկու իրադարձություններ, որոնք վերջնականապես համոզեցին Պողոսին, որ թե՛ Հայաստանի իշխանությունները, թե՛ Հայաստանի ընդդիմությունը կառավարվում են դրսից:

Նախ հայկական հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում երկրի ղեկավարը, ինչպես շատ հաճախ՝ առանց մտածելու և ինչպես միշտ՝ նախկիններին խայթելու նպատակով, արեց մի հայտարարություն, որը շատ թանկ պիտի արժենար հենց իր համար: Երբ հարցազրույցի ժամանակ հաղորդավարը հիշեցրեց Ճիկոլին, որ երկրի նախկին նախագահը հանդիմանել էր նրան պատերազմի ընթացքում մեր զինանոցում գտնվող «Իսկանդեր» հրթիռային համալիրը չկիրառելու համար, Ճիկոլը հոխորտաց՝ «իսկ նա գիտի՞, թե ինչո՞ւ չի կրակել «Իսկանդերը» կամ եթե կրակել է՝ տասը տոկոսով է պայթել…»

Պետության առաջին դեմքի շուրթերից հնչած այս տարօրինակ հայտարարութունը չէր կարող անարձագանք մնալ:

Նախ դրան անդրադարձավ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը. ««Իսկանդեր» հրթիռային համակարգերից ոչ մի հատ Լեռնային Ղարաբաղի հակամարտության ընթացքում չի օգտագործվել: Հրթիռների ամբողջ զինապահուստը գտնվում է Հայաստանի զինված ուժերի պահեստներում: Նախարարությունում կարծում են, որ Հայաստանի վարչապետին թյուրիմացության մեջ են գցել»:

Չուշացավ նաև այն պետության ղեկավարի արձագանքը, որի դեմ պիտի կիրառվեր վերոնշյալ հրթիռային համակարգը: Նա, ըստ էության կրկնեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ասածը՝ պնդելով, որ պատերազմի ժամանակ Հայաստանը «Իսկանդերներ» չի կիրառել, ապա Հայաստանի վարչապետի խոսքերը անվանեց «անեկդոտական»:

Իսկ Հայասատանի Հանրապետության մի շատ բարձրաստիճան զինվորական վարչապետի հայտարարության մասին հարցին պատասխանելու փոխարեն քմծիծաղ տվեց, ինչի հետևանքով շատ չանցած աշխատանքից ազատվեց նույն վարչապետի կողմից:

Եվ սարսափելին այն էր, որ առաջինից, այսինքն՝ Ռուսաստանից, Ճիկոլն, ըստ էության, ներողություն խնդրեց, երկրորդի, այսինքն՝ Ադրբեջանի ասածն ընդունեց, մինչդեռ երրորդին՝ սեփական երկրի գեներալին, պաշտոնանկ արեց:

Մի քանի օրից վարչապետի մամուլի խոսնակը տարածեց հետևյալ հաղորդագրությունը.

«Հայաստանի վարչապետն առկա փաստերի և տվյալների համադրության արդյունքում եկել է եզրակացության, որ իրեն այս իրավիճակի առնչությամբ ճիշտ չի զեկուցվել…»:

Այս հաղորդագրությանը ծանոթանալով Պողոսը չդիմացավ և ասաց.

- Ապուշ, ի՞նչ է նշանակում՝ ճիշտ չի զեկուցվել: Ովքե՞ր էին զեկուցողները. եթե զինվորականները, ապա՝ սուտ ես ասում, քանի որ նրանց ներկայացուցիչը, լսելով «Իսկանդերի» չպայթելու մասին՝ քմծիծաղ տվեց, հետևաբար և չէր կարող նման բան զեկուցել: Եթե ուրիշները, ապա ինչո՞ւ էիր հավատում ուրիշների ասածին: Իսկ գուցե քո մամուլի խոսնա՞կն էր զեկուցել, կամ վարսավիրը, կամ խոհարարը:

«Ավելին, վարչապետի հայտարարությունը ոչ մի կապ չունի ռազմական և ռազմաարդյունաբերական համագործակցության ոլորտում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների բովանդակության ու որակի հետ: Կասկած չի հարուցում և այն հանգամանքը, որ ռուսական զենքը լավագույններից է աշխարհում»,- ասվում էր վարչապետի մամուլի խոսնակի հաղորդագրության հաջորդ պարբերությունում:

- Այն, որ Ճիկոլը ստախոս է ու հոգական հիվանդ, մենք գիտեինք,- շարունակեց Պողոսը՝ դիմելով Աչոնին,- բայց պարզվում է՝ նաև ապուշ է:

- Ապուշ, ապուշ, ապուշ,- արձագանքեց թութակը ու եթե մի քիչ ավելի խոսել իմանար, անպայման կհավելեր,- չէ՞ որ ես վաղուց էի ասում, իսկ դուք ինձ չէիք լսում:

Սակայն մինչ այդ՝ «Իսկանդերի» վերաբերյալ Ճիկոլի «դուրս տվածի» ու նրա իսկ կողմից խնդրած ներողության արանքում տեղի ունեցավ ավելի նշանակալի մի իրադարձություն:

«ՀՀ վարչապետը և կառավարությունն այլևս ի վիճակի չեն ընդունելու ադեկվատ որոշումներ՝ հայ ժողովրդի համար այս ճգնաժամային և ճակատագրական իրավիճակում: Գործող իշխանությունների անարդյունավետ կառավարումը և արտաքին քաղաքականությունում ցուցաբերած լրջագույն սխալները երկիրը հասցրել են կործանման եզրին: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ ՀՀ զինված ուժերը պահանջում են ՀՀ վարչապետի և կառավարության հրաժարականը, միաժամանակ նախազգուշացնում՝ ձեռնպահ մնալ ժողովրդի դեմ ուժ կիրառելուց…»

Այս հայտարարության տակ ստորագրել էին Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի

պետը, նրա երեք տեղակալները, բոլոր կորպուսների հրամանատարները, վարչությունների ու ծառայությունների պետերը՝ թվով տասնինը գեներալ և քսաներկու գնդապետ:

Երևանի օդում տիրում էր մոտալուտ հեղաշրջման շունչը: Այն զգում էին գրեթե բոլորը, բացի Պողոսից, չնայած՝ նա դուրս էր եկել փողոց և զբոսնում էր Երևանի կենտրոնում:

- Գնում ես Բաղրամյան պողոտա՞,- հարցրեց պատահական հանդիպած մի ծանոթ:

- Ինչո՞ւ պիտի գնամ Բաղրամյան պողոտա,- հարցին հարցով պատասխանեց Պողոսը:

- Ինչպե՞ս թե,- զարմացավ ծանոթը,- հեղափոխություն է լինելու, բանակն է խառնվել:

- Երբ խառնվում է բանակը, դա ոչ թե հեղափոխություն է, այլ հեղաշրջում,- բացատրեց Պողոսը,- բայց դա չէ կարևորը. կարևորն այն է, որ ոչ հեղափոխություն է լինելու, ոչ էլ հեղաշրջում:

Պողոսը հիմնավոր պատճառներ ուներ այդպես մտածելու: Առաջին պատճառը՝ «Իսկանդերի» պատմությունն էր: Ինչպես ասվեց՝ այդ ժամանակ Ճիկոլը դեռ «ներողություն» չէր խնդրել իր «դուրս տվածի» համար: Դա լինելու էր մի քանի օր հետո, երբ նույն այդ թվով տասնինը գեներալները և քսաներկու գնդապետները կամ, համենայնդեպս, նրանց մեծամասնությունը, հետ քայլ անեին:

Ինչ կապ ունի «Իսկանդերի» պատմությունը զինված ուժերի հայտարարության հետ՝ կհարցնի ընթերցողը Պողոսին: Ամենաուղղակի՝ կպատասխանի Պողոսը:

Հնարավո՞ր է պատկերացնել, թե ինչ զայրույթ էր առաջացրել Ճիկոլի «դուրս տվածը» ռուսաստանյան զինվորական վերնախավի և անձամբ գերագույն գլխավոր հրամանատարի մոտ: Չէ՞ որ Ճիկոլը դիպչել էր նրանց սրբության

սրբոցին՝ զինուժին: Ինչպե՞ս կարող էր ռուսական արտադրության զենքը չաշխատել: Ինչպե՞ս կարելի էր այդպիսի բան ասել: Եվ, որ ամենակարևորն է՝ ինչպե՞ս կարող էր այդպիսի բան ասել մեկը, որը գոյատևում էր բացառապես ռուսաց ցարի ողորմածության շնորհիվ:

Ինպիսի՜ ապերախտություն, ինչպիսի՜ «անաղուհացություն»:

Պե՞տք է արդյոք ցարը նրան պատժեր. իհարկե՝ պետք է: Թեթևակիորեն, ոչ վերջնական: Վերջնականորեն նա պատժելու էր հետո, երբ Ճիկոլն աներ ու ավարտին հասցներ այն, ինչ պիտի աներ ու ավարտին հասցներ:

Իսկ ինչպե՞ս պատժել թեթևակիորեն: Իհա՛րկե՝ ոչ ադրբեջանցիների միջոցով, ինչպես պատժեց նախորդ անգամ, երբ Ճիկոլն ավելի քան չափն անցել էր:

Եվ ռուսաց ցարը գործի դրեց Հայաստանի ներսում ունեցած իր ահռելի ռեսուրսի մի մասը, ինչի արդյունքում եղավ բարձրաստիճան զինվորականների հայտարարությունը:

Այն, որ դա մնալու էր ընդամենը հայտարարություն, այսինքն՝ դրան ոչ մի քայլ չէր հետևելու, Պողոսը համոզված էր, որովհետև, ինչպես արդեն ասվեց՝ դրա ժամանակը դեռ չէր եկել: Հայաստանի գործող իշխանությունները և անձամբ ծնկի եկած պետության ղեկավարը չափազանց ձեռնտու էին Ռուսաստանին և դեռ երկար էին մնալու այդպիսին՝ պայմանով, որ ընթացքում հիմարություններ չանեին:

Սակայն Ռուսաստանն իր ձեռքում էր պահում ոչ միայն Հայաստանի իշխանության ու անձամբ Ճիկոլի թելերը, այլև շատ ուրիշ թելեր, որոնցով խաղացնում էր Հայաստանի ընդդիմությանը և անձամբ ընդդիմության առաջնորդներին: Իսկ, որ ամենակարևորն է՝ Ռուսաստանի ձեռքին էին այն թելերը, որոնցով կառավարվում էր Հայաստանի ուժային

մեքենան: Եվ միայն այդ մեքենան էր ընդունակ երկրում իշխանափոխություն իրականացնել, որովհետև հստակ էր, որ այս անգամ ժողովրդական հեղափոխությունը բացառվում է, կարող է լինել միայն զինված հեղաշրջում:

Եվ այստեղ է, որ առաջանում էր տրամաբանական հարցը՝ եթե բանակի ողջ հրամանատարական կազմը՝ գլխավոր շտաբի պետը, նրա բոլոր տեղակալները, կորպուսների հրամանատարները և այլք պահանջում են ՀՀ վարչապետի և կառավարության հրաժարականը, միաժամանակ նախազգուշացնելով՝ ձեռնպահ մնալ ժողովրդի դեմ ուժ կիրառելուց, ապա ի՞նչը կարող է նրանց կանգնեցնել: Կամ, ավելի ճիշտ՝ ո՞վ կարող է նրանց կանգնեցնել…

Համենայնդեպս զինվորականների քայլն իր գործն արեց: Ընդդիմությունն այնպես ոգևորվեց, ինչպես երբեք դեռ չէր ոգևորվել, Ճիկոլն այնպես վախեցավ, ինչպես երբեք դեռ չէր վախեցել:

«Հայրենիքի փրկության շարժումը ողջունում է ՀՀ ԶՈՒ բարձրագույն հրամանատարական կազմի հայտարարությունը, դրանում արձանագրված բոլոր հաստատումները և իր զորակցությունն է հայտնում մեր երկրի միակ ու անշահախնդիր երաշխավոր մեր զինված ուժերին… Կոչ ենք անում մեր ժողովրդին, Հայրենիքի փրկության համար մտահոգ բոլոր քաղաքացիներին ժամը 15:00-ից հավաքվել Ազատության հրապարակում մեր զորակցությունը հայտնելու մեր զինված ուժերին ու ավարտին հասցնել հայրենադավ կառավարության ու Փաշինյանի հեռացման գործը»,- ասվում էր «Հայրենիքի փրկության շարժման» խորհրդի տարածած հայտարարության մեջ:

«Գլխավոր շտաբի հայտարարությունը համարում եմ պետական հեղաշրջման փորձ: Մեր բոլոր կողմնակիցներին

հենց հիմա հրավիրում եմ Հանրապետության հրապարակ»,- ֆեյսբուքյան իր էջում գրեց Հայաստանի վարչապետը:

Գրելու պահին նա հավանաբար այնպիսի հոգեխանգարման մեջ էր, որ չէր էլ հասկանում որ իր այդ կոչով միմյանց դեմ է հանում սեփական ժողովրդի երկու հատվածների: Կամ շատ էլ լավ հասկանում էր: Նրա միակ նպատակը իշխանությունը պահելն էր, որովհետև շատ լավ գիտեր, թե ինչ է իրեն սպասվում այն կորցնելու դեպքում:

Ինչ վերաբերում է ընդդիմության առաջնորդներին, ավելի ճիշտ՝ իրական, ստվերային ղեկավարներին, գուցե նրանք իսկապես մի պահ հավատացել էին, որ իշխանափոխության թույտվությունը տրված է, ընդ որում՝ առանց իրենց այդ մասին տեղյակ պահելու: Բայց, միևնույն է, փորձել էին ճշտել: Թե որքա՞ն էր տևել այդ ճշտելը՝ հայտնի չէ, բայց և այնպես, երբ նրանք կոչ էին անում ժողովրդին հավաքվել և կանգնել զինված ուժերի կողքին, արդեն շատ լավ գիտեին, որ ոչ մի իշխանափոխություն էլ չի լինելու:

Ուրեմն ո՞րն էր այս ամենի իմաստը՝ մտածում էր Պողոսը: Եթե բացարձակապես այլ տեղ են ծրագրվում ու որոշվում թե ի՞նչ զարգացումներ պետք է տեղի ունենան Հայաստանում, ե՞րբ պետք է տեղի ունենան և ինչպե՞ս պետք է տեղի ունենան ու նաև՝ թե ի՞նչ զարգացումներ ընդհանրապես պիտի տեղի չունենան, ապա ի՞նչ իմաստ ունի նորից խաբել մարդկանց:

Իհարկե լավ է, որ մարդիկ ոտքի են կանգնում, լավ է, որ ժողովրդի մեջ կա մի զանգված, թեկուզ և փոքր, որ ունի արժանապատվություն, որ ցավում է իր երկրի համար և պատրաստ է պաշտպանել այն, որ հանուն իր ապագայի չի վախենում ոչ ներքին պայքարից, ոչ էլ նորից պատերազմի մեջ մտնելուց: Իհարկե դա լավ է, այնպես որ՝ հոգով Պողոսը

նրանց կողքին է:

Իսկ ֆիզիկապես կշարունակի անել այն, ինչ անում էր մինչ այդ:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ՈՒ ԱՉՈՆԸ ՈՐՈՇԵՑԻՆ ՊԱՏԺԵԼ ԼԱՄԱՅԻՆ

Հայաստանի Հանրապետության յոթերորդ գումարման Ազգային Ժողովի սույն պատգամավորի անունը Լամա էր դրել մեկը, որը, անկասկած, հումորի զգացում ուներ:

Այդ մեկը, այսպես ասած՝ «նախկիններից» էր և հավանաբար միակ դրական բանը, որ կարելի է առանձնացնել նրա կերպարը ներկայացնելիս՝ հենց հումորի զգացումն էր: Այլապես նա նույնիսկ կենդանավայել կենդանի էլ չէր: Որդ էր: Ավելի ճիշտ՝ ճիճու, մակաբույծ, որն ապրում է մարդկանց մարմնի մեջ ու ներսից քայքայում այն:

Այս դեպքում սակայն այդ արարածը ապրում էր ոչ թե մարդկանց, այլ պետության մարմնի մեջ և ներսից քայքայում էր պետությունը: Եվ այդպես՝ մեկ տասնյակ տարի, գուցե ավելի: Ու նաև նրա և նրա նման այլ մակաբույծների պատճառով էր, որ իշխանության եկան լամաները, ուղտերը, շնագայլերն ու տարատեսակ այլ կենդանիները:

Սակայն եթե ճիճուները երկիրը քայքայում էին ներսից, նորելուկ կենդանիներն այնպես արեցին, որ երկիրը քանդեն դրսից: Ոմանք անգիտակցաբար, ոմանք՝ գիտակցելով: Բայց, բոլորը՝ նույն համառությամբ պաշտպանելով իրենց և

իրենց առաջնորդի արածը:

Եվ, քանի որ մեր պատմությունը այն ժամանակաշրջանի մասին է, երբ ճիճուներն այլևս իշխանություն չունեին, հանգիստ թողնենք նրանց և վերադառնանք մեր կենդանիներին՝ թերևս միայն կրկնելով, որ Լամա անունը չափազանց դիպուկ էր, այնքան դիպուկ, որ Պողոսին դուր էր եկել:

Բանն այն է, որ Պողոսը կրկին հեռուստացույց էր նայել: Եվ տեսել էր, թե ինչպես է Լաման արդարացնում իր առաջնորդին: Առցանց լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում նա ասում էր. «Երբ վարչապետին հարցրել են՝ Դուք ո՞ր կետից եք սկսում բանակցությունները, և նա պատասխանել է՝ իմ սեփական կետից՝ նկատի է ունեցել ոչ թե բանակցությունների բովանդակությունը, այլ իր վերաբերմունքը այդ բովանդակությանը»:

- Դու ինչ որ բան հասկացա՞ր,- հարցրեց Պողոսը թութակին:

- Ինչոբա, ինչոբա,- կրկնեց թութակը և իր կողմից հավելեց,- ապուշ, ապուշ, ապուշ:

- Այնուամենայնիվ, այդ ճիճուն շատ ճիշտ է դրել սրա անունը, իսկապես սա լրիվ լամա է:

Հետո, իր առաջնորդին, ըստ իրեն, արդարացնելուց հետո՝ Լաման անցավ նախկիններին պախարակելուն. «Ատելության որոշակի մթնոլորտ կա իշխանությունից զրկված կրիմինալ խմբակների մոտ ժողովրդի հանդեպ և նաև սրա արդյունքում, գուցե, որոշակի ժողովրդի՝ որոշակի մասի կողմից՝ նրանց հանդեպ»:

- Իսկ հիմա ի՞նչ հասկացար,- կրկին դիմեց Պողոսը թութակին

- Ապուշ, ապուշ, ապուշ,- արձագանքեց թութակը:

«Որոշակի խմբեր, օգտվելով այն առիթից, որ մեր եր-

կիրն ապրում է ծանր օրեր, լկտիացել են շատ մեծ չափով»,- շարունակեց Լաման:

Այստեղ Պողոսը չդիմացավ և քիչ էր մնում հայհոյեր, բայց անմիջապես էլ հիշեց, որ չի կարելի:

Բանն այն է, որ մեր հերոսը Պահքի մեջ էր... Եվ դա էր պատճառը, որ որոշակի ժամանակով դադարեցվել էին պատժիչ գործողությունները: Ինչպես հայտնի է Մեծ Պահքի ժամանակ պետք է հրաժարվել ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև բոլոր մեղքերից: Եսայի մարգարեն ասում է՝ «Ձեր ծոմապահության օրերին ձեր ցանկություններն եք կատարում... Այդպիսի ծոմապահությունը չէ, որ ես ընտրեցի»: Եվ եթե չկա հրաման՝ միշտ լինելու կերակրի պահքի մեջ, ապա կա պատվիրան՝ ամեն ժամ զգուշանալու մեղքից:

Արդյո՞ք մեղք էր այն, ինչ անում էր Պողոսը: Անկեղծ ասած՝ նա չգիտեր: Մարդկանց կարող է պատժել կամ Աստված, կամ օրենքը: Ինքը ոչ մեկն էր, ոչ էլ մյուսը:

Եվ առհասարակ՝ անգամ ամենամաքուր մարդը տարվա մեջ գոնե քառասունինը օր լավ է, որ մաքրվի: Չէ՞ որ մնացած երեք հարյուր տասնվեց օրերին հայտնի չէ՝ թե ի՞նչ մեղքեր է նա գործում:

Համենայնդեպս Պահքի ավարտին մնացել էր երկու օր, և գործողությունները հարկավոր էր անպայման շարունակել:

Ահա և ամենահարմար թեկնածուն: Ազգային ժողովի պատգամավոր պարոն Լաման: Մեկը, որը բացի պատգամավոր լինելուց, նաև ի պաշտոնե ներկայացնում էր պետությունը՝ միջազգային ամենահեղինակավոր հարթակներում:

Ի՞նչ է նշանակում՝ «որոշակի խմբեր, օգտվելով այն առիթից, որ մեր երկիրն ապրում է ծանր օրեր, լկտիացել են շատ մեծ չափով»: Այն, որ մեր երկիրն ապրում է ծանր օրեր՝ քո դիվանագիտական ձախողումների, սխալների կամ գու-

ցե՝ անգործության հետևանք է: Իսկ անվանել «լկտի» այն մարդկանց, որոնք երկիր ու հարազատ են կորցրել քո ու քո առաջնորդի սխալների ու ձախողումների պատճառով թշնամու սանձազերծած պատերազմի արդյունքում, ի՞նչ է, եթե ոչ սրիկայություն:

Ահա, թե ինչ էր մտածում Պողոսը: Լավ, սպասենք ևս երկու օր, ու նոր հասկանանք, թե ինչպե՞ս ենք քեզ պատժելու:

Երկու օր հետո, երկու հազար քսանմեկ թվականի Զատկի կիրակին՝ մինչև կեսօր, Պողոսն անցկացրեց քրոջ ավտոտնակում: Նախկին ձայնարկիչը «զոհաբերելուց» հետո պետք էր նոր ձայնային համակարգ հավաքել Նիվայի բեռնախցիկում: Եվ մեր հերոսը հենց դրանով էլ զբաղված էր: Երբ գործն ավարտելուց հետո ամբողջ հզորությամբ միացրեց իր սիրելի հայկական ռոք խմբերից մեկի երգը՝ հոգևոր մոտիվներով, բայց ռոքի բոլոր կանոններով, ավտոտնակի պատերից կախված գործիքները իրար եկան:

Այնուհետև Պողոսը բեռնախցիկի մեջ դրեց ձկնորսական պարագաները, խորովածի կրակարանն ու շամփուրները, ինչպես նաև իր սիրելի աստղադիտակը, մեքենան հանեց ավտոտնակից ու ճամփա ընկավ: Սակայն ճանապարհին մտափոխվեց, կանգ առավ ու զանգահարեց Աչոնին:

- Ես գնում եմ գետափ: Եթե գաս, քեզ համար ձուկ կխորովեմ, եթե իհարկե բռնեմ, լավ երաժշտություն կլսենք, մութն ընկնելուց հետո կնայենք աստղերին ու գիշերը կանցկացնենք վրանում:

Եթե դրանից երեք տարի առաջ ինչ-որ մեկն ասեր Աչոնին, որ նա երբևէ կհամաձայնի ճանապարհ գնալ հազար ինը հարյուր ութսունութ թվականի արտադրության Նիվայով, որը չէր լվացվել ութ ամիս, չորս կողմից խփված էր, հետևի ապակու փոխարեն էլ ցելոֆանի կտոր էր՝ Աչոնը անպայ-

մանորեն գրողի ծոցը կուղարկեր նրան:

Հիմա նա բակ իջավ երկար կարմիր ճտքակոշիկներով՝ առանց կրունկների, կիպ կաշվե սև շալվարով և երկար կարմիր կաշվե բաճկոնով: Տեսնելով Պողոսի Նիվան մի հոգոց հանեց ու ասաց.

- Գուցե գնանք ի՞մ մեքենայով:

- Ոչ,- առարկեց Պողոսը,- այնտեղ ուր գնում ենք՝ քո մեքենան չի հասնի:

Պողոսին, այնուամենայնիվ, հաջողվեց ձուկ բռնել: Նույնիսկ շատ ձուկ: Մի մասը նա խորովեց, մի մասը խաշեց և ուղիղ ժամը վեցին բացեց գինու շիշը: Հետո միացրեց իր սիրելի ռոքը: Հետո, երբ մութն ընկավ, երկար նայեցին աստղերին: Հետո խմեցին ևս երկու շիշ գինի: Հետո, երբ մտան վրան, Պողոսն ասաց Աչոնին.

- Ահա և ավարտվեց Պահքը, իսկ դա նշանակում է, որ կարելի է մտածել, թե ինչպես պատժել Լամային:

- Ո՞ւմ,- զարմացավ Աչոնը:

- Լամային,- կրկնեց Պողոսը:

- Ես կարծեմ գիտեմ, թե դու ում նկատի ունես,- ոգևորվեց Աչոնը,- գիտեմ նաև, թե ո՞վ է դրել այդ անունը: Ավելին, ես ճանաչում եմ նրան:

- Ո՞ւմ՝ Լամային, թե Ճիճուին:

- Ո՞վ է Ճիճուն:

- Նա, ով դրել է Լամայի անունը: Որտեղի՞ց ես դու նրան ճանաչում:

- Կարևոր չէ, բայց դու ճիշտ ես՝ նա ճիճու է, որ կա,- Աչոնը, չգիտես ինչո՞ւ, սկսեց ծիծաղել,- ի դեպ նրան էլ կարելի էր պատժել:

- Գուցե,- չառարկեց Պողոսը,- բայց դրանք տարբեր բաներ են:

- Լավ, իսկ ինչպես ես դու պատրաստվում պատժել Լամային:

- Հենց դա էլ ուզում եմ, որ մենք քննարկենք:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍՆ ՈՒ ԱՉՈՆԸ ՊԱՏԺԵՑԻՆ ԼԱՄԱՅԻՆ

Երբ Աչոնը հավաստի աղբյուրներից տեղեկացավ, որ պարոն Լաման մեկ շաբաթից մեկնելու է Փարիզ, այնպես ուրախացավ, կարծես մեկնելու էր ոչ թե Լաման, այլ ինքը: Ու անմիջապես էլ մտածեց՝ իսկ ինչո՞ւ ոչ:

Մինչ այդ, մոտ մեկ ամիս տարբերակներ էին փնտրել երկարավիզ այս կենդանուն պատժելու համար, բայց՝ ապարդյուն: Պողոսն օրեր շարունակ հերթապահել էր Ազգային ժողովի ծառայողական մուտքի դիմաց, Սիրահարների այգում՝ պարզելու, թե ինչպե՞ս է նա գալիս աշխատանքի, ինչպե՞ս, և որ կարևորն է, ո՞ւր է գնում աշխատանքից հետո, բայց Լաման այդպես էլ չէր երևացել:

- Նա կամ աշխատանքի չի գալիս, կամ աշխատանքից տուն չի գնում,- ասել էր Պողոսն Աչոնին:

Եվ ահա՝ այս տեղեկությունը:

Նման հնարավորությունը չի կարելի բաց թողնել՝ վստահ էր Աչոնը: Նա, իհարկե, ինքն իրեն մտքում խոստովանում էր, որ ավելի շատ գայթակղիչ էր ոչ թե Փարիզում Լամային պատժելու, այլ Փարիզում Պողոսի հետ ման գալու գաղափարը: Բայց ինչո՞ւ չհամատեղել հաճելին՝ գործի հետ:

Լամայի գործուղումն իրականում ոչ թե Փարիզ էր, այլ Ստրասբուրգ, ուր նա պիտի մասնակցեր Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նիստին: Սակայն, ինչպես տեղեկացրել էր վստահելի աղբյուրը՝ այնտեղից նա երկու օրով մեկնելու էր Փարիզ և նույնիսկ բացահայտել էր այն հյուրանոցի անունը, որտեղ պատգամավորի համար սենյակ էր ամրագրվել՝ բնականաբար, պետական բյուջեի հաշվին:

Ոչ, նման հնարավորությունը չի կարելի բաց թողնել: Սերունդներն իրենց չեն ների:

Մնում էր մի փոքր նյուանս՝ ինչպե՞ս մեկ շաբաթում ստանալ Շենգենյան վիզա, որովհետև իր վիզայի վավերականության ժամկետն ավարտվել էր, իսկ Պողոսը՝ հազիվ թե ունենար:

Բայց, ինչպես գիտենք, Աչոնն ուներ համաշխարհային կապեր:

Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանում գործընկերներին դիմավորեց Լալան՝ Աչոնի ընկերուհին: Նա եկել էր վարորդի հետ՝ Մազերատիով և անմիջապես էլ հայտարարեց, որ ամբողջությամբ հյուրերի տրամադրության տակ են և՛ վարորդը, և՛ Մազերատին, ինչպես նաև Փարիզի կենտրոնում գտնվող իր բնակարանը:

- Իսկ Փարիզը,- հարցրեց Աչոնը,- Փարի՞զն էլ է ամբողջությամբ մեր տրամադրության տակ:

Լալան պարզվեց հումորով աղջիկ է.

- Ոչ,- ասաց նա,- միայն հիսուն տոկոսը: Մյուս հիսունը խնդրում եմ թողեք Սիբալ Դլամինիի համար:

- Ո՞ւմ,- զարմացավ Աչոնը:

- Սիբալ Դլամինիի,- կրկնեց Լալան,- նա նույնպես իմ հյուրն է և գալու է երեկոյան:

- Լավ, բայց ո՞վ է նա,- պնդեց Աչոնը:

- Էսվատինիի արքայադուստրը, Նորին գերազանցություն Էսվանտինիի թագավոր Մսվաթի Երրորդի երեսունվեց զավակներից մեկը:

- Եվ նա քո հյուրն է:

- Այո: Նա ուզում է, որ մենք միասին օծանելիքի արտադրություն դնենք իր հայրենիքում:

Այլ մանրամասներ Էսվանտինիի արքայադստեր և նրա բիզնեսի մասին Լալան չհասցրեց հայտնել, որովհետև Պողոսը, որը մինչ այդ լուռ էր, անսպասելի ասաց.

- Դուք նկատի ունեք Սվազիլենդը:

- Այո, Սվազիլենդը՝ ներկայիս Էսվանտինին,- հաստատեց Լալան՝ Պողոսի տեղեկացվածությունից մի քիչ զարմացած,- Դուք ծանոթ եք այդ պետությանը:

- Ինձ հետաքրքրում են բոլոր ժամանակակից միապետություններն աշխարհում և պետք է ասեմ, որ Սվազիլենդը՝ նույն Էսվանտինին, դրանցից ամենահետամնացն է, չնայած ինքը՝ արքան, ամենահարուստ միապետերից է աշխարհում:

Մինչև Փարիզի կենտրոնի իր բնակարան հասնելը Լալան տարավ հյուրերին Փարիզի լավագույն ռեստորաններից մեկը, ուր նախապես սեղան էր պատվիրել, սակայն ինքը չմնաց. խնդրեց հաջորդ երեկոյի համար ոչինչ չպլանավորել, ինչպես և խոստացել էր՝ վարորդին ու Մազերատին թողեց նրանց տրամադրության տակ, ներողություն խնդրեց և հեռացավ անհայտ ուղղությամբ:

- Մենք եկել ենք այստեղ զվարճանալու, թե՞ լամային պատժելու,- հարցրեց Պողոսն Աչոնին՝ երբ նրա ընկերուհին արդեն գնացել էր:

- Եվ մեկը և մյուսը,- առանց մտածելու պատասխանեց Աչոնը,- լիցքաթափվի՛ր, մենք Փարիզում ենք:

- Ես կլիցքաթափվեմ, եթե ինձ բացատրես, թե ի՞նչ է սա

և ինչպե՞ս են այն ուտում:

Պողոսը ցույց տվեց հսկա լոբսթերը, որը հենց նոր մատուցողը դրել էր սեղանի մեջտեղում, այլ ծովային կենդանիների հետ:

Իհարկե, սխալ կլինի ասել, թե Պողոսն իրեն լավ չէր զգում: Նա առհասարակ իրեն լավ էր զգում միշտ, երբ Աչոնն իր հետ էր, չնայած համառորեն չէր ուզում ինքն իրեն խոստովանել դա: Առավել ևս չէր ուզում խոստովանել, որ իրեն սկսել էին դուր գալ նույնիսկ Աչոնի էկզոտիկ ու գլամուրային ելևէջները: Նույնիսկ Երևանում, երբ Աչոնը իրեն տանում էր այնպիսի տեղեր, ուր նա երբեք չէր եղել ու չէր էլ պատրաստվում լինել, հաճույքի ինչ-որ անծանոթ զգացում էր խուտուտ տալիս նրա հոգին: Իսկ այստեղ՝ Փարիզում… Բանն այն է, որ մեր հերոսը կյանքում մի անգամ էր եղել Հայաստանից դուրս՝ Կրասնոդարի երկրամասի Բրյուխովեցկայա ստանիցայում, ուր նրա վաղեմի ծանոթներից մեկը ռեստորան ուներ:

Բայց և այնպես պետք էր անել այն, ինչի համար էլ նրանք եկել հասել էին այստեղ:

Հյուրանոցը, ուր պիտի ապրեր Լաման, պարզվեց լավագույններից էր Փարիզում և գտնվում էր քաղաքի հենց սրտում՝ անմիջապես Տյուիլրի այգիների դիմաց: Սենյակների գներն այստեղ սկսվում էին հինգ հարյուր եվրոյից մեկ օրվա համար: Բայց, հանուն արդարության, պետք է նշել, որ Փարիզի շքեղ հյուրանոցներից սա ամենաթանկը չէր, կային կրկնակի, անգամ՝ եռակի ավելի թանկ հյուրանոցներ, և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորը, փաստորեն բավականաչափ խնայողաբար էր վարվել պետական բյուջեի ֆինանսների հետ:

Նա ժամանելու էր հաջորդ օրը, իսկ մինչ այդ հյուրանոց եկան Պողոսն ու Աչոնը:



Երբ նրանց Մազերատի Քուատրոպորտը կանգնեց հյուրանոցի մուտքի մոտ, վազելով մոտեցավ շվեյցարը և բացեց մեքենայի դուռը, Պողոսը հարցրեց Աչոնին.

- Հիմա պետք է ասել մերսի՞, թե՞ բոնժուղ:

Բանն այն է, որ դրանից առաջ, երբ պլանավորում էին իրենց մուտքը այս շքեղ հյուրանոցը, Աչոնը մի փոքր ինստրուկտաժ էր արել Պողոսին: Ոչ մի դեպքում զարմացած հայացք չընդունել, քիչ նայել աջ ու ձախ, և սահմանափակվել միայն մերսի և բոնժուղ բառերով: Մնացածն անելու էր ինքը՝ Աչոնը:

- Կարող ես ոչինչ չասել,- պատասխանեց նա Պողոսի տված հարցին:

- Բայց, այդպես քաղաքավարի չէ,- չհամաձայնեց Պողոսն ու, այնուամենայնիվ, շնորհակալություն հայտնեց շվեյցարին:

Հետո, երբ մտան հյուրանոց և մոտեցան պորտյեին, Պողոսը իր պարտքն համարեց բարևել վերջինիս:

- Ցավոք, մենք ամրագրում չունենք,- մաքուր ֆրանսերենով ասաց Աչոնը,- բոլորովին պատահական ենք որոշել կանգ առնել ձեզ մոտ:

- Ոչ մի խնդիր,- ժպտաց պորտյեն,- կարելի է նաև առանց ամրագրման:

- Այո, բայց մեզ հետաքրքրում է կոնկրետ համար:

- Ո՞ր համարը:

- «Էյֆելյան աշտարակ» լյուքսը:

- Շատ եմ ցավում,- մեղավոր դեմքով ասաց պորտյեն,- բայց այն զբաղված է:

Իհարկե այն զբաղված էր: Չէ՞ որ Աչոնը նախապես ճշտել էր դա booking-ի միջոցով: Բանն այն է, որ այս հյուրանոցում մնալու մտադրություն գործընկերները չունեին: Առավել ևս՝ «Էյֆելյան աշտարակ» անունը կրող լյուքսում, ուր մեկ օր մնալու արժեքը կազմում էր հազար հինգ հարյուր եվրո: Նրանց պետք էր պարզապես հնարավորինս հարմար տարբերակ՝ այստեղ մտնելու և ներսին ծանոթանալու համար:

- Մենք կարող ենք ձեզ տրամադրել այլ համար, նույնպես աշտարակի տեսարանով,- առաջարկեց պորտյեն:

- Ոչ,- առարկեց Աչոնը,- մեզ հետաքրքրում է հենց այդ համարը:

- Շատ եմ ցավում...- պորտյեն ուզում էր ինչ-որ բան ասել, բայց Աչոնը ընդհատեց նրան:

- Լավ, մենք առայժմ կընթրենք ձեր ռեստորանում, հետո կմտածենք:

- Իհարկե,- ուրախացավ պորտյեն,- հիմա ձեզ կուղեկցեն:

Պողոսը ողջ այդ ընթացքում, ինչպես և պայմանավորվել էին, ոչ աջ էր նայում, ոչ էլ՝ ձախ, այլ նայում էր վերև՝ առաստաղից կախված հսկա հախճապակյա ջահին: Միայն թե, զարմացած հայացք չընդունել՝ նրան ոչ մի կերպ չէր հաջողվում:

Ընթրիքը գործընկերների վրա նստեց երեք հարյուր վաթսուն հինգ եվրո, ևս երեսունհինգ եվրո նրանք թողեցին մատուցողին: Հետո մեկական բաժակ կոնյակ խմեցին բարում՝ վճարելով ևս իննսուն եվրո և թողնելով տասը եվրո թեյավճար: Բայց դա կարևոր չէր, կարևորն այն էր, որ Պողոսը հանգամանորեն ծանոթացավ տարածքին:

Ինչի՞ համար էր այս ամենը՝ կհետաքրքրվի ընթերցողը: Բանն այն է, որ մեր հերոսները գործողության պլան էին մշակել:

Ինչպես արդեն ասվեց՝ հավաստի աղբյուրը տեղեկացրել էր, որ Լաման հյուրանոցում մնալու է երկու օր: Թե որ սենյակում էր նա մնալու՝ Պողոսն ու Աչոնը, բնականաբար, չգիտեին, չնայած, եթե անգամ իմանային, ինչպե՞ս պիտի մտնեին սենյակ: Մնում էին ռեստորանն ու բարը: Սակայն, հյուրանոցում ապրել՝ դեռ չեր նշանակում պարտադիր օգտվել ռեստորանից կամ բարից: Կամ եթե անգամ Լաման օգտվեր այս երկուսից մեկից, այնտեղ՝ բոլորի աչքի առաջ,

որևէ բան անել չէր լինի: Ուրիշ բան, եթե նա գնար զուգարան: Իսկ որպեսզի գնար զուգարան, պետք է երկար մնար և բավականաչափ հեղուկ օգտագործեր, ցանկալի է՝ ալկոհոլ: Ուրեմն՝ ինչպե՞ս կազմակերպել դա:

- Դա արդեն թող ինձ վրա,- անառարկելի տոնով ասել էր Աչոնը:

Լաման հյուրանոց մտավ այնպիսի կեցվածքով, կարծես այն պատկանում էր առնվազն սեփական պապին: Նրա երկար վզին չափազանց անհաջող տեղադրված էր մի գլուխ, որի վրայից շուրջն էր նայում մեծամիտ, ինքնասիրահարված հայացքը: Լամային ուղեկցում էր կոստյումով ու փողկապով մի երիտասարդ՝ հավանաբար դեսպանատան աշխատակից:

Աչոնին չնկատել նրանք չէին կարող: Բայց միայն նկատելը բավարար չէր:

Մեր հերոսուհին նստած էր ֆոյեում տեղադրված հնաոճ բազկաթոռներից մեկին՝ ոտքը ոտքին գցած և խոսում էր հեռախոսով: Խոսում էր հայերեն և բավականաչափ բարձր: Բազկաթոռի առջև տեղադրված հնաոճ կաղնե սեղանին բացված էր «Լը Մոնդ» թերթը:

Նրան տեսնելով ու հայերեն խոսքերը լսելով՝ Լաման քարացավ տեղում և նրա մեծամիտ հայացքին անմիջապես փոխարինեց հիացմունքը: Աչոնը ժպտաց նրան, ինչպես և նախատեսված էր:

Լաման ինչ-որ բան ասաց ուղեկցին, վերջինս քայլեց դեպի պորտյեի սեղանը, իսկ ինքը մոտեցավ Աչոնին:

- Ես հատուկ այնպիսի հյուրանոց էի ընտրել, որ հայեր չլինեն, բայց Ձեզ տեսնելով ուրախացա,- ասաց նա՝ առանց որևէ նախաբանի:

Աչոնը մատով հասկացրեց, որ նա սպասի, քանի որ դեռ խոսում էր հեռախոսով, ապա ավարտելով ասաց.

- Դուք շատ քաղաքավարի եք: Իսկ ինչ ունեք դուք հայերի դեմ:

Պատգամավորը, եթե ամոթի դույզն–ինչ զգացում ունենար, կկարմրեր անպայման: Բայց նա ոչ միայն ամոթ չուներ, այլ չափազանց մեծ կարծիքի էր իր մասին, այնքան մեծ, որ առանց թույլտվություն հարցնելու նստեց կողքի բազկաթոռին, առանց թույտվություն հարցնելու վերցրեց սեղանին դրված թերթը և ասաց.

- Դուք հետաքրքրվում եք քաղաքականությամբ:

Աչոնը մի պահ պատկերացրեց, թե ինչ կաներ ինքնասիրահարված այս կենդանու հետ, եթե չլիներ նախապես կազմված գործողության պլանը: Բայց այն կար և առայժմ ամեն ինչ ընթանում էր ըստ այդ պլանի:

- Երբեմն,- ասաց նա փոխարենը,- բայց Դուք չպատասխանեցիք, թե ինչ ունեք հայերի դեմ:

- Զզվել եմ հայերից: Ուզում եմ մի քիչ հանգստանալ: Իսկ Դուք այս հյուրանոցո՞ւմ եք ապրում: Գուցե, մենք ընթրե՞նք երեկոյան:

Աչոնը չհասցրեց պատասխանել, որովհետև այդ պահին մոտեցավ կոստյումով ու փողկապով երիտասարդը և խնդրեց Լամայի անձնագիրը:

Պատգամավորը ծոցագրպանից հանեց իր դիվանագիտական անձնագիրը և մինչ երիտասարդին մեկնելը այնպես արեց, որ Աչոնը տեսնի այն:

- Ի դեպ, ես չներկայացա,- դիմեց նա Աչոնին, հետո կարգադրեց երիտասարդին,- ներկայացրու ինձ:

Մնացածը կարևոր չէր: Կարևորն այն էր, որ Աչոնի կազմած պլանը իսկապես աշխատեց և դրա համար նա անգամ ստիպված չեղավ ջանք գործադրել:

Ընթրեցին հյուրանոցի ռեստորանում և խմեցին մեկ շիշ

գինի: Հետո Աչոնն առաջարկեց տեղափոխվել բար՝ կոկտեյլ խմելու:

Ընթերցողին, անշուշտ, կհետաքրքրի, թե ինչի՞ մասին էին խոսում նրանք ողջ այդ ընթացքում: Այդ հետաքրքրությունը բավարարելու համար ներկայացնենք միայն մի քանի հատված նրանց խոսակցությունից, ավելի ճիշտ պատգամավորի ասածներից, որովհետև Աչոնը հիմնականում լսում էր:

«Մենք՝ հայերս ողորմելի ազգ ենք, մենք անընդհատ լացում ենք ու մեղադրում թուրքերին, որ մեզ կոտորել են: Եղբայր՝ չթողնեիք, որ ձեզ կոտորեն, ո՞վ է մեղավոր»:

«Ասում են պատերազմի ժամանակ թուրքերը օգնում էին Ադրբեջանին: Բա ո՞ւմ օգնեին, մե՞զ օգնեին»:

«Ասում են՝ ինչո՞ւ պատերազմ եղավ: Գնացել-մտել էինք նրանց տունը, տնավորվել ու չէինք ուզում դուրս գալ: Քսանհինգ տարի ասում էին դուրս եկեք, չէինք լսում, բա ի՞նչ անեին այդ մարդիկ»:

«Ասում են՝ ինչո՞ւ պարտվեցինք. բա ի՞նչ է պիտի հաղթեինք»:

Ու էլի նման բաներ:

Բայց հանուն ճշմարտության նշենք, որ վերջին պարբերությունը Լաման ասաց այն ժամանակ, երբ շշի միջի գինին գրեթե դատարկվել էր, և հիմնական խմողն էլ ինքն էր, որովհետև Աչոնը միայն կում էր անում:

Իսկ արդեն բարում՝ երկրորդ բաժակ կոկտեյլը խմելուց հետո Լաման ասաց.

«Ես քեզ մի գաղտնիք բացեմ. վարչապետն ինձ առաջարկում է արտաքին գործերի նախարարի պաշտոնը»:

Երբ Պողոսը ջարդեց Լամայի քիթը, ցավոք, սխալ հաշվարկեց հարվածի ուժը: Կամ կենդանին էր շատ ճիվաղ: Նա

ուշագնաց եղավ ու փռվեց արտաքնոցի հատակին, բայց քանի որ վիզը չափազանց երկար էր՝ գլուխը հայտնվեց զուգարանակոնքի մեջ:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՊՈՂՈՍԸ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Պողոսը շատ լավ էր հիշում այն ժամանակը, երբ Հայաստանի երրորդ հանրապետությունը մտավ կործանարար ընթացքի մեջ:

Հեռավոր հազար ինը հարյուր իննսունհինգ և իննսունվեց թվականներին, երբ Հայաստանում անցկացվեցին խորհրդարանական և նախագահական ընտրություններ, դրանք կարող էին լինել ազատ և արդար պետության կայացման իրական մեկնակետը: Դրա բոլոր նախադրյալներն առկա էին: Երկիրը հաղթել էր մի քանի տարի տևած պատերազմում, ժողովուրդը պատվով էր դուրս եկել այդ մի քանի տարիների փորձությունից՝ ըմբռնումով էր մոտեցել և դիմացել անխուսափելի զրկանքներին և սպասում էր լավ օրերի:

Եվ այդ լավ օրերը կարող էին գալ և անպայմանորեն կգային, եթե… Եթե չկեղծվեին ընտրությունները: Պետության այդ ժամանակվա առաջնորդը՝ առաջին նախագահը չցանկացավ կամ չկարողացավ դեմ գնալ իշխանություն պահելու տրիվիալ մարդկային բնազդին: Սակայն դեմոկրատիայի կործանումը նա սկսել էր դրանից առաջ, երբ նրա հրահանգով բռնություններ էին սկսվել ընդդիմության ու ազատ մա-

մուլի դեմ, երբ փակվել էին լրատվամիջոցներ, երբ երկրում հայտնվել էին առաջին քաղաքական բանտարկյալները:

Հիմա՝ երկու հազար քսանմեկ թվականի հունիսին նույն այդ մարդը իր անվանափոխված քաղաքական ուժի հետ պատրաստվում էր մասնակցել խորհրդարանական արտահերթ ընտրությունների:

Ահա թե ինչ էր ասվում այդ քաղաքական ուժի տարածած հայտարարության մեջ.

«Հայաստանը գտնվում է ծանրագույն վիճակում: Վտանգված են հայոց պետականությունը, քաղաքացիների ապահովությունը, երկրի սահմանները և տարածքային ամբողջականությունը, Արցախի գոյությունը: Գործող իշխանությունը ծանրագույն ռազմական պարտության տանելով երկիրն ու ժողովրդին ապացուցել է երկիրը կառավարելու իր անկարողությունը: Առաջացած կառավարման ճգնաժամը առավել բարդանում է երկրում ստեղծված ներքաղաքական ճգնաժամով և լարված հակամարտությամբ: Ժողովրդին ըստ էության առաջարկվում է ընտրություն կառավարման գործը ձախողած իշխանության և քրեաօլիգարխիկ կեղեքիչ համակարգի վերականգնմանը ձգտող ուժերի միջև»:

Եվ հիմա պետության սխալ ընթացքի հիմնական պատասխանատու այս մարդը, փոխանակ մեղա գար իր արած սխալների համար ու նաև նրա համար, որ ասպարեզ բերեց, նախ՝ նույն այդ իր ասած «քրեաօլիգարխիկ կեղեքիչ համակարգի» առաջնորդներին՝ պետության երկրորդ և երրորդ նախագահներին, իսկ հետո նույն այդ իր ասած «կառավարման գործը ձախողած իշխանության» առաջնորդին՝ Ճիկոլին, դարձյալ ուզում էր գալ իշխանության:

Բայց անգամ այս մարդու՝ պետության առաջին ղեկավարի հասցրած վնասները համեմատելի չէին այն վնասների

հետ, որը հասցրել էր պետության վերջին ղեկավարը՝ Ճիկոլը: Ու պատրաստվում էր էլի հասցնել:

Երկրում ազդարարվել էր արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի մեկնարկը:

Պողոսը կատաղած էր. կատաղած էր առաջին նախագահի վրա, կատաղած էր երկրորդ ու երրորդ նախագահների վրա, կատաղած էր բոլոր այն քիչ թե շատ հասուն քաղաքական ուժերի վրա, որոնք սատարում էին մեկին կամ մյուսներին:

Պողոսը դեմ գնալով ազատ ու արդար պետության կայացման վերաբերյալ բոլոր իր պատկերացումներին՝ համոզված էր, որ այս դեպքում ընտրությունների գնալ չի կարելի: Ընտրությունների գնալը, նրա համոզմամբ, նշանակում էր արդարացնել այն, ինչ արել էր այս իշխանությունը. արդարացնել պատերազմ հրահրելը, արդարացնել պատերազմում պարտվելը:

Ավելին՝ Պողոսի համոզմամբ ընտրությունների գնալը սխալ էր, եթե անգամ հարյուրտոկոսանոց երաշխիք լիներ, որ իշխանությունը պարտվելու է այդ ընտրություններում:

Բայց Պողոսը նաև համոզված էր, որ իշխանությունը հաղթելու է:

Հաղթելու է, որովհետև ստորաբար խաղալու է ժողովրդի գիտակցության նուրբ լարերի հետ, իսկ դրանում նա վիրտուոզ է:

Հաղթելու է, որովհետև իր ձեռքում է պետական կառավարման ողջ համակարգը և անպայմանորեն օգտագործելու է այն:

Հաղթելու է, որովհետև այդպես պետք է թե՛ Հյուսիսին, թե՛ Հարավին, թե՛ Արևմուտքին, թե՛ Արևելքին և անգամ՝ լուսնին, ավելի ճիշտ՝ լուսնի մահիկին:

Բայց և այնպես բոլոր քաղաքական ուժերը որոշել էին գնալ ընտրությունների: Թե՛ նրանք, որոնց կառավարման թելերը գտնվում էին Վաշինգտոնում, թե՛ նրանք, որոնց կառավարման թելերը գտնվում էին Բրյուսելում, թե՛ նրանք, որոնց կառավարման թելերը գտնվում էին Մոսկվայում, թե նրանք, որոնց կառավարման թելերը գտնվում էին Գրոզնիում, իսկ, որ ամենացավալի է՝ այն միակ քաղաքական ուժը, որի կառավարման թելերը սեփական ձեռքերում էին: Համենայնդեպս այդպես էր եղել մինչև վերջերս:

Պողոսը կատաղած էր: Կատաղած էր հատկապես վերջինի վրա, որովհետև, եթե բոլոր մյուս քաղաքական ուժերին նա միշտ էլ այս կամ այն չափով բացասաբար էր վերաբերել, այս մեկի հանդեպ ունեցել էր դրական վերաբերմունք:

Այս քաղաքական ուժի անվանման մեջ կար «հեղափոխական» բառը, որն, ավա՜ղ, վերջնականապես փոշիանում էր այս ընտրություններին գնալով: Եվ դեռ ավելին՝ «հեղափոխական» այս ուժը ընտրություններին գնում էր ոչ թե մենակ, այլ պետության նախկին նախագահի հետ՝ այդպիսով նրան հանձնելով իր կառավարման թելերը:

Եվ ահա, երկու հազար քսանմեկ թվականի մայիսի քսանվեցի երեկոյան Պողոսը նստած էր իր տան պատշգամբում, ցոգոլ էր կրծում ու ծանոթանում իշխող քաղաքական ուժի նախընտրական ցուցակին, որը հենց նոր էր հրապարակվել: Այստեղ էր նաև թութակը: Նա հանել էր վիզը վանդակի ճաղերի արանքից ու կարծես ինքն էլ էր ընթերցում ցուցակում տեղ գտած մարդկանց անունները:

Ցուցակում տեղ էին գտել բոլոր այն մարդիկ, ավելի ճիշտ՝ կենդանիները, որոնց Պողոսն ու Աչոնը պատժել էին: Պատվավոր տեղերում էին Ուղտն ու Լաման, քիչ ավելի հետ՝ Շնագայլն ու Դիջեյը, իսկ Աֆֆենպինչերն ու Գորտը հանգր-

վանել էին ցուցակի հետնամասում: Այստեղ էին նաև գրեթե բոլոր նրանք, որոնց վախը բռնել էր Պողոսն Աղվերանում:

Բայց կային նաև նոր անուններ. ցուցակում էին Վարազը և մեկ այլ օլիգարխ, որին Պողոսը նմանեցնում էր կզաքիսի:

Առաջին օլիգարխին հավանաբար ընթերցողը կհիշի. նրան Պողոսը տարիներ, կարելի է ասել՝ դեռ տասնամյակներ առաջ անվանել էր Վարազ: Այդ ժամանակ՝ իննսունականների սկզբին, երբ Հայաստանի և Արցախի ողջ հասարակ ժողովուրդը լուծում էր իր գոյատևման խնդիրը, Վարազը Երևանում ծաղկեցնում էր չարչիությունը և խաղամոլությունը: Իսկ իննսունհինգ և իննսունվեց թվականներին նրա թիկնազորը հսկում էր ընտրությունների կեղծման գործընթացը՝ չխորշելով ահաբեկումներից ու բռնություններից:

Երկրորդ օլիգարխը նույնպես ընտրությունների կեղծման, ավելի ճիշտ ընտրակաշառք բաժանելու մեծ վարպետ էր: Ինչպես արդեն ասվեց՝ նրան Պողոսը նմանեցնում էր կզաքիսի: Այս կենդանիների մասին հայտնի է, որ նրանք ապրում են գիշերային կյանքով, սնվում են մանր կրծողներով և լավ մագլցում են: Բայց նաև արդյունագործական օբյեկտ են՝ ոչնչացնում են վնասատուներին և ունեն շատ արժեքավոր մորթի:

Գուցե այս վերջին երկու հանգամանքներն էին պատճառը, որ Պողոսը որոշեց խնայել կզաքիսին: Իր բոլոր թերություններով հանդերձ՝ նա այնուամենայնիվ ուներ առավելություններ և, որ կարևորն է՝ «ղզիկ» չէր:

Դասական իմաստով «ղզիկ» չէր գուցե նաև Վարազը, բայց ընդամենը այդքանը: Սակայն կարելի էր համարել, որ Պողոսն արդեն նրան պատժել էր. ընթերցողը հավանաբար կհիշի, թե ինչպես նա իր հազար ինը հարյուր ութսունութ թվականի արտադրության խակի գույնի Նիվայով փակեց

Վարազի Ռոլս Ռոյսերի շարասյան ճանապարհը:

Պողոսը շարունակեց ծանոթանալ իշխող քաղաքական ուժի նախընտրական ցուցակին:

Համաձայն ընտրական օրենսգրքի նոր դրույթներից մեկի, կուսակցությունների և դաշինքների նախընտրական ցուցակների ամեն երեք համարներից մեկը պիտի լիներ իգական սեռի ներկայացուցիչ: Դա իհարկե ճիշտ և չափազանց սեքսուալ դրույթ էր, բայց, ինչպես գիտենք, Պողոսը կանանց հետ գործ չուներ: Բնականաբար՝ նրանց պատժելու իմաստով: Ու չնայած իշխող քաղաքական ուժի նախընտրական ցուցակում կային կանայք, որոնք պարզապես իրավունք չունեին կրել այդ վեհ անունը, Պողոսն, այնուամենայնիվ անցավ նրանց վրայով՝ բնականաբար ոչ բառի բուն իմաստով:

Ու հանկարծ մի անուն ընկավ նրա աչքով, և Պողոսը մի պահ չհավատաց տեսածին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՑ ՔԱՄԵԼԵՈՆԸ

Իշխող քաղաքական ուժի նախընտրական ցուցակի հրապարակվելուց երկու օր անց՝ երկու հազար քսանմեկ թվականի մայիսի քսանութին, Սարդարապատում լրագրողները հարցրին Քամելեոնին, թե ինչպես ստացվեց, որ նա հայտնվեց այդ ցուցակում: Եվ ահա թե ինչ պատասխանեց քամելեոնը. «Պետականությունը պահելը բոլորիս սրբազան գործն է, և իրենց հզորացնելու գաղափարի մեջ է հենց փնտրված իմ ներկայությունը: Այսինքն ցանկացած կարող

ուժ այս պահին պետք է լինի պետության կողքին, որ մենք մեր պետականության երերման ընթացքը ընդհատենք»:

Բայց ընթերցողին նախ վստահաբար կհետաքրքրի, թե ո՞վ էր Քամելեոնը, ինչո՞ւ էր քամելեոն, և որտեղի՞ց էր նրան ճանաչում Պողոսը:

Պողոսը նրան ճանաչում էր այն ժամանակվանից, երբ նա մի շատ բարձր պաշտոն էր զբաղեցնում կառավարությունում: Այդ ժամանակ, իհարկե, կառավարությունն ուրիշ էր, կառավարության գլխին ևս ուրիշ մարդ էր և ուրիշ էր կուսակցությունը, որի քվոտայով սույն սողունը դարձել էր կառավարության անդամ:

Երկու հազար տասը թվականն էր կամ գուցե՝ տասնմեկ: Պողոսը գործի բերումով հայտնվել էր Երևանի մամուլի ակումբներից մեկում, ուր կոնդիցիոներ պիտի տեղադրեր: Գործը, սակայն, ձգվել էր՝ ոչ իր մեղքով և Պողոսին խնդրել էին ժամանակավորապես դադարեցնել այն, քանի որ ակումբում ասուլիս էր նախատեսված: Հյուրը Քամելեոնն էր:

Պողոսը հավաքել էր իրերը և ակումբի երկրորդ հարկում սպասել՝ մինչ ասուլիսը կվերջանար: Հյուրի կերպարը նրան դուր չէր եկել՝ լպրծուն, վախվորած, դուր չէր եկել նաև խոսքը՝ շաբլոն ու կարծես անգիր արած: Բայց շատ էլ ուշադրություն չէր դարձրել: Չինովնիկ է՝ մտածել էր:

Ասուլիսն ավարտվել էր, սակայն չինովնիկը չէր շտապել հեռանալ: Նա ոտքը կախ էր գցել, սպասել՝ մինչև կհեռանան բոլոր լրագրողները, ապա՝ մոտեցել ասուլիսավարին: Վերջինս շքեղ արտաքինով ու կազմվածքով մի աղջիկ էր: Պողոսը լսել էր, թե ինչպես է չինովնիկը նրան ասում մոտավորապես հետևյալը՝ քանի որ ես՝ բարձրաստիճան պաշտոնյաս, ընդունեցի ասուլիսի քո հրավերը, դու էլ պիտի ընդունես միասին սուրճ խմելու իմ հրավերը: Բայց ասուլիսավարը ոչ

միայն շքեղ արտաքին ուներ, այլ նաև շքեղ հումոր: Ես կընդունեի Ձեր հրավերը, եթե Դուք այն անեիք ասուլիսի ժամանակ՝ լրագրողների ներկայությամբ՝ ասել էր նա: Չինովնիկը նեղացած հեռացել էր, բայց ոչ երկար ժամանակով. քիչ անց վերադարձել էր, ձեռքին մի շիշ էժանագին կոնյակ ու «բոնբոներկա»: Սակայն ասուլիսավարուհին արդեն գնացել էր և նրան դիմավորել էր Պողոսը, որն այդ պահին կանգնած էր շինարարական սանդուղքի վրա: Շնորհակալություն՝ ասել էր նա, դրեք այդտեղ, ես հիմա կիջնեմ ու կխմեմ:

Եվ ահա այդ չինովնիկը, նույն ինքը՝ սողունը, նույն ինքը՝ Քամելեոնը հիմա ընդգրկվել էր իշխող քաղաքական ուժի նախընտրական ցուցակում և, պետք է ասել, բավականին պատվավոր տեղում: Եվ փաստորեն իրեն համարում էր «կարող ուժ» և ասում էր, որ «իրենց հզորացնելու գաղափարի մեջ է հենց փնտրված իր ներկայությունը»: Իսկապես՝ սրանից ավել էլ ինչ հզորացնել:

Բայց Քամելեոնին պատժել Պողոսը որոշեց ոչ այս ամենի համար, այլ հենց նրա համար, որ նա քամելեոն է:

Գույնը փոխող, ժամանակի պահանջներին հարմարվող քաղաքական գործիչներ, իհարկե, միշտ էլ եղել են և շարունակելու են լինել: Միշտ էլ եղել են մարդիկ, որոնք երեկ կուրծք էի ծեծում հանուն մի բանի, այսօր՝ այդ նույն բանի դեմ, մարդիկ, որոնք երեկ երդվում էին մեկի արևով, այսօր՝ հայհոյում են:

Բայց այս մեկը բացառիկ կերպար էր: Եվ նրան պատժելով գուցե հնարավոր լիներ ուղերձ հղել մյուսներին:

Աչոնը՝ լսելով Պողոսի նոր մտահաղացման մասին, առանձնապես չոգևորվեց:

- Շատ մանր ձուկ է,- ասաց նա:

- Ոչ թե ձուկ, այլ՝ սողուն,- ուղղեց Պողոսը:

Հետո ցույց տվեց Աչոնին Քամելեոնի նկարը:

- Ես, հո՛ սրան ճանաչում եմ,- բացականչեց Աչոնը:

- Որտեղի՞ց ես ճանաչում:

- Ջերմուկից:

- Ջերմուկի՞ց:

- Այո, մենք այնտեղ հանգստանում էինք:

- Ովքե՞ր՝ դուք:

- Ես ու ընկերուհիներս:

- Իսկ ի՞նչ կապ ունի քամելեոնը:

Այս խոսակցությունից մոտ տասը տարի առաջ, երբ Աչոնն իր «բոմոնդից» մի քանի ընկերուհու հետ հանգստանում էր Ջերմուկի պանսիոնատներից մեկում, իսկապես առիթ էր ունեցել շփվելու Քամելեոնի հատ: Դա հենց այն ժամանակն էր, երբ վերջինս մի շատ բարձր պաշտոն էր զբաղեցնում: Երեկոյան ռեստորանում ընթրելիս նա մոտեցել էր տիկնանց, ներկայացել ու առաջարկել նրանց իր հյուրը լինել: Ասել էր, որ հարևանությամբ ունի մի շքեղ առանձնատուն, ուր կա լողավազան և սաունա: Տիկնայք, իհարկե, մերժել էին, բայց նկատի ունենալով նրա դիրքը՝ դա արել էին այնքան քաղաքավարի, որ սողունը չէր ընկալել: Քիչ անց նա նախ մի շիշ շամպայն ու, չգիտես ինչու, ձմերուկ էր ուղարկել տիկնանց, հետո՝ նորից մոտեցել: Այս անգամ տիկնայք նրան ուղարկել էին գրողի ծոցը: Բայց հետաքրքիրը դեռ առջևում էր. մի քիչ հետո մոտեցել էր մատուցողը և տարել շամպայնը: Ձմերուկը, չգիտես՝ ինչո՞ւ, թողել էր:

Այս պատմությունը հիշելուց ու Պողոսին պատմելուց հետո Աչոնը ոգևորվեց:

- Ձվարճալի՛ կլինի նրան պատժելը,- ասաց նա,- և կարծես թե ես գիտեմ՝ ինչպես դա անել:

Մինչև գործողությունը պլանավորելը՝ գործընկերները

մեկնեցին Ջերմուկ և ճշտեցին երկու բան. նախ՝ Քամելեոնի առանձնատունը դեռ կա, երկրորդ՝ նա ամեն շաբաթ-կիրակի անցկացնում է այստեղ:

Եվ ահա՝ երկու հազար քսանմեկ թվականի հունիսի հինգին, գործընկերներն իրականացրին իրենց թերևս ամենահեշտ և ամենազվարճալի գործողությունը:

Երբ Ջերմուկ տանող ճանապարհին, Գնդեվազն ան-

ցած, Ազգային ժողովի պատգամավոր Քամելեոնը տեսավ բալի գույնի Լեքսուսի բաց կապոտի առջև կանգնած Աչոնին, հավանաբար չհավատաց աչքերին:

- Ինչ է պատահել այս սիրուն աղջկա հետ,- հարցրեց նա իջեցնելով մեքենայի ապակին:

- Սիրուն աղջկա հետ ոչինչ չի պատահել,- ժպտաց Աչոնը,- պատահել է մեքենայի հետ:

- Վայ քոռանամ ես,- Քամելեոնն իջավ մեքենայից,- էս գյոզալ Լեքսուսի հետ ինչ պիտի պատահի:

- Անիվն է ծակվել,- ասաց Աչոնը:

- Պագռիշկեն,- զարմացավ Քամելեոնը,- բա, ինչո՞ւ ես բացել կապոտը:

- Այստեղ մի կոճակ կա, սեղմում ես, անիվը ինքն իրեն վերանորոգվում է:

- Իսկապե՞ս,- էլ ավելի զարմացավ Քամելեոնը,- ես էլ եմ ունեցել Լեքսուս, բայց չեմ իմացել, որ նման բան կա:

- Իհարկե կա,- Աչոնը հազիվ էր զսպում ծիծաղը,- միայն թե չեմ կարողանում գտնել:

- Դարդ չանես, հիմա կգտնենք,- ասաց պատգամավորը՝ քշտելով ճերմակ վերնաշապիկի թևերը ու հանկարծ նկատելով Աչոնի ձեռքի հեռախոսը հարցրեց,- էդ նկարո՞ւմ ես:

- Ոչ, ուզում եմ լույս տալ, որ հեշտ գտնեք:

- Հա՜,- ասաց Քամելեոնը գլուխը մտցնելով կապոտի մեջ:

Հետո երևի գլխի ընկավ, որ կեսօր է ու երկնքում շողում է արեգակը և դարձյալ գլուխը հանեց կապոտի միջից:

Բայց Աչոնի փոխարեն հետևում կանգնած տեսավ Պողոսին:

Քամելեոնը չհասցրեց որևէ բան ասել, չհասցրեց անգամ զարմանալ, որովհետև մի հարված ստացավ քթին ու գլուխը կրկին հայտնվեց կապոտի մեջ:

- Ա՜խ,- գոռաց նա,- ես ոչ մի բան չեմ արել, ուզում էի օգնել:

Պողոսը բռնեց նրա ականջից ու նստեցրեց գետնին: Հետո տոպրակի միջից հանեց մետաղյա մի տարրա, բացեց այն ու պարունակությունը լցրեց պատգամավորի գլխին:

Տարրայի մեջ պարզվեց ներկ էր:

- Ի՞նչ եք անում,- գոռում էր պատգամավորը,- ես ի՞նչ եմ արել: Ես ներողություն եմ խնդրում:

- Ինչի՞ համար ես ներողություն խնդրում, եթե ոչինչ չես արել,- հարցրեց Պողոսը:

- Դե, ես... ես ուզում էի...

- Սա ի՞նչ գույն է,- ընդհատեց նրան Պողոսը:

- Կապույտ,- ասաց պատգամավորը առանց մտածելու:

- Ճիշտ է,- Պողոսը մեկ այլ տարրա հանեց տոպրակից, բացեց ու պարունակությունը նորից լցրեց պատգամավորի գլխին,- իսկ, սա՞ ինչ գույն է:

- Դը-դը-դեղ-ղին,- կմկմաց պատգամավորը:

- Դարձյալ ճիշտ է:

Պողոսը հանեց երրորդ տարրան, բացեց, բայց չհասցրեց կանաչ ներկը լցնել քամելեոնի գլխին, որովհետև այդ պահին մի բեռնատար մոտեցավ ու դանդաղեցրեց ընթացքը:

- Օգնեե՞ք,- գոռաց Քամելեոնը,- ոստիկանություն զանգեք, սպանում են:

Բեռնատարը կանգ առավ, մի տարեց մարդ հանեց գլուխը պատուհանից ու ասաց.

- Լավ էլ անում են, քեզ տեղն է:

Ու քշեց հեռացավ:

Պողոսը ճիշտն ասած՝ չհասկացավ, թե ինչպես բեռնատարի վարորդը ճանաչեց պատգամավորին, որովհետև նրա գանգը ամբողջովին ծածկված էր կապույտ ու դեղին ներկերով: Բայց դրա ժամանակը չէր: Կանաչ ներկն էլ դատարկեց նրա գլխին և այդպիսով գործն ավարտած համարելով մի թուղթ մեկնեց նրան և ասաց.

- Կարդա բարձր ձայնով...

Եվ պատգամավորը կարդաց՝ սպիտակ վերնաշապիկի թևքով սրբելով աչքերի վրայի ներկը.

- Պաշտոնապես հայտարարում եմ, որ ես քամելեոն եմ և զգուշացնում եմ բոլոր մյուս քամելեոններին, որ նրանք ևս

պատժվելու են: Կեցցե՛ Ճիկոլը:

Այս անգամ գործողությունն ամբողջությամբ տեսագրվեց: Բայց, քանի որ ողջ այդ ընթացքում Աչոնը թուլացել էր ծիծաղից, և նրա ձեռքն անընդհատ դողում էր, տեսագրության որակը լավ չստացվեց. Քամելեոնը կադրում անընդհատ թպրտում էր…

ԲՈՐԵՆԻՆԵՐՆ ՈՒ ՆԱՊԱՍՏԱԿՆԵՐԸ

Երկու հազար քսանմեկ թվականի հունիսի քսանին Հայաստանում անցկացված արտահերթ խորհրդարանական ընտրություններում իշխող քաղաքական ուժի տարած հաղթանակը չափազանց անսպասելի էր: Անսպասելի էր շատերի համար, բայց ոչ Պողոսի:

Նա համոզված էր, որ իշխանությունը հաղթելու է, որովհետև համոզված էր, որ Ճիկոլը երբեք չէր գնա ընտրությունների, եթե վստահ չլիներ իր հաղթանակի մեջ: Դա պարզապես անհնար էր:

Ճիկոլն՝ ինքն էր իր չմտածված գործողություններով, հոգեխանգարմունքի պահերին արված հայտարարություններով ատելություն ու թշնամանք սերմանել երկրի ներսում, ստեղծել մի մթնոլորտ, որպիսին երբեք չէր եղել Հայաստանում: Նման մթնոլորտում՝ պատերազմ հրահրած, պատերազմում պարտված երկրի ղեկավարը չէր կարող չհասկանալ, որ իշխանությունից զրկվելու հաջորդ իսկ օրը իրեն կբզկտեն: Ոչ թե կդատեն, ոչ թե կձերբակալեն, այլ՝ կբզկտեն:

Լավ, բայց ո՞րն էր նրա վստահության պատճառը:

Ի՞նչ անհավանական հնարք, ի՞նչ չտեսնված աճպարարություն էր պետք անել, որ ամեն ինչ ձախողած, երկիրը կործանման շեմին հասցրած, հազարավոր հայրենակիցների զոհվելու պատճառ դարձած իշխանությունը կրկին հաղթեր ընտրություններում:

Ինչի՞ վրա էր նա հույսը դրել:

Այստեղ էր ամենամեծ ողբերգությունը: Նա հույսը դրել էր ժողովրդի վրա: Ավելի ճիշտ՝ ժողովրդի մի ստվար հատվածի տկարամտության վրա: Եվ ոչ ոք նրանից լավ չգիտեր, թե ինչպե՞ս կարելի է խաղալ այդ տկարամտության հետ:

Պողոսը շատ լավ գիտակցում էր, որ սարսափելի բան է տկարամիտ համարել այն վեց հարյուր ութսունութ հազար յոթ հարյուր վաթսունմեկ մարդկանց՝ այսինքն Հայաստանի Հանրապետության բնակչության քսաներեք տոկոսին, որոնք ընտրությունների ժամանակ իրենց ձայնը տվել էին իշխող քաղաքական ուժին: Բայց Պողոսը նաև գիտեր, որ յուրաքանչյուր ժողովրդի մեջ կա տկարամիտների հոծ զանգված և յուրաքանչյուր ազնիվ իշխանության պարտքը պետք է լինի ոչ թե օգտագործել այդ զանգվածին իր շահի համար, այլ այդ զանգվածի միջից տկարամտությունը աստիճանաբար վերացնելը:

- Գոնե չվերցնեն մանդատները,- ասաց Պողոսն Աչոնին ընտրությունների արդյունքներին ծանոթանալով:

- Ո՞վ չվերցնի,- հարցրեց Աչոնը:

- Ընդդիմությունն՝ իհարկե:

- Իսկ ավելի լավ չէ, որ գնա խորհրդարան և քրքրի սրանց:

- Ոչ, դա անհնար է: Սրանք անցել են դեմագոգության, ստախոսության, զազրախոսության ու մանիպուլյացիաների

ճիկոլական դպրոցը և սրանց ոչ ոք չի կարող քրքրել,- ասաց Պողոսը, ապա՝ ժպտալով ավելացրեց,- իհարկե՝ բացի մեզանից:

- Սակայն այդ դեպքում ինչպե՞ս պայքարեն: Չէ՞ որ փողոցի պայքարը չստացվեց:

- Այն, որ փողոցի պայքարը չստացվեց, ուներ բոլորովին այլ պատճառներ և այդ պատճառներից մեկն էլ ընտրությունների գնալն էր:

Ինչպես ասվեց սա երկու հազար քսանմեկ թվականի հունիսի քսանմեկին էր՝ ընտրությունների հաջորդ օրը:

Դրանից մեկ ամիս և տասներկու օր հետո՝ երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի երկուսին Պողոսն ու Աչոնը հեռուստացույցով հետևում էին Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստին:

Նիստն այդ անցկացվում էր նախադեպը չունեցող

հսկողության ներքո: Ազգային ժողովի շենքն օղակի մեջ էին վերցրել հազարավոր ոստիկաններ, նույն այն շենքը, որի ցանկապատերը փսևդոհեղափոխությունից հետո նորելուկ իշխանությունները բացել էին քաղաքացիների առջև: Իբր՝ ժողովրդի ընտրյալներն իրենց չէին առանձնացնում ժողովրդից: Հիմա, սակայն, նրանք իրենց չէին առանձնացնում ոստիկաններից, որոնք այնպես էին կանգնած շենքի պարիսպների տակ, կարծես այն պաշտպանում էին թշնամուց:

Բայց ավելի հետաքրքիր էր ներսում կատարվողը: Այստեղ էլ, ընտրություններում հաղթած իշխանական պատգամավորները այնպես էին խանդավառված, կարծես հաղթել էին թշնամուն: Չնայած, գուցե նրանք հենց այդպես էլ ընկալում էին նրանց, ովքեր իրենց չէին ընտրել:

Նորընտիր իշխանական պատգամավորների ելույթները Պողոսը լսում էր նողկանքով: Բայց պետք է լսեր: Ոչ միայն նոր խորհրդարանի առաջին նիստի ժամանակ, այլ դրան հաջորդած ևս մի քանի նիստերի: Պետք է լսեր, որպեսզի թարմացներ իրենց ցուցակը:

Իսկապես նողկալի էր այդ ամենը: Ելույթների մեծամասնությունը ոչ մի աղերս չուներ քաղաքական խոսքի հետ, բայց դա դեռ ոչինչ. հազվադեպ էին այն ելույթները, որոնք վերաբերում էին պատգամավորի օրենսդիր գործունեությանը, այսինքն նրան, ինչի համար այս մարդկանց՝ ժողովուրդը մանդատ էր տվել: Բայց ոչ, պարզվում է՝ ժողովուրդը դրա համար չէր նրանց մանդատ տվել: Տվել էր, որ նորընտիր պատգամավորները քծնեն իրենց առաջնորդին ու փնովեն նրա թշնամիներին: Ու այնպիսի տպավորություն էր, թե նրանք մրցում էին, թե ո՞վ ավելի խորը կքծնի և ո՞վ ավելի ուժեղ կփնովի:

Բայց հանուն արդարության պետք է նշել, որ ընդդիմա-

դիր պատգամավորների ելույթները ևս առանձնապես քաղաքական չէին և մեծամասամբ ուղղված էին հակառակորդին սևացնելուն:

Մի խոսքով՝ երեսունհինգն ընդդեմ յոթանասունմեկի: Ուժերն, իհարկե անհավասար էին ու զարմանալի չէր, որ ընդդիմությունը տանուլ էր տալիս: Առայժմ՝ տանուլ էր տալիս խոսքով, սակայն հասունանում էր այն պահը, երբ պիտի տանուլ տար իսկական ձեռնամարտով, ավելի ճիշտ՝ նախ շշամարտով, հետո նոր՝ ձեռնամարտով…

- Մեզ նոր ցուցակ է պետք. պատժիչ գործողությունները մտնում են նոր փուլ,- ասաց Պողոսը՝ տեսնելով թե ինչպես են իշխանական պատգամավորները բորենիների նման հարձակվել ընդդիմադիր պատգամավորների վրա, որոնք էլ՝ իրենց հերթին, հիշեցնում էին նապաստակների:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՑ ԴՈԴՈՇԸ

Ճիշտն ասած, երբ երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի քսանհինգին Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հայտնի «շշամարտը», որին հաջորդեց պատգամավորների միջև ծեծկռտուքը, Պողոսն ու Աչոնը որոշել էին պատժել հենց այդ միջադեպի մասնակիցներից մի քանիսին, որոնց մեջ չէր մտնում Դոդոշը: Եվ սույն երկկենցաղի բախտը գուցե իսկապես բերեր, եթե այդ օրը նա չորոշեր ելույթ ունենալ Ազգային ժողովի ամբեռնից:

Բայց Դոդոշը ելույթ ունեցավ: Ելույթ ունեցավ և ասաց

բաներ, որոնց համար չպատժվել, պարզապես, չէր կարող:

Եվ խնդիրը շողոքորթությունն ու քծնանքը չէին, այլ՝ բացարձակ, չտեսնված լկտիությունը:

Նա իր ելույթը սկսեց ընդդիմադիրներին ուղղված երեք հարցերով, որոնք ավելի շատ մեղադրանք էին, քան հարց: Այդ հարցերը կամ մեղադրանքները վերաբերում էին Հայաստանի երրորդ հանրապետության մի քանի ցավալի էջերի ու դրվագների, որոնց ընթացքում մարդիկ էին սպանվել: Ընդհանուր առմամբ տասնինը մարդ:

Ընդդիմադիր պատգամավորները, որոնց հասցեագրված էին մեղադրանքները, այդ դրվագներում նույնքան մեղավոր էին, որքան ասենք՝ Դոդոշն ինքը, որն այդ իրադարձությունների ժամանակ եղել էր համապատասխանաբար վեց, տասը և տասնվեց տարեկան: Այլ հարց է, որ մեղադրանքներն իրականում ուղղված էին ընդդիմադիր պատգամավորների առաջնորդին, որն էլ իր հերթին այդ իրադարձություններից առնվազն վերջինի մեջ պակաս մեղավոր էր, քան Դոդոշի առաջնորդը:

Բայց դա էլ չէր խնդիրը: Խնդիրն այն էր, որ պատգամավորը մեղադրում էր ընդդիմադիրներին ու նրանց առաջնորդին՝ տասնինը մարդու մահվան չհիմնավորված մեղավորության մեջ՝ մոռանալով, որ ինքն ու իր առաջնորդը մեղավոր են մի քանի հազար մարդու մահվան մեջ: Եվ դա հիմնավորման կարիք չուներ:

Պատգամավորը ձեռքը խփում էր ամբեռնին և ասում՝ ամո՛թ ձեզ: Նա փորձում էր ձայնին խրոխտ տոն տալ, բայց միևնույն է նրա ասածը հնչում էր դոդոշի կվկվոցի կամ ճվճվոցի պես, ինչպես կուզեք: Հատկապես՝ երբ ընդդիմադիրներին ամոթանք տալուց հետո դիմում էր վարչապետին և տալիս հավատարմության երդում:

- Տեսնում ես այս գորտին,- ասաց Պողոսն Աչոնին:

Սակայն Աչոնը չհամաձայնեց նրա հետ.

- Ոչ, սա գորտ չէ: Անգամ գորտերն այսքան անճոռնի ու լպրծուն չեն լինում: Սա դոդոշ է:

- Դոդոշ, դոդոշ, դոդոշ,- կրկնեց թութակը, որը սիրում էր այն բառերը, որոնց մեջ կային Շ, Ճ և Չ տառերը:

Այստեղից էլ մնաց Դոդոշ անունը:

Ինչպես ասվեց վերևում, սույն երկկենցաղը Պողոսի և Աչոնի ցուցակի մեջ չկար և, եթե չլիներ նրա ելույթը, նրա վրա ուշադրություն չէին էլ դարձնի: Բայց նա ելույթ ունեցավ և իր ելույթով դատապարտեց ինքն իրեն:

Սակայն, դա միակ սխալը չէր, որ նա գործեց:

Երկրորդ սխալն այն էր, որ օգոստոսյան մի շոգ կիրակի Դոդոշը որոշեց գնալ Սևանա լիճ: Դոդոշի սիրտը, կամ ավելի ճիշտ՝ մարմինը, ջուր էր ուզել:

Ընդահանրապես, դոդոշները՝ լինելով երկենցաղներ, այնուամենայնիվ իրենց կյանքի առավելագույն մասն անցկացնում են ցամաքում և ջուր մտնում են հիմնականում ձվադրման համար: Այնպես որ այս մեկը՝ պատգամավոր դոդոշը, բոլորովին էլ պարտադիր չէր, որ ջուր տենչար և այդպիսով վտանգեր իր անճոռնի մռութը:

Մասնավոր լողափը, որտեղ պատժվեց Դոդոշը, ըստ մամուլի որոշ հրապարակումների պատկանում էր մեկ այլ պատգամավորի, որին ընթերցողը շատ լավ ծանոթ է և որին Պողոսը պատժել էր հիվանդանոցի վերելակում: Խոսքն իհարկե Աֆֆենպինչերի մասին է:

Բայց, հանգիստ թողնենք գրպանի շանը, մանավանդ, որ նա այնտեղ չէր:

Եվ այսպես, երբ Աչոնը հավաստի աղբյուրներից տեղեկացավ, որ Դոդոշը կիրակի առավոտյան մեկնելու է Սևան

և այդ մասին տեղեկացրեց Պողոսին, վերջինս ծիծաղեց և ցիտեց մեծն Օստապ Իբրահիմիչին, իհարկե՝ մի քիչ փոխելով նրա խոսքերը:

- Ստիպված ենք լինելու պատժել ոչ միայն ցամաքում, այլև՝ ջրում:

Սևան գնացին Աչոնի Լեքսուսով և տեղ հասան ավելի ուշ, քան Դոդոշը: Բայց ճանապարհին եղավ մի բան, որը կարևոր նշանակություն պիտի ունենար պատգամավորին պատժելու գործում:

Երբ անցան Շորժան ու լողափի ցուցանակին հետևելով՝ թեքվեցին աջ, գրունտային ճանապարհի վրա մեքենայի դիմացը կտրեց մի օձ: Այն գալարվելով անցնում էր փողոցը: Պողոսը դանդաղեցրեց մեքենայի ընթացքը և ասաց Աչոնին.

- Մի վախեցիր, լորտու է:

- Իսկ ինչո՞ւ որոշեցիր, որ ես վախենում եմ,- զարմացավ Աչոնը:

- Շատ ավելի լավ,- ասաց Պողոսը:

Ու հանկարծ նրա մտքով մի բան անցավ: Կանգնեցրեց մեքենան ու բացեց դուռը:

- Ի՞նչ ես անում,- հետաքրքրվեց Աչոնը:

- Ոզում եմ բռնել օձին:

- Կարելի՞ է իմանալ՝ ինչու:

- Այն մեզ պետք կգա:

- Դու պատրաստվում ես պահե՞լ նրան: Կարծում եմ թութակին դա դուր չի գա:

Բայց Պողոսն արդեն դուրս էր եկել մեքենայից: Նա հանգիստ մոտեցավ օձին, կռացավ ու նույնքան հանգիստ բռնեց վզից: Սողունը բոլորովին չդիմադրեց, ասես հենց այդպես էլ պայմանավորվել էին, որ հենց այստեղ, հենց այս ժամին պիտի սպասեր Պողոսին:

- Դու վստահ ես, որ այն թունավոր չէ,- ձայն տվեց Աչոնը:

- Իհարկե, այլապես այն մեզ պետք չէր գա,- Պողոսը օձին բռնած մոտեցավ մեքենայի բեռնախցիկին,- դու որևէ մեծ տուփ, կամ արկղ ունես այստեղ:

- Չգիտեմ, նայիր բեռնախցիկում:

Պողոսն այնտեղ գտավ մի մեծ տոպրակ, որի մեջ նույնքան մեծ տուփ էր: Բացեց այն և տեսավ մի զույգ կոշիկ:

- Այս կոշիկները քեզ պետք են:

- Ինչ կոշիկ:

Պողոսը բարձրացրեց և ցույց տվեց բարձրակրունկ կարմիր կոշիկները:

- Ինչ ես ուզում անել,- բացականչեց Աչոնը,- գիտես, դրանք ինչ արժեն:

Պողոսը մի կողմ դրեց կոշիկները և տուփի մեջ տեղավորեց օձին: Այնուհետև փակեց տուփը, գրպանից հանեց ծալովի դանակն ու մի քանի անցք արեց դրա վրա:

- Կասես վերջապես, թե ինչ ես մտածել,- հարցրեց Աչոնը, երբ Պողոսը նստեց մեքենան:

- Դու գիտես, թե ինչով են սնվում օձերը:

- Պատկերացում չունեմ:

- Օձերը սնվում են առնետներով, մկներով, տարատեսակ այլ կրծողներով, ինչպես նաև գորտերով ու դոդոշներով:

Պողոսի բռնած օձն իհարկե պատգամավոր Դոդոշին չկերավ, բայց այնպես վախեցրեց, որ վերջինս գնաց այն աշխարհ ու հետ եկավ: Բայց ամեն ինչի մասին՝ հերթականությամբ:

Նախ, Պողոսն ու Աչոնը ծանոթացան տարածքին: Բավականաչափ լավ խնամված ու կահավորված լողափ էր՝ ներկառուցված սրճարանով, վրան–տաղավարներով և բունգալո կացարաններով:

Հետո իմացան, որ երեկոյան ժամը վեցին լողափում

նախատեսված է շոու ծրագիր և դիսկոտեկ: Հատուկ այդ նպատակով այստեղ հավաքված էր մի հսկայական բեմ:

Վերջում ճշտեցին, թե ո՞ր բունգալոն է Դոդոշինը:

Այսքանը բավական էր: Պողոսն ու Աչոնը վերցրին լողափի վրան-տաղավարներից մեկը, տեղը տեղին սեղան գցեցին ու սկսեցին վայելել օգոստոսյան Սևանը:

Դոդոշը լողափում հայտնվեց չափազանց բարձր տրամադրությամբ, մի քանի ուրիշ անհասկանալի կենդանիների ուղեկցությամբ: Նրա մի ձեռքին գինու շիշ էր, մյուս ձեռքին՝ երկարոտն մի բաժակ, գլխին՝ լավ օրերից մնացած «դուխով» մակագրությամբ գլխարկը, իսկ վզից կախված էր սրբիչը: Նա փռեց այն ավազին, գինու շիշն ու բաժակը դրեց կողքը, ու պառկեց՝ գլխարկը քաշելով աչքերին: Պատկերը ճիշտ-ճիշտ հիշեցնում էր մի լուսանկար, որում նույն դիրքով ու նույն աքսեսուարներով պառկած էր նրա առաջնորդը, միայն ոչ թե ավազի, այլ՝ խոտեր վրա:

Սրանք ամեն ինչում կապկում են Ճիկոլին՝ մտածեց Պողոսը:

Դոդոշի ուղեկիցները մտան ջուրը, մինչդեռ ինքը քնեց կամ ձևացրեց, թե քնած է, ճիշտ այնպես, ինչպես վերոհիշյալ լուսանկարում՝ իր առաջնորդը:

Մոտ երկու ժամ իր լպրծուն մարմինը արևին տալուց հետո նա վեր կացավ ու մոտեցավ լճին: Մի քանի անվստահ քայլ արեց, այնքան, որ ջուրը հազիվ ծածկեց ոտքերի թաթերը, ապա կանգնեց ու բավականին երկար մնաց կանգնած: Հետո, այդպես էլ չհամարձակվելով մտնել ջուրը, վերադարձավ այնտեղ, ուր գինին էր ու սկսեց խմել: Քիչ անց նրան միացան մյուս անհասկանալի կենդանիները:

Ժամը չորսի կողմերը խումբը ցրվեց: Բոլորը, նախ գնացին իրենց բունգալոները, հագնվեցին, հետո մտան սրճա-

ման, հավանաբար՝ ճաշելու:

Իսկ ժամը վեցին սկսվեց շոու ծրագիրը, ապա՝ դիսկոտեկը:

Լողափը չափազանց բազմամարդ էր: Այստեղ էին, ըստ ամենայնի, ոչ միայն հանգստացողները, այլև հատուկ այս նպատակով եկած բազմաթիվ հյուրեր:

Պետք է ասել, որ միջոցառման կազմակերպիչները շատ լավ էին պատրաստվել: Հնչեղ երաժշտություն, հիանալի լուսային էֆեկտներ ու նման բաներ: Մթնոլորտն էլ իրապես տոնական էր. բոլորը պարում էին ու ուրախանում: Պարում էին ու ուրախանում՝ չմտածելով, որ պատերազմում զոհվածների մեկ տարին դեռ չէր լրացել, բազմաթիվ որդեկորույս մայրեր դեռ չէին գտել իրենց զավակներին, ադրբեջանական բանտերում դեռ կտտանքների էին ենթարկվում տասնյակ գերիներ...

Տոնախմբության ամենաթեժ պահին, երբ մութն արդեն ընկել էր, Պողոսն ու Աչոնը դուրս եկան իրենց վրան-տաղավարից ու գնացին մեքենայի մոտ, որի բեռնախցում իր ելույթին էր սպասում օձը:

Պողոսը հանեց նրան արկղից ու ասաց Աչոնին.

- Կարո՞ղ ես բռնել:

- Իհարկե՝ ո՛չ:

- Բայց դու ասացիր, որ չես վախենում օձերից:

- Բայց ես չասացի, որ սիրում եմ այնքան, որ բռնեմ:

- Դու վատ ասիստենտ ես:

Պողոսը մի պարան կապեց օձի պոչից, շոյեց նրա գլուխը ու ասաց.

- Խոստանում եմ, որ քեզ ոչ ոք չի նեղացնի, բայց դու դեռ որոշ ժամանակ պիտի մնաս անազատության մեջ:

Կացարան-բունգալոն, որտեղ պիտի գիշերեր Դոդոշը,

փակ էր: Պողոսն, իհարկե, կարող էր կոտրել դուռը, բայց գերադասեց ներս մտնել պատուհանից: Այն հեշտությամբ բացվեց և Պողոսը ցատկեց ներս: Այստեղ կար միայն մեկ մահճակալ և ուրիշ ոչինչ: Մահճակալը կոկիկ հարդարված էր և գլխավերևում դրված էր երկու ճերմակ բարձ:

Պողոսը մի պահ մտածեց, չափուձև արեց, ապա օձի պոչից կապված պարանը կապեց բարձերի հետևի ձողերին

այնպես, որ օձը չկարողանա իջնել մահճակալից: Վերջինս չափազանց զարմացել էր, թե ինչպես է հանկարծակի այսքան երկարել, բայց և այնպես առանձնապես չէր դիմադրում: Հետո Պողոսը ծածկեց նրան վերմակով, մի անգամ էլ շոյեց գլուխը ու դուրս եկավ այնտեղից, որտեղից մտել էր՝ նախապես վառելով լույսը և բաց թողնելով վարագույրը:

Պարահարթակի մոտ, ավազին նստած, Աչոնն ու Պողոսը սպասեցին բավականին երկար, մինչև Դոդոշը կհոգներ կամ կձանձրանար պարելուց: Նա պարում էր աղջիկների մի խմբի հետ, և պարզ երևում էր, որ աղջիկներին դա շատ էլ

դուր չէր գալիս: Չնայած Դոդոշը կոտորում էր իրեն, պտտվում էր ավազի վրա, գլուխկոնծի տալիս, կանգնում թաթերին, միևնույն է՝ նրա վրա ուշադրություն չէին դարձնում:

Մոտ երկու ժամից աղջիկները լքեցին պարահարթակը և քայլեցին դեպի սրճարան: Դոդոշը հետևեց նրանց, Պողոսն ու Աչոնը՝ Դոդոշին: Վերջինիս, սակայն, այստեղ էլ հաջողություն չէր սպասվում: Աղջիկները կրկին «ցրեցին» նրան: Մերժված Դոդոշը վերցրեց մի շիշ գինի, մենակ նստեց անկյունում ու սկսեց խմել: Խմում էր հուսահատ՝ իրար հետևից լցնելով բաժակը: Հետո սրճարան մտան ուրիշ աղջիկներ, Դոդոշը նրանց էլ մոտեցավ, նորից մերժվեց, կատաղած դուրս եկավ ու ճոճվելով քայլեց դեպի պարահրապարակ: Բայց տեղ չհասավ. ճանապարհին մի տեղ կանգնեց ու սկսեց փսխել:

- Եվ որքա՞ն ենք մենք դեռ ստիպված լինելու հետևել այս այլանդակությանը,- զայրացավ Աչոնը:

- Քիչ մնաց,- վստահեցրեց Պողոսը:

Իսկապես, Դոդոշն այլևս ի վիճակի չէր պարելու: Նա մի կերպ հասավ իր բունգալոն, մի կերպ բացեց դուռը ու մտավ ներս:

Նախապես պլանավորածի համաձայն՝ Աչոնը մոտեցավ պատուհանին ու սկսեց նկարել, իսկ Պողոսը կանգնեց դռան մոտ:

Ինչպես արդեն ասվեց վերևում՝ օձը դոդոշ Դոդոշին չկերավ: Ավելին՝ ոչինչ էլ չարեց: Երբ Դոդոշը հանեց շորերը, մոտեցավ մահճակալին և բացեց վերմակը՝ օձն իր համար պառկած էր, գուցե անգամ՝ քնած:

- Մամա ջան,- գոռաց պատգամավորը հետ-հետ գնաց, բախվեց պատին ու փռվեց գետնին: Հետո վեր կացավ, նորից ընկավ, նորից վեր կացավ ու ոռնալով վազեց դեպի դուռը:

Այստեղ, ինչպես արդեն գիտենք, նրան էր սպասում Պողոսը:

Մնացածը՝ հավանաբար հասկանալի է: Միայն ասենք, որ ստանդարտ պրոցեդուրան ավարտելուց հետո, Պողոսը, ինպես և խոստացել էր, ազատեց օձին կապանքներից վերցրեց հետը ու բաց թողեց այնտեղ, որտեղից բռնել էր:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԺՎԵՑ ԽՈՋԸ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում երկու հազար քսանմեկ թվականի օգոստոսի հինգին տեղի ունեցած հայտնի շշամարտին հաջորդած ծեծկռտուքի կադրերը Պողոսը նայում էր նողկանքով: Սակայն, որքան էլ որ զարմանալի է, ավելի շատ նրան նյարդայնացնում էր ոչ թե իշխանական պատգամավորների, այլ՝ ընդդիմադիրների կեցվածքը:

Լավ, ինչո՞ւ չեք կռվում, չէ՞ որ ձեզ ծեծում են: Ինչո՞ւ մի բռունցք չեք լինում ու շանսատակ անում այդ բորենիներին: Չկա՞ ձեր մեջ գեթ մեկը, որը բռունցք ունի: Ինչպե՞ս կարելի է այդքան նապաստակ լինել:

Մի խոսքով Պողոսը կատաղած էր:

Բայց պետք էր հանգստանալ: Հանգստանալ ու կենտրոնանալ հարձակվողների վրա:

Նրանց մեջ կար մեկը, որն առավել ակտիվ էր: Մեկը, որը չափազանց նման էր խոզի: Սույն կենդանին մինչ այդ էլ աչքի էր ընկել իր ագրեսիվ պահվածքով և էլ ավելի ագ-

ռեսիվ խոսքով: Եթե իշխանական պատգամավորների մեջ մրցույթ հայտարարվեր, թե ո՞վ է ավելի ագրեսիվ պախարակում նախկիններին և պաշտպանում ներկաներին, սա, անկասկած, կգրավեր առաջին տեղը: Ուրիշ գործառույթ նա պարզապես չուներ:

- Երկսմբակավոր այս կենդանիները՝ որոշ անատոմիական և ֆիզիոլոգիական չափորոշիչներով, շատ մոտ են մարդկանց, այդ իսկ պատճառով նրանց հաճախ օգտագործում են բժշկական և հետազոտական նպատակներով,- ասաց Պողոսն Աչոնին՝ ծեծկռտուքի տեսագրությունը մեկ անգամ ևս նայելուց հետո:

- Ո՞ւմ նկատի ունես,- հետաքրքրվեց Աչոնը:

- Ահա սրան,- Պողոսը ցույց տվեց Ազգային ժողովի կայքում տեղադրված Խոզի նկարը,- մի՞թե նման չէ խոզի:

- Նման է,- համաձայնեց Աչոնը,- դու մտադիր ես նրան անատոմիական փորձարկումների՞ ենթարկել:

- Եթե ուզում ես իմանալ, նա ավելի խիստ պատժի է արժանի,- հայտարարեց Պողոսը,- ի դեպ, միջնադարյան Եվրոպայում ընդունված էր դատել խոզերին մարդասպանության համար: Բանն այն է, որ քաղաքների փողոցներով ազատ թափառող խոզերը հաճախ մտնում էին աղքատների կացարանները և կրծում օրորոցում քնած մանկիկներին: Իշխանությունները խոզերին ձերբակալում էին և դատում՝ հաճախ դատապարտելով մահապատժի, որքան էլ որ զարմանալի է՝ կախաղանի միջոցով:

- Դե ինչ, մե՞նք էլ նույնն անենք,- ծիծաղեց Աչոնը:

- Ոչ, մենք կբավարարվենք ստանդարտ պրոցեդուրայով,- ամենայն լրջությամբ ասաց Պողոսը:

Եվ Աչոնը հասկացավ, որ ոչինչ չի կարող փրկել որկրամոլ այս պատգամավորի քիթը:

Եվ ահա երկու հազար քսանմեկ թվականի աշնան առաջին օրը պատգամավոր Խոզը զանգ ստացավ մի ռուսական համարից:

- Բարև Ձեզ,- ռուսերենով ասաց կանացի մի ձայն,- Ձեզ անհանգստացնում է մոսկվաբնակ գործարար պարոն Պողոսյանի քարտուղարուհին:

- Այո, շատ ուրախ եմ,- ոգևորված պատասխանեց խոզը:

Նրա ոգևորության պատճառը պարզ էր: Բանն այն է, որ ռուսական բջջային օպերատորներից մեկի համարը, որից զանգեց Աչոնը, ժամանակին նրան էր նվիրել նախկին ամուսինը, որն իսկապես մոսկվաբնակ գործարար էր: Համարն այդ այսպես ասած՝ գոլդ էր կամ անգամ՝ ադամանդյա և ուներ մոտավորապես հետևյալ տեսքը. + 7 ??? 777 77 77:

- Պարոն Պողոսյանը մյուս շաբաթ կլինի Երևանում և կցանկանար հանդիպել Ձեզ հետ,- շարունակեց «քարտուղարուհին»:

- Շատ ուրախ եմ,- կրկնեց Խոզը,- շատ շոյված եմ:

Աչոնը սպասում էր, որ նա կհետաքրքրվի, թե ինչո՞ւ է արժանացել նման պատվի, թե ինչո՞ւ են ուզում իր հետ հանդիպել, կամ առնվազն՝ ո՞վ է գործարար Պողոսյանը, բայց քանի որ Խոզը ոչ մի նման հարց չտվեց, ստիպված էր ինքը բացատրել.

- Բանն այն է, որ պարոն Պողոսյանը ուզում է ներդրումներ անել Հայաստանում՝ հյուրանոցային բիզնեսի ոլորտում, և մենք ճշտեցինք, որ մինչև պատգամավոր լինելը Դուք սերտ կապեր եք ունեցել այդ ոլորտի հետ:

- Իհարկե, իհարկե… չափազանց շոյված եմ:

Խոզի առնչությունը նշված ոլորտի հետ եղել էր ընդամենը այն, որ նա որոշ ժամանակ մի երկրորդական պաշտոն էր զբաղեցրել մի երրորդական հյուրանոցում: Բայց դա կար-

ևոր չէր: Կարևորն այն էր, որ նա «շոյված էր»:

Հաջորդ զանգը երկսմբակավոր կենդանին ստացավ ուղիղ մեկ շաբաթից, ինչպես և խոստացվել էր: Զանգահարողն այս անգամ սակայն ոչ թե «քարտուղարուհին» էր, այլ ինքը՝ «մոսկվաբնակ գործարար Պողոսյանը»: Պայմանավորվեցին հանդիպել երևանյան ռեստորաններից մեկում:

Ռեստորանի ընտրությունը Պողոսն ու Աչոնը նախապես էին արել: Հարկավոր էր մի այնպիսի վայր, ուր չէին լինի տեսախցիկներ և կլինեին առանձնասենյակներ: Նման «օբյեկտներն» իհարկե շատ էին Երևանում և ընտրությունը կանգ առավ մի ռեստորանի վրա, որը գտնվում էր կենտրոնում: Դրա անունը սակայն չարժե հանրայնացնել՝ նկատի ունենալով, թե ինչ տեղի ունեցավ այնտեղ այդ օրը:

Մեր հերոսները ռեստորան եկան պայմանավորված ժամից քառասունհինգ րոպե շուտ և Պողոսը սկսեց մեկը մյուսի հետևից պատվիրել տաք ճաշատեսակներ: Թվով հինգը: Երբ Աչոնը հարցրեց թե ինչո՞ւ է նա այդքան պատվիրում, Պողոսը պատասխանեց.

- Ես ուզում եմ հասկանալ՝ նրա գիրությունը հիվանդության հետևանք է, թե նա իսկապես որկրամոլ է: Ու հետո էլ այս ամենի համար վճարելու է ինքը:

Երբ հյուրը մատուցողի ուղեկցությամբ մտավ առանձնասենյակ՝ սեղանին արդեն շարված էին մի քանի աղցաններ, զանազան նախուտեստներ, տարբեր կենդանիների՝ այդ թվում պատգամավորի ցեղակիցների մսից խորոված-ներ, տարատեսակ քյաբաբներ, խինկալի, քյուֆթա և խաշլամա:

Պողոսը նստած էր սեղանի հակառակ կողմում և խոսում էր հեռախոսով: Ավելի ճիշտ՝ ձևացնում էր թե խոսում է հեռախոսով: Նա տեղից վեր չկացավ և գլխի շարժումով հրավիրեց հյուրին նստել:

Սա էլ ծրագրի մի մասն էր, քանի որ մեր հերոսը ոչ մի դեպքում չէր ուզում սեղմել պատգամավոր Խոզի ձեռքը:

Աչոնն այստեղ չէր: Նա հոգացել էր սպասվող խնջույքի նկարահանումը՝ հեռախոսը թողնելով պատի տակ դրված պահարանին՝ տեսախցիկը միացրած ու հեռացել՝ մի քանի անգամ զգուշացնելով Պողոսին՝ գործողությունից հետո չմոռանալ վերցնել այն:

Եվ այսպես, Խոզը նստեց: Նա անվստահ նայում էր մերթ «Պողոսյանին», մերթ՝ սեղանին շարված ուտելիքներին՝ այսուայնկողմ շարժելով ահռելի մռութը:

- Հյուրասիրվեք,- ասաց Պողոսը՝ բերանից հեռացնելով հեռախոսը,- ես շուտով կավարտեմ:

Սակայն Խոզը տատանվում էր, հավանաբար՝ ուղեղը դեռ դիմադրում էր ստամոքսին: Ուղիղ մեկ րոպեից ստամոքսը հաղթեց:

Պատգամավորը նախ վերցրեց երկու կտոր բաստուրմա, փաթաթեց լավաշով ու սկսեց դանդաղ ուտել՝ անընդ-

հատ նայելով շուրջը: Վերջացրեց, մի փոքր դադար տվեց ու անցավ քյաբաբին: Այն նույնպես դրեց լավաշի մեջ, ավելացրեց բավականաչափ քանակությամբ սոխ ու կերավ քիչ ավելի արագ: Հետո ափսեի մեջ դրեց մի քանի հատ խինկալի, բայց մինչ ուտելը՝ մի պահ դադար տվեց ու նայեց Պողոսին: Վերջինս շարունակում էր ձևացնել, թե խոսում է հեռախոսով և ուշադրություն չի դարձնում հյուրի վրա: Դրանից ասես քաջալերված՝ Խոզը քշտեց վերնաշապիկի թևերը և խինկալիները կերավ ձեռքով: Թվով վեցը: Նրա առանց այդ էլ կլոր թշերն այնպես էին ուռել, կարծես բերանում թենիսի գնդակներ էին: Այնուհետև նա բաժակի մեջ հանքային ջուր լցրեց, մինչև վերջ խմեց, բղկաց, մի մեծ կտոր քյուֆթա վերցրեց ու այլևս ինքնամոռաց շարունակեց ուտել: Քյուֆթային հաջորդեց խորոված: Պատգամավորը նախ կլանեց մի քանի կտոր գառան միս, այնուհետև վերցրեց խոզի հսկա չալաղաջը: Բայց այս մեկը չհասցրեց ուտել, որովհետև Պողոսն այլևս չդիմացավ:

- Ինչպե՞ս կարելի է ուտել սեփական միսը,- ասաց նա:

Խոզն այդ պահին մոտեցրել էր չալաղաջը բերանին, և հասցրել էր կծել ընդամենը մի կտոր: Նա զարմացած նայեց Պողոսին և որոճալով հարցրեց:

- Դուք ի՞նչ նկատի ունեք:

Բայց Պողոսը ոչինչ չպատասխանեց. վեր կացավ տեղից, ամբողջ մարմնով ձգվեց սեղանի վրայով և աջ ձեռքով մի ապտակ հասցրեց պատգամավորի ձախ այտին: Հետո մեկն էլ՝ ձախ ձեռքով՝ աջ այտին:

Սա իհարկե լուրջ շեղում էր պատժիչ գործողությունների կանոնակարգից: Ապտակներ այդ կանոնակարգով նախատեսված չէին: Բայց, եթե ընթերցողը մի պահ շեղվի ընթերցանությունից, համացանցում գտնի պատգամավոր Խո-

զի նկարը, և նայի նրա թշերին, անպայմանորեն կհասկանա Պողոսին և կհամոզվի, որ նա այլ կեպ վարվել չէր կարող:

Սակայն կանոնակարգին Պողոսն, այնուամենայնիվ, վերադարձավ. մի քանի ապտակ հասցնելուց հետո նա բռնեց խոզի ականջներից և գլուխը մտցրեց խաշլամայով ափսեի մեջ, այն միակ կերակուրի, որը նա դեռ չէր հասցրել համտեսել:

Հայտնի է, որ խոզի ճչոցի կամ ավելի ճիշտ՝ վժունի ձայնը կարող է հասնել հարյուր տասնհինգ դեցիբելի: Դա ավելի բարձր է, քան ռեակտիվ ինքնաթիռի շարժիչի ձայնը, որը հասնում է ընդամենը հարյուր տասներկու դեցիբելի:

Տեսարանն իսկապես դաժան էր:

Բայց պատգամավոր Խոզը միայն վժալով չէր սահմանափակվում. նա բառի բուն իմաստով թպրտում էր՝ հետևի ոտքերը խփելով գետնին: Ճիշտ այնպես, ինչպես վժում ու թպրտում է խոզը, որին պատրաստվում են մորթել:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵՑ ՊՈՂՈՍԻ ՆԻՎԱՆ

Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերյան մի անձրևոտ օր Պողոսը վերջապես որոշեց հանել իր Նիվայի հետևի պատուհանին փակցված ցելոֆանը և փոխարենը ապակի տեղադրել, ինչպես սովորաբար լինում է մեքենաների վրա:

Վարպետ Աբոն ուշադիր զննեց Նիվայի բեռնախցիկի դուռը, ուր պիտի տեղադրեր ապակին և ասաց.

- Չի լինի:

- Ինչո՞ւ չի լինի,- հետաքրքրվեց Պողոսը:

- Որովհետև դուռը դեֆորմացվել է,- բացատրեց վարպետը,- պետք է նախ սարքել դուռը:

- Է, սարքիր,- ասաց Պողոսը:

- Չի լինի,- տեղի չտվեց վարպետը:

- Ինչո՞ւ չի լինի,- էլ ավելի զարմացավ Պողոսը:

- Որվհետև դեֆորմացվել է թափքի ողջ հետնամասը. որպեսզի սարքեմ դուռը, պիտի նախ սարքեմ այն,- խնդիրը հանգամանորեն ներկայացրեց վարպետը:

- Է, սարքիր,- համառեց Պողոսը:

- Չի լինի,- իրենը պնդեց վարպետը՝ մեքենայի շուրջը պտտվելով:

- Ինչո՞ւ չի լինի,- որերորդ անգամ հարցրեց Պողոսը

- Կարծես ռումբ պայթած լինի կողքին,- ասաց վարպետը՝ շոշափելով մետաղը,- ժամանակը չէ՞ փոխել մեքենադ:

- Այո՛,- ասաց Պողոսը, հետո մի քիչ մտածելով ավելացրեց,- ավելի ճիշտ՝ ո՛չ:

- Այսինքն,- չհասկացավ վարպետը:

- Ես նկատի ունեմ՝ այո, ռումբ է պայթել և ոչ, մեքենան չեմ փոխելու:

- Իսկապե՞ս,- զարմացավ վարպետը,- ի՞նչ ռումբ:

- Ավելի ճիշտ՝ հրթիռ,- պարզաբանեց Պողոսը,- բայց դա ուրիշ պատմություն է և՝ բավականին երկար:

- Պատմիր լսենք,- խնդրեց վարպետը:

Բայց Պողոսը չպատմեց:

Վարպետը մի քիչ էլ պտտվեց մեքենայի շուրջը, մի քիչ էլ շոշափեց մետաղը տարբեր տեղերում և ասաց.

- Լավ, կսարքեմ: Բայց մեքենան մի քանի օր պիտի մնա. գուցե մի շաբաթ:

- Ինչո՞ւ այդքան երկար:

- Որովհետև ես հաշվեցի՝ այն ուղիղ քսան տեղ փնասված է:

- Ինձ ընդամենը պետք է, որ հետևի ապակին դրվի:

- Այսինքն՝ մնացածը չսարքեմ:

- Ո՛չ:

Վարպետ Աբոն լավ արհեստավոր էր: Նա նաև լավ մարդ էր: Երբ առաջարկում էր Պողոսին սարքել ամբողջ մեքենան, դա անում էր ոչ թե նրա համար, որ հավելյալ փող աշխատի, այլ՝ անկեղծորեն մտածում էր Պողոսի մասին: Եթե նա համառորեն չի ուզում փոխել իր դարն ապրած մեքենան, գոնե համաձայնի, որ տեսքը տեղը լինի:

- Մարդիկ երկու հարյուր հազար դոլար տալիս, մեքենա են առնում,- հոխորտաց վարպետը,- դու երկու կոպեկ ափսոսում ես մեքենադ տեսքի բերելու համար:

- Ինչ մարդիկ, ինչ երկու հարյուր հազար,- չհասկացավ Պողոսը:

- Դու տեղյա՞կ չես: Ահա կարդա:

Վարպետ Աբոն, բացի լավ մարդ լինելուց, նաև հին մարդ էր: Նա գլխով ցույց տվեց արհեստանոցի անկյունում, փոքրիկ փոշոտ սեղանին դրված թերթը: Ո՞վ էր երկու հազար քսանմեկ թվականի աշնանը Հայաստանում դեռ թերթ կարդում: Չնայած, հանուն արդարության պետք է ասել, որ Պողոսն՝ ինքն էլ, մինչև վերջերս, այսինքն՝ մինչ Աչոնին և համացանցին ծանոթանալը՝ օգտվում էր բացառապես տպագիր մամուլից:

Նա տեղավորվեց հնամաշ կեղտոտ բազմոցին ու սեղանի վրայից վերցրեց թերթը: Ահա թե ինչ էր գրված այնտեղ.

«Ազգային ժողովի նախագահի համար իննսուն միլիոն դրամ արժողությամբ BMW 750Li xDrive LCI դասի մեքենա ձեռք կբերվի: Որոշումն ընդունվել է Կառավարության նոյեմ-

բերի 25-ի նիստում չզեկուցվող հարցերի փաթեթով: Որոշման նախագծի հիմնավորմամբ ԱԺ աշխատակազմի կողմից իրականացվում է Ազգային ժողովի նախագահին սպասարկող (BMW 750 Li 2011 թվականի արտադրության) ծառայողական մեքենայի պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու գործընթացը, քանի որ նշված մեքենայի ընթացիկ տեխնիկական սպասարկումը դարձել է ծախսատար և դրա շահագործման և պահպանման համար ֆինանսական միջոցների հատկացումները այլևս ադյունավետ ու նպատակահարմար չեն: Որոշման նախագծով՝ գնումը կկատարվի պաշտոնական ներկայացուցչի ավտոսրահից, քանի որ, ըստ հիմնավորման՝ պահանջը տվյալ պահի դրությամբ համարվում է հրատապ»:

- Ես եմ մեղավոր,- զայրացած ասաց Պողոսը՝ մի կողմ նետելով թերթը:

- Ինչո՞ւ ես դու մեղավոր,- չհասկացավ վարպետը:

- Որ միայն քիթը կոտրելով բավարարվեցի:

- Ո՞ւմ քիթը:

- Երկար պատմություն է:

Վարպետը միևնույն է՝ չհասկացավ, թե ինչո՞ւ է մեղավոր Պողոսը, ո՞ւմ քթի մասին է խոսքը և ի՞նչն է երկար պատմություն, գետնից վերցրեց թերթը, նորից բացեց այն էջը, որտեղ զավեշտալի այդ լուրն էր, հագավ ակնոցները և կարդաց.

- «Նախկին մեքենայի ընթացիկ տեխնիկական սպասարկումը դարձել է ծախսատար և դրա շահագործման և պահպանման համար ֆինանսական միջոցների հատկացումները այլևս ադյունավետ ու նպատակահարմար չեն»,- նա հանեց ակնոցները, մի կողմ դրեց թերթը և շարունակեց՝ բավականաչափ վրդովված,- Ազգային ժողովի նախագահին սպասարկող այդ մեքենան տասը տարեկան է: Հայաս-

տանում շահագործվող մեքենաների յոթանասուն տոկոսից ավելին տասը, քսան, անգամ երեսուն տարեկան են: Այդ մեքենաները շահագործում է հասարակ ժողովուրդը: Եվ ծախսերն էլ հոգում է հասարակ ժողովուրդը՝ իր չեղած եկամուտներից: Չէ՞ որ ես արհեստավոր եմ, և ամեն օր իմ աչքով եմ տեսնում դա: Եվ ստացվում է, որ հասարակ ժողովրդի համար արդյունավետ և նպատակահարմար է՝ իր գրպանից փող հատկացնել մեքենան վերանորոգելու համար, իսկ պետական պաշտոնյայի համար՝ ոչ: Փոխարենը պետական պաշտոնյան կարող է բյուջեի հաշվին իր համար թանկարժեք մեքենա գնել: Այն բյուջեի, որը նախևառաջ պիտի ծառայի հասարակ ժողովրդին: Եվ դա անում է այն պետական պաշտոնյան, որին իշխանության է բերել ժողովուրդը: Երբ դա անում էին նախկին իշխանությունների պաշտոնյաները, էլի վատ էր, էլի անարդար էր, որովհետև աղքատ երկրում պետական պաշտոնյան իրավունք չունի թանկարժեք մեքենայով շրջել, բայց նախկին իշխանություններին ժողովուրդը չէր բերել իշխանության, այլ նրանք գնել էին այդ իշխանությունը: Իսկ սրանք... Չէ՞ որ սրանք հեղափոխությամբ եկան: Ժողովուրդը դրեց իր ուսերին ու բերեց իշխանության: Հիմա այդ ժողովուրդը մնացել է իր քսան տարեկան՝ երեք հազարանոց Օփելի հույսին, իսկ իշխանավորը երկու հարյուր հազարանոց ԲՄՎ-ով պիտի շրջի: Լավ, գոնե մի քիչ խիղճ, ավելի ճիշտ՝ խելք ունենային և ուրիշ մեքենա գնեին. էլի նորը, բայց ավելի էժան, սովորական մեքենա:

Պողոսն ուշադիր լսում էր վարպետին: Վերջինս դարձյալ վերցրեց թերթը, հագավ ակնոցներն ու կարդաց լուրի վերջաբանը.

- «Պահանջը տվյալ պահի դրությամբ համարվում է հրատապ»,- հանեց ակնոցներն ու շարունակեց արդեն ոչ

թե վրդովված, այլ՝ կատաղած,- հրատապ, հասկանում ես: Ուրիշ ավելի հրատապ բան չկա երկրում, քան Ազգային ժողովի նախագահի մեքենան փոխելը: Ու գիտես թե որն է ամենասարսափելին. որ այս ամենը չեն ուզում նկատել այն մարդիկ, որոնք իրենց ուսերի վրա բերեցին սրանց իշխանության:

Պողոսն այդպես էլ ոչինչ չասաց: Թողեց իր հազար ինը հարյուր ութսունութ թվականի արտադրության ջարդուխուրդ եղած Նիվան վարպետ Աբոյի մոտ ու գնաց:

Երբ վերադարձավ ուղիղ մեկ շաբաթ անց՝ չճանաչեց իր մեքենան: Վարպետը վերանորոգել էր ամբողջ թափքը՝ բոլոր իր հաշված քսան վնասված տեղերը:

- Միայն ներկի ու նյութերի փողը կտաս,- ասաց նա Պողոսին:

- Այդպես կլինի՞,- զարմացավ Պողոսը:

- Իհարկե կլինի,- վարպետը ձեռքով թփթփացրեց մեքենայի տանիքին,- սա կռված մեքենա է: Գիտես քանի բեկոր եմ հանել թափքի միջից:

- Լավ,- ասաց Պողոսը,- հաջորդ պատերազմից հետո դարձյալ կբերեմ մոտդ:

- Կարծում ես կլինի՞ հաջորդ պատերազմը:

- Ես կասեի՝ երանի չլինի, եթե ինչ-որ մեկն ինձ ասեր, թե ուրիշ ինչպես է հնարավոր վերադարձնել կորցրածը:

- Ո՞վ պիտի ասի, սրամ՞նք,- զայրացավ վարպետը ու սեղանի վրայից վերցնելով թերթը մեկնեց Պողոսին,- ահա, կարդա: Տես որն է սրանց մակարդակը:

Թերթում մի հատված էր Ճիկոլի նախորդ օրվա առցանց ասուլիսից, որտեղ նա պատասխանել էր Ազգային ժողովի նախագահի համար ձեռք բերված թանկարժեք մեքենայի վերաբերյալ իրեն տրված հարցին.

«Ես, վարչապետ եղած ժամանակ, մի քանի անգամ մեքենաներով ճանապարհին եմ մնացել, ընդ որում՝ բնակավայրի մեջ: Խնդիր չի, կարամ իջնեմ, բրդեմ մեքենան խոդի գցելու համար... Բայց հասկանում եք՝ հինգ, վեց անգամ վարչապետին սպասարկող մեքենան փչացել է, մարդիկ հելել են, ասել են՝ վայ, վարչապետ ջան, էս ինչ ա եղել, կարո՞ղ ա սվեչա ա թրջել և այլն և այլն... Ինչո՞ւ է ԱԺ նախագահի համար նոր մեքենա գնվում: Երբ նայում ենք ինչքան գումար է ծախսվում հին մեքենայի ապասարկման վրա՝ ամեն ամիս միլիոնավոր դրամներ: Էն ժամանակ, երբ ասում էի մեքենա պետք չի գնել, հիմա իմ դիմաց բերում դնում են, ասում՝ պարո՛ն վարչապետ, արդեն երեսուն միլիոն դրամ ծախսել ենք էս մեքենայի սպասարկման համար, որովհետև ամեն օր էս մեքենան փչանում ա...»

- Ճիկո՛լ,- բացականչեց Պողոսը:

Միայն թե թութակն այդտեղ չէր, որ արձագանքեր:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՊԱՏԺՎԵՑ ՇՆԱԳԱՅԼԸ ԵՎ ՄԻ ԱՌՆԵՏ

Սակայն այդ շաբաթվա ընթացքում, երբ Պողոսի Նիվան վարպետ Աբոյի արհեստանոցում էր, տեղի ունեցան իրադարձություններ, որոնք վստահաբար կհետաքրքրեն ընթերցողին:

Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի իննին, քառասունչորսօրյա պատերազմի ավարտից և չարաբաս-

տիկ պայմանագրի ստորագրումից ուղիղ մեկ տարի անց պետության ողջ ղեկավար կազմը, ինչպես նաև իշխող խմբակցության պատգամավորները գնացել էին Եռաբլուր պանթեոն: Թե ինչի համար էին գնացել, հավանաբար միայն իրենց սատանան գիտեր:

Երբ Պողոսը միացրեց հեռուստացույցը և տեսավ պետության ղեկավարների շինծու և կեղծ խոնարհումները զոհվածների շիրիմներին, նյարդայնացավ և անմիջապես փոխեց ալիքը: Բայց մյուս ալիքով դարձյալ ռեպորտաժ էր Եռաբլուրից: Պողոսն անշուշտ այս մեկն էլ կփոխեր, եթե էկրանին չտեսներ երկու կենդանիների:

Դրանցից առաջինը Շնագայլն էր, որին մենք այս գրքում անդրադարձել ենք: Ընթերցողը հավանաբար կհիշի, թե ինչպես կոտրվեց նրա քիթը ռեստորանի արտաքնոցում: Երկրորդը առնետ էր: Մինչ կներկայանենք, թե ով էր Առնետը, տեսնենք, թե այդ ինչ դրվագ էր էկրանին, որը ստիպեց Պողոսին չփոխել ալիքը:

Լրագրողները ֆիքսել էին այն պահը, թե ինչպես է Եռաբլուրի մուտքի մոտ Առնետը մոտենում Շնագայլին և բերանը մինչև ականջները բացած՝ կատակում. «ինչո՞ւ դիմակ չես դնում»: Շնագայլը նույնպես կատակում է. «լավ եմ անում, ցույց տամ, թե քանի դիմակ ունեմ»:

Իսկ հիմա Առնետի մասին. սույն կրծողը, որ իր ողջ խորհրդային կենսագրության ընթացքում տարբեր պաշտոններ էր զբաղեցրել նախ կոմերիտական, ապա կուսակցական ապարատում, եղել էր ինչ-որ գործարանի կուսակցական կոմիտեի քարտուղար, ապա Կոմկուսի կենտկոմի տեսուչ, իսկ վերջում՝ Հայաստանի շրջաններից մեկի Կոմկուսի շրջկոմի առաջին քարտուղար, միության փլուզումից հետո կտրուկ փոխել էր իր քաղաքական կողմնորոշումը և

կոմունիստից վերածվել լիբերալ-դեմոկրատի: Նա իր հիմնած մարդ-կուսակցությամբ մաս էր կազմել այդ ժամանակվա իշխող դաշինքին և արդյունքում ընտրվել Ազգային ժողովի պատգամավոր, ապա ստացել նախ՝ փոխքաղաքապետի, ապա՝ մարզպետի պաշտոն: Հիմա նա պատգամավոր էր իշխող կուսակցության կազմում:

Սույն կրծողին էր պատկանում հետևյալ միտքը. «Հայաստանն առանց Արցախի ապագա չունի թեզը շատ վտանգավոր է»: Նա արտահայտել էր այն մի քննարկման ժամանակ և հավելել, որ Արցախի հարցի պատմահրավական ասպեկտը փորձագիտական-հանրային շրջանակները պետք է քննարկման առարկա դարձնեն, ինչը չի արվում: Ապա ասել էր, որ վերջին երեք հարյուր տարում այդ տարածքները եղել են վիճելի և երբեք խոսք չի գնացել, որ դրանք Հայաստանին են պատկանում, Ռուսաստանին, թե Թուրքիային և կոչ էր արել խոսել ոչ թե տարածքների պատկանելության, այլ՝ այն մասին, որ այդ տարածքներում մարդկանց անվտանգությունը վտանգված է: Բայց սա էլ դեռ ամենը չէր. Սփյուռք-Հայաստան միասնականությանը անդրադառնալով՝ նա հայտարարել էր, որ ոչ մի տեղ չտանող պահանջատիրությունը մեզ թույլ չի տալիս դիվանագիտություն ունենալ:

Եվ այս ամենից հետո, սույն կրծողը իրեն թույլ էր տալիս գնալ Եռաբլուր պանթեոն, ուր հանգչում էին մարդիկ, որոնք զոհվել էին, որ Արցախը չլինի Ադրբեջանի կազմում, որոնք ապրել էին իբրև պահանջատեր:

Իհարկե նա չէր գնա պանթեոն, եթե այն չորս կողմից շրջափակված չլիներ հազարավոր ոստիկաններով:

Եվ հենց հազարավոր ոստիկաններով շրջափակված լինելու հանգամանքն էր, որ ստիպեց Պողոսին կուլ տալ զայրույթը և չգնալ ու տեղում չպատժել Առնետին:

Բայց և այնպես Առնետը պիտի պատժվեր:

Ամենասարսափելի բանն է, երբ արդարության համար պայքարող ժողովրդին խփում են ներսից, խփում են թիկունքից:

Ժողովուրդը տասնամյակներ շարունակ պայքարում է իր տունը թշնամուն չտալու համար ու հանկարծ հայտնվում է մի առնետ և ասում, թե ինչ է եղել, տանք մեր տան մի մասը թշնամուն ու ապրենք բարեկեցիկ կյանքով: Այն թշնամուն, որը դեռ մեկ տարի առաջ հրթիռակոծում էր մեր խաղաղ բնակավայրերը, այն թշնամուն, որի բանտերում այդ պահին կտտանքների էին ենթարկվում մեր հայրենակիցները: Այն թշնամուն, որն իր իսկ երկրում հաստատել է բռնատիրություն:

Ժողովուրդը տասնամյակներ շարունակ ապրում է այն երազանքով, որ մի օր կկարողանա վերականգնել պատմական արդարությունը, վերադարձնել թշնամու կողմից իրենից խլածը, փշալարերով բաժանված չլինել իր խորհրդանիշ լեռից ու հանկարծ հայտնվում է մի առնետ և ասում, թե ոչ մի տեղ չտանող պահանջատիրությունը մեզ թույլ չի տալիս դիվանագիտություն ունենալ: Ինչ է եղել՝ հրաժարվենք պահանջատիրությունից որպեսզի կարողանանք առևտուր անել մեր թշնամու հետ: Այն թշնամու, որը դեռ մեկ դար առաջ կոտորել է մեր ժողովրդին, իսկ մեկ տարի առաջ նրա իսկ տված բայրաքթարներով հրթիռակոծվել են մեր խաղաղ բնակավայրերը:

Ամենասարսափելի բանն է, երբ արդարության համար պայքարող ժողովրդին խփում են ներսից, խփում են թիկունքից:

Անշուշտ բոլորն էլ ուզում են ապրել խաղաղ ու բարեկեցիկ կյանքով: Բայց, եթե այդ խաղաղության ու բարեկեցության գինը քո արժանապատվությունն է, քանի՞ լումա արժե

այդ կյանքը: Առավել ևս, որ չկա ոչ մի երաշխիք, որ քո տունն ու քո երազանքը զիջելով գալու են այդ խաղաղությունն ու բարեկեցությունը:

Եթե այսպես ասողը սովորական քաղաքացի լիներ, գլուխը քարին, թող ասեր, բայց այսպես ասում է պետական պաշտոնյան, իշխող քաղաքական ուժը ներկայացնող պատգամավորը և, հասկանալի է, որ նրա խոսքն ուղղորդված է պետության ղեկավարի կողմից:

Ինչպե՞ս կարելի է պետական մակարդակով հարյուր հազարից ավելի քո հայրենակիցներին զրկել իրենց տնից, ինչպե՞ս կարելի է պետական մակարդակով մի ամբողջ ազգի զրկել իր երազանքից:

Ինչպե՞ս կարելի է պատերազմում զոհվածների առաջին տարելիցին գալ պանթեոն և կատակներ անել…

Առնետը պիտի պատժվեր:

Պողոսը որոշեց, որ ժամանակ կորցնել չի կարելի: Պետք է գնալ Եռաբլուր, հետևել Առնետին և հենց այդ օրն էլ պատժել նրան:

Մեխանիկորեն վերցրեց լայնեզր գլխարկն ու մուգ ակնոցները, դուրս եկավ տանից և բակում հայտնաբերեց, որ իր Նիվան տեղում չէ: Քիչ այն կողմ կանգնած էր Աչոնի Լեքսուսը: Իհարկե կարելի էր վերցնել այն, բայց կար մի խանգարող հանգամանք. Պողոսը չուներ ծրագիր, չգիտեր, թե որտե՞ղ և ինչպե՞ս է իրականացնելու գործողությունը և չէր ուզում որևէ կերպ վտանգի տակ դնել Աչոնին: Մանավանդ, որ ոչինչ չէր ասել նրան:

Մի տաքսի կանգնեց շենքի մուտքի մոտ, ուղևորը վճարեց ու իջավ: Պողոսը մոտեցավ և առանց հարցնելու՝ ազա՞մտ է, թե՞ ոչ, նստեց:

- Քո ծառայությունները կարող են ինձ այսօր պետք գալ

երկար ժամանակով,- ասաց վարորդին՝ մի տասը հազարանոց մեկնելով,- հետո էլի կտամ:

Չգիտես՝ վարորդի վրա ավելի շատ ազդեց Պողոսի զայրացած հայացքը, թե նրա տված տասը հազարանոցը, ամեն դեպքում խելոք ասաց.

- Ո՞ւր է պետք գնալ:

- Առայժմ Եռաբլուր, հետո կերևա: Միայն թե՝ արագ:

Ոստիկանական ուժերը աստիճանաբար լքում էին Պանթեոնը: Հասկանալի էր՝ գերագույն գլխավոր հրամանատարն այլևս այնտեղ չէր: Ինչ իմանային ոստիկանական ուժերը, որ նրանից ավելի՝ հիմա պաշտպանության կարիք ունեին ուրիշ մարդիկ: Մասնավորապես՝ Ազգային ժողովի պատգամավոր Շնագայլը և Ազգային ժողովի պատգամավոր Առնետը:

Տաքսին նոր էր մտել Պանթեոնի կայանատեղի, երբ Պողոսը տեսավ, թե ինչպես են այս երկուսը միասին նստում Շնագայլի մեքենան: Ընդ որում սույն կենդանին ինքն էր վարում իր ծառայողական Տոյոտան: Դե ինչ՝ մտածեց, եթե Շնագայլին այդքան դուր է գալիս ծեծ ուտելը, ինքը դեմ չէ մեկ անգամ էլ դա անել:

Տոյոտա Քեմրին շարժվեց, և Պողոսը հրահանգեց տաքսու վարորդին գնալ դրա հետևից:

- Սա այն պատգամավորը չէ՞ր,- հետաքրքրվեց տաքսու վարորդը:

- Ո՞ր մեկը:

- Այն, որ շակալի էր նման:

- Հենց նա՛ էր,- ծիծաղեց Պողոսը,- իսկ մյո՛ւսն ինչի էր նման:

- Կռիսի,- ոգևորվեց վարորդը, բայց հետո մի պահ մտածեց ու քիչ վախվորած հարցրեց,- իսկ դո՛ւք ինչ կապ ունեք նրանց հետ:

- Մի վախեցեք,- հանգիստ ասաց Պողոսը,- ես նրանց հետ կապ չունեմ: Բայց կարևորն այն է, որ Դուք տարբերում եք կենդանիներին:

- Իսկ ինչո՞ւ ենք մենք գնում նրանց հետևից:

- Որովհետև հակառակը լինել չի կարող:

Ճիշտն ասած՝ Պողոսն ինքն էլ չգիտեր, թե ինչ է լինելու: Ճանապարհը ցույց կտա՝ մտածում էր: Եթե պարզ դառնա, որ նրանք գնում են աշխատանքի, այսինքն՝ Ազգային ժողով, կարելի է ինչ-որ խաչմերուկի վրա, կարմիր լույսի տակ մոտենալ, բացել մեքենայի կողքի դուռը և ջարդել Առնետի քիթը: Եթե ժամանակ մնա, բացել նաև վարորդի դուռը և երկրորդ անգամ ջարդել Շնագայլի քիթը: Եթե էլի ժամանակ մնա, երկուսի ականջներից բռնած քաշել մեքենայից դուրս և «փռել ասֆալտին», ինչպես սիրում էր արտահայտվել իրենց կուռքը:

Եթե պարզ դառնա, որ նրանք գնում են այլ տեղ՝ շարունակել հետևել նրանց և գործել ըստ իրավիճակի:

Շուտով պարզ դարձավ, որ Շնագայլն ու Առնետը գնում էին այլ տեղ: Տոյոտան Սեբաստիայի փողոցից թեքվեց Ծովակալ Իսակովի պողոտա և մեծ արագությամբ ուղղություն բռնեց դեպի քաղաքից դուրս: Տաքսին բարեբախտաբար նորմալ մեքենա էր, հին, բայց խնամված Մերսեդես և կարողանում էր հետ չմնալ Տոյոտայից: Միակ խնդիրն այն էր, որ վարորդը դեռ վախեցած էր և րոպեն մեկ տալիս էր նույն հարցը՝ իսկ ինչո՞ւ ենք մենք գնում նրանց հետևից: Միջին տարիքի մարդ էր, հավանաբար նոր խոպանից վերադարձած, ինչպես սովորաբար լինում է տաքսիստների մեծամասնության դեպքում:

Երբ դուրս եկան Երևանից և անցան Փարաքարը, Պողոսը հարցրեց.

- Դուք ուզում եք, որ Ձեր ասած շակալներն ու կռիսնեՙրը տիրեն մեր ժողովրդի ճակատագիրը:

- Չեմ ուզում, ես ամեն օր դրանց հայհոյելով ման եմ գալիս,- անկեղծորեն պատասխանեց տաքսիստը:

- Հայհոյելով բան դուրս չի գա:

- Իսկ ինչ անել:

Բայց Պողոսը չհասցրեց պատասխանել, որովհետև Տոյոտան դանդաղեցրեց ընթացքը և մայրուղուց թեքվեց աջ տանող մի նեղ փողոց: Հետո մի քիչ առաջացավ և կանգնեց ցանցե մի ցանկապատի առջև: Ցանկապատի հետևում ոչխարներ էին:

- Եկել են գառ առնեն,- ասաց տաքսիստը,- ես այս տեղը գիտեմ, այստեղ ամենալավ գառներն են ծախում:

Մինչ Պողոսը կհասցներ զարմանալ, Շնագայլը նախ մի երկար ազդանշան տվեց, ապա իջավ մեքենայից և գոռաց.

- ՎալՀդ:

Պողոսը դիմեց տաքսիստին.

- Ես հիմա դուրս կգամ, իսկ դու պտտվիր ու գնա, սպասիր ինձ մայրուղու վրա:

Ապա հագավ լայնեզր գլխարկը, դրեց մուգ ակնոցներն ու դիմակը և իջավ մեքենայից:

Շնագայլը շարունակում եր ձայնել.

- ՎալՀդ, այ ՎալՀդ:

Փարախի հետևում կարմիր տուֆից մի տուն էր, երկաթյա նախշազարդ դարպասներով, որտեղից էլ դուրս եկավ մեկը, որն այնքան էլ նման չէր Վալոդի: Խոշորամարմին կին էր՝ փայլուն լաչակով ու ծաղկավոր գոգնոցով.

- Վալոդը տանը չէ,- ասաց նա:

- Ո՞նց թե տանը չէ,- այնպես զարմացավ պատգամավոր Շնագայլը, կարծես անձամբ էր հեղինակել այնպիսի

օրենք, որը թույլ չէր տալիս ոչխար պահող Վալոդին տանից բացակայել:

- Ոչխա՞ր եք ուզում,- հարցրեց կինը:

- Այո,- ասաց շնագայլը,- զանգիր Վալոդին թող գա:

- Չի կարող, թաղման է գնացել:

- Որտե՞ղ է թաղումը:

- Կողքի գյուղում:

- Զանգի՛ր թող գա:

Կինը տարակուսած նայեց Շնագայլին, ապա Առնետին, ապա նրանց սև մեքենային ու ասաց:

- Ախր ո՞նց զանգեմ, թաղման է:

- Դու գիտե՞ս ես ով եմ,- զայրացած նետեց Շնագայլը:

Ոչխարավաճառ Վալոդի կինը ըստ ամենայնի դա չգիտեր: Նա որոշ ժամանակ կարկամեց, ապա մի կերպ արտաբերեց.

- Համարն ասեմ՝ Դուք զանգեք:

Ողջ այդ ընթացքում Պողոսը կանգնած էր քիչ այն կողմ և սպասում էր: Նա իհարկե կարող էր վաղուց արդեն մոտեցած և ջարդած լինել զույգ պատգամավորների քթերը, բայց նրան հետաքրքիր էին որոշ բաներ. մասնավորապես, պատգամավորների ինչի՞ն է պետք ոչխարը, և կգա արդյոք Վալոդը:

Առաջինը նա հասցրեց պարզել, երկրորդը՝ ոչ:

- Ես քեզ ասում եմ ինձ ոչխար է պետք, գնում եմ քեֆի, դու ասում ես թաղման եմ,- գոռաց Շնագայլը:

Թե ինչ պատասխանեց Վալոդը, Պողոսը բնականաբար չիմացավ, բայց Շնագայլը այսպես շարունակեց.

- Ես քո մեռելը…

Այստեղ արդեն Պողոսը չդիմացավ, արագ քայլերով մոտեցավ Շնագայլին ու բռունցքով հարվածեց քթին: Պատգա-

մավորը տապալվեց գետնին, իսկ ձեռքի հեռախոսը թռավ ցանկապատից ներս՝ ոչխարների մոտ:

- Վայ ամա՛ն,- գոռաց ոչխարավաճառի կինը:

Պողոսը շրջվեց, որ հեռանա, բայց այդ պահին հիշեց Առնետի գոյության մասին: Վերջինս նստած էր մեքենայի մեջ և նույնիսկ չիջավ էլ, երբ ծեծում էին ընկերոջը: Ավելին՝ պարզվեց նա փակել էր մեքենայի դուռը և այդ պահին ոստիկանություն էր զանգում:

Պողոսը վերցրեց գետնին ընկած մի քար, կոտրեց Տոյոտայի ապակին և ներսից բացեց դուռը:

- Ես նրա հետ կապ չունեմ, ես հիվանդ մարդ եմ,- գոռում էր Առնետը:

Պողոսը նախ աջ բռունցքով կոտրեց նրա քիթը, ապա ձախ ձեռքով բռնեց ականջից, դուրս բերեց մեքենայից ու քարշ տվեց ցանկապատից ներս, որտեղից զարմացած ոչխարները հետևում էին տարօրինակ այդ տեսարանին:

Հայտնի է, որ ոչխարները, բացի նրանից, որ տալիս են միս, կաթ և բուրդ, նաև հանդիսանում են գոմաղբի մշտական աղբյուր: Յուրաքանչյուր հասուն ոչխար արտադրում է օրական մեկ կիլոգրամ արտաթորանք: Այն պարունակում է բազմաթիվ միկրոտարրեր և սնուցիչներ և կարող է լինել բարձրորակ պարարտանյութ:

Ու չնայած այդ պարարտանյութն օգտագործվում է բացառապես հողերի բերրիացման և բույսերի զարգացման համար և ոչ մի դեպքում ուտելի չէ, Պողոսը որոշեց փորձարկում անել և դրանով կերակրել Առնետին:

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊՈՂՈՍԸ ՀԻԱՍԹԱՓՎԵՑ

«Ես, որ եկա հասա այնտեղ, արդեն ծեծկռտուքը սկսված էր: Չգիտեմ ով է մեղավոր»:

Այսպես էր պատասխանել Իշուձագը լրագրողներին, երբ իրեն հարցրել էին, թե ինչպես է տեղի ունեցել միջադեպը:

Խոսքը երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի յոթին Ազգային ժողովի շենքում տեղի ունեցած ծեծկռտուքի մասին էր, որին, ըստ լրատվամիջոցների, մասնակցել էին իշխանությունից երեսուն, ընդդիմությունից երեք հոգի: Վերջինները պատգամավորների օգնականներ էին, մինչդեռ իշխանության ներկայացուցիչների մեջ կային բազմաթիվ պատգամավորներ: Այդ պատգամավորների թվում էին Լաման, Կոյոտը, Խոզը, Աֆֆենպինչերը և, ինչպես արդեն ասվեց՝ Իշուձագը:

Սույն արարածին ընթերցողն այս գրքում չի հանդիպել, չնայած նա ուներ բոլոր անհրաժեշտ տվյալները, որ իր քիթն էլ մյուսների պես ջարդվեր:

Բայց դա այլևս էական չէ: Էական չէր, որովհետև Պողոսն այլևս խորը հիասթափության մեջ էր:

Այդ հիասթափությունը սկսվել էր Շնագայլի ու Առնետի հետ կապված միջադեպից, շարունակվել վերոհիշյալ միջադեպով, որի մասնակիցներն էին Լաման, Կոյոտը, Խոզը, Աֆֆենպինչերը և Իշուձագը և իր կուլմինացիային հասել այն ժամանակ, երբ Պողոսը տեսել էր մի գաղտնի տեսագրություն, որի գլխավոր դերակատարն էր Ուղտը: Խոսելով ադրբեջանական բանտերում պահվող հայ գերիների մասին՝ նա ասել էր հետևյալը. «Էդ գերիների, էդ զինվորների, էդ մարդ-

կանց նպատակը ո՞րն է եղել: Հիմա կներես, գուցե մի քիչ սխալ բան եմ ասում, բայց այդ գերիներին համարում եմ, որ արդեն իրենք չկան: Իսկ գիտե՞ս՝ էդ գերիներն ովքեր են: Այն մարդիկ են, ովքեր զենքը դրել, փախել ու մոլորվել են: Ես սա բարձր չեմ կարող ասել: Ձեզ չի՞ հետաքրքրում, թե ինչու այդ գերիների ծնողները չեն բողոքում: Որովհետև իրենք գիտեն, որ իրենց որդին դասալքություն է արել: Իրենք զենքը դրել և փախել են, հայտնվել են գերության մեջ»:

Մի՞թե անիմաստ էր այն ամենը, ինչ իրենք անում էին: Այս սրիկային ու բոլոր մյուս սրիկաներին Պողոսը պատժել էր, սակայն պարզվում է դրանից ոչինչ չէր փոխվել: Նրանք շարունակում էին ասել ու անել իրենցը:

Ի՞նչ էր դա նշանակում: Դա նշանակում էր, որ նրանք ավելի շատ վախենում էին, որ իրենց կպատժի գերագույն գլխավոր սրիկան, քան ուրիշները:

Եվ Պողոսն իրեն հարց էր տալիս. իմաստ ունե՞ր շարունակել պատժել նրանց և նրանց նմաններին: Կամ, առնվազն պատժել նույն ձևով, ինչ ձևով պատժում էր մինչև հիմա:

Բոլոր դրվագներում, երբ Պողոսը պատժել էր բոլոր այդ սրիկաներին, այդ պատիժը կարող էր շատ ավելի դաժան լինել: Նա կարող էր անդամալույծ դարձնել նրանց: Անել այնպես, որ այդ ստոր կենդանիները այլևս ո՛չ կարողանային շարժվել, ո՛չ էլ՝ ձայն հանել: Սակայն չէր արել. սահմանափակվել էր թեթև վնասվածքներ պատճառելով և զուգահեռաբար ստորացնելով: Բայց ստորին ստորացնելը ի՞նչ կանի:

Ինչպե՞ս կարող է պետության ամենաբարձրաստիճան պաշտոնյաներից մեկը իր պետության քաղաքացիների, իր հայրենակիցների և, առհասարակ՝ մարդկանց մասին խոսելիս ասել՝ ես համարում եմ, որ այդ գերիներն արդեն չկան: Դրանից ավելի մեծ սրիկայություն հնարավո՞ր է:

Չնայած ինչու հնարավոր չէ: Գերագույն գլխավոր սրիկան էլ, պատերազմում զոհված իր պետության քաղաքացիների, իր հայրենակիցների, մարդկանց մասին խոսելիս ասում էր՝ պլյուս մինուս հիսուն զոհ:

Լավ, այս մարդկանց երակներում թու՞յն է հոսում արյան փոխարեն:

Էլ ի՞նչ պիտի ասեն սրանք, որ հասարակությունն այլևս չդիմանա, ոտքի կանգնի ու վճռական քայլ անի:

Էլ ի՞նչ պիտի անեն սրանք: Նո՞ր զոհերի պատճառ դառնան, նո՞ր կորուստների պատճառ դառնան: Բայց դեռ որքա՞ն, դեռ մինչև ե՞րբ:

Դեռ որքա՞ն պիտի ստեն, դեռ որքա՞ն պիտի մանիպուլացնեն, դեռ որքա՞ն ատելություն պիտի սերմանեն ժողովրդի մեջ:

Բայց ամենասարսափելին դա էլ չէր:

Եվ ահա թե ինչ էր մտածում Պողոսը. արտաքին անարդարությունն, անշուշտ, տասնապատիկ, հարյուրապատիկ ավելի դաժան է, քան ներքին անարդարությունը: Բայց, երբ ներքին անարդարությունը խոչընդոտում է արտաքին անարդարության դեմ պայքարելու, սա՛ է ամենասարսափելին: Երբ գիտակից քաղաքացին, ժողովրդի գիտակից մասնիկը թշնամի պետության ղեկավարին հայհոյելու փոխարեն հայհոյում է իր պետության ղեկավարին, երբ թշնամուն պատժելու ու արդարությունը վերականգնելու ուղիներ փնտրելու փոխարեն մտածում է, թե ինչպես պատժի սեփական իշխանություններին, երբ իր կորսված արժանապատվության վերականգնման համար ստիպված է պայքարել ոչ թե դրսում, այլ՝ ներսում, սա՛ է ամենասարսափելին:

Ամեն ինչ վաղ թե ուշ տեղն է ընկնելու, ներքին թշնամին վաղ թե ուշ պատժվելու է ու սկսվելու է հիմնական, գլխավոր պայքարը՝ արտաքին թշնամու դեմ, արտաքին անար-

դարության դեմ, սակայն մի՞թե ափսոս չէ ժամանակը, որը կորսվում է, մի՞թե ափսոս չէ սերունդը, որը կորսվում է՝ բառի բուն և փոխաբերական իմաստով:

Երբ Պողոսն ու Աչոնը սկսեցին իրենց ծրագիրը՝ նրանք մտադիր էին պատժել ընդամենը «ղզիկներին»: Նրանց ծրագիրը հենց նրա համար էր, որ այդ ղզիկները իմանային իրենց տեղը, իմանային, թե իրենք ովքեր են, իմանային, որ իրենք ժամանակավոր են ու ստանալով իրենց թեթև պատիժը այլևս պապանձվեին, սսկվեին ու «խելոք նստեին տեղները», ինչպես ասում էր նրանց կուռքը՝ գերագույն գլխավոր ղզիկը:

Սակայն նրանց կուռքը վերածվեց սատանայի, իսկ նրանք դարձան այդ սատանայի բերանն ու ոտքերը, որ անընդհատ հոխորտում էին, թքում էին ու քացի էին տալիս:

Պողոսն ու Աչոնը, փաստորեն սխալվել էին. պետք էր ոչ թե կոտրել նրանց քթերն ու քաշել նրանց ականջները, այլ կոտրել նրանց ոտքերը և կտրել լեզուները:

Բայց ամենաարդյունավետն, իհարկե, կլիներ սատանային պոզերից զրկելը:

Միայն թե սատանային հասնել հնարավոր չէր:

Իսկ գուցե հնարավո՞ր էր:

ԵՐԿՈՒ ԿՐԱԿՈՑ

Երբ արցախյան առաջին պատերազմի ժամանակ Պողոսն առաջին անգամ մեկնեց ճակատ, նրա առաջին զենքը Մոսինի հրացանն էր՝ արտադրված հազար ութ հարյուր ինն-

սունհինգ թվականին: Ասում էին այդ հրացանը պատկանել է հայ ֆիդայիներից մեկին, հավանական է Մորուք Կարոյին, Փեթարա Մանուկին կամ Մախլուտոյին և անցել է տասնիներորդ դարավերջի և քսաներորդ դարասկզբի ազգային ազատագրական պայքարի ողջ ընթացքով: Թե որքանով էր դա ճիշտ, Պողոսը չգիտեր, բայց և այնպես կռվել էր այդ Մոսինով մի քանի ամիս, մինչ նախ ինքնաձիգ, ապա՝ գնդացիր ունենալը: Հետո այն ի պահ էր տվել արցախցի մի ծանոթ բժշկի և կոմայից դուրս գալուց հետո նորից վերցրել: Հրաշալի զենք էր Մոսինը: Պողոսը սարեր գնալիս այն միշտ տանում էր հետը ու կրակում իր սիրած իռլանդական գարեջրի թիթեղյա տարաներին: Զարմանալի դիպուկայնություն ուներ հարյուրքսանամյա զենքը. այն խոցում էր թիրախը հարյուր հիսուն, երբեմն երկու հարյուր մետր հեռավորությունից:

Զրո ամբողջ երեսուներեք լիտր տարողությամբ գարեջրի թիթեղյա տարրաների տրամագիծը կազմում է վաթսունվեց միլիմետր: Ինչպիսի զուգադիպություն: Մի՞թե խորհրդանշական չէ այս թիվը՝ վաթսունվեցը:

Սատանայի պոզերի կամ կոտոշների տրամագիծը նույնն է ինչ գարեջրի թիթեղյա տարրայինը՝ վաթսունվեց միլիմետր: Իսկ դրանց հեռավորությունը իրարից՝ քսանից քսանհինգ սանտիմետր:

Ինչի՞ համար է այս թվաբանությունը՝ կհետաքրքրվի ընթերցողը:

Ամեն ինչ շատ պարզ է. Պողոսի թիրախը լինելու էր սատանան, ավելի ճիշտ՝ դրա պոզերը:

Բայց թվաբանությունը այսքանով չի ավարտվում:

Եվ այսպես՝ Մոսինը կարող է խոցել թիրախը երկու հարյուր մետրի վրա:

Ժամում հարյուր քսան կիլոմետր արագությամբ ընթա-

ցող մեքենան երկու հարյուր մետրն անցնում է վեց վայրկյանում: Հենց այդքանն էլ բավական է Մոսինով երկու դիպուկ կրակոց արձակելու համար:

Ինչո՞ւ՝ հենց երկու, կհետաքրքրվի ընթերցողը:

Որովհետև սատանան ունի երկու պոզ:

Իսկ ի՞նչ երկու հարյուր մետր՝ կշարունակի հետաքրքրվել ընթերցողը: Այն երկու հարյուր մետրը, որը պետք է անցներ մեքենան M5 մայրուղին M1 մայրուղուն միացնող էստակադայի տակով, որի վրա պետք է դիրքավորված լիներ Պողոսը իր Մոսինով:

Եվ վերջին հարցը, որ անպայմանորեն կհետաքրքրի ընթերցողին՝ ի՞նչ մեքենայի մասին է խոսքը:

Դե իհարկե, այն մեքենայի, որը երկու հազար քսանմեկ թվականի հունվարի տասնմեկին օդանավակայան էր տանելու Ճիկոլին, որտեղից վերջինս պիտի թռչեր Մոսկվա՝ Վլադիմիր Պուտինի և Իլհամ Ալիևի հետ եռակողմ գագաթնաժողովին մասնակցելու համար:

Ճիկոլին, այսինքն՝ սատանային:

Բայց և այնպես. այն, ինչ մտածել էր Պողոսը չէր ենթադրում մարդասպանություն, որովհետև ինչպես բազմիցս ասվել է այս գրքում, մեր հերոսը դեմ էր մարդասպանությանը: Սատանային սպանել իհարկե կարելի էր, բայց քանի որ գիտականորեն չի հիմնավորվել, որ մարդը, անգամ՝ Ճիկոլը, կարող է ժամանակի ընթացքում վերակերպվել սատանայի, Պողոսը չէր պատրաստվում սպանել նրան:

Ասենք, եթե ուզեր էլ չէր կարող: Զրահապատ մեքենայում գտնվող թիրախին Մոսինով խոցել, բնականաբար, հնարավոր չէր:

ՀԱՏՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Դատավոր.- Դուք նպատակ ունեցե՞լ եք սպանել վարչապետին:

Մեղադրյալ. – Ո՛չ: Ես դեմ եմ սպանությանը: Ես դեմ եմ անգամ որսին:

Դատավոր.- Դուք նպատակ ունեցե՞լ եք կրակել վարչապետի գլխին:

Մեղադրյալ. – Ո՛չ: Ես կրակել եմ սատանայի պոզերի ուղղությամբ:

Դատավոր.– Հիշեցնում եմ, որ ձերբակալվելուց հետո Դուք ենթարկվել եք դատաբժշկական փորձաքննության: Փորձաքննող բժիշկները եկել են այն եզրակացության, որ փորձաքննվողի մոտ հոգեկան շեղումներ առկա չեն, և նա կարող է համարվել մեղսունակ:

Մեղադրյալ. – Շնորհակալություն հիշեցման համար:

Դատավոր. – Դուք իմացել եք, որ վարչապետին սպասարկող մեքենան զրահապատ է:

Մեղադրյալ. – Ես իմացել եմ, որ սատանային սպասարկող մեքենան զրահապատ է:

Դատավոր. – Ձեր Մոսին տիպի հրացանից արձակված երկու կրակոցները դիպել են վարչապետին սպասարկող մեքենայի հետնապակու ճիշտ այն հատվածին, որից այն կողմ վարչապետի գլուխն էր: Եթե մեքենան զրահապատ չլիներ, երկու փամփուշտները խոցելու էին վարչապետի գլուխը՝ իրարից քսան սանտիմետր հեռավորությամբ: Եթե Դուք նպատակ չեք ունեցել կրակել վարչապետի գլխին, և եթե Դուք իմացել եք, որ մեքենան զրահապատ է, ո՞րն է եղել Ձեր թիրախը:

Մեղադրյալ. – Ձեր հաշվարկները սխալ են:

Դատավոր. – Հստակեցրեք՝ խնդրում եմ:

Մեղադրյալ. – Եթե մեքենան զրահապատ չլիներ, փամփուշտները խոցելու էին սատանայի պոզերը:

Դատավոր. – Կրկնում եմ հարցը. ո՞ րն է եղել Ձեր թիրախը:

Մեղադրյալ .– Որպեսզի ես պատասխանեմ Ձեր հարցին պիտի ներկայացնեմ մաթեմատիկական մի հաշվարկ, որի հիման վրա կարելի է անել փորձաքննություն: Ի դեպ, այդ հաշվարկը ես ներկայացրել եմ գործի նախաքննության ժամանակ, բայց փորձաքննություն այդպես էլ չի իրականացվել:

Դատավոր.– Ինչ՞ին է վերաբերում այդ հաշվարկը:

Մեղադրյալ. – Երկու հազար տասնինը թվականի արտադրության W222 թափքով Մերսեդեսի հետևի ապակու չափսերին, նույն մեքենայի հետևի նստատեղի չափսերին, ինչպես նաև սատանայի հասակին, նրա գլխի տրամագծին և պոզերի տեղակայմանը: Բացի այդ…

Դատավոր.– Դուք անձամբ ճանաչե՞լ եք վարչապետին:

Մեղադրյալ.– Ոչ: Բայց ես չվերջացրի ներկայացնել հաշվարկը:

Դատավոր.- Ինչո՞ւ եք որոշել վարչապետի նկատմամբ մահափորձ կատարել:

Մեղադրյալ.– Ոչ թե վարչապետի, այլ սատանայի:

Դատավոր.– Դուք կրակել եք վարչապետի վրա:

Մեղադրյալ.– Ոչ թե վրա, այլ՝ ուղղությամբ. ոչ թե վարչապետի, այլ՝ սատանայի:

Դատավոր.– Կրկնում եմ՝ դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է որ Ձեզ մոտ չկան հոգեկան շեղումներ և համարել է Ձեզ մեղսունակ…

Մեղադրյալ.– Դուք հավանաբար չգիտեք, թե ինչ է կամ, ավելի ճիշտ՝ ով է սատանան. Քրիստոնեությունը սատանային է վերագրվում ատելությունը մարդկության և ընդհանրապես՝ Աստծո ստեղծածի հանդեպ, Աստծուն հակադրվելը, մարդկային հոգիներում ստի, կեղծիքի և քաոսի տարածումը: Քրիստոնեությունը սատանային համարվում է մարդկա-

յին արատների և կրքերի մարմնացում, որը փորձություն ու չարիք է բերում ու տանում մարդկությանը մոլորության:

ՊՈՂՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Դռնփակ դատական նիստի ավարտին, մինչ դատավորի կողմից տասնհինգ տարվա ազատազրկման դատապարտվելը, Պողոսն արտասանեց իր վերջին խոսքը.

«Ես դեմ եմ մարդասպանությանը և անգամ չեմ սպանում թշնամուն՝ մարտի դաշտում, չնայած գիտեմ նաև որ «մի սպանիր» պատվիրանը չի տարածվում նվաճողական նպատակով պատերազմող երկրի զինվորի վրա, և պաշտպանվող երկրի զինվորի համար պատերազմի դաշտում սպանելը չի դիտվում որպես մարդասպանություն: Բայց և այնպես ես չեմ սպանում: Ես չեմ սպանի մարդուն, չեմ սպանի կենդանուն, չեմ սպանի Աստծո որևէ ստեղծածի: Չեմ սպանի նաև սատանային, քանի որ չգիտեմ՝ արդյո՞ք նրան էլ Աստված չի ստեղծել: Ու չգիտեմ՝ արդյոք մարդը կարող է վերակերպվել սատանայի:

Եթե սատանային Աստված չի ստեղծել, եթե մարդը կարող է վերակերպվել սատանայի, ապա կրակեք նրա վրա: Եթե կան մարդիկ, որոնք վստահ են, որ դա այդպես է, թող կրակեն սատանային:

Ես իմ այս գործողությամբ նպատակ եմ ունեցել հրավիրել այդ մարդկանց ուշադրությունը:

Ես խորհրդանշական երկու կրակոց եմ արձակել սա-

տանայի պոզերի ուղղությամբ: Մեքենայի հետևի ապակուն դրոշմվել են իմ Մոսինի փամփուշտների թողած հետքերը: Եթե անգամ մեքենան զրահապատ չլիներ, փամփուշտները չէին սպանելու սատանային, այլ զրկելու էին նրան պոզերից: Եվ սատանան այլևս չէր կարողանալու սատանա լինել: Առանց պոզ՝ ինչ սատանա:

Կրկնում եմ, իմ կրակոցները խորհրդանշական էին: Բայց և այնպես, եթե կա մեկը, որը պատրաստ է ոչ խորհրդանշական կրակոցներ արձակել, թող անի դա:

Թող անի դա, քանի որ սատանան նորանոր չարիքներ է բերելու: Նա պղծելու է ամենայն մաքուրը, նա ոտնատակ է անելու բոլոր արժեքները, նա բերելու է անդառնալի կորուստներ:

Թող անի դա, որ երբ ես դուրս գամ բանտից, դուրս գամ իմ Հայրենիքում»:

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՊՈՂՈՍՆ ՈՒ ՃԻԿՈԼԸ

DARAK
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան
Գեղարվեստական խմբագիր՝ Դավիթ Հակոբյան

Չափսը՝ 135x210մմ
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ^2
Տառատեսակը՝ GHEA Grapalat, չափը 10 pt

Տպագրվել է